Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-268-15.02.2018,06.03.2018-ՊԻՄԻ-011/2

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# Օ Ր Ե Ն Ք Ը
# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

## ԳԼՈՒԽ 1
## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ծառայության կազմակերպման, քաղաքացիական ծառայության պաշտոնների դասակարգման, քաղաքացիական ծառայության պաշտոնների համալրման, քաղաքացիական ծառայողների կատարողականի գնահատման, վերապատրաստման, քաղաքացիական ծառայողի իրավական վիճակի, պաշտոնից ազատման, ծառայության դադարեցման, ինչպես նաև քաղաքացիական ծառայության՝ որպես պետական ծառայության առանձին տեսակի հետ կապված այլ հարաբերություններ:

**Հոդված 2. Սույն օրենքի գործողության շրջանակը**

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է օրենսդիր, գործադիր, դատական իշխանության մարմիններում, Հանրապետության Նախագահի աշխատակազմում, դատախազությունում, քննչական մարմիններում, անկախ պետական մարմիններում, ինքնավար մարմիններում, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում, ինչպես նաև կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա պետական մարմիններում (այսուհետ՝ համապատասխան մարմին) քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձանց վրա:

2. 2. Սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված մարմիններում պետական ծառայության հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, եթե այլ օրենքներով առանձնահատկություններ սահմանված չեն:

3. Պետական ծառայության այլ օրենքներով առանձնահատկություններ նախատեսող ծառայություններում (մարմիններում) աջակցող մասնագիտական գործառույթներ իրականացնող ծառայողները քաղաքացիական ծառայողներ են:

**Հոդված 3. Քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության իրավական ակտերը**

1. Քաղաքացիական ծառայության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, կառավարության, վարչապետի և քաղաքացիական ծառայութունը համակարգող փոխվարչապետի (այսուհետ՝ համակարգող փոխվարչապետ) որոշումներով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

2. Քաղաքացիական ծառայությունը կազմակերպվում է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով սահմանված սկզբունքների հիման վրա:

3. Քաղաքացիական ծառայողների հիմնական իրավունքների և պարտականությունների, սոցիալական երաշխիքների, բարեվարքության համակարգի և այս իրավակարգավորումներից բխող այլ հարաբերություններ, որոնք պարտադիր են քաղաքացիական ծառայողների համար, կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Քաղաքացիական ծառայության անցնող քաղաքացիների՝ սույն օրենքից բխող իրավունքների իրականացմանն առնչվող պայմանները և կարգերն ընդունում է կառավարությունը, իսկ ծառայության կազմակերպման առանձնահատկությունները սահմանում է համակարգող փոխվարչապետը:

**Հոդված 4. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.

1) **քաղաքացիական ծառայություն**՝ արժանիքահեն, կարիերային առաջընթացով բնութագրվող, քաղաքական չեզոքություն պահանջող մասնագիտական գործունեություն, որը կատարվում է սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում նշված համապատասխան մարմիններում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այդ մարմիններին վերապահված լիազորությունների իրականացման նպատակով.

2) **քաղաքացիական ծառայության պաշտոն**՝ համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող իրավական ակտերից և խնդիրներից բխող իրավունքներ ու պարտականություններ, մասնագիտական գիտելիքներ ու կոմպետենցիաներ պահանջող կառավարման համակարգում տեղակայված, քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված հաստիքային միավոր.

3) **քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկ**՝ սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով ձևավորված քաղաքացիական ծառայության բոլոր պաշտոնների ցանկ.

4) **քաղաքացիական ծառայող**՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ով սույն օրենքով սահմանված կարգով զբաղեցնում է քաղաքացիական ծառայության պաշտոն և կատարում է այդ պաշտոնին վերապահված մասնագիտական գործունեություն կամ գրանցված է քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում և վարձատրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից.
5) **քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիր (աշխատատեղի նկարագիր)**՝ համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող իրավական ակտերից և խնդիրներից բխող քաղաքացիական ծառայողի գործառույթներն, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրող և այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ ու կոմպետենցիաներ նախատեսող, կառավարման համակարգում տեղակայվածությունը նախատեսող, սույն օրենքով սահմանված կարգով հաստատված փաստաթուղթ.
6) **քաղաքացիական ծառայողների վերապատրաստում**՝ քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների հետևողական և շարունակական կատարելագործում.
7) **քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվ**՝ռեեստր, որտեղ սույն օրենքով սահմանված դեպքերում և կարգով գրանցվում են քաղաքացիական ծառայության պաշտոններից ազատված քաղաքացիական ծառայողները.
8) **փորձնակ**՝ սույն օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով համապատասխան մարմիններում աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գրանցված անձ.
9) **բարեվարքության հարցերով կազմակերպիչ**՝ անձնակազմի կառավարման ստորաբաժանման քաղաքացիական ծառայող, ում պաշտոնի անձնագրում ամրագրված են քաղաքացիական ծառայողի բարեվարքության պահանջների մասով իրավունքներ և պարտականություններ.
10) **կոմպետենցիա**՝ գիտելիքների, ունակությունների, հմտությունների և վարքագծի ամբողջություն, որն անհրաժեշտ է պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթների արդյունավետ իրականացման համար.
11) **մասնագիտական գիտելիք**՝ տեղեկությունների, հասկացությունների, մտքերի, փաստերի և հանգամանքների ամբողջություն, որն անհրաժեշտ է պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթների արդյունավետ իրականացման համար.
12) **հավասարազոր պաշտոն**՝ քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում քաղաքացիական ծառայության պաշտոնի համապատասխան խմբի նույն ենթախմբում ընդգրկված քաղաքացիական ծառայության պաշտոն.
13) **ծառայողական քննություն՝** քաղաքացիական ծառայողի ծառայողական պարտականությունների և/կամ բարեվարքության և/կամ նրա գործունեությանն առնչվող և/կամ աշխատանքային հարաբերությունների հետ կապված հարցերի ուսումնասիրություն.
14) **քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակ**՝ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի (այսուհետ՝ քաղաքացիական ծառայության գրասենյակ) կողմից կառավարվող էլեկտրոնային ծրագիր.
15) **մասնագիտական աշխատանքային ստաժ**՝ ստացած բարձրագույն կրթության, իսկ տվյալ պաշտոնի անձնագրով բարձրագույն մասնագիտական կրթություն նախատեսված լինելու դեպքում այդ կրթության մասին վկայող փաստաթղթում նշված որակավորմանը համապատասխանող աշխատանքային ստաժ, անկախ պետական կամ մասնավոր ոլորտներում կատարած աշխատանքից: Մասնագիտական աշխատանքային ստաժը ներառում է համապատասխան որակավորում ստանալուց հետո աշխատած ժամանակաշրջանը.
16) **ժամանակավոր թափուր պաշտոն**՝ սույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերով որոշակի ժամկետով թափուր պաշտոն:

## ԳԼՈՒԽ 2
## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ (ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ) ԵՎ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ, ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

### Հոդված 5. Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը (աշխատատեղի նկարագիրը) և անվանացանկը, հաստատելը (փոփոխելը)

1. Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը (աշխատատեղի նկարագիրը) սահմանվում է՝ ելնելով համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող իրավականակտերով նրա առջև դրված խնդիրներով պայմանավորված կառավարչական տվյալ մակարդակին ներկայացվող մասնագիտական պահանջներից: Քաղաքացիական ծառայության յուրաքանչյուր պաշտոն ունի անվանում, որը հնարավորինս ճշգրիտ արտացոլում է քաղաքացիական ծառայության պաշտոնի հիմնական գործառույթները և չի կրում ընդհանրական բնույթ:
2. Համապատասխան մարմիններում քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատում է տվյալ մարմնի գլխավոր քարտուղարը, իսկ Հաշվեքննիչ պալատում՝ Հաշվեքննիչ պալատը:

3. Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի փոփոխությունը քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատման կամ ծառայությունը դադարեցնելու հիմք չէ, բացառությամբ, սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի:
4. Քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում վարում են համապատասխան մարմինները: Քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հրապարակային է ծանոթացման համար:
5. Քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ և լրացումներ կատարելու իրավական հիմքի առաջացման պահից մեկ ամսվա ընթացքում՝ համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը, հաստատված մեթոդաբանությանը համապատասխան կազմված և փաստաթղթերով հիմնավորված առաջարկությունը, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի նախագծերի հետ միասին ներկայացնում է քաղաքացիական ծառայության գրասենյակ:
6. Պաշտոնը քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում ներառելու (հանելու)՝ քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությունն ստանալուց հետո, երեք աշխատանքային օրվա ընթացքում, պաշտոնը ներառվում (հանվում)՝ է քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակ և հաստատվում է պաշտոնի անձնագիրը:
7. Քաղաքացիական ծառայության պաշտոնի գնահատման, դասակարգման, անվանումների, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի կազմման, պաշտոնների ընդհանուր համակարգում տեղակայման, իրավունքների ու պարտականությունների, անվանացանկի վարման, ինչպես նաև տվյալ քաղաքացիական ծառայության պաշտոնը զբաղեցնելու համար քաղաքացիական ծառայողին մասնագիտական գիտելիքների ու կոմպետենցիաների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներ սահմանելու մեթոդաբանությունը հաստատում է համակարգող փոխվարչապետը:

**Հոդված 6. Քաղաքացիական ծառայության պաշտոնների դասակարգումը**

1. Քաղաքացիական ծառայության պաշտոնները դասակարգվում են խմբերի՝ ելնելով այդ պաշտոնները զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, գործունեության ազդեցության, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց լուծման, ինչպես նաև մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաներիտեսանկյունից ներկայացվող պահանջներից:
2. Քաղաքացիական ծառայության պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.
   1) քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոններ.
   2) քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոններ:
3. Քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների խումբը դասակարգվում է 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթախմբերի: Քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների խումբը դասակարգվում է 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթախմբերի:

**Հոդված 7. Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի կրթության և աշխատանքային ստաժի չափանիշները**

1. Քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացին պետք է ունենա բարձրագույն կրթություն, բացառությամբ քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթախմբերի պաշտոնների, որոնք զբաղեցնելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացին պետք է ունենա առնվազն միջնակարգ կրթություն:
2. Քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար անհրաժեշտ է աշխատանքային ստաժի և փորձի առնվազն հետևյալ չափանիշները.
1) քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին և 2-րդ ենթախմբերի պաշտոնների համար, բացառությամբ գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության պաշտոնի, հանրային ծառայության առնվազն հինգ տարվա ստաժ, կամ յոթ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում յոթ տարվա աշխատանքային ստաժ: Գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության պաշտոնի համար՝ հանրային ծառայության առնվազն հինգ տարվա ստաժ, որից երկու տարին առնվազն կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում:
2) քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 3-րդ, 4-րդ, 5-րդ ենթախմբերի պաշտոնների համար՝ հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ հինգը տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում հինգ տարվա աշխատանքային ստաժ.
3) քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 1-ին և 2-րդ ենթախմբերի պաշտոնների համար՝ հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ չորսը տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում չորսը տարվա աշխատանքային ստաժ:

4) քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 3-րդ, 4-րդ, 5-րդ ենթախմբերի պաշտոնների համար՝ հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում երեք տարվա աշխատանքային ստաժ:

3. Քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթախմբերի պաշտոնների համար աշխատանքային ստաժ չի պահանջվում:

4. Հաշվի առնելով քաղաքացիական ծառայության պաշտոնի և/կամ պաշտոնի ենթախմբերի առանձնահատկությունները, քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությամբ, քաղաքացիական ծառայության պաշտոնի և/կամ պաշտոնի ենթախմբերի համար կարող են սահմանվել կրթության և/կամ աշխատանքային ստաժի և/կամ աշխատանքի բնագավառի այլ չափանիշներ, ինչպես նաև քաղաքացիական ծառայության առանձին պաշտոնների համար՝ որակավորման չափանիշներ, այդ թվում միջազգայնորեն ընդունված հավաստագրման համակարգեր: Այդ չափանիշները, քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությունը ստանալուց հետո, ամրագրվում են քաղաքացիական ծառայության համապատասխան պաշտոնների անձնագրերում՝ մինչև սույն օրենքով սահմանված կարգով այդ պաշտոնները զբաղեցնելը:

## ԳԼՈՒԽ 3.
## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼԸ

### Հոդված 8. Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելը

1. Քաղաքացիական ծառայության պաշտոնները զբաղեցվում են անժամկետ՝ մրցույթի արդյունքում կամ վարկանիշային ցուցակներից կամ փոխադրման կամ վերակազմակերպման և/կամ կառուցվածքային փոփոխության արդյունքում կամ կադրերի ռեզերվից՝ մինչև սույն օրենքով սահմանված տարիքի լրանալը և որոշակի ժամկետով՝ ժամկետային աշխատանքային պայմանագրով կամ տեղափոխության արդյունքում կամ գործուղման դեպքում:

2. Սույն օրենքով սահմանված կարգով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

### Հոդված 9. Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի տեսակները, առանձնահատկությունները

1. Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը (այսուհետ՝ մրցույթ) հիմնված է հավասար հնարավորությունների և արժանիքների վրա:

2. Մրցույթը դասակարգվում է երկու տեսակի՝ արտաքին և ներքին:

3. Մրցույթներն անցկացնում են համապատասխան մարմինները, բացառությամբ գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, որն անցկացնում է քաղաքացիական ծառայության գրասենյակը:

4. Մրցույթ անցկացնելու համար նախապատրաստական աշխատանքները իրականացնում է համապատասխան մարմնի անձնակազմի կառավարման ստորաբաժանումը:

5. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի գլխավոր քարտուղարի մրցույթը կազմակերպում և անցկացնում է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը:

### Հոդված 10. Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը

1. Մրցույթը հայտարարվում է քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո երեք ամսվա ընթացքում: Եթե հայտարարված մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել կամ ներկայացված բոլոր դիմումներում առկա է սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկը, ինչպես նաև, եթե մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած անձանցից ոչ մեկը չի ներկայացել կամ մրցույթի մասնակիցներից ոչ մեկը չի հաղթահարել թեստավորման փուլը կամ հարցազրույցի փուլ անցած մասնակիցներից ոչ մեկը չի հաղթահարել հարցազրույցի փուլը կամ հաղթահարել է հարցազրույցի փուլը և պաշտոնի նշանակման համար դիմում չի ներկայացրել, ապա տվյալ պաշտոնի համար մրցույթ հայտարարվում է մեկ ամսվա ընթացքում:

2. Մինչև արտաքին մրցույթ հայտարարելը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ կարող է անցկացվել ներքին մրցույթ: Քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար կարող է անցկացվել մեկ ներքին մրցույթ: Եթե ներքին մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել կամ ներկայացված բոլոր դիմումներում առկա է սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկը, ինչպես նաև, եթե ներքին մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած անձանցից ոչ մեկը չի ներկայացել կամ ներքին մրցույթի մասնակիցներից ոչ մեկը չի հաղթահարել թեստավորման փուլը կամ հարցազրույցի փուլ անցած մասնակիցներից ոչ մեկը չի հաղթահարել հարցազրույցի փուլը կամ

հաղթահարել է հարցազրույցի փուլը և պաշտոնի նշանակման համար դիմում չի ներկայացրել, ապա անցկացվում է արտաքին մրցույթ: Ներքին մրցույթին կարող են մասնակցել տվյալ մարմնի հանրային ծառայողները և քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողները:

3. Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը, մրցույթն անցկացնող համապատասխան մարմինը, հրապարակում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ` մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնող մարմնի կայքում, քաղաքացիական ծառայության գրասենյակի կայքում և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև այն բնագավառները, որոնցից կազմված է լինելու թեստը:

4. Քաղաքացին չի մասնակցում մրցույթին, եթե չի բավարարում սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով և 17-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները և/կամ առկա է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը և/կամ առկա է սույն օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված հիմքը:

5. Մրցույթին մասնակցելու համար քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է էլեկտրոնային տարբերակով: Մրցույթի մասնակցության հարցը որոշում է գլխավոր քարտուղարը` անձնակազմի կառավարման ստորաբաժանման կողմից տրված եզրակացության հիման վրա: Մրցույթի մասնակցության որոշման մասին անձնակազմի կառավարման ստորաբաժանումը երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով տեղեկացնում է դիմող քաղաքացուն: Գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնի մրցույթի մասնակցության հարցը որոշում է քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարը` գրասենյակի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման կողմից տրված եզրակացության հիման վրա: Քաղաքացիական ծառայության գրասենյակը թեստավորման մասնակցության որոշման մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով տեղեկացնում է դիմող քաղաքացուն:

6. Մրցույթն անցկացվում է երկու փուլով` թեստավորում և հարցազրույց: Մրցույթն անցկացվում է, եթե դիմել է առնվազն մեկ քաղաքացի:

7. Թեստավորումն անցկացնում են համապատասխան մարմիններն էլեկտրոնային եղանակով` քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում:

8. Քաղաքացիական ծառայության պաշտոնների առանձնահատկություններից ելնելով կարող են կազմվել տարբեր բովանդակությամբ թեստեր: Թեստերը պետք է բխեն քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով սահմանված մասնագիտական գիտելիքների ու կոմպետենցիաների տիրապետմանը ներկայացվող պահանջներից: Թեստերում ընդգրկվող առաջադրանքների հարաբերակցությունն որոշվում է ըստ պաշտոնների ենթախմբերի, որքան ցածր է պաշտոնի ենթախումբն, այնքան գերակշռում են մասնագիտական գիտելիքների վերաբերյալ առաջադրանքները:

9. Թեստերում ընդգրկվող առաջադրանքները, որոնք վերաբերվում են մասնագիտական գիտելիքներին, կազմում և քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում տեղադրում է համապատասխան մարմինը, իսկ կոմպետենցիաների վերաբերյալ առաջադրանքները` կազմում և քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում տեղադրում է քաղաքացիական ծառայության գրասենյակը:

10. Գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների վերաբերյալ առաջադրանքները կազմում է քաղաքացիական ծառայության գրասենյակը:

11. Մրցույթի մասնակիցը պատասխանելով թեստում ընդգրկված առաջադրանքներին` անմիջապես տեղեկանում է իր ստացած արդյունքների մասին: Թեստավորման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում մրցույթի մասնակիցն, իր արդյունքների մասով, կարող է բողոք ներկայացնել գլխավոր քարտուղարին: Գլխավոր քարտուղարն, , քննում է դիմումը և ընդունում է արդյունքները փոփոխելու կամ նույնը թողնելու մասին որոշում: Գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնի համար անցկացվող մրցույթի թեստավորման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում մրցույթի մասնակիցն, իր արդյունքների մասով, կարող է բողոք ներկայացնել քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարին: Քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարը քննում է դիմումը և ընդունում է արդյունքները փոփոխելու կամ նույնը թողնելու մասին որոշում:

12. Մրցույթի երկրորդ` հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք են ձեռք բերում կառավարության կողմից սահմանած միավորից բարձր առավելագույն միավորներ ստացած հինգ մասնակիցը: Եթե միևնույն արդյունք ունենալու դեպքում հնարավոր չէ պարզել առավելագույն միավորներ հավաքած և թեստավորման փուլը հաղթահարած հինգ մասնակիցին, ապա միևնույն առավելագույն միավորներ հավաքած մասնակիցներն անցնում են հարցազրույցի փուլ: Թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցների թիվը հինգից պակաս լինելու դեպքում բոլոր մասնակիցներն իրավունք են ձեռք բերում մասնակցելու հարցազրույցի փուլին, եթե հավաքել են թեստավորման փուլը հաղթահարելու համար անհրաժեշտ միավորը:

13. Հարցազրույցն անցկացնում է տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից ձևավորված հանձնաժողովը, բացառությամբ գլխավոր քարտուղարի

քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, որի դեպքում հանձնաժողովը ձևավորում է քաղաքացիական ծառայության գրասենյակը` համակարգող փոխվարչապետի կողմից հաստատված հանձնաժողովի անդամության թեկնածուների ցանկից:
14. Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից ձևավորված հանձնաժողովի կազմում ընդգրկվում են տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը, այն կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը, որի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարվել է տվյալ մրցույթը, անձնակազմի կառավարման ստորաբաժանման ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը, ինչպես նաև տվյալ պաշտոնի համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների տիրապետման մակարդակը ստուգելու կարողություններ ունեցող այլ անձինք:
15. Հանձնաժողովը կազմված է առնվազն հինգ անդամից:
16. Հարցազրույցի փուլը հաղթահարում է մեկ մասնակից: Հարցազրույցի արդյունքում հանձնաժողովը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին ներկայացնում է եզրակացություն, հարցազրույցի մասնակիցների վերաբերյալ` նշելով հարցազրույցի փուլը հաղթահարած միակ մասնակցին: Հանձնաժողովի եզրակացությունը ստանալուց հետո, երեք աշխատանքային օրվա ընթացքում, պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, հարցազրույցի փուլը հաղթահարած միակ մասնակցին նշանակում է համապատասխան պաշտոնի:
17. Եթե երկու անգամ անընդմեջ հայտարարված արտաքին մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ ներկայացված բոլոր դիմումներում առկա է սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկը, ապա համապատասխան մարմինը, սույն օրենքով սահմանված կարգով, փոփոխում է տվյալ պաշտոնի համար սահմանված պահանջները:
18. Անվանացանկում կատարված լրացումների և փոփոխությունների արդյունքում առաջացած քաղաքացիական ծառայության նոր պաշտոնները, բացառությամբ համապատասխան մարմնի վերա-կազմակերպման և/կամ կառուցվածքային փոփոխության հետևանքով առաջացած քաղաքացիական ծառայության պաշտոնների, զբաղեցվում են մրցույթով:
19. Համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայողի առաջխաղացումը իրականացվում է միայն սույն օրենքով սահմանված մրցույթով:
20. Մրցույթի արդյունքում նույն համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության այլ պաշտոնի նշանակվելու դեպքում քաղաքացիական ծառայողի հետ վերջնահաշվարկ չի կատարվում:
21. Մրցույթն անվավեր է ճանաչվում դատական կարգով: Մրցույթն անվավեր ճանաչվելու դեպքում հայտարարվում է մրցույթ, որն անցկացվում է սույն օրենքով սահմանված կարգով:
22. Մրցույթ անցկացնելու կարգը սահմանում է կառավարությունը:
23. Թեստերի կազմման, թեստային առաջադրանքների ձևավորման, թեստային առաջադրանքների բովանդակային առանձնահատկությունները, թեստային առաջադրանքների քանակը, հարցազրույցի անցկացման մեթոդաբանությունը և ձևաչափը սահմանում է համակարգող փոխվարչապետը:

**Հոդված 11. Վարկանիշային ցուցակների կազմումը և վարկանիշային ցուցակներից պաշտոն զբաղեցնելը**
1. Քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթախմբերի պաշտոնները զբաղեցնելու համար հարցազրույցին մասնակցելու համար թեկնածուներն ընտրվում են վարկանիշային ցուցակներից:
2. Վարկանիշային ցուցակները կազմելու համար առնվազն տարին երկու անգամ քաղաքացիական ծառայության գրասենյակն անցկացվում է թեստավորում: Ելնելով թեստավորման մասնակիցների թվից` թեստավորումը կարող է անցկացվել մեկ կամ մի քանի խմբով տարբեր օրերի և/կամ ժամերի: Յուրաքանչյուր խմբի համար կազմվում է նոր թեստ:
3. Թեստավորմանը մասնակցելու համար քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է էլեկտրոնային տարբերակով: Թեստավորման մասնակցության հարցը որոշում է քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարը` համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման կողմից տրված եզրակացության հիման վրա: Քաղաքացիական ծառայության գրասենյակը թեստավորման մասնակցության որոշման մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով տեղեկացնում է դիմող քաղաքացուն:
4. Քաղաքացին չի մասնակցում թեստավորմանը, եթե չի բավարարում սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, 17-րդ հոդվածի 4-րդ մասով և «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով սահմանված պահանջները:
5. Թեստավորումը հաղթահարում են կառավարության կողմից սահմանած նվազագույն միավորից բարձր միավոր ստացած մասնակիցները: Թեստավորման արդյունքներով քաղաքացիական ծառայության գրասենյակն առցանց կարգով վարում է վարկանիշային համարակալված ցուցակ: Միևնույն արդյունք հավաքած թեկնածուները գրանցվում են նույն համարի տակ:
6. Համապատասխան մարմինները հարցազրույցի հրավիրում են վարկանիշային ցուցակի 1-5-րդ համարներում գրանցված անձանց, ովքեր բավարարում են քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները:

7. Եթե պաշտոնի անձնագրով նախատեսված է մասնագիտական բարձրագույն կրթության պահանջ և վարկանիշային ցուցակի 1-5-րդ համարներում չկա համապատասխան մասնագիտություն ունեցող հինգ թեկնածու, ապա հրավիրվում են տվյալ մասնագիտությունն ունեցող առաջին 5 թեկնածուները:
8. Վարկանիշային ցուցակում միանգամյա գրանցված լինելու առավելագույն ժամկետը 2 տարի է: Վարկանիշային ցուցակում գրանցման առավելագույն ժամկետը լրանալու օրվան հաջորդող օրը թեկնածուն ինքնաշխատ եղանակով հանվում է ցուցակից: Վարկանիշային ցուցակի թափուր համարները լրացվում են հաջորդաբար` նվազման կարգով ինքնաշխատ եղանակով:
9. Վարկանիշային ցուցակը համալրվում է թեստավորման բոլոր խմբերի արդյունքներն ամփոփելու հաջորդ աշխատանքային օրը:
10. Քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթախմբերի պաշտոնները զբաղեցնելու համար հարցազրույցը կազմակերպվում և անցկացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածի 13-16-րդ մասերով սահմանված կարգով: Պաշտոնի նշանակված թեկնածուն հանվում է վարկանիշային ցուցակից:
11. Վարկանիշային ցուցակների կազմման համար անցկացվող թեստավորման և հարցազրույցի կազմակերպման կարգը սահմանում է կառավարությունը:
12. Վարկանիշային ցուցակների կազմման համար անցկացվող թեստավորման թեստերի կազմման, թեստային առաջադրանքների ձևավորման, թեստային առաջադրանքների բովանդակային առանձնահատկությունները, թեստային առաջադրանքների քանակը սահմանում է համակարգող փոխվարչապետը:

**Հոդված 12. Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելը տեղափոխման, փոխադրման, գործուղման կարգով**

1. Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, մինչև երկու տարի ժամկետով, պատճառաբանված որոշմամբ կարող է տեղափոխություն կատարել կառուցվածքային ստորաբաժանումների հավասարազոր քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների միջև, եթե վերջիններս բավարարում են քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի պահանջները:
2. Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում` պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է նույն կամ այլ կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայողին յոթ աշխատանքային օրվա ընթացքում փոխադրել թափուր պաշտոնին, եթե վերջինս բավարարում է քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի պահանջները:
3. Փոխադրման (փոխադրումների) արդյունքում թափուր մնացած պաշտոնը կարող է զբաղեցվել սույն օրենքով սահմանված արտաքին մրցույթով:
4. Քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու դեպքում` մինչև սահմանված հիմքի վերացումը, պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է այլ կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայողին յոթ աշխատանքային օրվա ընթացքում փոխադրել այդ պաշտոնին, եթե վերջինս բավարարում է քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի պահանջները: Ժամանակավոր թափուր պաշտոնի փոխադրման դեպքում փոխադրված քաղաքացիական ծառայողի պարտականությունները կատարվում են տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող քաղաքացիական ծառայողի կողմից:
5. Գլխավոր քարտուղարը, աշխատանքային ծանրաբեռնվածությունը հաշվի առնելով, կարող է կառուցվածքային ստորաբաժանման մասնագիտական պաշտոնների խմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողին, առանց ծառայությունը դադարեցնելու, իր պաշտոնով փոխադրել այլ կառուցվածքային ստորաբաժանում: Տվյալ դեպքում քաղաքացիական ծառայողը պետք է իրականացնի նույնաբովանդակ աշխատանք, ինչպիսին իրականացնում էր մինչև փոխադրումը: Այս դեպքում պաշտոնի անձնագրում գործառույթների փոփոխություն չի կատարվում, այլ չափանիշներ և այլ պահանջներ չեն սահմանվում:
6. Փոխադրում իրականացվում է հավասարազոր քաղաքացիական ծառայության պաշտոնի:
7. Տեղափոխություն, փոխադրում իրականացվում է պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ, քաղաքացիական ծառայողի համաձայնությամբ: Համապատասխան մարմնի աշխատանքների կազմակերպման առանձնահատկություններով պայմանավորված` կառավարության որոշմամբ կարող են սահմանվել այն դեպքերը, երբ տեղափոխություն և/կամ փոխադրում իրականացնելիս քաղաքացիական ծառայողի համաձայնությունը չի պահանջվում:
8. Տեղափոխության, փոխադրման դեպքերում քաղաքացիական ծառայողի հետ վերջնահաշվարկ չի կատարվում:
9. Թափուր կամ ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու դեպքում մեկամսյա ժամկետում համապատասխան մարմինների ղեկավարների փոխադարձ համաձայնությամբ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը քաղաքացիական ծառայողի համաձայնությամբ մինչև երեք տարի ժամկետով քաղաքացիական ծառայողին կարող է գործուղել այլ համապատասխան մարմին հավասարազոր պաշտոն զբաղեցնելու համար: Տվյալ դեպքում քաղաքացիական ծառայողը պետք է

իրականացնի նույնաբովանդակ աշխատանք, ինչպիսին իրականացնում էր մինչև գործուղումը: Այս դեպքում քաղաքացիական ծառայողի հետ վերջնահաշվարկ չի կատարվում, իսկ սահմանված ժամկետի ավարտից հետո առանց վերջնահաշվարկ կատարելու քաղաքացիական ծառայողը զբաղեցնում է իր նախկին պաշտոնը: Թափուր պաշտոնը գործուղման արդյունքում զբաղեցնելու դեպքում մինչև գործուղման ավարտը տվյալ պաշտոնի համար մրցույթ չի հայտարարվում:
10. Տեղափախության, փոխադրման և գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու կարգը և պայմանները սահմանում է կառավարությունը՝ հաշվի առնելով համապատասխան մարմինների առանձնահատկությունները:
11. Տեղափախության, փոխադրման և գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու ժամանակ անձնակազմի կառավարման ընթացակարգային առանձնահատկությունները սահմանում է համակարգող փոխվարչապետը:

### Հոդված 13. Քաղաքացիական ծառայության պաշտոնը որոշակի ժամկետով զբաղեցնելը

1. Քաղաքացիական ծառայության պաշտոնը որոշակի ժամկետով զբաղեցվում է՝
1) հղիության և ծննդաբերության արձակուրդի.
2) մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի.
3) պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու.
4) քաղաքացիական ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության.
5) եռամսյա ժամկետը գերազանցող վերապատրաստման կամ ծառայողական գործուղման մեկնելու.
6) 12-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված դեպքում.
7) օրենքով սահմանված այլ դեպքերում:
2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված դեպքերում այդ պաշտոնները զբաղեցվում են՝ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությամբ՝ տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող քաղաքացիական ծառայողի կողմից կամ սույն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով կամ հաշվի առնելով սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով և 17-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները և «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերը՝ մեկ այլ անձի հետ, այդ թվում՝ ռեզերվում գտնվող, ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելով:
3. Չի թույլատրվում այլ անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքել, եթե քաղաքացիական ծառայության տվյալ թափուր պաշտոնն առաջացել է այդ անձի ծառայությունը սույն օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 2-4-րդ, 6-10-րդ և 16-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով դադարեցվելու հետևանքով:
4. Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանում է կառավարությունը:

### Հոդված 14. Կադրերի ռեզերվից քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելը

1. Համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում, մինչև մրցույթ հայտարարելը, պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է այդ պաշտոնում նշանակել քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվից սույն օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով ժամկետային աշխատանքային պայմանագրով պաշտոն զբաղեցնող այն քաղաքացիական ծառայողին, ով ռեզերվում գրանցվել է՝ ազատվելով տվյալ մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնից:

### Հոդված 15. Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առանձնահատուկ դեպքերը և քաղաքացիական ծառայության կազմակերպման առանձնահատկությունները

1. Պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվող քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց պաշտոնի նշանակման, վերապատրաստման, կատարողականի գնահատման, ծառայողական քննությունների հետ կապված առանձնահատկությունները և քաղաքացիական ծառայության այդ պաշտոնների ցանկը հաստատում է համակարգող փոխվարչապետը՝ համապատասխան մարմնի ղեկավարի առաջարկությամբ՝ համաձայնեցնելով ազգային անվտանգության լիազոր մարմնի ղեկավարի հետ:
2. «Դիվանագիտական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով գործուղված դիվանագետների կողմից քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու կարգը և դեպքերը սահմանում է կառավարությունը, իսկ պաշտոնների ցանկը՝ համակարգող փոխվարչապետը:
3. Վարչապետին, կառավարությանը և նախարարություններին ենթակա պետական մարմինները, որոնք չունեն աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ և գլխավոր քարտուղար, այդ մարմինների՝ քաղաքացիական ծառայության հարաբերությունների մասնակցությունն իրականացվում է այն համապատասխան մարմնի կողմից, որի ենթակայությամբ գործում են:

**Հոդված 16. Քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակումը և ազատումը (ծառայության դադարեցումը)**

1. Գլխավոր քարտուղարներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասում նախատեսվածմարմինների գլխավոր քարտուղարների:

2. Սույն մասում նշված մարմինների գլխավոր քարտուղարներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է.

1) Կենտրոնական ընտրական հանձնաժողովում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը.

2) Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովում՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահը.

3) Հաշվեքննիչ պալատում՝ Հաշվեքննիչ պալատի նախագահը.

4) Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում՝ Մարդու իրավունքների պաշտպանը.

5) Հայաստանի Հանրապետության դատախազությունում՝ գլխավոր դատախազը.

6) Հայաստանի Հանրապետության քննչական մարմիններում՝ քննչական մարմինների ղեկավարները.

7) Հայաստանի Հանրապետության ինքնավար մարմիններում՝ ինքնավար մարմինների ղեկավարները:

3. Քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին, 2-րդ, 3-րդ ենթախմբերի պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին, ներքին աուդիտորներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համապատասխան մարմնի ղեկավարը:

4. Քաղաքացիական ծառայության մյուս պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է գլխավոր քարտուղարը:

**Հոդված 17. Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու փորձաշրջանը, առավելագույն տարիքը**

1. Մրցույթի արդյունքում քաղաքացիական ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձի նշանակումն իրականացվում է փորձաշրջանով՝

1) ղեկավար պաշտոնների խմբի համար՝ 12 ամիս.
2) մասնագիտական պաշտոնների 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ ենթախմբի պաշտոնների համար՝ 9 ամիս.
3) մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթախմբի պաշտոնների համար՝ 6 ամիս:

2. Փորձաշրջանի ընթացքում քաղաքացիական ծառայողը չի կարող սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով զբաղեցնել քաղաքացիական ծառայության այլ պաշտոն: Փորձաշրջանի ընթացքում մրցույթի արդյունքում այլ պաշտոնի նշանակվելու դեպքում քաղաքացիական ծառայողի նկատմամբ սահմանվում է փորձաշրջան:

3. Փորձաշրջանի հետ կապված առանձնահատկությունները սահմանում է համակարգող փոխվարչապետը՝ հաշվի առնելով պաշտոնների խմբերը, ենթախմբերը, պաշտոնների առանձնահատկությունները:

4. Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը 65 տարին է: Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալու դեպքում տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ քաղաքացիական ծառայողը կարող է մինչև մեկ տարի ժամկետով շարունակել զբաղեցնել իր պաշտոնը:

## ԳԼՈՒԽ 4.
## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

**Հոդված 18. Քաղաքացիական ծառայողի կատարողականի գնահատումը**

1. Քաղաքացիական ծառայողի կատարողականն աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքի արդյունքները և այդ արդյունքներին հասնելու արդյունավետությունն է, որը գնահատվում է անմիջական ղեկավարի կողմից:
2. Կատարողականի գնահատումն իրականացվում է տարին մեկ անգամ: Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին իրականացվում է կատարողականի ընթացիկ գնահատում:

3. Կատարողականի գնահատականի, այդ թվում ընթացիկ, հետ համաձայն չլինելու դեպքում քաղաքացիական ծառայողը կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով այն բողոքարկել՝ գնահատումն իրականացրած պաշտոնատար անձի անմիջական ղեկավարին:
4. Կատարողականի գնահատման արդյունքները հիմք են սահմանված կարգով խրախուսում և/կամ վերապատրաստման անհատական ծրագրեր կազմելու, ինչպես նաև հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում նախապատվության իրավունքից օգտվելու համար:
5. Քաղաքացիական ծառայողի կատարողականի գնահատման կարգը սահմանում է կառավարությունը՝ հաշվի առնելով համապատասխան մարմինների առանձնահատկությունները:

Հոդված 19. Քաղաքացիական ծառայողի վերապատրաստումը

1. Քաղաքացիական ծառայողներն իրավունք ունեն և պարտավոր են բարելավել իրենց մասնագիտական գիտելիքները և կոմպետենցիաները շարունակական մասնագիտական զարգացման սկզբունքի վրա հիմնված վերապատարաստումներին մասնակցելու միջոցով:
2. Համապատասխան մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները վերապատրաստումները կազմակերպելու և այդ վերապատրաստումներին քաղաքացիական ծառայողների մասնակցությունն ապահովելու համար:
3. Համապատասխան մարմիններում վերապատրաստման գործընթացը կազմակերպում է գլխավոր քարտուղարը:
4. Վերապատրաստումն իրականացվում է յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի համար ըստ անհատական ծրագրի, որը կազմվում է (փոփոխվում) քաղաքացիական ծառայողի տարեկան կատարողականի գնահատմանը զուգընթաց իրականացված վերապատրաստման կարիքների գնահատումից:
5. Վերապատրաստում անցկացվում է նաև քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով քաղաքացիական ծառայողի մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների տիրապետման նոր պահանջների սահմանման դեպքում՝ քաղաքացիական ծառայողի կամ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի նախաձեռնությամբ:
6. Վերապատրաստման մասնակցության առավելագույն ժամկետը 6 ամիս է:
7. Գլխավոր քարտուղարը վերապատրաստման կարիքների գնահատման արդյունքներն ամփոփելուց հետո կազմում է համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագիրը, որը ներառում է վերապատրաստման կարիքները, վերապատրաստման եղանակները, հատկացված կրեդիտները, ժամանակի բաշխվածությունը, վերապատրաստում իրականացնող կազմակերպությունները, վերապատրաստում իրականացնող մասնագետների թեկնածուները և համակարգող փոխվարչապետի որոշմամբ սահմանված այլ չափանիշները և այդ ծրագիրը ներկայացնում է քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնեցմանը:
8. Քաղաքացիական ծառայության գրասենյակն ուսումնասիրում է ծրագիրը և տալիս է համաձայնություն վերապատրաստման ծրագիրը հաստատելու համար: Համաձայնությունը ստանալուց հետո գլխավոր քարտուղարը հաստատում է վերապատրաստամաան ծրագիրը և քաղաքացիական ծառայողներին տեղեկացնում է այդ ծրագրից բխող քաղաքացիական ծառայողի վերապատրաստամաան անհատական ծրագիրը: Հաշվեքննիչ պալատում վերապատրաստման ծրագիրը հաստատում է Հաշվեքննիչ պալատը:
9. Գլխավոր քարտուղարն անհրաժեշտության դեպքում սույն հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով սահմանված կարգով կարող է վերանայել վերապատրաստման ծրագիրը:
10. Կոմպետենցիաների վերաբերյալ վերապատրաստումները կազմակերպում է քաղաքացիական ծառայության գրասենյակը, իսկ մասնագիտական գիտելիքների վերաբերյալ վերապատրաստումները՝ համապատասխան մարմինը:
11. Համապատասխան մարմինների ծրագրերի ուսումնասիրության ժամանակ քաղաքացիական ծառայության գրասենյակը կարող է առաջարկել վերանայել վերապատրաստման ծրագիրն, ինչպես նաև այդ ծրագրերում կարող է ներառել նաև կոմպետենցիաների վերաբերյալ կազմված վերապատրաստման ծրագրերը:
12. Վերապատրաստման հետ կապված ծախսերը կատարվում են պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:
13. Վերապատրաստումների արդյունքում քաղաքացիական ծառայողը ստանում է կրեդիտներ: Անհատական ծրագրով հաստատված համապատասխան կրեդիտները ստանալուց հետո քաղաքացիական ծառայողը համարվում է վերապատրաստված:
14. Սույն օրենքի հիման վրա վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքների գնահատման և անհատական ծրագրի կազմման, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագրի կազմման, միջազգային

հավաստագրերի ճանաչելիության սկզբունքները, տեսակները սահմանում է համակարգող փոխվարչապետը:

## ԳԼՈՒԽ 5.
## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Հոդված 20. Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվող խրախուսանքի տեսակները

1. Երկարամյա ծառայության և/կամ ծառայողական պարտականությունները և/կամ հանձնարարականները (առաջադրանքները) բարեխղճորեն կատարելու, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ տեսակները.

1) շնորհակալության հայտարարում.
2) դրամական պարգևատրում.
3) հուշանվերով պարգևատրում.
4) պատվոգրով (մեդալով) պարգևատրում.
5) լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում.
6) կարգապահական տույժի հանում:

2. Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել նաև օրենսդրությամբ սահմանված խրախուսման այլ տեսակներ:

3. Քաղաքացիական ծառայողի նկատմամբ խրախուսանքները կիրառում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

4. Քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին, 2-րդ, 3-րդ ենթախմբերի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին, որպես խրախուսանք, Հանրապետության Նախագահի կողմից օրենքով սահմանված կարգով կարող է շնորհվել բարձրագույն դասային աստիճաններ:

5. Բարձրագույն դասային աստիճաններն են՝ քաղաքացիական ծառայության առաջին դասի պետական խորհրդականի դասային աստիճան, քաղաքացիական ծառայության երկրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան, քաղաքացիական ծառայության երրորդ դասի պատական խորհրդականի դասային աստիճան: Դասային աստիճաններից բարձրը՝ քաղաքացիական ծառայության առաջին դասի պետական խորհրդականի դասային աստիճանն է:

### Հոդված 21. Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվող կարգապահական պատասխանատվության միջոցները և առանձնահատկությունները, կարգապահական տույժ կիրառելու որոշումը, պաշտոնից ազատելու կամ ծառայության դադարեցման մասին որոշումը բողոքարկելը

1. Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու և/կամ ոչ պատշաճ կատարելու և/կամ ծառայողական լիազորությունները վերազանցելու և/կամ աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու և/կամ քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները խախտելու և/կամ հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու և/կամ շահերի բախման կանոնները, նվերներ ընդունելու արգելքը խախտելու դեպքերում քաղաքացիական ծառայողի նկատմամբ սահմանված կարգով կիրառվում են սույն օրենքով սահմանված կարգապահական տույժերը:

2. Կարգապահական տույժերը դասակարգվում են երկու տեսակի՝ թեթև կարգապահական տույժեր և խիստ կարգապահական տույժեր:

1) թեթև կարգապահական տույժերն են՝
ա. նախազգուշացում.
բ. նկատողություն.

2) խիստ կարգապահական տույժերն են՝
ա. խիստ նկատողություն.
բ. աշխատավարձի իջեցում մինչև 20 տոկոսով, բայց ոչ ավելի քան բազային աշխատավարձի չափը.
գ. ծառայության դադարեցում:

3. Կարգապահական տույժ կիրառվում է ծառայողական քննություն անցկացնելուց հետո:

4. Կարգապահական տույժ նշանակվում է, եթե երեք ամսից ավելի չի անցել խախտման հայտնաբերման օրվանից՝ չհաշված քաղաքացիական ծառայողի ժամանակավոր անաշխատունակության պատճառով բացակայության, գործուղման, վերապատրաստման կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածները:

5. Կարգապահական տույժ նշանակվել չի կարող, եթե վեց ամսից ավելի է անցել խախտում կատարելու օրվանից: Եթե խախտումը հայտնաբերվում է ֆինանսատնտեսական գործունեության, գումարային կամ այլ արժեքների ստուգման այդ թվում և գույքագրման ընթացքում, ապա

կարգապահական տույժը կարող է կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է ոչ ավելի, քան երեք տարի:
6. Կարգապահական տույժ նշանակելիս հաշվի են առնվում խախտման բնույթը, բովանդակությունը, այն հանգամանքները, որի պարագայում կատարվել է խախտումը, խախտման արդյունքում վրա հասած հետևանքները, նախկինում քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարգապահական տույժեր կիրառված լինելու և/կամ խախտումներ կատարած լինելու հանգամանքները:
7. Կարգապահական տույժի մասին քաղաքացիական ծառայողին հաղորդվում է ոչ ուշ, քան կարգապահական տույժ նշանակելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:
8. Յուրաքանչյուր խախտման համար, կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ: Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված նախատեսված կարգապահական տույժը կրկին անգամ չի կարող կիրառվել, եթե կարգապահական տույժը հանված չէ կամ չի լրացել սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված ժամկետը:
9. Եթե քաղաքացիական ծառայողը թեթև կարգապահական տույժ նշանակելու օրվանից վեց ամսվա ընթացքում նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, իսկ խիստ կարգապահական տույժ նշանակելու օրվանից մեկ տարվա ընթացքում նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա նա համարվում է կարգապահական տույժի չենթարկված:
10. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգապահական տույժերը քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:
11. Քաղաքացիական ծառայողն իր նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու, պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու մասին որոշումը կարող է բողոքարկել պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի անմիջական ղեկավարին կարգապահական տույժ կիրառելու մասին, պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու մասին որոշմանը ծանուցվելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում:
12. Սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված կարգով բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող ակտի կատարումը:
13. Սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված բողոքարկման կարգը չի տարածվում քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները խախտելու, հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու, շահերի բախման կանոնները խախտելու, նվերներ ընդունելու արգելքը խախտելու դեպքերում կիրառված կարգապահական տույժերի վրա: Նշված դեպքերում կիրառված կարգապահական տույժերը բողոքարկվում են դատական կարգով:
14. Քննարկելով բերված բողոքը՝ իրավասու պաշտոնատար անձն իրավասու է՝
1) բավարարելու բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ փոփոխել կարգապահական տույժի տեսակը կամ ճանաչել կարգապահական տույժ կիրառելու մասին կամ պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու մասին որոշումն անվավեր.
2) մերժել բողոքը՝ կարգապահական տույժ կիրառելու մասին կամ պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու մասին որոշումը թողնելով անփոփոխ:
15. Քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու մասին որոշումն անվավեր ճանաչվելու դեպքում քաղաքացիական ծառայողը վերականգնվում է իր պաշտոնում վարչական կամ դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում և հարկադիր պարապուրդի դիմաց ստանում է հատուցում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով:
16. Քաղաքացիական ծառայողն իր նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու, այդ թվում՝ քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու մասին որոշումը կարող է բողոքարկել դատական կարգով:
17. Քաղաքացիական ծառայողների նկատմամբ սույն օրենքով սահմանված կարգով կարող է կիրառվել նյութական պատասխանատվություն՝ օրենքով սահմանված չափով:

Հոդված 22. Ծառայողական քննությունը
1. Սույն օրենքով նախատեսված դեպքերում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն նշանակում է ծառայողական քննություն՝ նշելով ծառայողական քննության անցկացման հիմքերը, պարզաբանման ենթակա հարցերը և անցկացման եղանակը:
2. Քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումների, շահերի բախման, նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ հարցերի ուսումնասիրության համար նշանակված ծառայողական քննությունն անցկացնում է քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովը:
3. Քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումների, շահերի բախման, նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ այլ անձի դիմումի և/կամ լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա ծառայողական քննություն նշանակում է գլխավոր քարտուղարը:

4. Ծառայողական քննության անցկացման ժամանակ, անհրաժեշտության դեպքում ծառայողական քննություն նշանակած պաշտոնատար անձն, իր որոշմամբ, կարող է ներգրավվել ծառայողական քննության արդյունքներով չշահագրգռված մասնագետ՝ խորհրդատվություն տրամադրելու համար:

5. Ծառայողական քննություն անցկացնելու ընթացքում քաղաքացիական ծառայողի (քաղաքացիական ծառայողների) ծառայողական պարտականությունների կատարումը ծառայողական քննություն անցկացնելու ժամկետում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է կասեցնել՝ պահպանելով քաղաքացիական ծառայողի վարձատրությունը:

6. Ծառայողական քննության նյութերում հանցագործությունների և/կամ զանցանքների հատկանիշներ հայտնաբերելու դեպքերում այդ մասին հայտնվում է համապատասխան պետական մարմիններին և ծառայողական քննությունը կասեցվում է:

7. Ծառայողական քննության արդյունքում ծառայողական քննություն վարողը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին ներկայացնում է եզրակացություն, որն առնվազը ներառում է ծառայողական քննությամբ պարզված հանգամանքները և դրանց վերաբերյալ հետևությունները, անհրաժեշտության դեպքում համապատասխան առաջարկություններ և դրանց վերաբերյալ հիմնավորումներ:

8. Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն սույն օրենքի 21-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված ժամկետից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է եզրակացությունը և ընդունում համապատասխան որոշում, բացառությամբ սույն օրենքի 35-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

9. Ծառայողական քննություն անցկացնելու կարգը սահմանում է կառավարությունը:

**Հոդված 23. Քաղաքացիական ծառայողի իրավական վիճակը համապատասխան մարմնի վերակազմակերպման և կառուցվածքային փոփոխության ժամանակ**

1. Համապատասխան մարմնի վերակազմակերպումը և/կամ կառուցվածքային փոփոխությունը քաղաքացիական ծառայողին պաշտոնից ազատելու (լիազորությունները դադարեցնելու) հիմք չէ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ուղեկցվում են համապատասխան մարմնի վերակազմակերպմամբ և/կամ կառուցվածքային փոփոխությամբ պայմանավորված հաստիքների և/կամ քաղաքացիական ծառայության պաշտոնների կրճատմամբ և/կամ համապատասխան մարմնի վերակազմակերպմամբ և/կամ կառուցվածքային փոփոխությամբ պայմանավորված պաշտոնների անձնագրերում այնպիսի նոր պահանջների սահմանմամբ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստման արդյունքում:

2. Վերակազմակերպմամբ և/կամ կառուցվածքային փոփոխությամբ պայմանավորված հաստիքների և/կամ քաղաքացիական ծառայության պաշտոնների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը տրվում է հղի կամ մինչև երեք տարեկան երեխա խնամող կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում՝ քաղաքացիական ծառայության առավել երկար աշխատանքային ստաժ և վերջին երեք տարվա ընթացքում կատարողականի գնահատման ավելի բարձր արդյունքներ ունեցող քաղաքացիական ծառայողին: Նշված պայմանների հավասարության կամ բացակայության դեպքերում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունը որոշում է համապատասխան մարմնի ղեկավարը:

3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան մարմնի աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունը որոշում է համապատասխան մարմնի ղեկավարը:

4. Կառուցվածքային փոփոխության ժամանակ կառուցվածքային փոփոխության ենթարկվող կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայողը իր հաստիքային միավորով կարող է տեղափոխվել կառուցվածքային փոփոխության չենթարկվող կառուցվածքային ստորաբաժանում՝ հավասարազոր կամ ցածր քաղաքացիական ծառայության պաշտոնի՝ իր համաձայնությամբ:

5. Համապատասխան մարմնի վերակազմակերպման և/կամ կառուցվածքային փոփոխության հետևանքով քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում առաջացած պաշտոնները զբաղեցվում են անվանացանկում փոփոխություններ կատարելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով:

6. Համապատասխան մարմնի վերակազմակերպման և/կամ կառուցվածքային փոփոխության ժամանակ քաղաքացիական ծառայողը վերանշանակվում է մինչև վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոնին հավասարազոր պաշտոնի կամ ավելի ցածր պաշտոնի իր համաձայնությամբ, բացառությամբ առաջխաղացման դեպքի: Առաջխաղացման դեպքում քաղաքացիական ծառայողի հետ կնքվում է ժամկետային աշխատանքային պայմանագիր և հայտարարվում է մրցույթ տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար:

7. Քաղաքացիական ծառայության այն պաշտոնները, որոնք չեն համալրվել սույն հոդվածով սահմանված կարգով, զբաղեցվում են մրցույթով:

8. Վերակազմակերպման և/կամ կառուցվածքային փոփոխության արդյունքում քաղաքացիական ծառայողի հետ վերջնահաշվարկ չի կատարվում:

9. Վերակազմակերպման և/կամ կառուցվածքային փոփոխության արդյունքում, եթե անվանացանկից հանվում է սույն օրենքի 12-րդ հոդվածի 9-րդ մասով գործուղված քաղաքացիական ծառայողի պաշտոնն, ապա գործուղման ժամկետի ավարտից հետո քաղաքացիական ծառայողին առաջարկվում է հավասարազոր կամ ցածր պաշտոն: Եթե քաղաքացիական ծառայողը չի տալիս համաձայնություն առաջարկված պաշտոնում նշանակվելու համար, ապա վերջինս գրանցվում է կադրերի ռեզերվում:

10. Վերակազմակերպման և/կամ կառուցվածքային փոփոխության արդյունքում անձնակազմի կառավարման ընթացակարգային առանձնահատկությունները սահմանում է համակարգող փոխվարչապետը:

**Հոդված 24. Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվը**

1. Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվը քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում վարում են համապատասխան մարմինները:
2. Գործունեությունը դադարած մարմինների կադրերի ռեզերվը վարում, վարձատրությունը տրամադրում է քաղաքացիական ծառայության գրասենյակը:
3. Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում, իրենց դիմումի համաձայն, գրանցվում են սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-6-րդ կետերով նախատեսված հիմքերով քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատված քաղաքացիական ծառայողները:
4. Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված լինելու միանգամյա առավելագույն ժամկետը վեց ամիս է, բայց ոչ ավելի, քան կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողի 65 տարին լրանալը: Քաղաքացիական ծառայողը իր դիմումի համաձայն կարող է հանվել ռեզերվից վաղաժամկետ:
5. Կադրերի ռեզերվում գրանցված լինելու ժամանակահատվածը համարվում է քաղաքացիական ծառայության ստաժ: Քաղաքացիական ծառայողը օրենքով սահմանված կարգով երեք ամիս ստանում է վարձատրություն այն համապատասխան մարմնից, որտեղ զբաղեցրել է քաղաքացիական ծառայության պաշտոն:
6. Կադրերի ռեզերվում գրանցվելու դեպքում քաղաքացիական ծառայողի հետ վերջնահաշվարկ չի կատարվում: Այս դեպքում քաղաքացիական ծառայողի հետ վերջնահաշվարկը կատարվում է, եթե քաղաքացիական ծառայողի լիազորությունները դադարում են սույն օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով նախատեսված հիմքով:
7. Եթե քաղաքացիական ծառայողը սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված կարգով զբաղեցնում է քաղաքացիական ծառայության պաշտոն նույն համապատասխան մարմնում, ապա այս դեպքում կադրերի ռեզերվից դուրս գալու դեպքում վերջնահաշվարկ չի կատարվում, իսկ այլ համապատասխան մարմնում զբաղեցնելու դեպքում կատարվում է վերջնահաշվարկ:
8. Եթե քաղաքացիական ծառայողը սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կարգով զբաղեցնում է քաղաքացիական ծառայության պաշտոն, ապա այս դեպքում կադրերի ռեզերվից դուրս գալու դեպքում վերջնահաշվարկ չի կատարվում:
9. Քաղաքացիական ծառայողը հանվում է կադրերի ռեզերվից հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու կամ այլ աշխատանքի անցնելու դեպքում:
10. Ռեզերվում գրանցված ժամանակ քաղաքացիական ծառայողը չունի արձակուրդի իրավունք և վերջնահաշվարկի մեջ ռեզերվում գրանցված լինելու ժամանակահատվածը չի հաշվարկվում:
11. Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվը վարելու, կադրերի ռեզերվում գրանցելու և կադրերի ռեզերվից հանելու կարգը սահմանում է կառավարությունը:

**Հոդված 25. Քաղաքացիական ծառայողի անձնական գործը և քաղաքացիական ծառայողների գրանցամատյանը**

1. Քաղաքացիական ծառայողի ծառայողական գործունեության ընթացքն արտացոլվում է նրա անձնական գործում:
2. Քաղաքացիական ծառայողի անձնական գործը գրանցամատյանի բաղկացուցիչ մաս է, որը քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում վարում է համապատասխան մարմինը:
3. Գրանցամատյան վարելու ընթացակարգային առանձնահատկությունները սահմանում է համակարգող փոխվարչապետը:

**Հոդված 26. Քաղաքացիական ծառայողի վարձատրությունը**

1. Յուրաքանչյուր քաղաքացիական ծառայող, առանց որևէ խտրականության, ունի աշխատանքի համար համարժեք վարձատրության իրավունք:
2. Քաղաքացիական ծառայողը, այդ թվում՝ քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողը, ստանում է վարձատրություն՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

## ԳԼՈՒԽ 6.
## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Հոդված 27. Քաղաքացիական ծառայողի աշխատանքային հարաբերությունները
1. Քաղաքացիական ծառայողների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:
2. Քաղաքացիական ծառայողների աշխատանքային այն հարաբերությունները, որոնք կարգավորված չեն սույն օրենքով և/կամ հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ:
3. Քաղաքացիական ծառայողների միջև ծառայողական փոխհարաբերությունները կարգավորվում են աշխատանքային ներքին կարգապահական կանոններով:

### Հոդված 28. Քաղաքացիական ծառայողի աշխատանքային (ծառայության) ժամերը
1. Աշխատանքային (ծառայության) ժամերն այն ժամանակահատվածն է, որի ընթացքում օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի համաձայն քաղաքացիական ծառայողը պարտավոր է կատարել իր ծառայողական պարտականությունները, ինչպես նաև այլ ժամանակահատվածներ, որոնք օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի համաձայն ներառվում են աշխատաժամանակում և/կամ :
2. Քաղաքացիական ծառայողի աշխատանքային ժամերը կարող են փոխվել, եթե դա պայմանավորված է տվյալ մարմնում աշխատանքների կազմակերպման առանձնահատկություններով:
3. Գործադիր իշխանության մարմիններում աշխատանքային ժամերը սահմանում է կառավարությունը՝ հաշվի առնելով համապատասխան մարմնում աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները:

### Հոդված 29. Քաղաքացիական ծառայողի ծառայողական գործուղումը
1. Քաղաքացիական ծառայողի ծառայողական գործուղում է համարվում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի համապատասխան իրավական ակտի հիման վրա քաղաքացիական ծառայողի մշտական ծառայողական վայրից որոշակի ժամկետով այլ վայր մեկնելը՝ ծառայողական որոշակի պարտականություններ կատարելու համար:
2. Գլխավոր քարտուղարի ծառայողական գործուղման որոշում կայացնում է համապատասխան մարմնի ղեկավարը:
3. Քաղաքացիական ծառայողին ծառայողական գործուղման պայմաններն ու կարգը սահմանում է կառավարությունը:

### Հոդված 30. Քաղաքացիական ծառայողի արձակուրդը
1. Քաղաքացիական ծառայողն ունի ամենամյա նվազագույն և ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք:
2. Քաղաքացիական ծառայողի ամենամյա արձակուրդի տևողությունը 20 աշխատանքային օր է, իսկ լրացուցիչ արձակուրդի տևողությունը 4 աշխատանքային օր:
3. Քաղաքացիական ծառայողին հերթական և/կամ լրացուցիչ արձակուրդը պետք է տրամադրվի այնպես, որ չխոչընդոտի տվյալ կառուցվածքային ստորաբաժանման բնականոն գործունեությանը:
4. Առանձին դեպքերում, անձնական կամ ընտանեկան հանգամանքներից ելնելով, քաղաքացիական ծառայողին կարող է մեկ տարվա ընթացքում տրամադրվել չվճարվող արձակուրդ՝ ոչ ավելի, քան երեսուն օր:
5. Քաղաքացիական ծառայողին արձակուրդ տրամադրելու կարգը և պայմանները սահմանում է կառավարությունը:
6. Քաղաքացիական ծառայողներին արձակուրդ տրամադրում է գլխավոր քարտուղարը, իսկ գլխավոր քարտուղարին՝ համապատասխան մարմնի ղեկավարը:

### Հոդված 31. Քաղաքացիական ծառայության ստաժը
1. Քաղաքացիական ծառայության ստաժը ներառում է քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու, քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված լինելու, համապատասխան մարմիններում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը, աշխատած ողջ ժամանակաշրջանը:

2. Քաղաքացիական ծառայության ստաժը չի ներառում սույն օրենքով սահմանված կարգի խախտմամբ՝ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու, քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված լինելու, ինչպես նաև օրենքի խախտմամբ համապատասխան մարմին-ներում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը աշխատած ժամանակաշրջանը:
3. Քաղաքացիական ծառայության ստաժը հաշվարկվում է քաղաքացիական ծառայողի ընդհանուր աշխատանքային ստաժում:
4. Սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված հիմքով՝ քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատված անձի պետական պաշտոն զբաղեցնելու ժամանակաշրջանի աշխատանքային ստաժը հավասարեցվում է քաղաքացիական ծառայության ստաժին:
5. Համապատասխան մարմիններում փորձնակ գրանցված ժամանակաշրջանը սույն օրենքի իմաստով հաշվարկվում է որպես հանրային ծառայության ստաժ՝ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար: Փորձնակ գրանցված ժամանակաշրջանում աշխատանքների մասնակցության համար փորձնակը չի վարձատրվում:
6. Փորձնակ գրանցելու և աշխատանքների մասնակցության առանձնահատկությունները սահմանում է համակարգող փոխվարչապետը:

**Հոդված 32. Քաղաքացիական ծառայողի կողմից ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք գործադրելը և համազգեստը**

1. Համապատասխան մարմինների առջև դրված խնդիրների առանձնահատկություններով պայմանավորված քաղաքացիական ծառայողը կարող է կրել համազգեստ և/կամ զենք, ինչպես նաև կարող է գործադրել ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ:
2. Քաղաքացիական ծառայողի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման, զենք տրամադրելու, զենքը պահելու, կրելու, օգտագործելու կարգը, պայմանները, համազգեստների նկարագրերը և այդ մարմինների ցանկը սահմանում է կառավարությունը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

## ԳԼՈՒԽ 7.
## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ

**Հոդված 33. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովը**

1. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի կազմում ընդգրկվելու համար համապատասխան մարմինների գլխավոր քարտուղարները քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում լրացնում են համակարգող փոխվարչապետի կողմից սահմանված պահանջները բավարարող երկու քաղաքացիական ծառայողի թեկնածություն: Գլխավոր քարտուղարը չի կարող լինել էթիկայի հանձնաժողովի անդամ:
2. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովը բաղկացած է հինգ անդամից: Յուրաքանչյուր դեպքի համար ձևավորվում է քաղաքացիական ծառայողների էթիկայի առանձին հանձնաժողով:
3. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողով ձևավորելու իրավական հիմք առաջանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան մարմնի բարեվարքության հարցերով կազմակերպիչը էլեկտրոնային ծրագրի միջոցով պատահականության սկզբունքով ձևավորում է քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողով՝ կազմում պարտադիր ընդգրկելով տվյալ մարմնի՝ քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի անդամի թեկնածուներից մեկին: Էլեկտրոնային ծրագիրը պատահականության սկզբունքով պաշտոնով ավելի բարձր քաղաքացիական ծառայողին ընտրում է քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի նախագահ: Տվյալ մարմնի ներկայացուցիչը չի կարող լինել քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի նախագահ:
4. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի անդամն իր լիազորություններն իրականացնելիս ենթարկվում է միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին, անկախ է իրեն առաջադրած պաշտոնատար անձից:
5. Քաղաքացիական ծառայողը, որպես հանձնաժողովի անդամ և դրանից հետո, չի կարող կարգապահական պատասխանատվության ենթարկվել իր՝ որպես հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող գործողությունների համար, բացառությամբ անհարգելի պատճառով հանձնաժողովի աշխատանքից բացակայելու դեպքերի:

**Հոդված 34. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի գործունեությունը**

1. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովն աշխատանքները կազմակերպում է ծառայողական քննության կարգին համապատասխան:
2. Հանձնաժողովի նախագահը կատարում է աշխատանքների բաշխում հանձնաժողովի անդամների միջև:
3. Հանձնաժողովը ծառայողական քննության վերաբերյալ եզրակացություն ընդունում է` գումարելով հանձնաժողովի նիստ: Նիստն իրավազոր է, եթե դրան ներկա է քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի առնվազն երեք անդամ:
4. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովը անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև վարքագծի ուղենիշային սկզբունքների և դրանցից բխող վարքագծի կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն և մեթոդական աջակցություն ստանալու համար կարող է դիմել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:
5. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովը հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերներ ընդունելու արգելքի, վարքագծի կանոնների խախտումների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված առաջարկություններ է ներկայացնում համապատասխան մարմնին կամ պաշտոնատար անձին:

**Հոդված 35. Պատասխանատվության առանձնահատկությունները քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները խախտելու, հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու, շահերի բախման կանոնները, նվերներ ընդունելու արգելքը խախտելու դեպքերում**

1. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովը ծառայողական քննության արդյունքում ընդունած եզրակացությունն անմիջապես ուղարկվում է ծառայողական քննության կողմերին:
2. Քաղաքացիական ծառայողն անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների խախտումների վերաբերյալ քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի եզրակացությունը կարող է բողոքարկել այն ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում` Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:
3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամկետում բողոք ներկայացնելը հիմնավորող փաստաթղթի բացակայության դեպքում, իսկ վարքագծի կանոնները խախտելու և/կամ շահերի բախման կանոնները և/կամ նվերներ ընդունելու արգելքը խախտելու վերաբերյալ քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի եզրակացությունն ստանալուց հետո, իսկ բողոքարկման դեպքում համապատասխան եզրակացությունը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, գլխավոր քարտուղարն եզրակացությունը հրապարակում է այդ մարմնի կայքէջում:
4. Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն, եզրակացության հրապարակումից հետո, երեք աշխատանքային օրվա ընթացքում, քննարկում է եզրակացությունը և արդյունքների մասին տեղեկատվությունը հրապարակում այդ մարմնի կայքէջում:

**Հոդված 36. Բարեվարքության հարցերով կազմակերպիչը**

1. Համապատասխան մարմինների անձնակազմի կառավարման ստորաբաժանումում նախատեսվում է բարեվարքության հարցերով կազմակերպչի քաղաքացիական ծառայության պաշտոն:

2. Բարեվարքության հարցերով կազմակերպիչը`

1) քաղաքացիական ծառայողներին տրամադրում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերներ ընդունելու արգելքի, վարքագծի կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն, ներկայացնում շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություն.
2) իրականացնում է բարեվարքության հարցերով վերապատրաստման կարիքների բացահայտում և վերապատրաստման ծրագրերի, ինչպես նաև բարեվարքության պահանջների պահպանմանն ուղղված այլ ծրագրերի մշակում.
3) համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարի, էթիկայի հանձնաժողովի պահանջով կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկով կատարում է բարեվարքության համակարգին առնչվող ուսումնասիրություններ.
4) մշակում է քաղաքացիական ծառայողների բարեվարքության պլանների նախագծերը, դրանք ներկայացնում գլխավոր քարտուղարի հաստատմանը.

5) վարում է քաղաքացիական ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման, նվերների ընդունման արգելքի խախտման դեպքերի վիճակագրություն.

## ԳԼՈՒԽ 8.
## ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ, ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼԸ

**Հոդված 37. Քաղաքացիական ծառայողին պաշտոնից ազատելու և ծառայության դադարման հիմքերը**

1. Քաղաքացիական ծառայողին պաշտոնից ազատելու հիմքերն են՝
1) անձնական դիմումը.
2) հաստիքների և/կամ սույն օրենքի 23-րդ հոդվածով սահմանված դեպքում քաղաքացիական ծառայության պաշտոնի կրճատումը.
3) սույն օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերում քաղաքացիական ծառայության պաշտոնի չնշանակվելը.
4) քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու որոշումն անվավեր ճանաչելը և անձին քաղաքացիական ծառայության իր պաշտոնում վերականգնելը.
5) համապատասխան մարմնի գործունեության դադարումը.
6) սույն օրենքի 23-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված դեպքում քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակվելուն համաձայնություն չտալը.
7)հանրային պաշտոնում ընտրվելը կամ նշանակվելը:
2. Քաղաքացիական ծառայողի լիազորությունները դադարում են՝
1) նրա մահվան դեպքում.
2) սույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելու դեպքում.
3) սույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված կարգապահական տույժերը մեկ տարվա ընթացքում կիրառելու դեպքում.
4) սույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը կիրառելու դեպքում.
5) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան չորս ամիս անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ավելի քան 140 օր աշխատանքի չներկայանալու դեպքում՝ չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդը.
6) սույն օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու դեպքում.
7) քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակելու՝ սույն օրենքով սահմանված կարգի խախտումը՝ քաղաքացիական ծառայության գրասենյակի միջնորդությամբ.
8) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու դեպքերում՝ համապատասխան եզրակացության հիման վրա.
9) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու դեպքում.
10) ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք: Անձի կողմից տուգանքի վճարման ժամանակացույցով սահմանված պարտավորությունների կատարումը խախտելու դեպքում տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինվելու դեպքում ծառայությունը դադարեցվում է:
11) քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու՝ սույն օրենքով սահմանված առավելագույն տարիքը լրանալու դեպքում.
12) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում.
13) դատական կարգով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկվելու դեպքում.
14) կառավարության հաստատված հիվանդություններից որևէ մեկով հիվանդանալու դեպքում.
15) ռեզերվից հանվելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ քաղաքացիական ծառայողը զբաղեցնում է հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն.
16) երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալը.
17) անձնական դիմումը:
3. Երկու տարի անընդմեջ կատարողականի տարեկան գնահատման արդյունքները կառավարության կողմից սահմանած տոկոսից (միավորից) ցածր լինելու դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իրավունք ունի դադարեցնել քաղաքացիական ծառայողի լիազորությունները:
4. Քաղաքացիական ծառայողի ծառայությունը չի կարող դադարեցվել սույն հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետով, եթե առկա է 1-16-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

5. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և սույն հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետով նախատեսված հիմքերով քաղաքացիական ծառայողը ազատվում է զբաղեցրած պաշտոնից կամ դադարեցվում է ծառայությունը, դիմում ներկայացնելուց հետո՝ երրորդ աշխատանքային օրը, եթե այդ դիմումում ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ: Մինչև համապատասխան իրավական ակտի ընդունումը քաղաքացիական ծառայողը կարող է հետ վերցնել ներկայացրած դիմումը:
6. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերի, բացառությամբ 17-րդ կետով նախատեսված հիմքի, ի հայտ գալու դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, երկու աշխատանքային օրվա ընթացքում, ընդունում է քաղաքացիական ծառայողի լիազորությունները դադարելու մասին համապատասխան իրավական ակտ:
7. Սույն հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերով նախատեսված հիմքերով քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատելու դեպքում քաղաքացիական ծառայողներին այդ մասին նախազգուշացնելը պարտադիր չէ:
8. Սույն հոդվածի 2-րդ մասի 2-5-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով ծառայությունը դադարեցրած անձը մինչև մեկ տարին լրանալը չի կարող մասնակցել քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի մրցույթին:
9. Մինչև քաղաքացիական ծառայության զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին կամ լիազորությունները դադարելու մասին իրավական ակտն ընդունելը՝ համապատասխան մարմինը քաղաքացիական ծառայողից պահանջում է վերջինիս գործավարությանը հանձնված նյութերը և օգտագործմանը տրամադրված գույքը: Քաղաքացիական ծառայողը պարտավոր է անհապաղ կատարել այդ պահանջը:

## ԳԼՈՒԽ 9.
## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

### Հոդված 38. Քաղաքացիական ծառայության կազմակերպումը և ղեկավարումը

1. Քաղաքացիական ծառայության ղեկավարումը, միասնականությունը, սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ապահովում է վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը:
2. Քաղաքացիական ծառայության գրասենյակը հաշվետու է վարչապետին, կառավարությանը և համակարգող փոխվարչապետին:
3. Քաղաքացիական ծառայության գրասենյակը՝

1) իրականացնում է համապատասխան մարմինների մարդկային ռեսուրսների կառավարման մեթոդական ղեկավարումը և վերահսկողությունը.

2) ուսումնասիրում և վերլուծում է համապատասխան մարմիններում հանրային ծառայության օրենսդրության կիրառման պրակտիկան, մշակում և կառավարության, վարչապետի և համակարգող փոխվարչապետի քննարկմանն է ներկայացնում հանրային ծառայությանն առնչվող համապատասխան իրավական ակտերի նախագծերը.

3) իրականացնում է վերլուծություններ բացահայտելու հոսունության դինամիկան դրան նպաստող պայմանները, հայտարարված մրցույթներին դիմորդներ չլինելու պատճառները՝ այդ թվում պաշտոնների սխալ գնահատումը, չափանիշների սահմանումը, ենթախմբերի դասակարգումը.

4) մշակում է պետական մարմիններում աշխատանքի վարձատրության քաղաքականությունը.

5) կառավարության սահմանած կարգով իրականացնում է աշխատանքի շուկայի վերլուծություն ըստ մասնագիտությունների և տարածքների.

6) իրականացնում է կատարողականի գնահատման արդյունքների մոնիտորինգ և կատարում համապատասխան վերլուծություններ.

7) իրականացնում է վերապատրաստման արդյունքների ուսումնասիրություն և վերլուծություն.

8) կառավարություն առաջարկություններ է ներկայացնում համապատասխան մարմինների վերակազմակերպման, գործունեության դադարման, կառուցվածքային փոփոխությունների ժամանակ քաղաքացիական ծառայության հետ կապված հարցերի վերաբերյալ.

9) ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում համապատասխան մարմիններ.

10) համապատասխան և այլ մարմիններից ստանում է քաղաքացիական ծառայության հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն.

11) անձնակազմի կառավարման աշխատանքների կազմակերպման մասով տալիս է մեթոդական ցուցումներ.

12) իրականացնում է սույն օրենքով, այլ օրենքներով, դրանցից բխող իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

4. Քաղաքացիական ծառայության գրասենյակը, օրենքով սահմանված դեպքերում քաղաքացիական ծառայության որոշ ինստիտուտների, գործառույթների, ընթացակարգերի հետ կապված կարող է փորձարարական աշխատանքներ կազմակերպել համապատասխան մարմիններում:

**Հոդված 39. Գլխավոր քարտուղարը**

1. Գլխավոր քարտուղարը քաղաքացիական ծառայող է:
2. Համապատասխան մարմիններում մարդկային ռեսուրսների կառավարման, հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման պատասխանատուն գլխավոր քարտուղարն է:
3. Գլխավոր քարտուղարի լիազորությունները սահմանվում են սույն օրենքով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով:
4. Սույն օրենքով սահմանված գլխավոր քարտուղարի լիազորություններն իրականացնում են օրենքով նախատեսված դեպքերում քաղաքացիական ծառայող համարվող աշխատակազմի ղեկավարը, դատական դեպարտամենտի ղեկավարը, վարչական պաշտոն զբաղեցնող աշխատակազմի ղեկավարը:
5. Անվտանգության խորհրդի գրասենյակում սույն օրենքով սահմանված գլխավոր քարտուղարի լիազորություններն իրականացնում է անվտանգության խորհրդի քարտուղարը, իսկ մարմնի ղեկավարին վերապահված լիազորությունները՝ վարչապետը:
6. Այն տեսչական մարմնում, որի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված չէ գլխավոր քարտուղարի պաշտոն, սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով, 10-րդ հոդվածի 5-րդ և 11-րդ մասերով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 19-րդ հոդվածի 3-րդ և 7-9-րդ մասերով, 22-րդ հոդվածի 3-րդ մասով, 30-րդ հոդվածի 6-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասով և 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված լիազորություններն իրականացնում է տեսչական մարմնի ղեկավարը: Տեսչական մարմնի օրենքով նախատեսված ստորաբաժանման ղեկավարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետի աշխատակազմի ղեկավարը:

## ԳԼՈՒԽ 10
## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ

**Հոդված 40. Քաղաքացիական ծառայության կազմակերպման որոշ առանձնահատկություններ**

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում աշխատանքների փորձարարական կազմակերպման համար նախատեսված քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը կարող են ներառել աշխատանքային ստաժի և փորձի, կրթության, ենթակա և հաշվետու լինելու սույն օրենքով սահմանված պահանջներից և չափանիշներից տարբերվող այլ չափանիշներ և պահանջներ:
2. Այդ չափանիշները և պահանջները սահմանվում են աշխատանքների փորձարարական կազմակերպման ծրագրում և սույն օրենքով սահմանված կարգով ներառվում են քաղաքացիական ծառայության այդ պաշտոնների անձնագրերում:
3. Աշխատանքների փորձարարական կազմակերպման համար նախատեսված քաղաքացիական ծառայության պաշտոնները զբաղեցվում են միայն սույն օրենքով նախատեսված մրցութային կարգով:

## ԳԼՈՒԽ 11
## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**Հոդված 41. Օրենքի ուժի մեջ մտնելը**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հուլիսի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 33-36-րդ, 38-րդ, 42-րդ և 49-րդ հոդվածների: 33-36-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2019 թվականի հունվարի 1-ից, իսկ 38-րդ, 42-րդ և 49-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:
2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած ճանաչել «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի N ՀՕ-272 օրենքը, բացառությամբ 9-րդ և 10-րդ հոդվածների:
3. «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի N ՀՕ-272 օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածներն ուժը կորցրած են ճանաչվում սույն օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 60-րդ օրը:

4. 2019 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի մայիսի 19-ի N ՀՕ-26-Ն օրենքը, «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 նոյեմբերի 28-ի N ՀՕ-286-Ն օրենքը:

**Հոդված 42. Քաղաքացիական ծառայության գրասենյակի կազմավորումը**

1. Քաղաքացիական ծառայության գրասենյակի՝ քաղաքացիական ծառայության պաշտոնները, մինչև սույն օրենքով սահմանված մրցութային կարգով զբաղեցնելը զբաղեցվում են ժամկետային աշխատանքային պայմանագրով՝ այլ անձնաց կողմից:

**Հոդված 43. Քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի գործունեության դադարեցումը**

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահը տասնհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի տիրապետման և օգտագործման իրավունքով հանձնված գույքը, ինչպես նաև միջազգային ծրագրերի իրականացման արդյունքով ստացված գույքը, քաղաքացիական ծառայության ինստիտուտների բարեփոխման համար միջազգային դոնոր կազմակերպությունների և/կամ սեփական միջոցներով իրականցված ուսումնասիրությունների, վերլուծությունների, կազմված ծրագրերի արդյունքները հանձնում է վարչապետի աշխատակազմ, իսկ արխիվային փաստաթղթերը՝ Ազգային արխիվ:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողության իրականացումից հետո, քաղաքացիական ծառայության աշխատակազմի քաղաքացիական ծառայողները վեց ամիս ժամկետով գրանցվում են քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողության իրականացումից հետո դադարում է քաղաքացիական ծառայության խորհրդի գործունեությունը:

**Հոդված 44. Սույն օրենքից բխող իրավական ակտերն ընդունելը**

1. Քաղաքացիական ծառայության գրասենյակի կազմավորումից հետո մեկամսյա ժամկետում վարչապետի հաստատմանն է ներկայացվում ժամանակացույց և միջոցառումների ծրագիր սույն օրենքի գործողության ոլորտը սահմանված մարմինների վրա տարածելու համար:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում ընդունել սույն օրենքի կատարումն ապահովող կառավարության որոշումները:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում ընդունել սույն օրենքի կատարումն ապահովող փոխվարչապետի որոշումները:

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մինչև սույն թվականի դեկտեմբերի 31-ը սույն օրենքին համապատասխանեցնել պետական ծառայության մյուս օրենքները՝ հիմք ընդունելով սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը, մասնավորապես՝ առանձնահատկություններ սահմանվում են զինվորական ծառայություն անցնող պետական ծառայողների պաշտոնների, ոստիկանության գործառույթներ իրականացնող ոստիկանության ծառայողների պաշտոնների, փրկարարական ծառայության պաշտոնների, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պետական ծառայության պաշտոնների, քրեակատարողական ծառայության բարձրագույն խմբի պաշտոնների և քրեակատարողական ծառայության հատուկ նշանակության ստորաբաժանման պաշտոնների, հարկադիր կատարողների պաշտոնների, դիվանագիտական ծառայության պաշտոնների, հարկային մարմնում հետաքննչական, օպերատիվ հետախուզական, գործառույթներ իրականացնող պաշտոնների, մաքսային մարմիններում իրավապահ գործառույթներ իրականացնող պաշտոնների, նախաքացթողումային հսկողություն, ներքին անվտանգության ապահովման գործառույթներ իրականացնող պաշտոնների, ինչպես նաև մաքսատան և մաքսակետի պաշտոնների, դատական ծառայողների՝ դատավորի օգնականի, դատավորի գործավարի և դատական նիստերի քարտուղարի պաշտոնների, դատական կարգադրիչների ծառայության պաշտոնների համար:

5. Պետական ծառայողները համարվում են քաղաքացիական ծառայողներ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամանակացույցին համապատասխան առանց մրցույթի նշանակվում են քաղաքացիական ծառայության համապատասխան պաշտոններում:

**Հոդված 45. Գործառույթների իրականացման առանձնահատկությունները մինչև սույն օրենքով նախատեսված էլեկտրոնային ծրագրերի կազմելը**

1. Մինչև սույն օրենքով նախատեսված էլեկտրոնային ծրագրերի կազմումը քաղաքացիական ծառայության գրասենյակը այդ գործընթացները կազմակերպում և գործառույթներն իրականացնում է ոչ էլեկտրոնային եղանակով՝ համակարգող փոխվարչապետի կողմից սահմանված կարգին համապատասխան:

2. Պաշտոնների դասակարգման և չափանիշների սահմանման սույն օրենքով սահմանված պահանջները համապատասխան մարմինների վրա տարածվում է համակարգող փոխվարչապետի կողմից սահմանված ժամանակացույցին համապատասխան: Մինչ նոր չափանիշներով պաշտոնների գնահատումներն իրականացնելը և չափանիշներ սահմանելը գործում են մինչ սույն օրենքն ուժի մեջ մտնելը հաստատված պաշտոնների անձնագրերը:
3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամանակացույցին համապատասխան պաշտոնների դասակարգման նոր համակարգին անցնելու դեպքում քաղաքացիական ծառայողները վերանշանակվում են իրենց պաշտոններում առանց մրցույթի և ժամկետային պայմանագրի:

**Հոդված 46. էթիկայի հանձնաժողովի ձևավորումը և բարեվարքության հարցերով կազմակերպիչների նշանակումը**

1. Մինչև սույն օրենքով նախատեսված էթիկայի հանձնաժողովի ձևավորումը` քաղաքացիական ծառայության գրասենյակը և/կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը էթիկայի հանձնաժողովի անդամների թեկնածուների համար կազմակերպում են բարեվարքության հարցերով վերապատրաստումներ:
2. Բարեվարքության հարցերով կազմակերպիչների պաշտոնների անձնագրերը հաստատվում են 2019 թվականի հունվարի երրորդ տասնօրյակում:

**Հոդված 47. Իրավահաջորդության որոշ դրույթներ**

1. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կիրառված խրախուսանքի (պարգևատրման), կարգապահական տույժի միջոցները պահպանում են իրենց իրավական հետևանքները և հաշվի են առնվում սույն օրենքով նախատեսված կարգապահական տույժեր և խրախուսանքի տեսակներ կիրառելիս:
2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը տրամադրված արձակուրդները պահպանում են իրենց իրավական հետևանքները: Նախկինում չօգտագործված և տեղափոխված արձակուրդները պահպանվում են և տրամադրվում են մինչ սույն օրենքն ուժի մեջ մտնելն գործող կարգին համապատասխան:
3. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը հրապարակված մրցույթները անցկացվում են մրցույթի հրապարակման ժամանակ գործող կարգին համապատասխան:
4. Պետական ծառայության պաշտոններում օրենքով սահմանված կարգով փոխարինող և/կամ պայմանագրով պաշտոն զբաղեցնող և/կամ ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող անձիք շարունակում են իրենց պարտականությունների կատարումը մինչև տվյալ պաշտոնների համար սահմանված հիմքերի վերացումը, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:
5. Վերապատրաստման, ատեստավորման (կատարողականի գնահատման) հարաբերությունների իրավական հետևանքները, ինչպես նաև արդեն իսկ նախատեսված և իրականացվող գործողությունները պահպանում են իրենց իրավական ուժը:
6. Ստացած դասային աստիճանները, կոչումները պահպանվում են:
7. Կրտսեր պաշտոններ զբաղեցնելու համար գործող հավաստագիր ունեցող անձիք ընդգրկվում են վարկանիշային ցուցակներում սույն օրենքով սահմանված կարգին համապատասխան:
8. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, այն մարմինները, որոնց վրա սույն օրենքի գործողությունը տարածվելու է համաձայն սույն օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամանակացույցի, այդ մարմիններում պետական ծառայողական հարաբերությունները կարգավորվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող կարգին համապատասխան:
9. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան վեց ամիս աշխատանքի չներկայանալու` չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամկետները հաշվարկվում են նաև սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո: և իրավական հետևանքներն առաջանում են սույն օրենքով սահմանված ժամկետները լրանալու դեպքերում:
10. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելն նախատեսված վերապատրաստումները կազմակերպվում և անցկացվում են մինչ սույն օրենքն ուժի մեջ մտնելն գործող կարգին համապատասխան:
11. Պաշտոնների դասակարգման նոր համակարգին անցնելը ծառայությունը դադարեցնելու հիմք չէ: Քաղաքացիական ծառայողը վերանշանակվում է նոր պաշտոնին: Նոր պաշտոնի նշանակվելը չի հանգեցնում քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետների վերահաշվարկի:
12. Պաշտոնների դասակարգման նոր համակարգին անցնելիս քաղաքացիական ծառայողը պահպանում է իր աշխատավարձը, եթե նոր դասակարգմամբ լինի պաշտոնի ենթախմբի (սանդղակի մակարդակի) իջեցում:

13. Մինչ սույն օրենքն ուժի մեջ մտնելը դասային աստիճանի համար հաշվարկվող հավելավճարը տրվում է տվյալ պաշտոնը զբաղեցնելու ժամանակահատվածում: Պաշտոնի փոփոխության դեպքում հավելավճարը չի հաշվարկվում:

14. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողները համարվում են քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից վարվող ռեզերվում գրանցված և ստանում են սահմանված վարձատրությունը մինչ սույն օրենքը ուժի մեջ մտնելը սահմանված ժամկետով:

15. «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի N ՀՕ-272 օրենքն ուժը կորցնելը հիմք չէ քաղաքացիական ծառայության պաշտոններից ազատելու համար, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

16. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո պետական ծառայողին սույն օրենքով սահմանված կարգով քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակելու դեպքում, համապատասխան ծառայողի համար վերջին պաշտոնում սահմանված պաշտոնային դրույքաչափը «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պահպանվում է:

17. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո քաղաքացիական (պետական) ծառայողին սույն օրենքով սահմանված կարգով քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակելու դեպքում, որը պայմանավարված է պաշտոնների դասակարգման նոր համակարգին անցնելով, համապատասխան ծառայողի համար վերջին պաշտոնում սահմանված պաշտոնային դրույքաչափը «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պահպանվում է:

18. Եթե պետական ծառայողի նշանակումը պայմնավորված չէ սույն հոդվածի 16-17-րդ մասերով նախատեսված պայմաններով, ապա նրա համար պաշտոնային դրույքաչափը որոշվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

19. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով քաղաքացիական հատուկ ծառայողների համար սահմանված հավասարեցումը տարածվում է այդ մարմինների քաղաքացիական ծառայողների վրա:

20. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով զինծառայողների համար սահմանված արտոնությունները գործում են քաղաքացիական ծառայող դառնալուց հետո այն կարգավորումներով ինչ նախատեսված է քաղաքացիական հատուկ ծառայողների համար:

21. Քաղաքացիական ծառայության ստաժում չի ներառվում համապատասխան մարմիններում քաղաքացիական աշխատանքը և տեխնիկական սպասարկում իրականացնելու ժամանակահատվածները:

22. Քաղաքացիական ծառայության խորհրդի մասնակցությամբ դատական գործերում սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո դատական ներկայացուցչության հարցերը սահմանում է կառավարությունը՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

**Հոդված 48. Գլխավոր քարտուղարի պաշտոն սահմանելը**

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում մինչև սույն օրենքով սահմանված գլխավոր քարտուղարի պաշտոն նախատեսելը, սույն օրենքով գլխավոր քարտուղարի համար սահմանված լիազորությունները իրականացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանապետը:

**Հոդված 49. Կառավարության և Հանրապետության նախագահի աշխատակազմերի քաղաքացիական ծառայողների իրավական վիճակի որոշ առանձնահատկություններ**

1. Վարչապետի աշխատակազմի ստեղծման մասին վարչապետի որոշումն ուժի մեջ մտնելու պահից Կառավարության աշխատակազմը լուծարվում է: Կառավարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողները շարունակում են պաշտոնավարել՝ ստանալով մինչև լուծարումը գործող աշխատավարձը և ենթակա չեն գրանցման քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում: Կառավարության աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը շարունակում է ուժի մեջ մնալ մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը:
2. Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անցավանացանկը հաստատվում է «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի N ՀՕ-272 օրենքին համապատասխան: Պաշտոնների անվանացանկի հաստատումից հետո մինչև 2018 թվականի հուլիսի մեկը Կառավարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողները պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար

անձնաց կողմից նշանակվում են վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոններում՝ առանց մրցույթի և վերջնահաշվարկի՝ նույն խմբի պաշտոններում: Չնշանակված քաղաքացիական ծառայողները մինչև հուլիսի մեկը ստանում են աշխատավարձ և այդ ժամանակահատվածը համարվում է քաղաքացիական ծառայության ստաժ: Չնշանակված քաղաքացիական ծառայողների հետ հուլիսի 1-ին կատարվում է վերջնահաշվարկ և վերջիններս վեց ամիս ժամանակահատվածով, իրավունքի ուժով, համարվում են քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված և վեց ամիս օրենքով սահմանված չափով և կարգով քաղաքացիական ծառայության գրասենյակից ստանում են վարձրատրություն:

3. Հանրապետության նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատվում է «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի N ՀՕ-272 օրենքին համապատասխան: Նոր անվանացանկի հաստատումից հետո Նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայողները պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձնաց կողմից նշանակվում են Նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոններում՝ առանց մրցույթի և վերջնահաշվարկի՝ նույն ենթախմբի պաշտոններում: Մինչև 2018 թվականի ապրիլի 9-ը հաստատված անվանացանկը շարունակում է ուժի մեջ մնալ մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը: Չնշանակված քաղաքացիական ծառայողները մինչև հուլիսի մեկը ստանում են աշխատավարձ և այդ ժամանակահատվածը համարվում է քաղաքացիական ծառայության ստաժ: Չնշանակված քաղաքացիական ծառայողների հետ հուլիսի 1-ին կատարվում է վերջնահաշվարկ և վերջիններս վեց ամիս ժամանակահատվածով, իրավունքի ուժով, համարվում են քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված և վեց ամիս օրենքով սահմանված չափով և կարգով քաղաքացիական ծառայության գրասենյակից ստանում են վարձրատրություն:
4. Մինչև հուլիսի մեկը կառավարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողները կարող են առանց մրցույթի նշանակվել Հանրապետության նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայության նույն խմբի պաշտոններում:
5. Մինչև հուլիսի մեկը Հանրապետության նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայողները կարող են առանց մրցույթի նշանակվել Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության նույն խմբի պաշտոններում:
6. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված դեպքերում վերջնահաշվարկ չի կատարվում և ստաժը չի ընդհատվում: Աշխատակազմերի փոփոխությունը աշխատավարձի և գործակցի հաշվարկի վրա չի ազդում, եթե վերջիններս զբաղեցնելու են նույն ենթախմբի պաշտոն, ինչպես նաև պահպանվում և հաշվի են առնվում նախկինում կիրառված կարգապահական տույժերը, խրախուսանքի միջոցները, կատարողականի գնահատման արդյունքները:
7. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված դեպքերում պաշտոն զբաղեցնելու ժամանակ քաղաքացիական ծառայողը զբաղեցրած պաշտոնից ազատվում է Նախագահի աշխատակազմում կամ Վարչապետի աշխատակազմում պաշտոն զբաղեցնելու հիմքով՝ իր դիմումի համաձայն:
8. Սույն հոդվածով նախատեսված նույն խմբի պաշտոններում նշանակման պահանջը չի տարածվում կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի պաշտոնի նշանակման դեպքերի վրա:
9. Սույն հոդվածով նախատեսված նշանակումների դեպքում քաղաքացիական ծառայողն իր համաձայնությամբ կարող է նշանակվել ավելի ցածր պաշտոնի:
10. Սույն հոդվածով սահմանված կարգով պաշտոնի նշանակումների դեպքում քաղաքացիական ծառայողը կիսամյակային հաշվետվությունների կամ կիսամյակային կատարողականների արդյունքում ստանում է պարգևատրումն, եթե կիսամյակային հաշվետվությունները կամ կիսամյակային կատարողականները գնահատվել են դրական: Գնահատումն իրականացվում է մինչև նոր մարմնում պաշտոն զբաղեցնելը: Նախկին և նոր մարմնում կատարված գնահատումների արդյունքով քաղաքացիական ծառայողը ստանում է պարգևատրում այն մարմնից, որտեղ զբբաղեցնում է քաղաքացիական ծառայության պաշտոն:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
## (Կ-268-15.02.2018-ՊԻՄԻ-011/0)
## ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Կ-268-15.02.2018,06.03.2018-ՊԻՄԻ-011/0)

**ՆԱԽԱԳԻԾ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## Օ Ր Ե Ն Ք Ը
## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
## ԳԼՈՒԽ 1
## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ծառայության կազմակերպման, քաղաքացիական ծառայության պաշտոնների դասակարգման, քաղաքացիական ծառայության պաշտոնների համալրման, քաղաքացիական ծառայողների կատարողականի գնահատման, վերապատրաստման, քաղաքացիական ծառայողի իրավական վիճակի, պաշտոնից ազատման, ծառայության դադարեցման, ինչպես նաև քաղաքացիական ծառայության՝ որպես պետական ծառայության առանձին տեսակի հետ կապված այլ հարաբերություններ:

**Հոդված 2. Սույն օրենքի գործողության շրջանակը**

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է օրենսդիր, գործադիր, դատական իշխանության մարմիններում, Հանրապետության Նախագահի աշխատակազմում, դատախազությունում, քննչական մարմիններում, անկախ պետական մարմիններում, ինքնավար մարմիններում, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում, ինչպես նաև կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա պետական մարմիններում (այսուհետ՝ համապատասխան մարմին) քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձանց վրա:

2. ~~Սույն օրենքի գործողությունը չի տարածվում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների, Կենտրոնական բանկի աշխատակիցների, դատական ծառայողների, դատական կարգադրիչների, «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պաշտոն զբաղեցնող անձանց վրա բացառությամբ՝ աջակցող մասնագիտական գործառույթներ իրականացնող պաշտոնների, ազգային անվտանգության մարմիններում «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով զինվորական ծառայություն անցնող պետական ծառայողների, պաշտպանության նախարարությունում «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով զինվորական ծառայություն անցնող պետական ծառայողների, ոստիկանության գործառույթներ իրականացնող պետական կառավարման մարմնում «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ոստիկանության ծառայողների վրա, «Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փրկարարական ծառայության ծառայողների վրա, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ծառայություն անցնող պետական ծառայողների, բացառությամբ աջակցող մասնագիտական գործառույթներ իրականացնող պաշտոնների, քրեակատարողական ծառայության բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող պետական ծառայողների վրա և Քրեակատարողական ծառայության հատուկ նշանակության ստորաբաժան ծառայողների վրա, «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պաշտոն զբաղեցնող անձանց վրա բացառությամբ՝ աջակցող մասնագիտական գործառույթներ իրականացնող պաշտոնների, «Դիվանագիտական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պաշտոն զբաղեցնող անձանց վրա, բացառությամբ՝ աջակցող մասնագիտական գործառույթներ իրականացնող պաշտոնների, քննչական մարմինների~~

~~ղեկավարների, տեղակալների և քննիչների վրա, «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան` հետաքննչական, օպերատիվ հետախուզական, ներքին անվտանգության ապահովման գործառույթներ իրականացնող անձանց վրա, «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մաքսային մարմիններում իրավապահ գործառույթներ իրականացնող անձանց, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան նախաքննչական հսկողություն, ներքին անվտանգության ապահովման գործառույթներ իրականացնող անձանց, ինչպես նաև մաքսատանը և մաքսակետում ծառայություն իրականացնող մաքսային ծառայողների վրա բացառությամբ` աջակցող մասնագիտական գործառույթներ իրականացնող պաշտոնների:~~2. Սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված մարմիններում պետական ծառայության հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, եթե այլ օրենքներով առանձնահատկություններ սահմանված չեն:
3. Պետական ծառայության այլ օրենքներով առանձնահատկություններ նախատեսող ծառայություններում (մարմիններում) աջակցող մասնագիտական գործառույթներ իրականացնող ծառայողները քաղաքացիական ծառայողներ են:

**Հոդված 3. Քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության իրավական ակտերը**

4. Քաղաքացիական ծառայության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, կառավարության, վարչապետի և քաղաքացիական ծառայութունը համակարգող փոխվարչապետի (այսուհետ` համակարգող փոխվարչապետ) որոշումներով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

5. Քաղաքացիական ծառայությ~~ան սկզբունքների,~~ունը կազմակերպվում է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով սահմանված սկզբունքների հիման վրա:

6. ~~ք~~Քաղաքացիական ծառայողների հիմնական իրավունքների և պարտականությունների, սոցիալական երաշխիքների, բարեվարքության համակարգի և այս իրավակարգավորումներից բխող այլ հարաբերություններ, որոնք պարտադիր են քաղաքացիական ծառայողների համար, կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

~~Կառավարությունն ընդունում է սույն օրենքից և հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից բխող քաղաքացիների իրավունքների իրականացման կարգեր և պայմաններ:~~

~~Համակարգող փոխվարչապետն ընդունում է իրավական ակտեր, որոնք աջակցում են քաղաքացիական ծառայության իրավահարաբերությունների մասնակիցներին պատշաճ կատարելու և պահպանելու սույն օրենքով և հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորումներից և կարգերից բխող պահանջները:~~

Քաղաքացիական ծառայության անցնող քաղաքացիների` սույն օրենքից բխող իրավունքների իրականացմանն առնչվող պայմանները և կարգերն ընդունում է կառավարությունը, իսկ ծառայության կազմակերպման առանձնահատկությունները սահմանում է համակարգող փոխվարչապետը:

**Հոդված 4. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.

1) **քաղաքացիական ծառայություն**` ~~քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից անկախ~~ արժանիքահեն, կարիերային առաջընթացով բնութագրվող, քաղաքական չեզոքություն պահանջող մասնագիտական գործունեություն, որը կատարվում է սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում նշված համապատասխան մարմիններում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այդ մարմիններին վերապահված ~~խնդիրների և գործառույթների~~ լիազորությունների իրականացման նպատակով.

2) **քաղաքացիական ծառայության պաշտոն**` համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող իրավական ակտերից և խնդիրներից բխող իրավունքներ ու պարտականություններ, մասնագիտական գիտելիքներ ու կոմպետենցիաներ ~~նախատեսող,~~ պահանջող ~~համապատասխան մարմնի այլ պաշտոնների ընդհանուր~~ կառավարման համակարգում տեղակայված, քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված հաստիքային միավոր.

3) **քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկ**` սույն ~~օրենքով~~ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով ձևավորված քաղաքացիական ծառայության բոլոր պաշտոնների ցանկ.

4) **քաղաքացիական ծառայող**` Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ով սույն օրենքով սահմանված կարգով զբաղեցնում է քաղաքացիական ծառայության պաշտոն և կատարում է այդ պաշտոնին վերապահված մասնագիտական գործունեություն կամ գրանցված է քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում և վարձատրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից.

5) **քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիր (աշխատատեղի նկարագիր)**` համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող իրավական ակտերից և խնդիրներից բխող քաղաքացիական ծառայողի գործառույթները, իրավունքները ու պարտականությունները, շփումները ու

հաշվետվողականությունը նկարագրող և այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ ու կոմպետենցիաներ նախատեսող, կառավարման համակարգում տեղակայվածությունը նախատեսող, սույն օրենքով սահմանված կարգով հաստատված փաստաթուղթ.
6) **քաղաքացիական ծառայողների վերապատրաստում**՝ քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների հետևողական և շարունակական կատարելագործում.
7) **քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվ**՝ ~~տիրույթ~~ռեեստր, որտեղ սույն օրենքով սահմանված դեպքերում և կարգով գրանցվում են քաղաքացիական ծառայության պաշտոններից ազատված քաղաքացիական ծառայողները.
8) **փորձնակ**՝ սույն օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով համապատասխան մարմիններում աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գրանցված անձ.
9) **բարեվարքության հարցերով կազմակերպիչ**՝ անձնակազմի կառավարման ստորաբաժանման քաղաքացիական ծառայող, ում պաշտոնի անձնագրում ամրագրված են քաղաքացիական ծառայողի բարեվարքության պահանջների մասով իրավունքներ և պարտականություններ.
10) **կոմպետենցիա**՝ գիտելիքների, ունակությունների, հմտությունների և վարքագծի ամբողջություն, որն անհրաժեշտ է պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթների արդյունավետ իրականացման համար.
11) **մասնագիտական գիտելիք**՝ տեղեկությունների, հասկացությունների, մտքերի, փաստերի և հանգամանքների ամբողջություն, որն անհրաժեշտ է պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթների արդյունավետ իրականացման համար.
12) **հավասարազոր պաշտոն**՝ քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում քաղաքացիական ծառայության պաշտոնի համապատասխան խմբի նույն ենթախմբում ընդգրկված քաղաքացիական ծառայության պաշտոն.
13) **ծառայողական քննություն**՝ քաղաքացիական ծառայողի ծառայողական պարտականությունների և/կամ բարեվարքության և/կամ նրա գործունեությանն առնչվող և/կամ աշխատանքային հարաբերությունների հետ կապված հարցերի ուսումնասիրություն.
14) **քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակ**՝ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի (այսուհետ՝ քաղաքացիական ծառայության գրասենյակ) կողմից կառավարվող էլեկտրոնային ծրագիր.
15) **մասնագիտական աշխատանքային ստաժ**՝ ստացած բարձրագույն կրթության, իսկ տվյալ պաշտոնի անձնագրով բարձրագույն մասնագիտական կրթություն նախատեսված լինելու դեպքում այդ կրթության մասին վկայող փաստաթղթում նշված որակավորմանը համապատասխանող աշխատանքային ստաժ, անկախ պետական կամ մասնավոր ոլորտներում կատարած աշխատանքից: Մասնագիտական աշխատանքային ստաժը ներառում է համապատասխան որակավորում ստանալուց հետո աշխատած ժամանակաշրջանը.
16) **ժամանակավոր թափուր պաշտոն**՝ սույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերով որոշակի ժամկետով թափուր պաշտոն:

## ԳԼՈՒԽ 2
## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ (ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ) ԵՎ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ, ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

### Հոդված 5. Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը (աշխատատեղի նկարագիրը) և անվանացանկը, հաստատելը (փոփոխելը)

8. Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը (աշխատատեղի նկարագիրը) սահմանվում է՝ ելնելով համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող իրավական~~ակտերից և նրա առջև դրված խնդիրներից~~ակտերով նրա առջև դրված խնդիրներով պայմանավորված կառավարչական տվյալ մակարդակին ներկայացվող մասնագիտական պահանջներից: Քաղաքացիական ծառայության յուրաքանչյուր պաշտոն ունի անվանում, որը հնարավորինս ճշգրիտ արտացոլում է քաղաքացիական ծառայության պաշտոնի հիմնական գործառույթները և չի կրում ընդհանրական բնույթ:
9. Համապատասխան մարմիններում քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատում է տվյալ մարմնի գլխավոր քարտուղարը, իսկ Հաշվեքննիչ պալատում՝ Հաշվեքննիչ պալատը:
10. Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի փոփոխությունը քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատման կամ ծառայությունը դադարեցնելու հիմք չէ, բացառությամբ, սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի:
11. Քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում վարում են համապատասխան մարմինները: Քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հրապարակային է ծանոթացման համար:
12. Քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ և լրացումներ կատարելու իրավական հիմքի առաջացման պահից մեկ ամսվա ընթացքում՝ համապատասխան մարմնի

գլխավոր քարտուղարը, հաստատված մեթոդաբանությանը համապատասխան կազմված և փաստաթղթերով հիմնավորված առաջարկությունը, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի նախագծերի հետ միասին ներկայացնում է քաղաքացիական ծառայության գրասենյակ:
13. Պաշտոնը քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում ներառելու (հանելու)՝ քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությունն ստանալուց հետո, երեք աշխատանքային օրվա ընթացքում, պաշտոնը ներառվում (հանվում)՝ է քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակ և հաստատվում է պաշտոնի անձնագիրը:
14. Քաղաքացիական ծառայության պաշտոնի գնահատման, դասակարգման, անվանումների, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի կազմման, պաշտոնների ընդհանուր համակարգում տեղակայման, իրավունքների ու պարտականությունների, անվանացանկի վարման, ինչպես նաև տվյալ քաղաքացիական ծառայության պաշտոնը զբաղեցնելու համար քաղաքացիական ծառայողին մասնագիտական գիտելիքների ու կոմպետենցիաների տիրապետման տեսանկյունից ներկա-յացվող պահանջներ սահմանելու մեթոդաբանությունը հաստատում է համակարգող փոխվարչապետը:

**Հոդված 6. Քաղաքացիական ծառայության պաշտոնների դասակարգումը**

3. Քաղաքացիական ծառայության պաշտոնները դասակարգվում են խմբերի՝ ելնելով այդ պաշ-տոնները զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխա-նատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, գործունեության ազդեցության, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց լուծման ~~պահանջի~~, ինչպես նաև մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների ~~անհրաժեշտ մակարդակից~~տեսանկյունից ներկայացվող պահանջներից:
4. Քաղաքացիական ծառայության պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.
   1) քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոններ.
   2) քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոններ:

3. Քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների խումբը դասակարգվում է 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթախմբերի: Քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների խումբը դասակարգվում է 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթախմբերի:

**Հոդված 7. Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի ~~բարձրագույն~~ կրթության և աշխատանքային ստաժի չափանիշները**

5. Քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացին պետք է ունենա բարձրագույն կրթություն, բացառությամբ քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթախմբերի պաշտոնների, որոնք զբաղեցնելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացին պետք է ունենա առնվազն միջնակարգ կրթություն:
6. Քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար անհրաժեշտ է աշխատանքային ստաժի և փորձի առնվազն հետևյալ չափանիշները.
1) քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին և 2-րդ ենթախմբերի պաշտոնների համար, բացառությամբ գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության պաշտոնի, հանրային ծառայության առնվազն հինգ տարվա ստաժ, կամ յոթ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում յոթ տարվա աշխատանքային ստաժ: Գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության պաշտոնի համար՝ հանրային ծառայության առնվազն հինգ տարվա ստաժ, որից երկու տարին առնվազն կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում:
2) քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 3-րդ, 4-րդ, 5-րդ ենթախմբերի պաշտոնների համար՝ հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ հինգը տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում հինգ տարվա աշխատանքային ստաժ.
3) քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 1-ին և 2-րդ ենթախմբերի պաշտոնների համար՝ հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ չորսը տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում չորսը տարվա աշխատանքային ստաժ:
4) քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 3-րդ, 4-րդ, 5-րդ ենթախմբերի պաշտոնների համար՝ հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում երեք տարվա աշխատանքային ստաժ:
7. Քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթախմբերի պաշտոնների համար աշխատանքային ստաժ չի պահանջվում:
8. Հաշվի առնելով քաղաքացիական ծառայության պաշտոնի և/կամ պաշտոնի ենթախմբերի առանձնահատկությունները, քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությամբ, քաղաքացիական ծառայության պաշտոնի և/կամ պաշտոնի ենթախմբերի համար կարող են սահմանվել

կրթության և/կամ աշխատանքային ստաժի և/կամ աշխատանքի բնագավառի այլ չափանիշներ, ինչպես նաև քաղաքացիական ծառայության առանձին պաշտոնների համար՝ որակավորման չափանիշներ, այդ թվում միջազգայնորեն ընդունված հավաստագրման համակարգեր: Այդ չափանիշները, քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությունը ստանալուց հետո, ամրագրվում են քաղաքացիական ծառայության համապատասխան պաշտոնների անձնագրերում՝ մինչև սույն օրենքով սահմանված կարգով այդ պաշտոնները զբաղեցնելը:

## ԳԼՈՒԽ 3.
## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼԸ

### Հոդված 8. Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելը

3. Քաղաքացիական ծառայության պաշտոնները զբաղեցվում են անժամկետ՝ մրցույթի արդյունքում կամ վարկանիշային ցուցակներից կամ փոխադրման կամ վերակազմակերպման և/կամ կառուցվածքային փոփոխության արդյունքում կամ կադրերի ռեզերվից՝ մինչև սույն օրենքով սահմանված տարիքի լրանալը և որոշակի ժամկետով՝ ժամկետային աշխատանքային պայմանագրով կամ տեղափոխության արդյունքում կամ գործուղման դեպքում:

4. Սույն օրենքով սահմանված կարգով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

### Հոդված 9. Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի տեսակները, առանձնահատկությունները

6. Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը (այսուհետ՝ մրցույթ) հիմնված է հավասար հնարավորությունների և արժանիքների վրա:

7. Մրցույթը դասակարգվում է երկու տեսակի՝ արտաքին և ներքին:

8. Մրցույթներն անցկացնում են համապատասխան մարմինները, բացառությամբ գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, որն անցկացնում է քաղաքացիական ծառայության գրասենյակը:

9. Մրցույթ անցկացնելու համար նախապատրաստական աշխատանքները իրականացնում է համապատասխան մարմնի անձնակազմի կառավարման ստորաբաժանումը:

10. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի գլխավոր քարտուղարի մրցույթը կազմակերպում և անցկացնում է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը:

### Հոդված 10. Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը

24. Մրցույթը հայտարարվում է քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո երեք ամսվա ընթացքում: Եթե հայտարարված մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել կամ ներկայացված բոլոր դիմումներում առկա է սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկը, ինչպես նաև, եթե մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած անձանցից ոչ մեկը չի ներկայացել կամ մրցույթի մասնակիցներից ոչ մեկը չի հաղթահարել թեստավորման փուլը կամ հարցազրույցի փուլ անցած մասնակիցներից ոչ մեկը չի հաղթահարել հարցազրույցի փուլը կամ հաղթահարել է հարցազրույցի փուլը և պաշտոնի նշանակման համար դիմում չի ներկայացրել, ապա տվյալ պաշտոնի համար մրցույթ հայտարարվում է մեկ ամսվա ընթացքում:

25. Մինչև արտաքին մրցույթ հայտարարելը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ կարող է անցկացվել ներքին մրցույթ: Քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար կարող է անցկացվել մեկ ներքին մրցույթ: Եթե ներքին մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել կամ ներկայացված բոլոր դիմումներում առկա է սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկը, ինչպես նաև, եթե ներքին մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած անձանցից ոչ մեկը չի ներկայացել կամ ներքին մրցույթի մասնակիցներից ոչ մեկը չի հաղթահարել թեստավորման փուլը կամ հարցազրույցի փուլ անցած մասնակիցներից ոչ մեկը չի հաղթահարել հարցազրույցի փուլը կամ հաղթահարել է հարցազրույցի փուլը և պաշտոնի նշանակման համար դիմում չի ներկայացրել, ապա անցկացվում է արտաքին մրցույթ: Ներքին մրցույթին կարող են մասնակցել տվյալ մարմնի հանրային ծառայողները և քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողները:

26. Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը, մրցույթն անցկացնող համապատասխան մարմինը, հրապարակում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնող մարմնի կայքում, քաղաքացիական ծառայության գրասենյակի կայքում և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների

պաշտոնական ինտերնետային կայքում: Հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև այն բնագավառները, որոնցից կազմված է լինելու թեստը:

27. Քաղաքացին չի մասնակցում մրցույթին, եթե չի բավարարում սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով և 17-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները և/կամ առկա է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը և/կամ առկա է սույն օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված հիմքը:

28. Մրցույթին մասնակցելու համար քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է էլեկտրոնային տարբերակով: Մրցույթի մասնակցության հարցը որոշում է գլխավոր քարտուղարը՝ անձնակազմի կառավարման ստորաբաժանման կողմից տրված եզրակացության հիման վրա: Մրցույթի մասնակցության որոշման մասին անձնակազմի կառավարման ստորաբաժանումը երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով տեղեկացնում է դիմող քաղաքացուն: Գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնի մրցույթի մասնակցության հարցը որոշում է քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարը՝ գրասենյակի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման կողմից տրված եզրակացության հիման վրա: Քաղաքացիական ծառայության գրասենյակը թեստավորման մասնակցության որոշման մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով տեղեկացնում է դիմող քաղաքացուն:

29. Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորում և հարցազրույց: Մրցույթն անցկացվում է, եթե դիմել է առնվազն մեկ քաղաքացի:

30. Թեստավորումն անցկացնում են համապատասխան մարմիններն էլեկտրոնային եղանակով՝ քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում:

31. Քաղաքացիական ծառայության պաշտոնների առանձնահատկություններից ելնելով կարող են կազմվել տարբեր բովանդակությամբ թեստեր: Թեստերը պետք է բխեն քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով սահմանված մասնագիտական գիտելիքների ու կոմպետենցիաների տիրապետմանը ներկայացվող պահանջներից: Թեստերում ընդգրկվող առաջադրանքների հարաբերակցությունն որոշվում է ըստ պաշտոնների ենթախմբերի, որքան ցածր է պաշտոնի ենթախումբն, այնքան գերակշռում են մասնագիտական գիտելիքների վերաբերյալ առաջադրանքները:

32. Թեստերում ընդգրկվող առաջադրանքները, որոնք վերաբերվում են մասնագիտական գիտելիքներին, կազմում և քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում տեղադրում է համապատասխան մարմինը, իսկ կոմպետենցիաների վերաբերյալ առաջադրանքները՝ կազմում և քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում տեղադրում է քաղաքացիական ծառայության գրասենյակը:

33. Գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների վերաբերյալ առաջադրանքները կազմում է քաղաքացիական ծառայության գրասենյակը:

34. Մրցույթի մասնակիցը պատասխանելով թեստում ընդգրկված առաջադրանքներին՝ անմիջապես տեղեկանում է իր ստացած արդյունքների մասին: Թեստավորման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում մրցույթի մասնակիցն, իր արդյունքների մասով, կարող է բողոք ներկայացնել գլխավոր քարտուղարին: Գլխավոր քարտուղարն, ~~մեկ ժամվա ընթացքում~~, քննում է դիմումը և ընդունում է արդյունքները փոփոխելու կամ նույնը թողնելու մասին որոշում: Գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնի համար անցկացվող մրցույթի թեստավորման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում մրցույթի մասնակիցն, իր արդյունքների մասով, կարող է բողոք ներկայացնել քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարին~~համակարգող փոխվարչապետին~~: Քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարը ~~Համակարգող փոխվարչապետը մեկ ժամվա ընթացքում,~~ քննում է դիմումը և ընդունում է արդյունքները փոփոխելու կամ նույնը թողնելու մասին որոշում:

35. Մրցույթի երկրորդ՝ հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք են ձեռք բերում կառավարության կողմից սահմանած միավորից բարձր առավելագույն միավորներ ստացած հինգ մասնակիցը: Եթե միևնույն արդյունք ունենալու դեպքում հնարավոր չէ պարզել առավելագույն միավորներ հավաքած և թեստավորման փուլը հաղթահարած հինգ մասնակցին, ապա միևնույն առավելագույն միավորներ հավաքած մասնակիցներն անցնում են հարցազրույցի փուլ: Թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցների թիվը հինգից պակաս լինելու դեպքում բոլոր մասնակիցներն իրավունք են ձեռք բերում մասնակցելու հարցազրույցի փուլին, եթե հավաքել են թեստավորման փուլը հաղթահարելու համար անհրաժեշտ միավորը:

36. Հարցազրույցն անցկացնում է տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից ձևավորված հանձնաժողովը, բացառությամբ գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, որի դեպքում հանձնաժողովը ձևավորում է քաղաքացիական ծառայության գրասենյակը՝ համակարգող փոխվարչապետի կողմից հաստատված հանձնաժողովի անդամության թեկնածուների ցանկից:

37. Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից ձևավորված հանձնաժողովի կազմում ընդգրկվում են տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը, այն կառուցվածքային

ստորաբաժանման ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը, որի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարվել է տվյալ մրցույթը, անձնակազմի կառավարման ստորաբաժանման ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը, ինչպես նաև տվյալ պաշտոնի համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների տիրապետման մակարդակը ստուգելու կարողություններ ունեցող այլ անձինք:

38. Հանձնաժողովը կազմված է առնվազն հինգ անդամից:

39. Հարցազրույցի փուլը հաղթահարում է մեկ մասնակից: Հարցազրույցի արդյունքում հանձնաժողովը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին ներկայացնում է եզրակացություն, հարցազրույցի մասնակիցների վերաբերյալ` նշելով հարցազրույցի փուլը հաղթահարած միակ մասնակցին: Հանձնաժողովի եզրակացությունը ստանալուց հետո, երեք աշխատանքային օրվա ընթացքում, պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, հարցազրույցի փուլը հաղթահարած միակ մասնակցին նշանակում է համապատասխան պաշտոնի:

40. Եթե երկու անգամ անընդմեջ հայտարարված արտաքին մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ ներկայացված բոլոր դիմումներում առկա է սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկը, ապա համապատասխան մարմինը, սույն օրենքով սահմանված կարգով, փոփոխում է տվյալ պաշտոնի համար սահմանված պահանջները:

41. Անվանացանկում կատարված լրացումների և փոփոխությունների արդյունքում առաջացած քաղաքացիական ծառայության նոր պաշտոնները, բացառությամբ համապատասխան մարմնի վերակազմակերպման և/կամ կառուցվածքային փոփոխության հետևանքով առաջացած քաղաքացիական ծառայության պաշտոնների, զբաղեցվում են մրցույթով:

42. Համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայողի առաջխաղացումը իրականացվում է միայն սույն օրենքով սահմանված մրցույթով:

43. Մրցույթի արդյունքում նույն համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության այլ պաշտոնի նշանակվելու դեպքում քաղաքացիական ծառայողի հետ վերջնահաշվարկ չի կատարվում:

44. Մրցույթն անվավեր է ճանաչվում դատական կարգով: Մրցույթն անվավեր ճանաչվելու դեպքում հայտարարվում է մրցույթ, որն անցկացվում է սույն օրենքով սահմանված կարգով:

45. Մրցույթ անցկացնելու կարգը սահմանում է կառավարությունը:

46. Թեստերի կազմման, թեստային առաջադրանքների ձևավորման, թեստային առաջադրանքների բովանդակային առանձնահատկությունները, թեստային առաջադրանքների քանակը, հարցազրույցի անցկացման մեթոդաբանությունը և ձևաչափը սահմանում է համակարգող փոխվարչապետը:

Հոդված 11. Վարկանիշային ցուցակների կազմումը և վարկանիշային ցուցակներից պաշտոն զբաղեցնելը

13. Քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթախմբերի պաշտոնները զբաղեցնելու համար հարցազրույցին մասնակցելու համար թեկնածուներն ընտրվում են վարկանիշային ցուցակներից:

14. Վարկանիշային ցուցակները կազմելու համար առնվազն տարին երկու անգամ քաղաքացիական ծառայության գրասենյակն անցկացվում է թեստավորում: Ելնելով թեստավորման մասնակիցների թվից` թեստավորումը կարող է անցկացվել մեկ կամ մի քանի խմբով տարբեր օրերի և/կամ ժամերի: Յուրաքանչյուր խմբի համար կազմվում է նոր թեստ:

15. Թեստավորմանը մասնակցելու համար քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է էլեկտրոնային տարբերակով: Թեստավորման մասնակցության հարցը որոշում է քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարը` համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման կողմից տրված եզրակացության հիման վրա: Քաղաքացիական ծառայության գրասենյակը թեստավորման մասնակցության որոշման մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով տեղեկացնում է դիմող քաղաքացուն:

16. Քաղաքացին չի մասնակցում թեստավորմանը, եթե չի բավարարում սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, 17-րդ հոդվածի 4-րդ մասով և «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով սահմանված պահանջները:

17. Թեստավորումը հաղթահարում են կառավարության կողմից սահմանած նվազագույն միավորից բարձր միավոր ստացած մասնակիցները: Թեստավորման արդյունքներով քաղաքացիական ծառայության գրասենյակն առցանց կարգով վարում է վարկանիշային համարակալված ցուցակ: Միևնույն արդյունք հավաքած թեկնածուները գրանցվում են նույն համարի տակ:

18. Համապատասխան մարմինները հարցազրույցի հրավիրում են վարկանիշային ցուցակի 1-5-րդ համարներում գրանցված անձանց, ովքեր բավարարում են քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները:

19. Եթե պաշտոնի անձնագրով նախատեսված է մասնագիտական բարձրագույն կրթության պահանջ և վարկանիշային ցուցակի 1-5-րդ համարներում չկա համապատասխան մասնագիտություն ունեցող հինգ թեկնածու, ապա հրավիրվում են տվյալ մասնագիտությունն ունեցող առաջին 5 թեկնածուները:

20. Վարկանիշային ցուցակում միանգամյա գրանցված լինելու առավելագույն ժամկետը 2 տարի է: Վարկանիշային ցուցակում գրանցման առավելագույն ժամկետը լրանալու օրվան հաջորդող օրը

թեկնածուն ինքնաշխատ եղանակով հանվում է ցուցակից: Վարկանիշային ցուցակի թափուր համարները լրացվում են հաջորդաբար՝ նվազման կարգով ինքնաշխատ եղանակով:

21. Վարկանիշային ցուցակը համալրվում է թեստավորման բոլոր խմբերի արդյունքներն ամփոփելու հաջորդ աշխատանքային օրը:

22. Քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթախմբերի պաշտոնները զբաղեցնելու համար հարցազրույցը կազմակերպվում և անցկացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածի 13-16-րդ մասերով սահմանված կարգով: Պաշտոնի նշանակված թեկնածուն հանվում է վարկանիշային ցուցակից:

23. Վարկանիշային ցուցակների կազմման համար անցկացվող թեստավորման և հարցազրույցի կազմակերպման կարգը սահմանում է կառավարությունը:

24. Վարկանիշային ցուցակների կազմման համար անցկացվող թեստավորման թեստերի կազմման, թեստային առաջադրանքների ձևավորման, թեստային առաջադրանքների բովանդակային առանձնահատկությունները, թեստային առաջադրանքների քանակը սահմանում է համակարգող փոխվարչապետը:

**Հոդված 12. Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելը տեղափոխման, փոխադրման, գործուղման կարգով**

12. Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, մինչև երկու տարի ժամկետով, պատճառաբանված որոշմամբ կարող է տեղափոխություն կատարել կառուցվածքային ստորաբաժանումների հավասարազոր քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների միջև, եթե վերջիններս բավարարում են քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի պահանջները:

13. Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում՝ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է նույն կամ այլ կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայողին յոթ աշխատանքային օրվա ընթացքում փոխադրել թափուր պաշտոնին, եթե վերջինս բավարարում է քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի պահանջները:

14. Փոխադրման (փոխադրումների) արդյունքում թափուր մնացած պաշտոնը կարող է զբաղեցվել սույն օրենքով սահմանված արտաքին մրցույթով:

15. Քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու դեպքում՝ մինչև սահմանված հիմքի վերացումը, պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է այլ կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայողին յոթ աշխատանքային օրվա ընթացքում փոխադրել այդ պաշտոնին, եթե վերջինս բավարարում է քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի պահանջները: Ժամանակավոր թափուր պաշտոնի փոխադրման դեպքում փոխադրված քաղաքացիական ծառայողի պարտականությունները կատարվում են տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող քաղաքացիական ծառայողի կողմից:

16. Գլխավոր քարտուղարը, աշխատանքային ծանրաբեռնվածությունը հաշվի առնելով, կարող է կառուցվածքային ստորաբաժանման մասնագիտական պաշտոնների խմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողին, առանց ծառայությունը դադարեցնելու, իր պաշտոնով փոխադրել այլ կառուցվածքային ստորաբաժանում: Տվյալ դեպքում քաղաքացիական ծառայողը պետք է իրականացնի նույնաբովանդակ աշխատանք, ինչպիսին իրականացնում էր մինչև փոխադրումը: Այս դեպքում պաշտոնի անձնագրում գործառույթների փոփոխություն չի կատարվում, այլ չափանիշներ և այլ պահանջներ չեն սահմանվում:

17. Փոխադրում իրականացվում է հավասարազոր քաղաքացիական ծառայության պաշտոնի:

18. Տեղափախություն, փոխադրում իրականացվում է պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ, քաղաքացիական ծառայողի համաձայնությամբ: Համապատասխան մարմնի աշխատանքների կազմակերպման առանձնահատկություններով պայմանավորված՝ կառավարության որոշմամբ կարող են սահմանվել այն դեպքերը, երբ տեղափոխություն և/կամ փոխադրում իրականացնելիս քաղաքացիական ծառայողի համաձայնությունը չի պահանջվում:

19. Տեղափախության, փոխադրման դեպքերում քաղաքացիական ծառայողի հետ վերջնահաշվարկ չի կատարվում:

20. Թափուր կամ ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու դեպքում մեկամսյա ժամկետում համապատասխան մարմինների ղեկավարների փոխադարձ համաձայնությամբ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը քաղաքացիական ծառայողի համաձայնությամբ մինչև երեք տարի ժամկետով քաղաքացիական ծառայողին կարող է գործուղել այլ համապատասխան մարմին հավասարազոր պաշտոն զբաղեցնելու համար: Տվյալ դեպքում քաղաքացիական ծառայողը պետք է իրականացնի նույնաբովանդակ աշխատանք, ինչպիսին իրականացնում էր մինչև գործուղումը: Այս դեպքում քաղաքացիական ծառայողի հետ վերջնահաշվարկ չի կատարվում, իսկ սահմանված ժամկետի ավարտից հետո առանց վերջնահաշվարկ կատարելու քաղաքացիական ծառայողը զբաղեցնում է իր նախկին պաշտոնը: Թափուր պաշտոնը գործուղման արդյունքում զբաղեցնելու դեպքում մինչև գործուղման ավարտը տվյալ պաշտոնի համար մրցույթ չի հայտարարվում:

21. Տեղափախության, փոխադրման և գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու կարգը և պայմանները Տեղափախության, փոխադրման եւ գործուղման կարգը եւ պայմանները սահմանում է կառավարությունը՝ հաշվի առնելով համապատասխան մարմինների առանձնահատկությունները:
22. Տեղափախության, փոխադրման և գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու Տեղափախության, փոխադրման և գործուղման ժամանակ անձնակազմի կառավարման ընթացակարգային առանձնահատկությունները սահմանում է համակարգող փոխվարչապետը:

**Հոդված 13. Քաղաքացիական ծառայության պաշտոնը որոշակի ժամկետով զբաղեցնելը**

5. Քաղաքացիական ծառայության պաշտոնը որոշակի ժամկետով զբաղեցվում է՝
1) հղիության և ծննդաբերության արձակուրդի.
2) մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի.
3) պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու.
4) քաղաքացիական ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության.
5) եռամսյա ժամկետը գերազանցող վերապատրաստման կամ ծառայողական գործուղման մեկնելու.
6) 12-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված դեպքում.
7) օրենքով սահմանված այլ դեպքերում:
6. Սույն հոդվածի 1-ին մասում նշված դեպքերում այդ պաշտոնները զբաղեցվում են՝ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությամբ՝ տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող քաղաքացիական ծառայողի կողմից կամ սույն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով կամ հաշվի առնելով սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով և 17-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները և «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերը՝ մեկ այլ անձի հետ, այդ թվում՝ ռեզերվում գտնվող, ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելով:
7. Չի թույլատրվում այլ անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքել, եթե քաղաքացիական ծառայության տվյալ թափուր պաշտոնն առաջացել է այդ անձի ծառայությունը սույն օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 2-4-րդ, 6-10-րդ և 16-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով դադարեցվելու հետևանքով:
8. Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանում է կառավարությունը:

**Հոդված 14. Կադրերի ռեզերվից քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելը**

2. Համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում, մինչև մրցույթ հայտարարելը, պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է այդ պաշտոնում նշանակել քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվից սույն օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով ժամկետային աշխատանքային պայմանագրով պաշտոն զբաղեցնող այն քաղաքացիական ծառայողին, ով ռեզերվում գրանցվել է՝ ազատվելով տվյալ մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնից:

**Հոդված 15. Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առանձնահատուկ դեպքերը և քաղաքացիական ծառայության կազմակերպման առանձնահատկությունները**

4. Պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվող քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց պաշտոնի նշանակման, վերապատրաստման, կատարողականի գնահատման, ծառայողական քննությունների հետ կապված առանձնահատկությունները և քաղաքացիական ծառայության այդ պաշտոնների ցանկը հաստատում է համակարգող փոխվարչապետը՝ համապատասխան մարմնի ղեկավարի առաջարկությամբ՝ համաձայնեցնելով ազգային անվտանգության լիազոր մարմնի ղեկավարի հետ:
5. «Դիվանագիտական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով գործուղված դիվանագետների կողմից քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու կարգը և դեպքերը սահմանում է կառավարությունը, իսկ պաշտոնների ցանկը՝ համակարգող փոխվարչապետը:
6. Վարչապետին, կառավարությանը և նախարարություններին ենթակա մարմինների՝ քաղաքացիական ծառայության հարաբերությունների մասնակցությունն իրականացվում է այն համապատասխան մարմնի կողմից, որի ենթակայությամբ գործում են:
6. Վարչապետին, կառավարությանը և նախարարություններին ենթակա պետական մարմինները, որոնք չունեն աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ և գլխավոր քարտուղար, այդ մարմինների՝ քաղաքացիական ծառայության հարաբերությունների մասնակցությունն իրականացվում է այն համապատասխան մարմնի կողմից, որի ենթակայությամբ գործում են:

**Հոդված 16. Քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակումը և ազատումը (ծառայության դադարեցումը)**

5. Գլխավոր քարտուղարներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասում նախատեսված ~~դեպքերի~~մարմինների գլխավոր քարտուղարների:

6. Սույն մասում նշված մարմինների գլխավոր քարտուղարներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է.

8) Կենտրոնական ընտրական հանձնաժողովում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը.

9) Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովում՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահը.

10) Հաշվեքննիչ պալատում՝ Հաշվեքննիչ պալատի նախագահը.

11) Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում՝ Մարդու իրավունքների պաշտպանը.

12) Հայաստանի Հանրապետության դատախազությունում՝ գլխավոր դատախազը.

13) Հայաստանի Հանրապետության քննչական մարմիններում՝ քննչական մարմինների ղեկավարները.

14) Հայաստանի Հանրապետության ինքնավար մարմիններում՝ ինքնավար մարմինների ղեկավարները:

7. Քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին, 2-րդ, 3-րդ ենթախմբերի պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին, ներքին աուդիտորներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համապատասխան մարմնի ղեկավարը:

8. Քաղաքացիական ծառայության մյուս պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է գլխավոր քարտուղարը:

~~Դատական դեպարտամենտում քաղաքացիական ծառայության պաշտոններում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Դատական դեպարտամենտի ղեկավարը:~~

**Հոդված 17. Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու փորձաշրջանը, առավելագույն տարիքը**

5. Մրցույթի արդյունքում քաղաքացիական ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձի նշանակումն իրականացվում է փորձաշրջանով՝

4) ղեկավար պաշտոնների խմբի համար՝ 12 ամիս.
5) մասնագիտական պաշտոնների 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ ենթախմբի պաշտոնների համար՝ 9 ամիս.
6) մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթախմբի պաշտոնների համար՝ 6 ամիս:

6. Փորձաշրջանի ընթացքում քաղաքացիական ծառայողը չի կարող սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով զբաղեցնել քաղաքացիական ծառայության այլ պաշտոն: Փորձաշրջանի ընթացքում մրցույթի արդյունքում այլ պաշտոնի նշանակվելու դեպքում քաղաքացիական ծառայողի նկատմամբ սահմանվում է փորձաշրջան:

7. Փորձաշրջանի հետ կապված առանձնահատկությունները սահմանում է համակարգող փոխվարչապետը՝ հաշվի առնելով պաշտոնների խմբերը, ենթախմբերը, պաշտոնների առանձնահատկությունները:

8. Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը 65 տարին է: Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալու դեպքում տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ քաղաքացիական ծառայողը կարող է մինչև մեկ տարի ժամկետով շարունակել զբաղեցնել իր պաշտոնը:

## ԳԼՈՒԽ 4.
## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

**Հոդված 18. Քաղաքացիական ծառայողի կատարողականի գնահատումը**

6. Քաղաքացիական ծառայողի կատարողականն աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքի արդյունքները և այդ արդյունքներին հասնելու արդյունավետությունն է, որը գնահատվում է անմիջական ղեկավարի կողմից:

7. Կատարողականի գնահատումն իրականացվում է տարին մեկ անգամ: Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին իրականացվում է կատարողականի ընթացիկ գնահատում:
8. Կատարողականի գնահատականի, այդ թվում ընթացիկ, հետ համաձայն չլինելու դեպքում քաղաքացիական ծառայողը կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով այն բողոքարկել` գնահատումն իրականացրած պաշտոնատար անձի անմիջական ղեկավարին:
9. Կատարողականի գնահատման արդյունքները հիմք են սահմանված կարգով խրախուսում և/կամ վերապատրաստման անհատական ծրագրեր կազմելու, ինչպես նաև հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում նախապատվության իրավունքից օգտվելու համար:
10. Քաղաքացիական ծառայողի կատարողականի գնահատման կարգը սահմանում է կառավարությունը` հաշվի առնելով համապատասխան մարմինների առանձնահատկությունները:

## Հոդված 19. Քաղաքացիական ծառայողի վերապատրաստումը

15. Քաղաքացիական ծառայողներն իրավունք ունեն և պարտավոր են բարելավել իրենց մասնագիտական գիտելիքները և կոմպետենցիաները շարունակական մասնագիտական զարգացման սկզբունքի վրա հիմնված վերապատարաստումներին մասնակցելու միջոցով:
16. Համապատասխան մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները վերապատրաստումները կազմակերպելու և այդ վերապատրաստումներին քաղաքացիական ծառայողների մասնակցությունն ապահովելու համար:
17. Համապատասխան մարմիններում վերապատրաստման գործընթացը կազմակերպում է գլխավոր քարտուղարը:
18. Վերապատրաստումն իրականացվում է յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի համար ըստ անհատական ծրագրի, որը կազմվում է (փոփոխվում) քաղաքացիական ծառայողի տարեկան կատարողականի գնահատմանը զուգընթաց իրականացված վերապատրաստման կարիքների գնահատումից:
19. Վերապատրաստում անցկացվում է նաև քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով քաղաքացիական ծառայողի մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների տիրապետման նոր պահանջների սահմանման դեպքում` քաղաքացիական ծառայողի կամ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի նախաձեռնությամբ:
20. Վերապատրաստման մասնակցության առավելագույն ժամկետը 6 ամիս է:
21. Գլխավոր քարտուղարը վերապատրաստման կարիքների գնահատման արդյունքներն ամփոփելուց հետո կազմում է համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագիրը, որը ներառում է վերապատրաստման կարիքները, վերապատրաստման եղանակները, հատկացված կրեդիտները, ժամանակի բաշխվածությունը, վերապատրաստում իրականացնող կազմակերպությունները, վերապատրաստում իրականացնող մասնագետների թեկնածուները և համակարգող փոխվարչապետի որոշմամբ սահմանված այլ չափանիշները և այդ ծրագիրը ներկայացնում է քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնեցմանը:
22. Քաղաքացիական ծառայության գրասենյակն ուսումնասիրում է ծրագիրը և տալիս է համաձայնություն վերապատրաստման ծրագիրը հաստատելու համար: Համաձայնությունը ստանալուց հետո գլխավոր քարտուղարը հաստատում է վերապատրաստաման ծրագիրը և քաղաքացիական ծառայողներին տեղեկացնում է այդ ծրագրից բխող քաղաքացիական ծառայողի վերապատրաստաման անհատական ծրագիրը: Հաշվեքննիչ պալատում վերապատրաստման ծրագիրը հաստատում է Հաշվեքննիչ պալատը:
23. Գլխավոր քարտուղարն անհրաժեշտության դեպքում սույն հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով սահմանված կարգով կարող է վերանայել վերապատրաստման ծրագիրը:
~~22. Յուրաքանչյուր տարի գլխավոր քարտուղարը պարտավոր է վերանայել վերապատրաստման ծրագիրը` հիմք ընդունելով նախորդ տարվա վերապատրաստման կարիքների գնահատման արդյունքները:~~
~~23. Քաղաքացիական ծառայության գրասենյակն ուսումնասիրում է ծրագիրը եւ տալիս է համաձայնություն վերապատրաստման ծրագիրը հաստատելու համար: Համաձայնությունը ստանալուց հետո գլխավոր քարտուղարը հաստատում է վերապատրաստաման ծրագիրը եւ քաղաքացիական ծառայողներին տեղեկացնում է այդ ծրագրից բխող քաղաքացիական ծառայողի վերապատրաստաման անհատական ծրագիրը:~~
24. Կոմպետենցիաների վերաբերյալ վերապատրաստումները կազմակերպում է քաղաքացիական ծառայության գրասենյակը, իսկ մասնագիտական գիտելիքների վերաբերյալ վերապատրաստումները` համապատասխան մարմինը:
25. Համապատասխան մարմինների ծրագրերի ուսումնասիրության ժամանակ քաղաքացիական ծառայության գրասենյակը կարող է առաջարկել վերանայել վերապատրաստման ծրագիրն,

ինչպես նաև այդ ծրագրերում կարող է ներառել նաև կոմպետենցիաների վերաբերյալ կազմված վերապատրաստման ծրագրերը:

26. Վերապատրաստման հետ կապված ծախսերը կատարվում են պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:
27. Վերապատրաստումների արդյունքում քաղաքացիական ծառայողը ստանում է կրեդիտներ: Անհատական ծրագրով հաստատված համապատասխան կրեդիտները ստանալուց հետո քաղաքացիական ծառայողը համարվում է վերապատրաստված:
28. Սույն օրենքի հիման վրա վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքների գնահատման և անհատական ծրագրի կազմման, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագրի կազմման, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունքները, տեսակները սահմանում է համակարգող փոխվարչապետը:

## ԳԼՈՒԽ 5.
## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Հոդված 20. Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվող խրախուսանքի տեսակները

6. Երկարամյա ծառայության և/կամ ծառայողական պարտականությունները և/կամ հանձնարարականները (առաջադրանքները) բարեխղճորեն կատարելու, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ տեսակները.

1) շնորհակալության հայտարարում.
2) դրամական պարգևատրում.
3) հուշանվերով պարգևատրում.
4) պատվոգրով (մեդալով) պարգևատրում.
5) լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում.
6) կարգապահական տույժի հանում:

7. Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել նաև օրենսդրությամբ սահմանված խրախուսման այլ տեսակներ:
8. Քաղաքացիական ծառայողի նկատմամբ խրախուսանքները կիրառում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:
9. Քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին, 2-րդ, 3-րդ ենթախմբերի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին, որպես խրախուսանք, Հանրապետության Նախագահի կողմից օրենքով սահմանված կարգով կարող է շնորհվել բարձրագույն դասային աստիճաններ:
10. Բարձրագույն դասային աստիճաններն են՝ քաղաքացիական ծառայության առաջին դասի պետական խորհրդականի դասային աստիճան, քաղաքացիական ծառայության երկրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան, քաղաքացիական ծառայության երրորդ դասի պատական խորհրդականի դասային աստիճան: Դասային աստիճաններից բարձրը՝ քաղաքացիական ծառայության առաջին դասի պետական խորհրդականի դասային աստիճանն է:

### Հոդված 21. Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվող կարգապահական պատասխանատվության միջոցները և առանձնահատկությունները, կարգապահական տույժ կիրառելու որոշումը, պաշտոնից ազատելու կամ ծառայության դադարեցման մասին որոշումը բողոքարկելը

18. Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու և/կամ ոչ պատշաճ կատարելու և/կամ ծառայողական լիազորությունները վերազանցելու և/կամ աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու և/կամ քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները խախտելու և/կամ հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու և/կամ շահերի բախման կանոնները, նվերներ ընդունելու արգելքը խախտելու դեպքերում քաղաքացիական ծառայողի նկատմամբ սահմանված կարգով կիրառվում են սույն օրենքով սահմանված կարգապահական տույժերը:
19. Կարգապահական տույժերը դասակարգվում են երկու տեսակի՝ թեթև կարգապահական տույժեր և խիստ կարգապահական տույժեր:

1) թեթև կարգապահական տույժերն են՝

ա. նախազգուշացում.
բ. նկատողություն.

2) խիստ կարգապահական տույժերն են՝

ա. խիստ նկատողություն.
բ. աշխատավարձի իջեցում մինչև 20 տոկոսով, բայց ոչ ավելի քան բազային աշխատավարձի չափը.

գ. ծառայության դադարեցում:

20. Կարգապահական տույժ կիրառվում է ծառայողական քննություն անցկացնելուց հետո:

21. Կարգապահական տույժ նշանակվում է, եթե երեք ամսից ավելի չի անցել խախտման հայտնաբերման օրվանից` չհաշված քաղաքացիական ծառայողի ժամանակավոր անաշխատունակության պատճառով բացակայության, գործուղման, վերապատրաստման կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածները:

22. Կարգապահական տույժ նշանակվել չի կարող, եթե վեց ամսից ավելի է անցել խախտում կատարելու օրվանից: Եթե խախտումը հայտնաբերվում է ֆինանսատնտեսական գործունեության, գումարային կամ այլ արժեքների ստուգման այդ թվում և գույքագրման ընթացքում, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է ոչ ավելի, քան երեք տարի:

23. Կարգապահական տույժ նշանակելիս հաշվի են առնվում խախտման բնույթը, բովանդակությունը, այն հանգամանքները, որի պարագայում կատարվել է խախտումը, խախտման արդյունքում վրա հասած հետևանքները, նախկինում քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարգապահական տույժեր կիրառված լինելու և/կամ խախտումներ կատարած լինելու հանգամանքները:

24. Կարգապահական տույժի մասին քաղաքացիական ծառայողին հաղորդվում է ոչ ուշ, քան կարգապահական տույժ նշանակելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

25. Յուրաքանչյուր խախտման համար, կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ: Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված նախատեսված կարգապահական տույժը կրկին անգամ չի կարող կիրառվել, եթե կարգապահական տույժը հանված չէ կամ չի լրացել սույն հոդվածի ~~օրենքի~~ 9-րդ մասով սահմանված ժամկետը:

26. Եթե քաղաքացիական ծառայողը թեթև կարգապահական տույժ նշանակելու օրվանից վեց ամսվա ընթացքում նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, իսկ խիստ կարգապահական տույժ նշանակելու օրվանից մեկ տարվա ընթացքում նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա նա համարվում է կարգապահական տույժի չենթարկված:

27. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգապահական տույժերը քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

28. Քաղաքացիական ծառայողն իր նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու, պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու մասին որոշումը կարող է բողոքարկել պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի անմիջական ղեկավարին կարգապահական տույժ կիրառելու մասին, պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու մասին որոշմանը ծանուցվելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում:

29. Սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված կարգով բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող ակտի կատարումը:

30. Սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված բողոքարկման կարգը չի տարածվում քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները խախտելու, հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու, շահերի բախման կանոնները խախտելու, նվերներ ընդունելու արգելքը խախտելու դեպքերում կիրառված կարգապահական տույժերի վրա: Նշված դեպքերում կիրառված կարգապահական տույժերը բողոքարկվում են դատական կարգով:

31. Քննարկելով բերված բողոքը` իրավասու պաշտոնատար անձն իրավասու է`

3) բավարարելու բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն` փոփոխել կարգապահական տույժի տեսակը կամ ճանաչել կարգապահական տույժ կիրառելու մասին կամ պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու մասին որոշումն անվավեր.
4) մերժել բողոքը` կարգապահական տույժ կիրառելու մասին կամ պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու մասին որոշումը թողնելով անփոփոխ:

32. Քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու մասին որոշումն անվավեր ճանաչվելու դեպքում քաղաքացիական ծառայողը վերականգնվում է իր պաշտոնում վարչական կամ դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո` հինգ աշխատանքային օրվա ընթացքում և հարկադիր պարապուրդի դիմաց ստանում է հատուցում` Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով:

33. Քաղաքացիական ծառայողն իր նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու, այդ թվում` քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու մասին որոշումը կարող է բողոքարկել դատական կարգով:

34. Քաղաքացիական ծառայողների նկատմամբ սույն օրենքով սահմանված կարգով կարող է կիրառվել նյութական պատասխանատվություն` օրենքով սահմանված չափով:

Հոդված 22. Ծառայողական քննությունը

10. Սույն օրենքով նախատեսված դեպքերում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն նշանակում է ծառայողական քննություն՝ նշելով ծառայողական քննության անցկացման հիմքերը, պարզաբանման ենթակա հարցերը և անցկացման եղանակը:

11. Քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումների, շահերի բախման, նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ հարցերի ուսումնասիրության համար նշանակված ծառայողական քննությունն անցկացնում է քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովը:

12. Քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումների, շահերի բախման, նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ այլ անձի դիմումի և/կամ լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա ծառայողական քննություն նշանակում է գլխավոր քարտուղարը:

13. Ծառայողական քննության անցկացման ժամանակ, անհրաժեշտության դեպքում ծառայողական քննություն նշանակած պաշտոնատար անձն, իր որոշմամբ, կարող է ներգրավվել ծառայողական քննության արդյունքներով չշահագրգռված մասնագետ՝ խորհրդատվություն տրամադրելու համար:

14. Ծառայողական քննություն անցկացնելու ընթացքում քաղաքացիական ծառայողի (քաղաքացիական ծառայողների) ծառայողական պարտականությունների կատարումը ծառայողական քննություն անցկացնելու ժամկետում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է կասեցնել՝ պահպանելով քաղաքացիական ծառայողի վարձատրությունը:

15. Ծառայողական քննության նյութերում հանցագործությունների և/կամ զանցանքների հատկանիշներ հայտնաբերելու դեպքերում այդ մասին հայտնվում է համապատասխան պետական մարմիններին և ծառայողական քննությունը կասեցվում է:

16. Ծառայողական քննության արդյունքում ծառայողական քննություն վարողը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին ներկայացնում է եզրակացություն, որն առնվազը ներառում է ծառայողական քննությամբ պարզված հանգամանքները և դրանց վերաբերյալ հետևությունները, անհրաժեշտության դեպքում համապատասխան առաջարկություններ և դրանց վերաբերյալ հիմնավորումներ:

17. Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն սույն օրենքի 21-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված ժամկետից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է եզրակացությունը և ընդունում համապատասխան որոշում, բացառությամբ սույն օրենքի 35-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

18. Ծառայողական քննություն անցկացնելու կարգը սահմանում է կառավարությունը:

**Հոդված 23. Քաղաքացիական ծառայողի իրավական վիճակը համապատասխան մարմնի վերակազմակերպման և կառուցվածքային փոփոխության ժամանակ**

11. Համապատասխան մարմնի վերակազմակերպումը և/կամ կառուցվածքային փոփոխությունը քաղաքացիական ծառայողին պաշտոնից ազատելու (լիազորությունները դադարեցնելու) հիմք չէ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ուղեկցվում են համապատասխան մարմնի վերակազմակերպմամբ և/կամ կառուցվածքային փոփոխությամբ պայմանավորված հաստիքների և/կամ քաղաքացիական ծառայության պաշտոնների կրճատմամբ և/կամ համապատասխան մարմնի վերակազմակերպմամբ և/կամ կառուցվածքային փոփոխությամբ պայմանավորված պաշտոնների անձնագրերում այնպիսի նոր պահանջների սահմանմամբ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստման արդյունքում:

12. Վերակազմակերպմամբ և/կամ կառուցվածքային փոփոխությամբ պայմանավորված հաստիքների և/կամ քաղաքացիական ծառայության պաշտոնների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը տրվում է հղի կամ մինչև երեք տարեկան երեխա խնամող կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում՝ քաղաքացիական ծառայության առավել երկար աշխատանքային ստաժ և վերջին երեք տարվա ընթացքում կատարողականի գնահատման ավելի բարձր արդյունքներ ունեցող քաղաքացիական ծառայողին: Նշված պայմանների հավասարության կամ բացակայության դեպքերում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունը որոշում է համապատասխան մարմնի ղեկավարը:

13. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան մարմնի աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունը որոշում է համապատասխան մարմնի ղեկավարը:

14. Կառուցվածքային փոփոխության ժամանակ կառուցվածքային փոփոխության ենթարկվող կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայողը իր հաստիքային միավորով կարող է տեղափոխվել կառուցվածքային փոփոխության չենթարկվող կառուցվածքային ստորաբաժանում՝ հավասարազոր կամ ցածր քաղաքացիական ծառայության պաշտոնի՝ իր համաձայնությամբ:

15. Համապատասխան մարմնի վերակազմակերպման և/կամ կառուցվածքային փոփոխության հետևանքով քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում առաջացած պաշտոնները զբաղեցվում են անվանացանկում փոփոխություններ կատարելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով:

16. Համապատասխան մարմնի վերակազմակերպման և/կամ կառուցվածքային փոփոխության ժամանակ քաղաքացիական ծառայողը վերանշանակվում է մինչև վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոնին հավասարազոր պաշտոնի կամ ավելի ցածր պաշտոնի իր համաձայնությամբ, բացառությամբ առաջխաղացման դեպքի: Առաջխաղացման դեպքում քաղաքացիական ծառայողի հետ կնքվում է ժամկետային աշխատանքային պայմանագիր և հայտարարվում է մրցույթ տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար:

17. Քաղաքացիական ծառայության այն պաշտոնները, որոնք չեն համալրվել սույն հոդվածով սահմանված կարգով, զբաղեցվում են մրցույթով:

18. Վերակազմակերպման և/կամ կառուցվածքային փոփոխության արդյունքում քաղաքացիական ծառայողի հետ վերջնահաշվարկ չի կատարվում:

19. Վերակազմակերպման և/կամ կառուցվածքային փոփոխության արդյունքում, եթե անվանացանկից հանվում է սույն օրենքի 12-րդ հոդվածի 9-րդ մասով գործուղված քաղաքացիական ծառայողի պաշտոնն, ապա գործուղման ժամկետի ավարտից հետո քաղաքացիական ծառայողին առաջարկվում է հավասարազոր կամ ցածր պաշտոն: Եթե քաղաքացիական ծառայողը չի տալիս համաձայնություն առաջարկված պաշտոնում նշանակվելու համար, ապա վերջինս գրանցվում է կադրերի ռեզերվում:

20. Վերակազմակերպման և/կամ կառուցվածքային փոփոխության արդյունքում անձնակազմի կառավարման ընթացակարգային առանձնահատկությունները սահմանում է համակարգող փոխվարչապետը:

**Հոդված 24. Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվը**

12. Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվը քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում վարում են համապատասխան մարմինները:

13. Գործունեությունը դադարած մարմինների կադրերի ռեզերվը վարում, վարձատրությունը տրամադրում է քաղաքացիական ծառայության գրասենյակը:

14. Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում, իրենց դիմումի համաձայն, գրանցվում են սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-6-րդ կետերով նախատեսված հիմքերով քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատված քաղաքացիական ծառայողները:

15. Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված լինելու միանգամյա առավելագույն ժամկետը վեց ամիս է, բայց ոչ ավելի, քան կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողի 65 տարին լրանալը: Քաղաքացիական ծառայողը իր դիմումի համաձայն կարող է հանվել ռեզերվից վաղաժամկետ:

16. Կադրերի ռեզերվում գրանցված լինելու ժամանակահատվածը համարվում է քաղաքացիական ծառայության ստաժ: Քաղաքացիական ծառայողը օրենքով սահմանված կարգով երեք ամիս ստանում է վարձատրություն այն համապատասխան մարմնից, որտեղ զբաղեցրել է քաղաքացիական ծառայության պաշտոն:

17. Կադրերի ռեզերվում գրանցվելու դեպքում քաղաքացիական ծառայողի հետ վերջնահաշվարկ չի կատարվում: Այս դեպքում քաղաքացիական ծառայողի հետ վերջնահաշվարկը կատարվում է, եթե քաղաքացիական ծառայողի լիազորությունները դադարում են սույն օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով նախատեսված հիմքով:

18. Եթե քաղաքացիական ծառայողը սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված կարգով զբաղեցնում է քաղաքացիական ծառայության պաշտոն նույն համապատասխան մարմնում, ապա այս դեպքում կադրերի ռեզերվից դուրս գալու դեպքում վերջնահաշվարկ չի կատարվում, իսկ այլ համապատասխան մարմնում զբաղեցնելու դեպքում կատարվում է վերջնահաշվարկ:

19. Եթե քաղաքացիական ծառայողը սույն օրենքի ~~15~~14-րդ հոդվածով սահմանված կարգով զբաղեցնում է քաղաքացիական ծառայության պաշտոն, ապա այս դեպքում կադրերի ռեզերվից դուրս գալու դեպքում վերջնահաշվարկ չի կատարվում:

20. Քաղաքացիական ծառայողը հանվում է կադրերի ռեզերվից հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու կամ այլ աշխատանքի անցնելու դեպքում:

21. Ռեզերվում գրանցված ժամանակ քաղաքացիական ծառայողը չունի արձակուրդի իրավունք և վերջնահաշվարկի մեջ ռեզերվում գրանցված լինելու ժամանակահատվածը չի հաշվարկվում:

22. Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվը վարելու, կադրերի ռեզերվում գրանցելու և կադրերի ռեզերվից հանելու կարգը սահմանում է կառավարությունը:

**Հոդված 25. Քաղաքացիական ծառայողի անձնական գործը և քաղաքացիական ծառայողների գրանցամատյանը**

1. Քաղաքացիական ծառայողի ծառայողական գործունեության ընթացքն արտացոլվում է նրա անձնական գործում:
2. Քաղաքացիական ծառայողի անձնական գործը գրանցամատյանի բաղկացուցիչ մաս է, որը քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում վարում է համապատասխան մարմինը:
3. Գրանցամատյան վարելու ընթացակարգային առանձնահատկությունները սահմանում է համակարգող փոխվարչապետը:

**Հոդված 26. Քաղաքացիական ծառայողի վարձատրությունը**

1. Յուրաքանչյուր քաղաքացիական ծառայող, առանց որևէ խտրականության, ունի աշխատանքի համար համարժեք վարձատրության իրավունք:
2. Քաղաքացիական ծառայողը, այդ թվում՝ քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողը, ստանում է վարձատրություն՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

## ԳԼՈՒԽ 6.
## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Հոդված 27. Քաղաքացիական ծառայողի աշխատանքային հարաբերությունները**

4. Քաղաքացիական ծառայողների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:
5. Քաղաքացիական ծառայողների աշխատանքային այն հարաբերությունները, որոնք կարգավորված չեն սույն օրենքով և/կամ հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ:
6. Քաղաքացիական ծառայողների միջև ծառայողական փոխհարաբերությունները կարգավորվում են աշխատանքային ներքին կարգապահական կանոններով:

**Հոդված 28. Քաղաքացիական ծառայողի աշխատանքային (ծառայության) ժամերը**

4. Աշխատանքային (ծառայության) ժամերն այն ժամանակահատվածն է, որի ընթացքում օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի համաձայն քաղաքացիական ծառայողը պարտավոր է կատարել իր ծառայողական պարտականությունները, ինչպես նաև այլ ժամանակահատվածներ, որոնք օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի համաձայն ներառվում են աշխատաժամանակում և/կամ :
5. Քաղաքացիական ծառայողի աշխատանքային ժամերը կարող են փոխվել, եթե դա պայմանավորված է տվյալ մարմնում աշխատանքների կազմակերպման առանձնահատկություններով:
6. Գործադիր իշխանության մարմիններում աշխատանքային ժամերը սահմանում է կառավարությունը՝ հաշվի առնելով համապատասխան մարմնում աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները:

**Հոդված 29. Քաղաքացիական ծառայողի ծառայողական գործուղումը**

4. Քաղաքացիական ծառայողի ծառայողական գործուղում է համարվում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի համապատասխան իրավական ակտի հիման վրա քաղաքացիական ծառայողի մշտական ծառայողական վայրից որոշակի ժամկետով այլ վայր մեկնելը՝ ծառայողական որոշակի պարտականություններ կատարելու համար:
5. Գլխավոր քարտուղարի ծառայողական գործուղման որոշում կայացնում է համապատասխան մարմնի ղեկավարը:
6. Քաղաքացիական ծառայողին ծառայողական գործուղման պայմաններն ու կարգը սահմանում է կառավարությունը:

**Հոդված 30. Քաղաքացիական ծառայողի արձակուրդը**

7. Քաղաքացիական ծառայողն ունի ամենամյա նվազագույն և ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք:
8. Քաղաքացիական ծառայողի ամենամյա արձակուրդի տևողությունը 20 աշխատանքային օր է, իսկ լրացուցիչ արձակուրդի տևողությունը 4 աշխատանքային օր:
9. Քաղաքացիական ծառայողին հերթական և/կամ լրացուցիչ արձակուրդը պետք է տրամադրվի այնպես, որ չխոչընդոտի տվյալ կառուցվածքային ստորաբաժանման բնականոն գործունեությանը:
10. Առանձին դեպքերում, անձնական կամ ընտանեկան հանգամանքներից ելնելով, քաղաքացիական ծառայողին կարող է մեկ տարվա ընթացքում տրամադրվել չվճարվող արձակուրդ՝ ոչ ավելի, քան երեսուն օր:

11. Քաղաքացիական ծառայողին արձակուրդ տրամադրելու կարգը և պայմանները սահմանում է կառավարությունը:
12. Քաղաքացիական ծառայողներին արձակուրդ տրամադրում է գլխավոր քարտուղարը, իսկ գլխավոր քարտուղարին՝ համապատասխան մարմնի ղեկավարը:

**Հոդված 31. Քաղաքացիական ծառայության ստաժը**
7. Քաղաքացիական ծառայության ստաժը ներառում է քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու, քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված լինելու, համապատասխան մարմիններում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը, աշխատած ողջ ժամանակաշրջանը:
8. Քաղաքացիական ծառայության ստաժը չի ներառում սույն օրենքով սահմանված կարգի խախտմամբ՝ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու, քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված լինելու, ինչպես նաև օրենքի խախտմամբ համապատասխան մարմին-ներում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը աշխատած ժամանակաշրջանը:
9. Քաղաքացիական ծառայության ստաժը հաշվարկվում է քաղաքացիական ծառայողի ընդհանուր աշխատանքային ստաժում:
10. Սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված հիմքով՝ քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատված անձի պետական պաշտոն զբաղեցնելու ժամանակաշրջանի աշխատանքային ստաժը հավասարեցվում է քաղաքացիական ծառայության ստաժին:
11. Համապատասխան մարմիններում փորձնակ գրանցված ժամանակաշրջանը սույն օրենքի իմաստով հաշվարկվում է որպես հանրային ծառայության ստաժ՝ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար: Փորձնակ գրանցված ժամանակաշրջանում աշխատանքների մասնակցության համար փորձնակը չի վարձատրվում:
12. Փորձնակ գրանցելու և աշխատանքների մասնակցության առանձնահատկությունները սահմանում է համակարգող փոխվարչապետը:

**Հոդված 32. Քաղաքացիական ծառայողի կողմից ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք գործադրելը և համազգեստը**
3. Համապատասխան մարմինների առջև դրված խնդիրների առանձնահատկություններով պայմանավորված քաղաքացիական ծառայողը կարող է կրել համազգեստ և/կամ զենք, ինչպես նաև կարող է գործադրել ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ:
4. Քաղաքացիական ծառայողի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման, զենք տրամադրելու, զենքը պահելու, կրելու, օգտագործելու կարգը, պայմանները, համազգեստների նկարագրերը և այդ մարմինների ցանկը սահմանում է կառավարությունը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

## ԳԼՈՒԽ 7.
## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ

**Հոդված 33. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովը**
6. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի կազմում ընդգրկվելու համար համապատասխան մարմինների գլխավոր քարտուղարները քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում լրացնում են համակարգող փոխվարչապետի կողմից սահմանված պահանջները բավարարող երկու քաղաքացիական ծառայողի թեկնածություն: Գլխավոր քարտուղարը չի կարող լինել էթիկայի հանձնաժողովի անդամ:
7. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովը բաղկացած է հինգ անդամից: Յուրաքանչյուր դեպքի համար ձևավորվում է քաղաքացիական ծառայողների էթիկայի առանձին հանձնաժողով:
8. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողով ձևավորելու իրավական հիմք առաջանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան մարմնի բարեվարքության հարցերով կազմակերպիչը էլեկտրոնային ծրագրի միջոցով պատահականության սկզբունքով ձևավորում է քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողով՝ կազմում պարտադիր ընդգրկելով տվյալ մարմնի՝ քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի անդամի թեկնածուներից մեկին: Էլեկտրոնային ծրագիրը պատահականության սկզբունքով պաշտոնով ավելի բարձր քաղաքացիական ծառայողին ընտրում է քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի նախագահ: Տվյալ մարմնի ներկայացուցիչը չի կարող լինել քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի նախագահ:

9. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի անդամն իր լիազորություններն իրականացնելիս ենթարկվում է միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին, անկախ է իրեն առաջադրած պաշտոնատար անձից:
10. Քաղաքացիական ծառայողը, որպես հանձնաժողովի անդամ և դրանից հետո, չի կարող կարգապահական պատասխանատվության ենթարկվել իր՝ որպես հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող գործողությունների համար, բացառությամբ անհարգելի պատճառով հանձնաժողովի աշխատանքից բացակայելու դեպքերի:

**Հոդված 34. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի գործունեությունը**

6. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովն աշխատանքները կազմակերպում է ծառայողական քննության կարգին համապատասխան:
7. Հանձնաժողովի նախագահը կատարում է աշխատանքների բաշխում հանձնաժողովի անդամների միջև:
8. Հանձնաժողովը ծառայողական քննության վերաբերյալ եզրակացություն ընդունում է՝ գումարելով հանձնաժողովի նիստ: Նիստն իրավազոր է, եթե դրան ներկա է քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի առնվազն երեք անդամ:
9. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովը անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև վարքագծի ուղենիշային սկզբունքների և դրանցից բխող վարքագծի կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն և մեթոդական աջակցություն ստանալու համար կարող է դիմել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:
10. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովը հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերներ ընդունելու արգելքի, վարքագծի կանոնների խախտումների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված առաջարկություններ է ներկայացնում համապատասխան մարմնին կամ պաշտոնատար անձին:

**Հոդված 35. Պատասխանատվության առանձնահատկությունները քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները խախտելու, հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու, շահերի բախման կանոնները, նվերներ ընդունելու արգելքը խախտելու դեպքերում**

5. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովը ծառայողական քննության արդյունքում ընդունած եզրակացությունն անմիջապես ուղարկվում է ծառայողական քննության կողմերին:
6. Քաղաքացիական ծառայողն անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների խախտումների վերաբերյալ քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի եզրակացությունը կարող է բողոքարկել այն ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:
7. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամկետում բողոք ներկայացնելը հիմնավորող փաստաթղթի բացակայության դեպքում, իսկ վարքագծի կանոնները խախտելու և/կամ շահերի բախման կանոնները և/կամ նվերներ ընդունելու արգելքը խախտելու վերաբերյալ քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի եզրակացությունն ստանալուց հետո, իսկ բողոքարկման դեպքում համապատասխան եզրակացությունը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, գլխավոր քարտուղարն եզրակացությունը հրապարակում է այդ մարմնի կայքէջում:
8. Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն, եզրակացության հրապարակումից հետո, երեք աշխատանքային օրվա ընթացքում, քննարկում է եզրակացությունը և արդյունքների մասին տեղեկատվությունը հրապարակում այդ մարմնի կայքէջում:

**Հոդված 36. Բարեվարքության հարցերով կազմակերպիչը**

1. Համապատասխան մարմինների անձնակազմի կառավարման ստորաբաժանումում նախատեսվում է բարեվարքության հարցերով կազմակերպչի քաղաքացիական ծառայության պաշտոն:

2. Բարեվարքության հարցերով կազմակերպիչը՝

6) քաղաքացիական ծառայողներին տրամադրում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերներ ընդունելու արգելքի, վարքագծի կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն, ներկայացնում շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություն.

7) իրականացնում է բարեվարքության հարցերով վերապատրաստման կարիքների բացահայտում և վերապատրաստման ծրագրերի, ինչպես նաև բարեվարքության պահանջների պահպանմանն ուղղված այլ ծրագրերի մշակում.

8) համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարի, էթիկայի հանձնաժողովի պահանջով կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկով կատարում է բարեվարքության համակարգին առնչվող ուսումնասիրություններ.
9) մշակում է քաղաքացիական ծառայողների բարեվարքության պլանների նախագծերը, դրանք ներկայացնում գլխավոր քարտուղարի հաստատմանը.
10) վարում է քաղաքացիական ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման, նվերների ընդունման արգելքի խախտման դեպքերի վիճակագրություն.

## ԳԼՈՒԽ 8.
## ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ, ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼԸ

### Հոդված 37. Քաղաքացիական ծառայողին պաշտոնից ազատելու և ծառայության դադարման հիմքերը

10. Քաղաքացիական ծառայողին պաշտոնից ազատելու հիմքերն են՝
1) անձնական դիմումը.
2) հաստիքների և/կամ սույն օրենքի 23-րդ հոդվածով սահմանված դեպքում քաղաքացիական ծառայության պաշտոնի կրճատումը.
3) սույն օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերում քաղաքացիական ծառայության պաշտոնի չնշանակվելը.
4) քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու որոշումն անվավեր ճանաչելը և անձին քաղաքացիական ծառայության իր պաշտոնում վերականգնելը.
5) համապատասխան մարմնի գործունեության դադարումը.
6) սույն օրենքի 23-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված դեպքում քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակվելուն համաձայնություն չտալը.
7)հանրային պաշտոնում ընտրվելը կամ նշանակվելը:
11. Քաղաքացիական ծառայողի լիազորությունները դադարում են՝
18) նրա մահվան դեպքում.
19) սույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելու դեպքում.
20) սույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված կարգապահական տույժերը մեկ տարվա ընթացքում կիրառելու դեպքում.
21) սույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը կիրառելու դեպքում.
22) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան չորս ամիս անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ավելի քան 140 օր աշխատանքի չներկայանալու դեպքում՝ չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդը.
23) սույն օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու դեպքում.
24) քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակելու՝ սույն օրենքով սահմանված կարգի խախտումը՝ քաղաքացիական ծառայության գրասենյակի միջնորդությամբ.
25) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու դեպքերում՝ համապատասխան եզրակացության հիման վրա.
26) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու դեպքում.
27) ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք: Անձի կողմից տուգանքի վճարման ժամանակացույցով սահմանված պարտավորությունների կատարումը խախտելու դեպքում տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինվելու դեպքում ծառայությունը դադարեցվում է:
28) քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու՝ սույն օրենքով սահմանված առավելագույն տարիքը լրանալու դեպքում.
29) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում.
30) դատական կարգով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկվելու դեպքում.
31) կառավարության հաստատված հիվանդություններից որևէ մեկով հիվանդանալու դեպքում.
32) ռեզերվից հանվելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ քաղաքացիական ծառայողը զբաղեցնում է հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն.

33) երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալը.
34) անձնական դիմումը:
12. Երկու տարի անընդմեջ կատարողականի տարեկան գնահատման արդյունքները կառավարության կողմից սահմանած տոկոսից (միավորից) ցածր լինելու դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իրավունք ունի դադարեցնել քաղաքացիական ծառայողի լիազորությունները:
13. Քաղաքացիական ծառայողի ծառայությունը չի կարող դադարեցվել սույն հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետով, եթե առակա է 1-16-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկը:
14. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և սույն հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետով նախատեսված հիմքերով քաղաքացիական ծառայողը ազատվում է զբաղեցրած պաշտոնից կամ դադարեցվում է ծառայությունը, դիմում ներկայացնելուց հետո` երրորդ աշխատանքային օրը, եթե այդ դիմումում ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ: Մինչև համապատասխան իրավական ակտի ընդունումը քաղաքացիական ծառայողը կարող է հետ վերցնել ներկայացրած դիմումը:
15. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերի, բացառությամբ 17-րդ կետով նախատեսված հիմքի, ի հայտ գալու դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, երկու աշխատանքային օրվա ընթացքում, ընդունում է քաղաքացիական ծառայողի լիազորությունները դադարելու մասին համապատասխան իրավական ակտ:
16. Սույն հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերով նախատեսված հիմքերով քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատելու դեպքում քաղաքացիական ծառայողներին այդ մասին նախազգուշացնելը պարտադիր չէ:
17. Սույն հոդվածի 2-րդ մասի 2-5-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով ծառայությունը դադարեցրած անձը մինչև մեկ տարին լրանալը չի կարող մասնակցել քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի մրցույթին:
18. Մինչև քաղաքացիական ծառայության զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին կամ լիազորությունները դադարելու մասին իրավական ակտն ընդունելը` համապատասխան մարմինը քաղաքացիական ծառայողից պահանջում է վերջինիս գործավարությանը հանձնված նյութերը և օգտագործմանը տրամադրված գույքը: Քաղաքացիական ծառայողը պարտավոր է անհապաղ կատարել այդ պահանջը:

## ԳԼՈՒԽ 9.
## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

### Հոդված 38. Քաղաքացիական ծառայության կազմակերպումը և ղեկավարումը

5. Քաղաքացիական ծառայության ղեկավարումը, միասնականությունը, սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ապահովում է վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը:
6. Քաղաքացիական ծառայության գրասենյակը հաշվետու է վարչապետին, կառավարությանը և համակարգող փոխվարչապետին:
7. Քաղաքացիական ծառայության գրասենյակը `
13) իրականացնում է համապատասխան մարմինների մարդկային ռեսուրսների կառավարման մեթոդական ղեկավարումը և վերահսկողությունը.
14) ուսումնասիրում և վերլուծում է համապատասխան մարմիններում հանրային ծառայության օրենսդրության կիրառման պրակտիկան, մշակում և կառավարության, վարչապետի և համակարգող փոխվարչապետի քննարկմանն է ներկայացնում ~~քաղաքացիական~~ հանրային ծառայությանն առնչվող համապատասխան իրավական ակտերի նախագծերը.
15) իրականացնում է վերլուծություններ բացահայտելու հոսունության դինամիկան դրան նպաստող պայմանները, հայտարարված մրցույթներին դիմորդներ չլինելու պատճառները` այդ թվում պաշտոնների սխալ գնահատումը, չափանիշների սահմանումը, ենթախմբերի դասակարգումը.
16) մշակում է պետական մարմիններում աշխատանքի վարձատրության քաղաքականությունը.
17) կառավարության սահմանած կարգով իրականացնում է աշխատանքի շուկայի վերլուծություն ըստ մասնագիտությունների և տարածքների.
18) իրականացնում է կատարողականի գնահատման արդյունքների մոնիտորինգ և կատարում համապատասխան վերլուծություններ.
19) իրականացնում է վերապատրաստման արդյունքների ուսումնասիրություն և վերլուծություն.

20) կառավարություն առաջարկություններ է ներկայացնում համապատասխան մարմինների վերա-կազմակերպման, գործունեության դադարման, կառուցվածքային փոփոխությունների ժամանակ քաղաքացիական ծառայության հետ կապված հարցերի վերաբերյալ.

21) ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում համապատասխան մարմիններ.

22) համապատասխան և այլ մարմիններից ստանում է քաղաքացիական ծառայության հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն.

23) անձնակազմի կառավարման աշխատանքների կազմակերպման մասով տալիս է մեթոդական ցուցումներ.

24) իրականացնում է սույն օրենքով, այլ օրենքներով, դրանցից բխող իրավական ակտերով նախա-տեսված այլ լիազորություններ:

8. Քաղաքացիական ծառայության գրասենյակը, օրենքով սահմանված դեպքերում քաղաքացիական ծառայության որոշ ինստիտուտների, գործառույթների, ընթացակարգերի հետ կապված կարող է փորձարարական աշխատանքներ կազմակերպել համապատասխան մարմիններում:

**Հոդված 39. Գլխավոր քարտուղարը**

7. Գլխավոր քարտուղարը քաղաքացիական ծառայող է:

8. Համապատասխան մարմիններում մարդկային ռեսուրսների կառավարման, հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման պատասխանատուն գլխավոր քարտուղարն է:

9. Գլխավոր քարտուղարի լիազորությունները սահմանվում են սույն օրենքով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով:

10. Սույն օրենքով սահմանված գլխավոր քարտուղարի լիազորություններն իրականացնում են օրենքով նախատեսված դեպքերում քաղաքացիական ծառայող համարվող աշխատակազմի ղեկավարը, դատական դեպարտամենտի ղեկավարը, վարչական պաշտոն զբաղեցնող աշխատակազմի ղեկավարը:

11. Անվտանգության խորհրդի գրասենյակում սույն օրենքով սահմանված գլխավոր քարտուղարի լիազորություններն իրականացնում է անվտանգության խորհրդի քարտուղարը, իսկ մարմնի ղեկավարին վերապահված լիազորությունները՝ վարչապետը:

12. Այն տեսչական մարմնում, որի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված չէ գլխավոր քարտուղարի պաշտոն, սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով, 10-րդ հոդվածի 5-րդ և 11-րդ մասերով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 19-րդ հոդվածի 3-րդ և 7-9-րդ մասերով, 22-րդ հոդվածի 3-րդ մասով, 30-րդ հոդվածի 6-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասով և 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված լիազորություններն իրականացնում է տեսչական մարմնի ղեկավարը: Տեսչական մարմնի օրենքով նախատեսված ստորաբաժանման ղեկավարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետի աշխատակազմի ղեկավարը: ~~Տեսչական մարմնի օրենքով նախատեսված ստորաբաժանումում պաշտոնի նշանակում եւ պաշտոնից ազատում է վարչապետի աշխատակազմի ղեկավարը:~~

## ԳԼՈՒԽ 10
## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ

**Հոդված 40. Քաղաքացիական ծառայության կազմակերպման որոշ առանձնահատկություններ**

4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում ~~փորձարարական կարգով~~ աշխատանքների փորձարարական կազմակերպման համար նախատեսված քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը կարող են ներառել աշխատանքային ստաժի և փորձի, կրթության, ենթակա և հաշվետու լինելու սույն օրենքով սահմանված պահանջներից և չափանիշներից տարբերվող այլ չափանիշներ և պահանջներ:

5. Այդ չափանիշները և պահանջները սահմանվում են ~~փորձարարական~~ աշխատանքների փորձարարական կազմակերպման ծրագրում և սույն օրենքով սահմանված կարգով ներառվում են քաղաքացիական ծառայության այդ պաշտոնների անձնագրերում:

6. ~~Փորձարարական աշխատանքների~~ Աշխատանքների փորձարարական կազմակերպման համար նախատեսված քաղաքացիական ծառայության պաշտոնները զբաղեցվում են միայն սույն օրենքով նախատեսված մրցութային կարգով:

## ԳԼՈՒԽ ~~10~~11
## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**Հոդված 41. Օրենքի ուժի մեջ մտնելը**

5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հուլիսի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 33-36-րդ, 38-րդ, 42-րդ և ~~50~~49-րդ հոդվածների: 33-36-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2019 թվականի ~~մայիսի~~ հունվարի 1-ից, իսկ 38-րդ, 42-րդ և ~~50~~49-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:
6. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած ճանաչել «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի N ՀՕ-272 օրենքը, բացառությամբ 9-րդ և 10-րդ հոդվածների:
7. «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի N ՀՕ-272 օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածներն ուժը կորցրած են ճանաչվում սույն օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 60-րդ օրը:
8. 2019 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած ճանաչել ~~«Դատական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի հուլիսի 7-ի N ՀՕ-159-Ն օրենքը, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հունիսի 11-ի N ՀՕ-158-Ն օրենքը,~~ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի մայիսի 19-ի N ՀՕ-26-Ն օրենքը, «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 նոյեմբերի 28-ի N ՀՕ-286-Ն օրենքը:

**Հոդված 42. Քաղաքացիական ծառայության գրասենյակի կազմավորումը**

2. Քաղաքացիական ծառայության գրասենյակի` քաղաքացիական ծառայության պաշտոնները, մինչև սույն օրենքով սահմանված մրցութային կարգով զբաղեցնելը զբաղեցվում են ժամկետային աշխատանքային պայմանագրով` այլ անձնաց կողմից:

**Հոդված 43. Քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի գործունեության դադարեցումը**

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահը տասնհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի տիրապետման և օգտագործման իրավունքով հանձնված գույքը, ինչպես նաև միջազգային ծրագրերի իրականացման արդյունքով ստացված գույքը, քաղաքացիական ծառայության ինստիտուտների բարեփոխման համար միջազգային դոնոր կազմակերպությունների և/կամ սեփական միջոցներով իրականացված ուսումնասիրությունների, վերլուծությունների, կազմված ծրագրերի արդյունքները հանձնում է վարչապետի աշխատակազմ, իսկ արխիվային փաստաթղթերը` Ազգային արխիվ:
5. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողության իրականացումից հետո, քաղաքացիական ծառայության աշխատակազմի քաղաքացիական ծառայողները վեց ամիս ժամկետով գրանցվում են քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում:
6. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողության իրականացումից հետո դադարում է քաղաքացիական ծառայության խորհրդի գործունեությունը:

**Հոդված 44. Սույն օրենքից բխող իրավական ակտերն ընդունելը**

6. Քաղաքացիական ծառայության գրասենյակի կազմավորումից հետո մեկամսյա ժամկետում վարչապետի հաստատմանն է ներկայացվում ժամանակացույց և միջոցառումների ծրագիր սույն օրենքի գործողության ոլորտը սահմանված մարմինների վրա տարածելու համար:
7. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում ընդունել սույն օրենքի կատարումն ապահովող կառավարության որոշումները:
8. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում ընդունել սույն օրենքի կատարումն ապահովող փոխվարչապետի որոշումները:
9. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ~~սույն~~ մինչև սույն թվականի դեկտեմբերի 31-ը սույն ~~օրենքից~~ օրենքին համապատասխանեցնել պետական ծառայության մյուս օրենքները` հիմք ընդունելով սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը, մասնավորապես` առանձնահատկություններ սահմանվում են զինվորական ծառայություն անցնող պետական ծառայողների պաշտոնների, ոստիկանության գործառույթներ իրականացնող ոստիկանության ծառայողների պաշտոնների, փրկարարական ծառայության պաշտոնների, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պետական ծառայության պաշտոնների, քրեակատարողական ծառայության բարձրագույն խմբի պաշտոնների և քրեակատարողական ծառայության հատուկ նշանակության ստորաբաժանման պաշտոնների, հարկադիր կատարողների պաշտոնների, դիվանագիտական ծառայության պաշտոնների, հարկային մարմնում հետաքննչական, օպերատիվ հետախուզական, գործառույթներ իրականացնող պաշտոնների, մաքսային մարմիններում իրավապահ

գործառույթներ իրականացնող պաշտոնների, նախաքացթողումային հսկողություն, ներքին անվտանգության ապահովման գործառույթներ իրականացնող պաշտոնների, ինչպես նաև մաքսատան և մաքսակետի պաշտոնների, դատական ծառայողների՝ դատավորի օգնականի, դատավորի գործավարի և դատական նիստերի քարտուղարի պաշտոնների, դատական կարգադրիչների ծառայության պաշտոնների համար:~~բխող այլ օրենքներում փոփոխությունները կատարել վեց ամսվա ընթացքում:~~

10. Պետական ծառայողները համարվում են քաղաքացիական ծառայողներ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամանակացույցին համապատասխան առանց մրցույթի նշանակվում են քաղաքացիական ծառայության համապատասխան պաշտոններում:

**Հոդված 45. Գործառույթների իրականացման առանձնահատկությունները մինչև սույն օրենքով նախատեսված էլեկտրոնային ծրագրերի կազմելը**

4. Մինչև սույն օրենքով նախատեսված էլեկտրոնային ծրագրերի կազմումը քաղաքացիական ծառայության գրասենյակը այդ գործընթացները կազմակերպում և գործառույթները իրականացնում է ոչ էլեկտրոնային եղանակով՝ համակարգող փոխվարչապետի կողմից սահմանված կարգին համապատասխան:

5. Պաշտոնների դասակարգման և չափանիշների սահմանման սույն օրենքով սահմանված պահանջները համապատասխան մարմինների վրա տարածվում է համակարգող փոխվարչապետի կողմից սահմանված ժամանակացույցին համապատասխան: Մինչ նոր չափանիշներով պաշտոնների գնահատումները իրականացնելը և չափանիշներ սահմանելը գործում են մինչ սույն օրենքն ուժի մեջ մտնելը հաստատված պաշտոնների անձնագրերը:

6. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամանակացույցին համապատասխան պաշտոնների դասակարգման նոր համակարգին անցնելու դեպքում քաղաքացիական ծառայողները վերանշանակվում են իրենց պաշտոններում առանց մրցույթի և ժամկետային պայմանագրի:

**Հոդված 46. Էթիկայի հանձնաժողովի ձևավորումը և բարեվարքության հարցերով կազմակերպիչների նշանակումը**

3. Մինչև սույն օրենքով նախատեսված էթիկայի հանձնաժողովի ձևավորումը՝ քաղաքացիական ծառայության գրասենյակը և/կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը էթիկայի հանձնաժողովի անդամների թեկնածուների համար կազմակերպում են բարեվարքության հարցերով վերապատրաստումներ:

4. Բարեվարքության հարցերով կազմակերպիչների պաշտոնների անձնագրերը հաստատվում են 2019 թվականի ~~ապրիլի առաջին~~հունվարի երրորդ տասնօրյակում:

**Հոդված 47. Իրավահաջորդության որոշ դրույթներ**

23. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կիրառված խրախուսանքի (պարգևատրման), կարգապահական տույժի միջոցները պահպանում են իրենց իրավական հետևանքները և հաշվի են առնվում սույն օրենքով նախատեսված կարգապահական տույժեր և խրախուսանքի տեսակներ կիրառելիս:

24. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը տրամադրված արձակուրդները պահպանում են իրենց իրավական հետևանքները: Նախկինում չօգտագործված և տեղափոխված արձակուրդները պահպանվում են և տրամադրվում են մինչ սույն օրենքն ուժի մեջ մտնելն գործող կարգին համապատասխան:

25. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը հրապարակված մրցույթները անցկացվում են մրցույթի հրապարակման ժամանակ գործող կարգին համապատասխան:

26. Պետական ծառայության պաշտոններում օրենքով սահմանված կարգով փոխարինող և/կամ պայմանագրով պաշտոն զբաղեցնող և/կամ ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող անձիք շարունակում են իրենց պարտականությունների կատարումը մինչև տվյալ պաշտոնների համար սահմանված հիմքերի վերացումը, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

27. Վերապատրաստման, ատեստավորման (կատարողականի գնահատման) հարաբերությունների իրավական հետևանքները, ինչպես նաև արդեն իսկ նախատեսված և իրականացվող գործողությունները պահպանում են իրենց իրավական ուժը:

28. Ստացած դասային աստիճանները, կոչումները պահպանվում են:

29. Կրտսեր պաշտոններ զբաղեցնելու համար գործող հավաստագիր ունեցող անձիք ընդգրկվում են վարկանիշային ցուցակներում սույն օրենքով սահմանված կարգին համապատասխան:

30. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, այն մարմինները, որոնց վրա սույն օրենքի գործողությունը տարածվելու է համաձայն սույն օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամանակացույցի, այդ մարմիններում պետական ծառայողական հարաբերությունները կարգավորվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող կարգին համապատասխան:

31. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան վեց ամիս աշխատանքի չներկայանալու՝ չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամկետները հաշվարկվում են նաև սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո: և իրավական հետևանքներն առաջանում են սույն օրենքով սահմանված ժամկետները լրանալու դեպքերում:
32. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելն նախատեսված վերապատրաստումները կազմակերպվում և անցկացվում են մինչ սույն օրենքն ուժի մեջ մտնելն գործող կարգին համապատասխան:
33. Պաշտոնների դասակարգման նոր համակարգին անցնելը ծառայությունը դադարեցնելու հիմք չէ: Քաղաքացիական ծառայողը վերանշանակվում է նոր պաշտոնին: Նոր պաշտոնի նշանակվելը չի հանգեցնում քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետների վերահաշվարկի:
34. Պաշտոնների դասակարգման նոր համակարգին անցնելիս քաղաքացիական ծառայողը պահպանում է իր աշխատավարձը, եթե նոր դասակարգմամբ լինի պաշտոնի ենթախմբի (սանդղակի մակարդակի) իջեցում:
35. Մինչ սույն օրենքն ուժի մեջ մտնելը դասային աստիճանի համար հաշվարկվող հավելավճարը տրվում է տվյալ պաշտոնը զբաղեցնելու ժամանակահատվածում: Պաշտոնի փոփոխության դեպքում հավելավճարը չի հաշվարկվում:
36. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողները համարվում են քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից վարվող ռեզերվում գրանցված և ստանում են սահմանված վարձատրությունը մինչ սույն օրենքը ուժի մեջ մտնելը սահմանված ժամկետով:
37. «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի N ՀՕ-272 օրենքն ուժը կորցնելը հիմք չէ քաղաքացիական ծառայության պաշտոններից ազատելու համար, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
38. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո պետական ծառայողին սույն օրենքով սահմանված կարգով քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակելու դեպքում, համապատասխան ծառայողի համար վերջին պաշտոնում սահմանված պաշտոնային դրույքաչափը «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պահպանվում է:
39. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո քաղաքացիական (պետական) ծառայողին սույն օրենքով սահմանված կարգով քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակելու դեպքում, որը պայմանավորված է պաշտոնների դասակարգման նոր համակարգին անցնելով, համապատասխան ծառայողի համար վերջին պաշտոնում սահմանված պաշտոնային դրույքաչափը «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պահպանվում է:
40. Եթե պետական ծառայողի նշանակումը պայմանավորված չէ սույն հոդվածի 16-17-րդ մասերով նախատեսված պայմաններով, ապա նրա համար պաշտոնային դրույքաչափը որոշվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդհանուր կարգով:
41. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով քաղաքացիական հատուկ ծառայողների համար սահմանված հավասարեցումը տարածվում է այդ մարմինների քաղաքացիական ծառայողների վրա:
42. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով զինծառայողների համար սահմանված արտոնությունները գործում են քաղաքացիական ծառայող դառնալուց հետո այն կարգավորումներով ինչ նախատեսված է քաղաքացիական հատուկ ծառայողների համար:
43. Քաղաքացիական ծառայության ստաժում չի ներառվում համապատասխան մարմիններում քաղաքացիական աշխատանքը և տեխնիկական սպասարկում իրականացնելու ժամանակահատվածները:
44. Քաղաքացիական ծառայության խորհրդի մասնակցությամբ դատական գործերում սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո դատական ներկայացուցչության հարցերը սահմանում է կառավարությունը՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

**Հոդված 4948. Գլխավոր քարտուղարի պաշտոն սահմանելը**

2. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում մինչև սույն օրենքով սահմանված գլխավոր քարտուղարի պաշտոն նախատեսելը, սույն օրենքով գլխավոր քարտուղարի համար սահմանված լիազորությունները իրականացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանապետը:

~~Հոդված 50. Քաղաքացիական ծառայողի իրավական վիճակը կառավարության աշխատակազմի լուծարման (գործունեության դադարման դեպքում)~~

~~<<Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում կառավարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողը ազատվում է իր զբաղեցրած պաշտոնից:~~
~~Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով պաշտոնից ազատվելու դեպքում կառավարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողը գրանցվում է կադրերի ռեզերվում վեց ամիս ժամկետում և օգտվում սույն օրենքով կադրերի ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողի իրավունքներից:~~

**Հոդված 49. Կառավարության և Հանրապետության նախագահի աշխատակազմերի քաղաքացիական ծառայողների իրավական վիճակի որոշ առանձնահատկություններ**

11. Վարչապետի աշխատակազմի ստեղծման մասին վարչապետի որոշումն ուժի մեջ մտնելու պահից Կառավարության աշխատակազմը լուծարվում է: Կառավարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողները շարունակում են պաշտոնավարել՝ ստանալով մինչև լուծարումը գործող աշխատավարձը և ենթակա չեն գրանցման քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում: Կառավարության աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը շարունակում է ուժի մեջ մնալ մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը:
12. Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անցավանացանկը հաստատվում է «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի N ՀՕ-272 օրենքին համապատասխան: Պաշտոնների անվանացանկի հաստատումից հետո մինչև 2018 թվականի հուլիսի մեկը Կառավարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողները պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձնաց կողմից նշանակվում են վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոններում՝ առանց մրցույթի և վերջնահաշվարկի՝ նույն խմբի պաշտոններում: Չնշանակված քաղաքացիական ծառայողները մինչև հուլիսի մեկը ստանում են աշխատավարձ և այդ ժամանակահատվածը համարվում է քաղաքացիական ծառայության ստաժ: Չնշանակված քաղաքացիական ծառայողների հետ հուլիսի 1-ին կատարվում է վերջնահաշվարկ և վերջիններս վեց ամիս ժամանակահատվածով, իրավունքի ուժով, համարվում են քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված և վեց ամիս օրենքով սահմանված չափով և կարգով քաղաքացիական ծառայության գրասենյակից ստանում են վարձրատրություն:
13. Հանրապետության նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատվում է «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի N ՀՕ-272 օրենքին համապատասխան: Նոր անվանացանկի հաստատումից հետո Նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայողները պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձնաց կողմից նշանակվում են Նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոններում՝ առանց մրցույթի և վերջնահաշվարկի՝ նույն ենթախմբի պաշտոններում: Մինչև 2018 թվականի ապրիլի 9-ը հաստատված անվանացանկը շարունակում է ուժի մեջ մնալ մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը: Չնշանակված քաղաքացիական ծառայողները մինչև հուլիսի մեկը ստանում են աշխատավարձ և այդ ժամանակահատվածը համարվում է քաղաքացիական ծառայության ստաժ: Չնշանակված քաղաքացիական ծառայողների հետ հուլիսի 1-ին կատարվում է վերջնահաշվարկ և վերջիններս վեց ամիս ժամանակահատվածով, իրավունքի ուժով, համարվում են քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված և վեց ամիս օրենքով սահմանված չափով և կարգով քաղաքացիական ծառայության գրասենյակից ստանում են վարձրատրություն:
14. Մինչև հուլիսի մեկը կառավարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողները կարող են առանց մրցույթի նշանակվել Հանրապետության նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայության նույն խմբի պաշտոններում:
15. Մինչև հուլիսի մեկը Հանրապետության նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայողները կարող են առանց մրցույթի նշանակվել Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության նույն խմբի պաշտոններում:
16. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված դեպքերում վերջնահաշվարկ չի կատարվում և ստաժը չի ընդհատվում: Աշխատակազմերի փոփոխությունը աշխատավարձի և գործակցի հաշվարկի վրա չի ազդում, եթե վերջիններս զբաղեցնելու են նույն ենթախմբի պաշտոն, ինչպես նաև պահպանվում և հաշվի են առնվում նախկինում կիրառված կարգապահական տույժերը, խրախուսանքի միջոցները, կատարողականի գնահատման արդյունքները:
17. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված դեպքերում պաշտոն զբաղեցնելու ժամանակ քաղաքացիական ծառայողը զբաղեցրած պաշտոնից ազատվում է Նախագահի

աշխատակազմում կամ Վարչապետի աշխատակազմում պաշտոն զբաղեցնելու հիմքով` իր դիմումի համաձայն:

18. Սույն հոդվածով նախատեսված նույն խմբի պաշտոններում նշանակման պահանջը չի տարածվում կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի պաշտոնի նշանակման դեպքերի վրա:
19. Սույն հոդվածով նախատեսված նշանակումների դեպքում քաղաքացիական ծառայողն իր համաձայնությամբ կարող է նշանակվել ավելի ցածր պաշտոնի:
20. Սույն հոդվածով սահմանված կարգով պաշտոնի նշանակումների դեպքում քաղաքացիական ծառայողը կիսամյակային հաշվետվությունների կամ կիսամյակային կատարողականների արդյունքում ստանում է պարգևատրումն, եթե կիսամյակային հաշվետվությունները կամ կիսամյակային կատարողականները գնահատվել են դրական: Գնահատումն իրականացվում է մինչև նոր մարմնում պաշտոն զբաղեցնելը: Նախկին և նոր մարմնում կատարված գնահատումների արդյունքով քաղաքացիական ծառայողը ստանում է պարգևատրում այն մարմնից, որտեղ զբաղեցնում է քաղաքացիական ծառայության պաշտոնը:

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**«Քաղաքացիական ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին», «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (Կ-268-15.02.2018,06.03.2018-ՊԻՄԻ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկների**

| № | ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ | ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ | ԱՌԱՋԱՐԿԸ | ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ (ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ) ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ | ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ |
|---|---|---|---|---|---|
| **1.** | **ՀՀ ԱԺ պատգամավոր Կ. Աճեմյան** | «Քաղաքացիական ծառայության մասին» (Կ-268-15.02.2018-ՊԻՄԻ-011/0) օրենքի նախագծի՝<br><br>1) 2-րդ հոդվածի 1-ին մաս | **1) 2-րդ հոդվածի 1-ին մաս**<br>հանել «օրենսդիր,» բառը՝ հետևյալ հիմնավորմամբ.<br>ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն. «Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա:»: Այդ եռաթև բաժանումը պետք է ապահովի իշխանության ճյուղերի | **1)**Նշված հոդվածները խմբագրվել են և «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության | 1)Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | սահմանադրական հավասարակշռությունը, որի իմաստն այն է, որ պետական իշխանության երեք ճյուղերի մարմիններից յուրաքանչյուրն ունի այնպիսի լիազորություն, որոնք հնարավորություն են տալիս հսկելու և ազդելու միմյանց վրա, համագործակցելու միմյանց հետ պետական կարևորագույն հարցերը վճռելիս, որոնք դրսևորվում են գործառույթային, կառուցակարգային և հասցեական ձևերով: Բացի այդ, օրենսդիրը գործադիր մարմնի նկատմամբ ունի վերահսկողության լիազորություն՝ Սահմանադրությամբ սահմանված կարգով և ձևերով: Վերը շարադրվածից ենթադրվում է, որ իշխանության երեք թևերի մարմինները ինքնուրույն են իրենց իրավասության շրջանակներում և չեն կարող միջամտել այլ մարմինների իրավասությանը:<br>Վերը նշված առաջարկությունները բխում են ոչ միայն Սահմանադրությունից, այլև «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքից, որի մի շարք դրույթների հետ Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենքի նախագիծը գտնվում է հակասության մեջ: Մասնավորապես, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի՝<br>1) 5-րդ հոդված 1-ին մասի 13-րդ, 14-րդ և 16-րդ կետերի համաձայն, Ազգային ժողովի նախագահը՝<br>13) նշանակում է Ազգային ժողովի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) ղեկավարին, ինչպես նաև Աշխատակազմում պետական ծառայության բարձրագույն պաշտոններում, նրանց ազատում այդ պաշտոններից. | օրենքը ուժը կորցրած ճանաչելու դրույթը դուրս է եկել: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 14) հաստատում է Աշխատակազմում պետական ծառայության պաշտոնների անվանացանկը, անձնագրերը, ինչպես նաեւ Աշխատակազմի հաստիքացուցակը եւ աշխատողների պաշտոնային դրույքաչափերը.<br>16) հաստատում է «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգերը.<br>2) 160-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Աշխատակազմում ծառայությունը պետական ծառայության տեսակ է, որի առանձնահատկությունները սահմանվում են Կանոնակարգով եւ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.<br>3) 162-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 6-րդ մասերի համաձայն՝<br>3. Մշտական հանձնաժողովներից յուրաքանչյուրն ունի Աշխատակազմի հաստիքացուցակով սահմանված մեկ համակարգող փորձագետ, առնվազն երկու փորձագետ (մասնագետ) եւ մեկ գործավար (օգնական): Մշտական հանձնաժողովի գործավարը (օգնականը) աշխատանքի է ընդունվում եւ ազատվում աշխատանքից համապատասխան հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ, իսկ համակարգող փորձագետը եւ մյուս փորձագետները (մասնագետները)՝ Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին օրենսդրությանը | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | համապատասխան: Մշտական հանձնաժողովի փորձագետների թիվը կարող է ավելացվել հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ՝ Խորհրդի որոշմամբ:<br>4. Վերակազմակերպված կամ անվանափոխված մշտական հանձնաժողովների փորձագետների (մասնագետների) իրավական վիճակը որոշվում է «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:<br>6. Մինչեւ պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողով ստեղծելը պատգամավորական էթիկայի հարցերով դիմումներն ուսումնասիրում եւ երկշաբաթյա ժամկետում խմբակցություններին եզրակացություն է ներկայացնում Աշխատակազմի իրավասու փորձագետը (մասնագետը), որը հանձնաժողով ստեղծվելուց հետո իրականացնում է հանձնաժողովի գործունեության մասնագիտական սպասարկումը: Աշխատակազմի իրավասու փորձագետը (մասնագետը) աշխատանքի է ընդունվում եւ ազատվում աշխատանքից Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան: | | |
| | | 2) 2-րդ հոդվածի 2-րդ մաս | **2) 2-րդ հոդվածի 2-րդ մաս**<br>«դատական կարգադրիչների,» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության | 2) 2-րդ հոդվածի 2-րդ մասը խմբագրվել է: | 2) ընդունվել է: |

<table>
<tr><td></td><td></td><td>3) 41-րդ հոդվածի 4-րդ մաս</td><td>օրենքով սահմանված կարգով պաշտոն զբաղեցնող անձանց վրա,» բառերը:<br>3) հանել «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հունիսի 11-ի N ՀՕ-158-Ն օրենքը,» նախադասությունը:</td><td>3) ընդունվել է:</td><td>3)ընդունվել է:</td></tr>
<tr><td>2</td><td>ՀՀ ԱԺ պատգամավոր Հ. Հակոբյան</td><td>«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի՝ Հավելված 1</td><td>Առաջարկում եմ նախագծի հավելված 1-ում կատարել հետևյալ փոփոխությունները.<br><table><tr><td>Պաշտոնի անվանումը</td><td>գ րծակիցը</td></tr><tr><td>ՀՀ Ազգային ժողովի նախագահ</td><td>19.00</td></tr><tr><td>Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ</td><td>11.5</td></tr><tr><td>Ազգային ժողովի պատգամավոր</td><td>11.00</td></tr><tr><td>Ազգային ժողովի խմբակցության ղեկավար</td><td>13.00</td></tr></table></td><td>Չի ընդունվել:</td><td>Չի ընդունվել :</td></tr>
<tr><td>3.</td><td>ՀՀ ԱԺ պատգամավոր Ս. Նիկոյան</td><td>«Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի նախագծի՝<br>1) հոդված 9</td><td>1) Հոդված 9. Նախատեսված է, որ պետական մարմնի ղեկավարը կառավարում է պետական մարմինը, միաժամանակ համաձայն Հոդված 6-ի պետական մարմնի մեջ մտնում են նաև կառուցվածքային</td><td>1) չի ընդունվել:Ըստ ներկայացված ձևակերպումների պետական մարմնի ընդհանուր</td><td>1) չի ընդունվել :</td></tr>
</table>

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի նախագծի՝ | ստորաբաժանումները: Հոդված 12-ի 2 կետով անձնակազմի կառավարումը իրականացվում է գլխավոր քարտուղարի կողմից: Առաջարկվում է կառավարման ֆունկցիան թողնել կամ գլխավոր քարտուղարին կամ մարմնի ղեկավարին: | կառավարումն իրականացնում է մարմնի ղեկավարը, սակայն պետական մարմնի լիազորությունների իրականացման կազմակերպումը, անձնակազմի կառավարումը, ֆինանսատնտեսական գործառույթների իրականացումը և քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակցությունը վերապահված է գլխավոր քարտուղարին: | |
| | | 2) Հոդված 9-ի 1-ին կետի 2-րդ ենթակետ | 2. Հոդված 9-ի 1-ին կետի 2-րդ ենթակետում «նախարարությունների» բառը փոխարինել «կառավարություն » բառով: | 2. հոդվածը սխալ է նշված: | 2. չի ընդունվել |
| | | 3) Հոդված 4- ի 1-ին կետի 1-ին ենթակետ: | 3.Հոդված 4- ի 1-ին կետի 1-ին ենթակետում՝ «քաղաքացիական ծառայություն՝ քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից անկախ մասնագիտական գործունեություն , որը կատարվում է սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում նշված համապատասխան մարմիններում ՀՀ օրենսդրությամբ այդ մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացման նպատակով » այս հիմնարար դրույթի պրակտիկ իրագործումը խնդրահարույց է , համաձայն 16-րդ հոդվածի | 3. Չի ընդունվել: Պահպանված են այժմ գործող կարգավորումները, որոնք իրացվում են և խնդրահարույց չեն: | 3. չի ընդունվել: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 3-րդ կետի«Քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին , 2-րդ, 3-րդ ենթախմբերի պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին, ներքին աուդիտորներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համապատասխան մարմնի ղեկավարը »:<br>Առաջարկում եմ վերացնել հակասությունը: | | |
| **4.** | **ՀՀ ԱԺ պատգամավոր Գ. Մինասյան** | «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի նախագծի՝<br><br>1) հոդված 1-ի 2-րդ կետ | <br><br><br><br><br><br><br><br>1. Սահմանադրությամբ սահմանված է ԱԺ, կառավարություն, ՍԴ, ԲԴԽ, ԿԸՀ, ՀՌՀ, ՀՊ կազմը: Քանի որ կառուցվածքում չեն կարող լինել կազմում չնշված բաղադրիչներ այս մարմինների համար կիրառելի չէ հոդված 6-ի դրույթները: Անհրաժեշտ է հոդված 1-ի 2-րդ կետում ԱԺ-ի, ՍԴ-ի, ԲԴԽ--ի հետ նշել կառավարությունը, ԿԸՀ-ն, ՀՌՀ-ն, ՀՊ-ն: | <br><br><br><br><br><br><br><br>1. Ընդունվել և խմբագրվել:<br>Սույն օրենքով իմաստով՝ «կառավարությունը» կառավարչական իրավահարաբերությունների սուբյեկտ չէ: | <br><br><br><br><br><br><br><br>1. ընդունվել է: |
| | | 2) օրենքի նախագիծ | 2. Օրենքը անձնակենտրոն ղեկավարման կոնցեպցիայով է գրված, քաղաքական անձը հանդիսացող մարմնի ղեկավարը միաժամանակ և կառավարում և ղեկավարում է ողջ մարմնին, այդ թվում աշխատակազմին իր քաղծառայողներով / հոդված 9, և 10/ : Սա նահանջ է որդեգրած սկզբունքից: Խիստ վիճահարույց է այս սկզբունքի կիրառումը հատկապես սահմանադրությամբ կոալիցիոն մարմինների | 2. չի ընդունվել:Կարծում ենք այստեղ խնդիր չկա, նման ձևով կառուցվածքներ գործում են եվրոպական երկրներում, որի օրինակով էլ հստակեցվել և ամրագրվել են գլխավոր քարտուղարի գործառույթները: | 2.չի ընդունվել: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | համար, օրինակ ՀՊ: | | |
| | | 3) Հոդված 5-ի 5-րդ մաս: | 3. Հոդված 5-ի 5-րդ մասը թույլ չի տալիս իրականացնել հոդված 5-ի 2-րդ մասի գույքին վերաբերող դրույթը: | 3. չի ընդունվել: | 3. չի ընդունվել |
| | | 4) Հոդված 5-ի 7-րդ կետ: | 4. Հոդված 5-ի 7-րդ կետում ցանկացած ժամանակ բառերը հանել, հետ վերցնել պետական մարմնի բառերը տեղադրել դեպքերում բառից հետո: | 4. խմբագրվել է: | 4. ընդունվել է: |
| | | 5) Հոդված 5-ի 9-րդ կետ: | 5. Հոդված 5-ի 9-րդ կետում չարգելված բառը փոխարինել թույլատրված այլ բառով: | 5. չի ընդունվել: | 5. չի ընդունվել |
| | | 6) Հոդված 7-ի կետ 2: | 6. Հոդված 7-ի կետ 2-ում ամրագրող բառից հետո ավելացնել և/կամ բնորոշող այլ բառերը: | 6. ընդունվել և խմբագրվել է: | 6. ընդունվել է: |
| | | 7) Հոդված 7-ի կետ 3: | 7. Հոդված 7-ի կետ 3: Կառավարությունը չի կարող սահմանել իշխանության այլ թևերի կառուցվածքային ստորաբաժանման կարգավիճակին ներկայացվող պահանջները, սրանք պետք է սահմանել օրենքով: | 7. չի ընդունվել: | 7. չի ընդունվել: |
| | | 8) Հոդված 9-ի 1-ի 2-րդ կետ: | 8. Հոդված 9-ի 1-ի 2-րդ կետը հակասություններ ունի սահմանադրության 152-1, 146-3 և159 հոդվածների հետ: | 8. ընդունվել և խմբագրվել է: | 8. ընդունվել է: |
| | | 9) Հոդված 9-ի 1-ի 3: | 9. Հոդված 9-ի 1-ի 3-ում Ազգային ժողով բառերից հետո ավելացնել աշխատակազմ բառը | 9. ընդունվել և խմբագրվել է: | 9. ընդունվել է: |
| | | 10) Հոդված 9-ի 1-ի 4: | 10. Հոդված 9-ի 1-ի 4-ում դատարանի բառից հետո ավելացնել աշխատակազմ բառը | 10. ընդունվել և խմբագրվել է: | 10. ընդունվել է: |
| | | 11) Հոդված 9-ի 1-ի 8: | 11. Հոդված 9-ի 1-ի 8-ում : սահմանադրության 176-ի 1-ի համաձայն գլխավոր դատախազը ոչ թե կառավարում է այլ ղեկավարում է դատախազությունը | 11. չի ընդունվել: | 11. չի ընդունվել |
| | | 12) Հոդված 9-ի կետ 2: | 12. Հոդված 9-ի կետ 2 / տես առաջարկություն 2-ը | 12.չի ընդունվել: | 12. չի ընդունվել |
| | | 13) Հոդված 10 կետ 2 , 3, 4: | 13. Հոդված 10 կետ 2 , 3, 4 տես առաջարկություն 2-ը | 13. չի ընդունվել: | 13.չի ընդունվել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **5** | **ՀՀ ԱԺ պատգամավոր Ա.Հովհաննիսյան** | «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծի՝<br>1. նախագծի 5-րդ հոդվածի 5-րդ մաս:<br><br>2. նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մաս:<br><br>3. նախագծի 16-րդ հոդվածի 4-րդ մաս: | 1. Օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ նախադասության <<համապատասխանաբար նախարարի կամ մարզպետի>> բառերից հետո լրացնել <<կամ համայնքի ղեկավարի>> բառերը:<br>2. Օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասը <<պետության քաղաքականության>> բառերից հետո լրացնել <<կամ համայնքի խնդիրների լուծման >> բառերով:<br>3. Օրենքի նախագծի 16-րդ հոդվածի 4-րդ մասից հանել <<տեղական ինքնակառավարման մարմինները>> բառերը: | 1. ընդունվել և խմբագրվել է:<br><br>2. հոդվածը խմբագրվել է:<br><br>3. ընդունվել է: | 1. ընդունվել է:<br><br>2.ընդունվել է:<br><br>3.ընդունվել : |
| **6** | **ՀՀ ԱԺ Հայ «Յեղափոխական Դաշնակցություն» խմբակցություն** | «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի նախագծի՝<br>1. նախագծի 10-րդ հոդվածի 9-րդ մաս:<br><br>2. 17-րդ հոդվածի 1-ին մաս: | 1. նախագծի 10-րդ հոդվածի 9-րդ մասում ավելացնել նոր պարբերություն, որտեղ կսահմանվի թեստերում ընդգրկված մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների վերաբերյալ առաջադրանքների համամասնությունը ամբողջ թեստում:<br>2. նախագծի 17-րդ հոդվածի 1-ին մասը վերանայել՝ 1)-ին, 2)-րդ և 3)-րդ կետերով պաշտոնների համար նախատեսված փորձաշրջանի ժամկետները պակասեցնելու միտումով: | 1. ընդունվել է:<br><br>2. Չի ընդունվել:Պաշտոնների համար նախատեսված փորձաշրջանի ժամկետների վերաբերյալ առաջարկությունը եղել է | 1. ընդունվել է:<br><br>2. Չի ընդունվել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | միջազգային ծործագետների կողմից: Առաջարկում ենք հարցին անդրադառնալ պրակտիկայում խնդիրներ առաջացնելու դեպքում: | |
| **7.** | **ՀՀ ԱԺ պատգամավոր Խ. Հարությունյան** | «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի նախագծի՝<br>1. Հոդված 2 կետ 1 | Սույն օրենքի գործողության շրջանակը<br><br>1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է օրենսդիր, գործադիր, դատական իշխանության մարմինների, Հանրապետության Նախագահի աշխատակազմի, դատախազության, քննչական մարմինների, անկախ պետական մարմինների, ինքնավար մարմինների, ինչպես նաեւ կառավարությանը, վարչապետին եւ նախարարություններին ենթակա մարմինների, անվտանգության խորհրդի քարտուղարության (այսուհետ՝ համապատասխան մարմին) քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձանց վրա:<br>Սույն օրենքի փիլիսոփայությունը հետևյալն է՝ այն պաշտոնները, որոնք սույն օրենքով կսահմանվեն որպես քաղաքացիական՝ծառայության պաշտոններ, դրանց զբաղեցնող պաշտոնատար անձինք կկոչվեն քաղաքացիական ծառայողներ և նրանց վրա էլ կտարածվի սույն օրենքը, իսկ այն պաշտոնները, որոնք օրենքը (սույն հոդվածի 2-րդ մաս) չի սահմանի որպես քաղաքացիական՝ դրանց զբաղեցնող անձանց վրա սույն օրենքը չի տարածվի: Այսինքն կապ չունի պետական կառավարման | 1. « Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքներում պաշտոնների և ծառայությունների ձևակերպումները այս տրամաբանությամբ խմբագրվել է: | 1. ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 2. Հոդված 3. կետ | համակաարգում կամ պետական մարմինների համակարգում այդ պաշտոններին ինչպիսի պատասխանատվություն է վերապահված և որոնք են այդ պատասխանատվությամբ պայմանավորված տվյալ պաշտոնին վերապահված գործառույթների առանձնահատկությունները: Իրականում քաղաքացիական ծառայության պաշտոնների ցանկը պայմանավորված պետք է լինի պետական կառավարման համակարգում այդ ծառայությանը վերապահված պատասխանատվությամբ պայմանավորված գործառույթներով, այլ ոչ թե օրենքով սահմանվող պաշտոնացանկով (վարորդը նա է ով մեքենա վարել գիտի և ունակ է իրականացնել այդ պատասխանատվությունը, այլ ոչ թե նա ով նստած է ղեկի մոտ ): Օրենքի հիմքում ընկած մոտեցումը խոցելի է մեթոդաբանական առումով: Հոդված 3. Քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության իրավական ակտերը 2. Քաղաքացիական ծառայության սկզբունքների?, քաղաքացիական ծառայողների հիմնական իրավունքների եւ պարտականությունների, սոցիալական երաշխիքների, բարեվարքության համակարգի եւ այս իրավակարգավորումներից բխող այլ հարաբերություններ, որոնք պարտադիր են քաղաքացիական ծառայողների համար, կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Հանրային ծառայությունների մասին օրենքով պետական ծառայությունն ընդգրկում է ոչ | 2. ընդունվել և խմբագրվել է: | 2. ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 2: | միայն քաղաքացիական ծառայութնունը, այլև հատուկ ծառայությունների մի ամբողջ ցանկ, որոնց սկզբունքները և քաղաքացիական ծառայության սկզբունքները տարբեր են և վերջինս ունի իրեն բնորոշ և հատուկ ծառայությունների սկզբունքներից տարբերվող սկզբունքներ: Եվ թեպետ սույն օրենքով քաղաքացիական ծառայության մեջ ընդգրկված են նաև որոշ ծառայություններ, որոնք դասական առումով քաղաքացիական չեն (օրինակ դատական իշխանության մարմիններում ծառայությունը), այդուհանդերձ գործադիր, օրենսդիր իշխանության մարմիններում, ինչպես նաև ՀՀ Նախագահի աշխատակազմում քաղաքացիական ծառայությանը բնորոշ են մնացածից տարբերվող գործառույթներ, որոնց բովանդակությունը պահանջում է նաև այդ մարմիններում քաղաքացիական ծառայության յուրահատուկ սկզբունքներ: Այդ իսկ պատճառով սույն օրենքը պետք է սահմանի քաղաքացիական ծառայության այդ սկզբունքները:<br>Դրանք են քաղաքացիական ծառայության մրցունակության, կամավորության, աշխատանքի կայունության , կարիերային առաջխաղացման, մասնավոր սեկտորի համեմատ աշխատանքի վարձատրության համաչափելիության, հետծառայական սոցիալական երաշխիքների սկզբունքները:<br>Շատ կարևոր է նաև այն ընկալումը թե ինչու՞ է մասնագիտական գործունեության այս տեսակը կոչվում "ծառայություն": Այն համարվում է ծառայություն, որովհետև հանրային իր պատասխանատու դերակատարմամբ պայմանավորված | 3. ընդունվել և հստակեցվել է:<br><br>1) ընդունվել և խմբագրվել են: | 3.ընդունվել է:<br><br>1) ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 3. օրենքի նախագիծ:<br><br>4. Հոդված 4 կետ 1 | համակարգում գործունեության հանդեպ ներկայացվում են որոշակի պահանջներ , որոնք իրենց հերթին ենթադրում են քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների որոշակի սահմանափակումներ, թեպետ քաղաքացիական ծառայությունը ձևավորվում է բացառապես կամավորության սկզբունքի հիման վրա: Օրինակ, օրենքը պետք է արգելի քաղաքացիական ծառայողների գործադուլ կամ պիկետներ անելու իրավունքը, միտինգներին կամ զանգվածային նման միջոցառումներին մասնակցելու իրավունքը, արհմիություններ ձևավորելու իրավունքը և այլն: Այս ամենը պետք է սահմանվի այս օրենքով, ինչը բացակայում է:<br>3. Կառավարությունն ընդունում է սույն օրենքից եւ հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից բխող քաղաքացիների իրավունքների իրականացման կարգեր եւ պայմաններ:<br>Արդյո՞ք խոսքը գնում է քաղաքացիական ծառայողների կողմից քաղաքացիների բողոքներին կամ դիմումներին օրինապաշտ արձագանքելու խնդրի կարգավորումների մասին: Մի՞թե քաղաքացիական ծառայության դերակատարումը նեղացված և հանգեցված է ծառաթյան լրկ այդ մասնավոր ֆունկցիային: Եթե այդպես է ապա դա հետևանք է քաղաքացիական ծառայության ոչ լիարժեք սահմանման: Նման մոտեցումը անթույլատրելի է:<br>Հոդված 4. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները<br>1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական | 1) ընդունվել և խմբագրվել է:<br><br>2) ընդունվել և խմբագրվել է: | 1) ընդունվել է:<br><br>2)ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 5. հոդված 4 կետ 1<br><br>6. հոդված 4 կետ 2 | հասկացություններն ունեն հետեւյալ իմաստները. 1) քաղաքացիական ծառայություն՝ քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից անկախ մասնագիտական գործունեություն, որը կատարվում է սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում նշված համապատասխան մարմիններում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այդ մարմիններին վերապահված խնդիրների եւ գործառույթների իրականացման նպատակով. Համաձայն սույն սահմանման քաղաքացիական ծառայության բնորոշ հայտանիշն այն է, որ այն գործում է քաղաքական իշխանության փոփոխություններից անկախ: Սակայն արդյո՞ք այս առանձնահատկությունը բնորոշ է դատական մարմիններին, որոնցում նախ քաղաքական իշխանությունը իսպառ բացակայում է և, երկրորդ, հենց իրենք, դատական մարմինների ղեկավարները, գործում են անկախ քաղաքական իշխանության փոփոխությունից: Հետևաբար հարց է առաջանում, դատական մարմինների ղեկավարները, որոնք գործում են քաղաքական ուժերի փոփոխություններից անկախ և իրենց մասնագիտական գործունեությամբ իրականացնում են այդ մարմիններին օրենսդրությամբ վերապահված խնդիրներն ու գործառույթները, նույնպե՞ս հանդիսանում են քաղաքացիական ծառայողներ: Նման հարցադրումները ծնվում են միայն այն պատճառով, որ հայեցակարգորեն հստակեցված չէ քաղաքացիական ծառայության տեղն ու դերը | 3) ընդունվել և խմբագրվել է:<br><br>4) ընդունվել և խմբագրվել է:<br><br>5) ընդունվել և խմբագրվել է:<br><br>7) ընդունվել և խմբագրվել է: | 3) ընդունվել է:<br><br>4) ընդունվել է:<br><br>5) ընդունվել է:<br><br>7) ընդունվել է:<br><br>1) ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 7. հոդված 4 կետ 3<br><br>8. հոդված 4 կետ 4<br><br>9. հոդված 4 կետ 5<br><br>10. հոդված 4 կետ 7<br><br>11. հոդված 5 կետ 1 | պետական մարմինների համակարգում, իսկ առավել ստուգ՝ պետական կառավարման համակարգում: Այդ իսկ պատճառով գոնե սույն օրենքի "կոնցեպտի" շրջանակներում (հ2.1) անհրաժեշտ է տալ քաղաքացիական ծառայության այպիսի սահմանում, որը կբնորոշեր այդ կառուցի գլխավոր տարբերվող հայտանիշերը:<br>1)Քաղաքացիական ծառայություն՝ քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից անկախ մասնագիտական գործունեութուն, որն իրականացվում է համապատասխան մարմինների աշխատակազմերի միջոցով՝ Սահմանադրությամբ և օրենքներով այդ մարմիններին վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացումը ապահովելու նպատակով՝ երաշխավորելով ծառայության շարունակականությունը:<br>Քաղաքացիական ծառայության յուրաքանչյուր տեսակ միաժամանակ իրենից ներկայացնում է, տվյալ ծառայության առանձնահատկություններով պայմանավորված, կատուցվածքային ստորաբաժանումների համակարգ՝ միևնույն կառավարչական հիերարխիայով և կառավարման յուրաքանչյուր մակարդակում համապատասխան քաղաքացիական ծառայության պաշտոններով: Քաղաքացիակն ծառայության պաշտոնների անվանացանկը սահմանվում է սույն օրենքով:<br>2) քաղաքացիական ծառայության պաշտոն՝ համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող իրավական ակտերից եւ խնդիրներից բխող իրավունքներ ու | 1) ընդունվել և խմբագրվել է:<br><br>2) չի ընդունվել:<br><br>3) չի ընդունվել:<br><br>1. ընդունվել և խմբագրվել է: | 2) չի ընդունվել<br><br>3) չի ընդունվել<br><br>1. ընդունվել է:<br><br>2. չի ընդունվել: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 12. հոդված 5 կետ 2 | պարտականություններ, մասնագիտական գիտելիքներ ու կոմպետենցիաներ նախատեսող պահանջող (ԽՀ), համապատասխան մարմնի այլ պաշտոնների ընդհանուր համակարգում կառավարման հիերարխիկ համակարգում (ԽՀ) տեղակայված, քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված հաստիքային միավոր. | 2. Չի ընդունվել: Եղած կարգավորումները թույլ են տալիս տարանջատել ղեկավար և մասնագիտական պաշտոնները: | |
| | | 13. հոդված 5-ի կետ 3 | 3) քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկ՝ սույն օրենքով սահմանված կարգով ձեւավորված ??? քաղաքացիական ծառայության բոլոր պաշտոնների ցանկ.<br>Սույն օրենքը սահմանում է պաշտոններում քաղաքացիական ծառայողների նշանակման կարգը, բայց ոչ այդ պաշտոնների ձևավորման կարգը: Օրենքը սահմանում է պաշտոնների ցանկը: Ընգծվածը պետք է հանել տեքստից:ԽՀ | | 1. չի ընդունվել : |
| | | 14. Հոդված 6 կետ 1 | 4) քաղաքացիական ծառայող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ով սույն օրենքով սահմանված կարգով զբաղեցնում է քաղաքացիական ծառայության պաշտոն եւ կատարում է այդ պաշտոնին վերապահված (ԽՀ) մասնագիտական գործառույթներ գործունեություն կամ և գրանցված է քաղաքացիական ծառայության կադրերի ռեգերվում եւ վարձատրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից. | 1. Չի ընդունվել: Առկա ձևակերպումն ապահովում է նշված դրույթը: | 1. չի ընդունվել |
| | | 15. հոդված 6 կետ 2-րդ | 5) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիր (աշխատատեղի նկարագիր)՝ համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող իրավական ակտերից եւ խնդիրներից բխող և կառավարման հիերարխիայով պայմանավորված (ԽՀ) | 1) Չի ընդունվել: Տարիների պահանջը նշվել է պրակտիկայից ելնելով՝ հենվելով | 2.2) չի ընդունվել : |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 16. հոդված 7 կետ 1<br><br>17. հոդված 7 կետ 2-ի 1-ին ենթակետ<br><br>18. հոդված 7 կետ | քաղաքացիական ծառայողի գործառույթներն, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրող եւ այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ ու կոմպետենցիաներ նախատեսող, սույն օրենքով սահմանված կարգով հաստատված փաստաթուղթ.<br>7) քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվ՝ կառավարման համակարգի **տիրույթ**, որտեղ սույն օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով գրանցվում են քաղաքացիական ծառայության պաշտոններից ազատված քաղաքացիական ծառայողները.<br>Հոդված 5. Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը (աշխատատեղի նկարագիրը) եւ անվանացանկը, հաստատելը (փոփոխելը)<br>1. Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը (աշխատատեղի նկարագիրը) սահմանվում է՝ ելնելով համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող իրավական ակտերով եւ նրա առջեւ դրված խնդիրներով պայմանավորված կառավարչական հիերարխիայի տվյալ մակարդակին ներկայացվող մասնագիտական պահանջներից (ԽՀ): Քաղաքացիական ծառայության յուրաքանչյուր պաշտոն ունի անվանում, որը հնարավորինս ճշգրիտ արտացոլում է քաղաքացիական ծառայության պաշտոնի հիմնական գործառույթները եւ չի կրում ընդհանրական բնույթ:<br>2. Համապատասխան մարմիններում | պաշտոնների համալրման առկա վիճակագրության վրա:<br><br>2. 2) չի ընդունվել:<br><br>2. 3) չի ընդունվել:<br><br>2. 4) չի ընդունվել:<br><br>1. չի ընդունվել: | 2.3) չի ընդունվել :<br><br>2.4) չի ընդունվել :<br><br>1. Չի ընդունվել<br><br>5. ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 2-ի 2-րդ ենթակետ<br><br>19. հոդված 7 կետ 2-ի 3-րդ ենթակետ<br><br>20. հոդված 7 կետ 2-ի 4-րդ ենթակետ<br><br>21. հոդված 10-ի կետ1<br><br>22. հոդված 10-ի կետ5 | քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատում է տվյալ մարմնի գլխավոր քարտուղարը՝ առաջնորդվելով սահմանված կարգով հաստատված մեթոդաբանությամբ:ԽՀ<br>3. Քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու իրավական հիմքի առաջացման պահից մեկ ամսվա ընթացքում՝ համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը, հաստատված մեթոդաբանությանը համապատասխան կազմված եւ փաստաթղթերով հիմնավորված առաջարկությունը, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի նախագծերի հետ միասին ներկայացնում է քաղաքացիական ծառայության գրասենյակ:<br>???? Ստացվում է, որ պաշտոնների անձնագրերի նախագծերը հաստատում է քաղաքացիական ծառայության գրասենյակը: Ուստի ընդգծվածը հակասում է սույն հոդվածի 2-րդ մասին:<br>Հոդված 6. Քաղաքացիական ծառայության պաշտոնների դասակարգումը<br>1. Քաղաքացիական ծառայության պաշտոնները դասակարգվում են խմբերի՝ ելնելով այդ պաշտոնների նկարագրով դրանք զբաղեցնող անձանց՝ աշխատանքի կազմակերպման եւ ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, գործունեության ազդեցության, շփումների եւ ներկայացուցչության, խնդիրների բարդության եւ դրանց լուծման պահանջի, ինչպես նաեւ մասնագիտական գիտելիքների եւ կոմպետենցիաների տեսանկյունից | 5. ընդունվել և հստակեցվել է:<br><br>11. ընդունվել և խմբագրվել է: | 11. ընդունվել է:<br><br>12. չի ընդունվել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 23. հոդված 10-ի կետ11<br><br>24. հոդված 10-ի կետ 12 | ներկայցվող պահանջներից: անհրաժեշտ մակարդակից: ԽՀ<br>2. Քաղաքացիական ծառայության պաշտոնները դասակարգվում են հետեւյալ խմբերի.<br>1) քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոններ.<br>2) քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոններ:<br>**Նպատակահարմար է տալ ղեկավար և մասնագիտական պաշտոնների ընդհանուր սահմանումը: Օրինակ, սույն օրենքի իմաստով ղեկավար պաշտոններ են համարվում համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների և ենթաբաժանումների ղեկավարներն ու նրանց տեղակալները, որոնք, տվյալ ստորաբաժանմանը վերապահված պատասխանատվություններն արդյունավետ իրականցնելու նպատակով, համակարգում և կազմակերպում են տվյալ ստորաբաժանման մասնագիտական պաշտոններ զբաղեցնող անձանց գործունեությունը:**<br>Հոդված 7. Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի բարձրագույն կրթության եւ աշխատանքային ստաժի չափանիշները<br>1. Քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացին պետք է ունենա բարձրագույն կրթություն, բացառությամբ քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ եւ 8-րդ ենթախմբերի պաշտոնների, որոնք զբաղեցնելու համար | 12. չի ընդունվել:<br><br>17. չի ընդունվել:<br><br>21. Շահագրգիռ անձը:<br><br>**Հոդված 14.** | 17. չի ընդունվել<br><br>21. ընդունվել է:<br><br>1. չի ընդունվել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 25. հոդված 10-ի կետ 17<br><br>26. հոդված 10-ի կետ 21<br><br>27. հոդված 14 կետ 1 | Հայաստանի Հանրապետության քաղաքացին պետք է ունենա առնվազն միջնակարգ կրթություն:<br>2. Քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար անհրաժեշտ է աշխատանքային ստաժի եւ փորձի առնվազն հետեւյալ չափանիշները.<br>1) քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին եւ 2-րդ ենթախմբերի պաշտոնների համար, բացառությամբ գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության պաշտոնի, հանրային ծառայության առնվազն **հինգ տարվա ստաժ** ???, կամ յոթ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում յոթ տարվա աշխատանքային ստաժ: Գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության պաշտոնի համար՝ հանրային ծառայության առնվազն հինգ 10 տարվա ստաժ, որից երկու առնվազն հիմգ տարին առնվազն կառուցվածքային ստորաբաժանման կամ ենթակա մարմնի ղեկավարի պաշտոնում:<br>2) քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 3-րդ, 4-րդ, 5-րդ ենթախմբերի պաշտոնների համար՝ հանրային ծառայության առնվազն երեք հինգ տարվա ստաժ կամ հինգը տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում հինգ տարվա աշխատանքային ստաժ.<br>3) քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 1-ին եւ 2-րդ ենթախմբերի պաշտոնների համար՝ | 1. չի ընդունվել:<br>Որևէ նախապատվություն, բացի օրենքով գործողներից (առավել երկար աշխատանքային ստաժ, մայրության արձակուրդ) չի նախատեսվում:<br><br>**Հոդված 15.**<br><br>3. խմբագրվել է:<br><br>**Հոդված 16.**<br><br>1. չի ընդունվել:<br>Այժմ գործող նորմերն են:<br><br>3. չի ընդունվել:<br>Այժմ գործող նորմերն են : | 3. ընդունվել է:<br><br>1. չի ընդունվել<br><br>3.չի ընդունվել<br><br>4. չի ընդունվել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 28. հոդված 15-ի կետ 3<br><br>29. հոդված 16-ի կետ 1<br><br>30. հոդված 16-ի կետ 3 | հանրային ծառայության առնվազն երկու երեք տարվա ստաժ կամ չորսը տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում չորսը տարվա աշխատանքային ստաժ:<br>4) քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 3-րդ, 4-րդ, 5-րդ ենթախմբերի պաշտոնների համար՝ հանրային ծառայության առնվազն մեկ երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում երեք տարվա աշխատանքային ստաժ:<br>Հոդված 10. Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը<br>1. Մրցույթը հայտարարվում է քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո երեք ամսվա ընթացքում: Եթե հայտարարված մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել կամ ներկայացված բոլոր դիմումներում առկա է սույն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքերից որեւէ մեկը, ինչպես նաեւ, եթե մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած անձանցից ոչ մեկը չի ներկայացել կամ մրցույթի մասնակիցներից ոչ մեկը չի հաղթահարել թեստավորման փուլը կամ հարցազրույցի փուլ անցած մասնակիցներից ոչ մեկը չի հաղթահարել հարցազրույցի փուլը կամ հաղթահարել է հարցազրույցի փուլը եւ պաշտոնի նշանակման համար դիմում չի ներկայացրել, | 4. Չի ընդունվել:<br>Գործող կարգավորում է:<br><br>5. Չի ընդունվել:<br>Գործող կարգավորում է:<br><br>**Հոդված 23.**<br><br>1. Չի ընդունվել՝ օրենսդրությունն ապահովում է անհրաժեշտ հակակշիռներ: | 5. չի ընդունվել<br><br>1.Չի ընդունվել<br><br>3. Չի ընդունվել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 31. հոդված 16-ի կետ 4<br><br>32. հոդված 16-ի կետ 5<br><br>33. հոդված 23-ի կետ 1 | ապա սույն մասով սահմնաված մրցույթի արդյունքումպաշտոնը թափուր մնալուց հետո մեկամսյա ժամկետում տվյալ պաշտոնի համար հայտարարվում է նոր մրցույթ հայտարարվում է մեկ ամսվա ընթացքում:<br>5. Մրցույթին մասնակցելու համար քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է էլեկտրոնային տարբերակով: Մրցույթի մասնակցության հարցը որոշում է գլխավոր քարտուղարը՝ անձնակազմի կառավարման ստորաբաժանման կողմից տրված եզրակացության հիման վրա: Մրցույթի մասնակցության որոշման մասին անձնակազմի կառավարման ստորաբաժանումը երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով տեղեկացնում է դիմող քաղաքացուն: Գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնի մրցույթի մասնակցության հարցը որոշում է քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարը՝ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման **հստակեցնել թե ո՞ր ստորաբաժանման մասին է խոսքը** կողմից տրված եզրակացության հիման վրա: Քաղաքացիական ծառայության գրասենյակը թեստավորման մասնակցության որոշման մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով տեղեկացնում է դիմող քաղաքացուն:<br>11. Մրցույթի մասնակիցը պատասխանելով թեստում ընդգրկված առաջադրանքներին՝ անմիջապես տեղեկանում է իր ստացած արդյունքների մասին: Թեստավորման արդյունքների հետ համաձայն չլինելու | **Հոդված 37**<br><br>3. Չի ընդունվել:Ատեստավորումը քաղաքացիական ծառայությունում փոխարինվում է առավել կարգավորված տարեկան գնահատումների համակարգով:<br><br>**Հոդված 4**<br><br>1. չի ընդունվել: | 1. չի ընդունվել<br><br>2. չի ընդունվել<br><br>3. չի ընդունվել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 34. հոդված 37-ի կետ 3<br><br>«Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի նախագծի՝<br>1. հոդված 4-ի կետ 1<br><br>2. հոդված 4-ի կետ 2 | դեպքում մրցույթի մասնակիցն, իր արդյունքների մասով, կարող է բողոք ներկայացնել գլխավոր քարտուղարին՝ նշելով վերջինիս իր բողոքը ներկայացնելու ժամը: Գլխավոր քարտուղարը պարտավոր է ամձամբ անհապաղ ընդունել բողոքը: (ԽՀ) Գլխավոր քարտուղարը, մեկ ժամվա ընթացքում, ընդունում է արդյունքները փոփոխելու կամ նույնը թողնելու մասին որոշում և այն հանձնում է բողոքատուին առձեռն: Նշված ժամկետում համապատասխան որոշում չկայացնելու դեպքում՝ համարվում է, որ բողոքը բավարարված է: (ԽՀ) Գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնի համար անցկացվող մրցույթի թեստավորման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում մրցույթի մասնակիցն, իր արդյունքների մասով, կարող է բողոք ներկայացնել համակարգող փոխվարչապետին: Համակարգող փոխվարչապետը մեկ ժամվա ընթացքում, ընդունում է արդյունքները փոփոխելու կամ նույնը թողնելու մասին որոշում: Նշված ժամկետում համապատասխան որոշում չկայացնելու դեպքում՝ համարվում է, որ բողոքը բավարարված է: (ԽՀ)<br>12. Մրցույթի երկրորդ՝ հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք են ձեռք բերում կառավարության կողմից մրցույթի հայտարարման փուլում վազօրոք սահմանած (ԽՀ) միավորից բարձր առավելագույն միավորներ ստացած հինգ մասնակիցը: Եթե միեւնույն արդյունք ունենալու դեպքում հնարավոր չէ պարզել առավելագույն միավորներ հավաքած եւ | 2. չի ընդունվել: Հարցը վերաբերում է նախարարության կամ գերատեսչության ներսի կառույցներին՝ Սահմանադրական խնդիրներ չկան:<br><br>3. չի ընդունվել:<br><br>4. ընդունվել է:<br><br>**Հոդված 5**<br><br>1. Այո: Գործող կարգավորումներ են: | 4.ընդունվել է:<br><br>1.ընդունվել է:<br><br>2. ընդունվել է:<br><br>3.չի ընդունվել<br><br>1.ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 3. հոդված 4-ի կետ 3<br><br>4. հոդված 4-ի կետ 4<br><br>5.հոդված 5-ի կետ 1<br><br>6. հոդված 5-ի կետ 2 | թեստավորման փուլը հաղթահարած հինգ մասնակիցին, ապա միևնույն առավելագույն միավորներ հավաքած մասնակիցներն անցնում են հարցազրույցի փուլ: Թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցների թիվը հինգից պակաս լինելու դեպքում բոլոր մասնակիցներն իրավունք են ձեռք բերում մասնակցելու հարցազրույցի փուլին, եթե հավաքել են թեստավորման փուլը հաղթահարելու համար անհրաժեշտ միավորը:<br>17. Եթե երկու անգամ անընդմեջ հայտարարված արտաքին մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ ներկայացված բոլոր դիմումներում առկա է սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկը, ապա համապատասխան մարմինը, սույն օրենքով սահմանված կարգով, փոփոխում է տվյալ պաշտոնի համար սահմանված պահանջները: ?<br>**Այսինքն նվազեցնու՞մ է պաշտոնին ներկայացվող պահանջները: Սա անթույլատրելի է, քանի որ այդ պահանջները հաստատված են պաշտոնի նկարագրով: Ավելի նախապատվելի է տվյալ պաշտոնում փորձաշրջանով առավելագույն միավորներ հավաքած մասնակցին նշանակել կամ համակարգից որևէ մեկին նշանակել ժամանակավոր պաշտոնակատար՝ մեկ տարուց հետո մրցույթ անցկացնելու պայմանով:**<br>21. Մրցույթն անվավեր է ճանաչվում դատական կարգով: **Ո՞վ է դիմում դատարան** Մրցույթն անվավեր ճանաչվելու դեպքում հայտարարվում է մրցույթ, որն անցկացվում է սույն օրենքով սահմանված կարգով: | 2. Ոչ<br><br>3. չի ընդունվել:<br><br>**Հոդված 6**<br><br>1. խմբագրվել է:<br><br>2. ընդունվել և խմբագրվել է:<br><br>**Հոդված 11.** | 2.ընդունվել է:<br><br>1.1 ընդունվել է:<br><br>1.2 ընդունվել է:<br><br>1.3 ընդունվել է:<br><br>4. չի ընդունվել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 7. հոդված 5-ի կետ 3<br><br>8. հոդված 6-ի կետ 1<br><br>9. հոդված 6-ի կետ 2<br><br>10. հոդված 11-ի կետ 1-ի 1-ին ենթակետ | Հոդված 14. Կադրերի ռեզերվից քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելը<br>1. Համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում, **նախապատվությունը տրվում է քաղաքացիական ծառայոթյան կադրերի ռեզերվում գտնվող անձին: Ընդ որում** պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը ~~կարող է~~ այդ պաշտոնում ~~նշանակել~~ **նշանակում է** քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվից սույն օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով ժամկետային աշխատանքային պայմանագրով պաշտոն զբաղեցնող այն քաղաքացիական ծառայողին, ով ռեզերվում գրանցվել է՝ ազատվելով տվյալ մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնից:<br>Հոդված 15. Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առանձնահատուկ դեպքերը եւ քաղաքացիական ծառայության կազմակերպման առանձնահատկությունները<br>3. Վարչապետին, կառավարությանը եւ նախարարություններին ենթակա մարմինների՝ քաղաքացիական ծառայության հարաբերությունների մասնակցությունն իրականացվում է ???? այն համապատասխան մարմնի կողմից, որի ենթակայությամբ գործում են: Ընդգծվածը հարկավոր է հստակեցնել:ԽՀ<br>Հոդված 16. Քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակումը եւ ազատումը (ծառայության դադարեցումը)<br>1. Գլխավոր քարտուղարներին պաշտոնի | 1.1 խմբագրվել է:<br><br>1.2 ընդունվել և խմբագրվել է:<br><br>3. խմբագրվել է:<br><br>4. չի ընդունվել:<br><br>**Հոդված 12.**<br><br>1. ընդունվել և խմբագրվել է:<br><br>3. չի ընդունվել: | 1. ընդունվել է:<br><br>3.չի ընդունվել<br><br>1.ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 11. հոդված 11-ի կետ 1-ի 2-րդ ենթակետ<br><br>12. հոդված 11-ի 1-ին կետի 3-րդ ենթակետ<br><br>13.հոդված 11-ի 4-րդ կետ<br><br>14. հոդված 12-ի 5-րդ կետի 1-ին ենթակետ | նշանակում եւ պաշտոնից ազատում է վարչապետը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ ~~մասերում~~ **մասով** նախատեսված ~~դեպքերի~~ **մարմինների գլխավոր քարտուղարների:**<br>3. **Քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին, 2-րդ, 3-րդ ենթախմբերի պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին, ներքին աուդիտորներին պաշտոնի նշանակում եւ պաշտոնից ազատում է համապատասխան մարմնի ղեկավարը:**????<br>**Իսկ ու՞ր մնաց կարիերային առաջխաղացման սկզբունքը: Հարկավոր է սահմանել հետևյալ ընդհանուր դրույթը ՛՛սույն օրենքով սահմանված կարգով անցկացված մրցույթի արդյունքների հիման վրա պաշտոնին նշանակում է համապատասխան մարմնի ղեկավարը՛՛: Իսկ պաշտոնից ազատելու իրավունք չի կարող տրվել մարմնի ղեկավարին: Եթե մարմնի ղեկավարը դժգոհ է ստորադաս ղեկավար պաշտոն զբաղեցնող անձի գործունեությունից, ապա նա կարող է պահանջել արտահերթ ատեստավորում: Ընդ որում այդ ատեստավորումը չի կարող անցկացնել տվյալ մարմնի ատեստավորող հանձնաժողովը: Այդ իրավասությունը պետք է վերապահել քաղաքացիական ծառայության գրասենյակին կամ փոխվարչապետի իրավասության տակ գործող մասնագիտական հանջձնաժողովին: Առաջարկում եմ 3-րդ մասը կամ հանել կամ խմբագրել առաջարկի ոգով:**<br>4. **Քաղաքացիական ծառայության մյուս պաշտոններում նշանակում եւ այդ** | **Հոդված 14.**<br>1. ընդունվել է:<br><br>**Հոդված 16.**<br><br>1. Այո վարչական պաշտոն է:<br><br>**Հոդված 17.**<br><br>1.ընդունվել և խմբագրվել են:<br><br>2. խմբագրվել | 1.ընդունվել է:<br><br>1.ընդունվել է:<br><br>2.ընդունվել է:<br><br>3. ընդունվել է:<br><br>1. ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 15. հոդված 12-ի 5-րդ կետի 3-րդ ենթակետ<br><br>16. հոդված 14-ի 1-ին կետ<br><br>17. հոդված 16-ի 1-ին կետ<br><br>18. հոդված 17-ի 1-ին կետ<br><br>19. հոդված 17-ի 2-րդ կետ | **պաշտոններից ազատում է գլխավոր քարտուղարը:**<br>**Նույն մեկնաբանությամբ:**<br>5. Դատական դեպարտամենտում քաղաքացիական ծառայության պաշտոններում պաշտոնի նշանակում եւ պաշտոնից ազատում է Դատական դեպարտամենտի ղեկավարը: ??? **Այս մոտեցումը (ինչպես և վերը նշվածները) շատ հայեցողական է և պարունակում է կոռուպցիոն ռիսկեր:**<br>Հոդված 23. Քաղաքացիական ծառայողի իրավական վիճակը համապատասխան մարմնի վերակազմակերպման եւ կառուցվածքային փոփոխության ժամանակ<br>1. Համապատասխան մարմնի վերակազմակերպումը եւ/կամ կառուցվածքային փոփոխությունը քաղաքացիական ծառայողին պաշտոնից ազատելու (լիազորությունները դադարեցնելու) հիմք չէ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ուղեկցվում են համապատասխան մարմնի վերակազմակերպմամբ եւ/կամ կառուցվածքային փոփոխությամբ պայմանավորված հաստիքների եւ/կամ քաղաքացիական ծառայության պաշտոնների կրճատմամբ եւ/կամ համապատասխան մարմնի վերակազմակերպմամբ եւ/կամ կառուցվածքային փոփոխությամբ պայմանավորված պաշտոնների անձնագրերում այնպիսի նոր պահանջների սահմանմամբ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստման արդյունքում:<br>**Բացառություն հանդիսացող դեպքերում քաղաքացիական ծառայողը դարձյալ չի** | 3. ընդունվել և խմբագրվել է:<br><br>**Հոդված 2**<br><br>1. ընդունվել և խմբագրվել է:<br><br>3. ընդունվել և խմբագրվել է:<br><br>**Հոդված 3**<br><br>1. խմբագրվել է: | 3.ընդունվել է:<br><br>1. ընդունվել է:<br><br>2.ընդունվել է:<br><br>3.ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 20. հոդված 17-ի 3-րդ կետ<br><br>«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծի՝<br>1. հոդված 2-ի 1-ին կետ<br><br>2. հոդված 2-ի 3-րդ կետ<br><br>3. հոդված 3-ի 1-ին կետ: | **կարող ազատվել ծառայությունից, այլ պետք է ընդգրկվի քաղաքացիական ծառայոթյան կադրերի ռեզերվում՝ ստանալով հետագայում սահմանված կարգով իր ծառայությունը շարունակելու հնարավորություն:**<br>Հոդված 37. Քաղաքացիական ծառայողին պաշտոնից ազատելու եւ ծառայության դադարման հիմքերը<br>3. Երկու տարի անընդմեջ կատարողականի տարեկան գնահատման արդյունքները կառավարության կողմից սահմանած տոկոսից (միավորից) ցածր լինելու դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իրավունք ունի քաղաքացիական ծառայողին ազատել զբաղեցրած պաշտոնից՝ ուղարկելով նրան կադրերի ռեզերվ: Տվյալ դեպքերում պաշտոնանկ արված քաղաքացիական ծառայողին նշանակվում է տվյալ պաշտոնի նվազագույն աշխատավարձը՝վեցամսյա ժամկետով: **Նշված ժամանակահատվածում պաշտոնաթող քաղաքացիական ծառայողը հնարավորություն պետք է ստանա արտահերթ ատեստավորվելու: Եթե ատեստավորման արդյունքում ստացած միավորները բավարարում են տվյալ պաշտոնի համար սահմանված չափանիշը, ապա քաղաքացիական ծառայողը շարունակում է մնալ կադրերի ռեզերվում, ստանում է նվազագույն վարձատրությունը և կարող է մասնակցել համապատասխան թափուր պաշտոնների մրցույթին: Եթե քաղաքացիական ծառայողը արտահերթ ատեստավորման արդյունքներով չի բավարարում ներկայացվող պահանջներին. ապա նա դուրս է մնում քաղաքացիական** | 2. ընդունվել է: Նախագծում տրվել են սահմանումներ:<br><br>3. ընդունվել է:<br><br>3.1 չի ընդունվել: Օրենսդրությունը չի իդենտիֆիկացնում կառույցի հետ:<br><br>4. ընդունվել և խմբագրվել է: | 3.1 չի ընդունվել<br><br>4. ընդունվել է:<br><br>5. ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 4. հոդված 3-ի 2-րդ կետ:<br><br>5. հոդված 3-ի 3-րդ կետ<br><br>6. հոդված 3-ի 3.1 ենթակետ | **ծառայությունից՝ ընդմիշտ զրկվելով հետագայում քաղաքացիական ծառայություն ընդգրկվելու հնարավորությունից:**<br><br>**Հոդված 4. Ենթակա պետական մարմինները, կազմակերպությունները, հիմնարկները**<br><br>1. Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում Կառավարությանը, վարչապետին եւ նախարարություններին ենթակա պետական մարմինները **կարող են չունենալ աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ** եւ գլխավոր քարտուղար:<br><br>**Իրավական ձևակերպման առումով ″կարող են չունենալ″ դարձվածքը ընդունված չէ: ԽՀ**<br><br>2. Աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ եւ գլխավոր քարտուղար չունեցող ենթակա պետական մարմնի՝ քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակցությունը, կազմակերպական հարցերի կարգավորումն, անձնակազմի կառավարումն իրականացվում է այն պետական մարմնի կողմից, որի ենթակայությամբ գործում է ենթակա պետական մարմինը:<br><br>**Սույն մասում նկարագրված մարմինները տարբերվու՞մ են Սահմանադրությամբ** | 5. ընդունվել և խմբագրվել է:<br><br>6. չի ընդունվել:<br><br>**Հոդված 4**<br><br>1. ընդունվել և խմբագրվել է:<br><br>2. չի ընդունվել, քանի որ «բարձրաստիճան» տերմինը դուրս է գալիս օրենքից՝ լայնացնելով | 6. չի ընդունվել<br><br>1. ընդունվել է:<br><br>2. չի ընդունվել<br><br>3. չի ընդունվել է:<br><br>4.ընդունվել է:<br><br>1.ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 7. հոդված 3-ի 4-րդ կետ | **նախատեսված Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա մարմիններից: Եթե այո, ապա արդյո՞ք նման մարմինների առկայությունը չի հակասում Սահմանադրությանը: ԽՀ** | հայտարարատուների ցանկը:<br><br>3. չի ընդունվել: | 2.ընդունվել է: |
| | | 8. հոդված 3-ի 5-րդ կետ | 3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական մարմնին, ենթակա պետական մարմնին կարող է վերապահել նաեւ **պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն**: ???<br><br>**Նախ "մարմնին" բառից հետո ստորակետը ավելորդ է: Երկրորդ, մի՞թե պետական սեփականության տիրապետման իրավունքը բացառապես քաղաքական պատասխանատվություն չի ենթադրում, հետևաբար այն չի կարող պատվիրակվել ոչ քաղաքական մարմնին կամ պաշտոնին:ԽՀ** | 4. խմբագրվել է:<br><br>**Հոդված 5**<br>1. ընդունվել և խմբագրվել է: | 5. ընդունվել է: |
| | | 9. հոդված 3-ի 6-րդ կետ | 4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական մարմնի, ենթակա պետական մարմնի ենթակայությանը կարող են հանձնվել պետական ոչ առեւտրային կազմակերպություններ, պետական հիմնարկներ՝ **առանց դրանց հիմնադրի իրավասությունների փոխանցման:ԽՀ** | 2. ընդունվել է մասամբ և խմբագրվել է: | |
| | | 10. հոդված 4-ի 1-ին կետ | **Հոդված 5. Պետական մարմնի քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակցությունը, գույքը** | Ըստ առաջարկության ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչների պաշտոնները ներառվել են հայեցողական | 1. ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 11. հոդված 4-ի 2-րդ կետ<br><br>12. հոդված 4-ի 3-րդ կետ<br><br>13. հոդված 4-ի 4-րդ կետ<br><br>14. հոդված 5-ի 1-ին կետ<br><br>15. հոդված 5-ի 2-րդ կետ | 1. Պետական մարմինը, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նաեւ **ենթակա պետական մարմինը** Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով **Հայաստանի Հանրապետության անունից** իր գործողություններով կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային եւ անձնական ոչ գույքային իրավունքներ ու պարտականություններ: **Արդյո՞ք ընդգծվածը իրավական առումով կոռեկտ է: ԽՀ**<br><br>2. Պետական մարմինը, ենթակա պետական մարմինը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: **Պետական բաժնետոմսերի տիրապետումը մի՞թե ձեռնարկատիրական գործունեություն չէ: ԽՀ**<br><br>3. Պետական մարմնի, ենթակա պետական մարմնի կատարած **գործառնությունների** եւ մատուցած **ծառայությունների համար** կարող է գանձվել միայն պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով եւ կարգով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:????<br><br>**Ծառայությունների դիմաց տուրք չի կարող գանձվել: Ծառայությունների դիմաց գանձվում է վճար, որի չափը պայմանավորված է մատուցվող ծառայության ծավալով և այն պետք է փոխհատուցի ծառայության ծախսերը: Խմբագրել ԽՀ**<br><br>**Հոդված 6. Պետական մարմնի, ենթակա** | պաշտոնների մեջ:<br><br>5. ընդունվել և խմբագրվել է:<br><br>**Հոդված 6**<br>1. ընդունվել և խմբագրվել է: | 2. չի ընդունվել<br><br>3. Չի ընդունվել<br><br>4.ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 16. հոդված 5-ի 5-րդ կետ<br><br><br><br><br><br><br><br><br><br><br><br><br><br><br>17. հոդված 6-ի 1-ին կետ | **պետական մարմնի կառուցվածքը**<br><br>1. Պետական մարմինը կազմված է պետական մարմնի ~~ղեկավարից~~ **ղեկավարի**, պետական մարմնի ղեկավարի տեղակալի~~ց~~ (կոլեգիալ մարմինների դեպքում՝ կոլեգիալ մարմնի անդամներից~~ց~~), գլխավոր քարտուղարի~~ց~~ **պաշտոններից**, կառուցվածքային ստորաբաժանումներից, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ գրասենյակից, օրենքով նախատեսված դեպքերում՝ պետական մարմնի ղեկավարի խորհրդականի~~ց~~, մամուլի քարտուղարի~~ց~~, օգնականի~~ց~~, ռեֆերենտի~~ց~~, պետական մարմնի ղեկավարի տեղակալի օգնականի~~ց~~, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նաեւ գլխավոր քարտուղարի տեղակալի~~ց~~ **պաշտոններից: Բանն այն է, որ պաշտոնյաները կառուցվածքի մաս չեն:ԽՀ**<br><br>2. Ենթակա պետական մարմինը կազմված է ենթակա պետական մարմնի ղեկավարի~~ց~~, ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալի~~ց~~, ենթակա պետական պետական մարմնի ղեկավարի խորհրդականի~~ց~~, օգնականից, ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալի օգնականի~~ց~~ **պաշտոններից**, կառուցվածքային ստորաբաժանումներից, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ գլխավոր քարտուղարի~~ց~~ **պաշտոնից**, գրասենյակից, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նաեւ գլխավոր քարտուղարի տեղակալի~~ց~~ **պաշտոնից**: **ԽՀ**<br><br>**Հոդված 11. Պետական մարմնի ղեկավարի** | 2. չի ընդունվել:<br><br><br><br><br><br><br>3.չի ընդունվել: Նույն քաղաքականությունն է որդեգրված ինչ քաղաքական պաշտոնների դեպքում:<br><br><br><br><br><br><br><br><br>4. Վարչապետի աշխատակազմի գրասենյակի ղեկավարի պաշտոնը պետական վարչական պաշտոն է:<br><br><br><br><br><br><br>6. չի ընդունվել: | 6. Չի ընդունվել է:<br><br><br><br><br><br><br><br><br>7.ընդունվել է:<br><br><br><br><br>8. ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 18.հոդված 6-ի կետ 2<br><br><br><br><br><br><br>19. հոդված 6-ի կետ 3<br><br><br><br><br><br><br><br><br><br><br>20. հոդված 6-ի կետ 4<br><br><br><br><br><br><br><br><br><br>21. հոդված 6-ի | **տեղակալը**<br><br>1. Պետական մարմնի ղեկավարի տեղակալը՝<br><br>1) **գործում է ղեկավարից պատվիրակված լիազորությունների ուժով և** համակարգում է **կառուցվածքային ստորաբաժանումների և ենթակա մարմինների գործունեությունը** ~~աշխատանքներն~~ իրեն հանձնարարված բնագավառներում<br><br>2) իր համակարգման լիազորությունների շրջանակներում **ապահովում է** պետական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների~~ն~~, գրասենյակների~~ն~~, ենթակա պետական մարմինների~~ն~~, կազմակերպությունների~~ն~~ եւ հիմնարկների~~ն~~ **կողմից** ~~փոխանցում է~~ պետական մարմնի ղեկավարի հանձնարարականների~~ը~~ **կատարումը**,~~կամ~~ իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ եւ դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն եւ արդյունքների մասին տեղեկացնում պետական մարմնի ղեկավարին.**ԽՀ**<br><br>3) իր համակարգման լիազորությունների շրջանակներում **ստանում է** ~~համագործակցում է~~ գլխավոր քարտուղարի, այլ պետական մարմինների եւ կազմակերպությունների **ղեկավարների աջակցությունը** ~~հետ.~~**ԽՀ**<br><br>4. Պետական մարմնի ղեկավարի տեղակալն, իսկ կոլեգիալ մարմինների դեպքում կոլեգիալ մարմնի անդամներն ~~օրենքով նախատեսված դեպքերում կարող են ունենալ~~ **ունեն** | 7. ընդունվել և խմբագրվել է:<br><br><br>**Հոդված 8**<br><br>8-րդ կետը խմբագրվել է: | 1.ընդունվել է:<br><br><br><br><br>2.ընդունվել է:<br><br><br><br>12.ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | կետ 6<br><br>22. հոդված 6-ի կետ 7<br><br>23. հոդված 8-ի կետ 8 | օգնական: Պետական մարմնի ղեկավարի տեղակալը, կոլեգիալ մարմնի դեպքում կոլեգիալ մարմնի անդամն իր օգնականի անմիջական ղեկավարներն է: Պետական մարմնի ղեկավարի տեղակալի օգնականը, կոլեգիալ մարմնի անդամի օգնականը անմիջական հաշվետու են համապատասխանաբար պետական մարմնի ղեկավարի տեղակալին, կոլեգիալ մարմնի անդամին:<br><br>**<u>Հոդված 12. Գլխավոր քարտուղարը</u>**<br><br>5. Գլխավոր քարտուղարը՝<br><br>1) ~~առանց լիազորագրի~~ իր իրավասության սահմաններում հանդես է գալիս **<u>Հայաստանի Հանրապետության անունից</u>** եւ ներկայացնում է նրա շահերը, կնքում է գործարքներ, իր իրավասությանը վերապահված հարցերով տալիս է լիազորագրեր.<br><br>**Խիստ վիճելի իրավասություն է, այն էլ իրականացվում է առանց լիազորագրի: Ինչպիսի՞ն է գործնականում այս նորմի կիրառումը:ԽՀ**<br><br>2) օրենքով, իրավական այլ ակտերով եւ կանոնակարգությամբ սահմանված կարգով տնօրինում է պետական մարմնին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.<br><br>3) օրենքով կամ պետական մարմնի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում | **Հոդված 9**<br>1.9-րդ հոդվածը խմբագրվել է համապատասխանեցնելու «Պետական կառավարման մարմինների մասին օրենքին»:<br><br>2.խմբագրվել է:<br><br>12.խմբագրվել է: | հոդված 10. ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 24. հոդված 9-ի կետ 1<br><br>25. հոդված 9-ի կետ 2<br><br>26. հոդված 9-ի կետ 12 | նշանակում եւ ազատում է պետական մարմնի համապատասխան աշխատողներին, **պետական մարմնի ղեկավարի և տեղակալների որոշմամբ, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ** նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ եւ նշանակում կարգապահական տույժեր՝ **ներառյալ արտահերթ ատեստավորումը.(ԽՀ)**<br><br>**Հոդված 14. <u>Պաշտոնատար անձը</u>**<br><br>1. Պաշտոնատար անձն օրենքով, իրավական այլ ակտերով եւ իր աշխատակազմի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին եւ խնդիրներին համապատասխան՝ իրականացնում է իր աշխատակազմի կառավարումը:<br><br>**Սույն եզրույթը անհարժեշտ է համապատասխանեցնել հանրային ծառայության մասին օրենքի սահմանումներին: Սույն հոդվածում "պաշտոնատար անձ" եզրույթը համապատասխանում է Հանրային ծառայության մասին օրենքի նախագծի "բարձրաստիճան պաշտոնատար անձին" կամ "ղեկավար անձին":**<br><br>**Հոդված 16. Ենթակա պետական մարմնի ղեկավարը եւ լիազորությունները**<br><br>1. Ենթակա պետական մարմնի ղեկավարը օրենքով, իրավական այլ ակտերով եւ ենթակա պետական մարմնի կանոնադրությամբ նախատեսված | **Հոդված 10.**<br>Հոդվածը խմբագրվել է: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 27. հոդված 10 | գործունեության ոլորտին, նպատակներին եւ խնդիրներին համապատասխան՝ ղեկավարում է ենթակա պետական մարմնի գործունեությունը:<br><br>**Արդյո՞ք սա վարչական պաշտոն չէ:ԽՀ**<br><br>**Հոդված 17. Ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալը**<br><br>1. Ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալը՝<br><br>1) **գործում է ղեկավարիղ լիազորությունների պատվիրակման ուժով և** համակարգում է ~~աշխատանքներն~~ **կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը (ԽՀ)** իրեն հանձնարարված բնագավառներում.<br><br>2) իր համակարգման լիազորությունների շրջանակներում **ապահովում է** մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների~~ն~~, գրասենյակների~~ն~~, ենթակայությանը հանձնված կազմակերպությունների~~ն~~ եւ հիմնարկների~~ն~~ կողմից ~~փոխանցում է~~ ենթակա պետական մարմնի ղեկավարի հանձնարարականների~~ը~~ **կատարումը**, ~~կամ~~ իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարկաններ եւ դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն եւ արդյունքների մասին տեղեկացնում ենթակա պետական մարմնի ղեկավարին. **ԽՀ**<br><br>3) իր համակարգման լիազորությունների | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | շրջանակներում **ստանում է** ~~համագործակցում է~~ գլխավոր քարտուղարի **աջակցությունը**, **համագործակցում է** այլ մարմինների եւ կազմակերպությունների հետ.**ԽՀ**<br><br>2. Ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալն ~~օրենքով նախատեսված դեպքերում կարող է ունենալ~~ **ունի** օգնական: Ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալն իր օգնականի անմիջական ղեկավարն է: Ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալի օգնականը, անմիջական հաշվետու է ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալին:<br><br>***Հոդված 2. Սույն օրենքի գործողության ոլորտը***<br><br>1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է հանրային իշխանության մարմինների վրա, ինչպես նաեւ **<u>հանրային պաշտոններ եւ հանրային ծառայության պաշտոններ</u>** զբաղեցնող անձանց վրա:<br><br>**Այս ձևակերպումից հետևում է, որ հանրային պաշտոնը հանրային ծառայության պաշտոն չէ, մինչդեռ օրենքում չի տրված այս հասկացության սահմանումը:**<br><br>3. Սույն օրենքի գործողությունը տարածվում է **<u>բարձրաստիճան պաշտոնատար անձանց</u>** **<u>???սահմանել</u>** վրա միայն սույն օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում:<br><br>***Հոդված 3. Հանրային ծառայությունը , հանրային ծառայության պաշտոնը,*** | **Հոդված 13**<br><br>1. խմբագրվել է:<br><br>2. ընդունվել և | 1. ընդունվել է:<br><br>2.ընդունվել է:<br><br>1.Չի ընդունվել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 28. հոդված 13-ի կետ 1 | ***հանրային ծառայող***<br><br>1.Հանրային ծառայությունը **<u>հանրային իշխանության մարմիններին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն</u>** է, որն ընդգրկում է պետական ծառայությունը և համայնքային ծառայությունը ~~եւ~~ ~~**<u>հանրային պաշտոնները:</u>**~~<br><br>**ա/ համաձայն այս ձևակերպման հանրային ծառայողներ են նաև հանրային իշխանության մարմինների ղեկավարները՝ վարչապետը, նախարարները, պատգամավորները, համայնքի ղեկավարները և այն, քանի որ նրանք իրականացնում են հանրային իշխանության մարմիններին օրենքով վերապահված լիազորությունները: Հետևաբար նրանց պաշտոնները հանդիսանում են հանրային ծառայոթյան պաշտոններ: Բայց այդ դեպքում որո՞նքն են հանրային պաշտոնները՝ ըստ հոդված 2.1-ի**<br><br>**բ/ ծառայության իրականացումը չի կարող նույնացվել պաշտոնների հետ:**<br><br>2.~~ Պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված **<u>խնդիրների եւ գործառույթների</u>** իրականացմանը:~~ **ԽՀ**<br><br>**2.Պետական ծառայությունը պետական** | խմբագրվել է:<br><br>**Հոդված 14**<br><br>1. չի ընդունվել:<br><br>**Հոդված 21** | 2.ընդունվել է:<br><br>ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 29. հոդված 13-ի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ | **իշխանության մարմիններին, պետական կառավարման համակարգի մարմիններին, ինչպես նաև Սահմանդրությամբ նախատեսված անկախ և ինքնավար մարմիններին Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է: ԽՀ** | 2. Մասամբ ընդունվել և խմբագրվել է: | |
| | | 30. հոդված 14-ի կետ 1 | 3. Պետական ծառայությունն ընդգրկում է դատական ծառայությունը, քաղաքացիական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, մաքսային ծառայությունը, հարկային ծառայությունը, փրկարար ծառայությունը, զինվորական ծառայությունը (բացառությամբ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչի միջոցով իրականացվող շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունը), ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը, ոստիկանությունում ծառայությունը, քրեակատարողական ծառայությունը, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, **Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ծառայությունը**, դատական կարգադրիչների ծառայությունը, պետական պահպանության ծառայությունը: | **Հոդված 24, 25 և 26-ը խմբագրվել են :** | |
| | | | **3.1Պետական ծառայության յուրաքանչյուր տեսակ միաժամանակ իրենից ներկայացնում է, տվյալ ծառայության առանձնահատկություններով պայմանավորված, կատուցվածքային ստորաբաժանումների համակարգ՝ միևնույն կառավարչական հիերարխիայով** | | 33.Չի ընդունվել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 31. հոդված 21-ի կետ 2 | **և կառավարման յուրաքանչյուր մակարդակում համապատասխան բարձրաստիճան և հանրային (պետական) ծառայության պաշտոններով: ԽՀ**<br><br>**Բարձրաստիճան պաշպաշտոնների (հանրային պաշտոններ ) և հանրային ծառայության պաշտոնների անվանացանկը սահմանվում է օրենքով:ԽՀ**<br><br>4. Համայնքային ծառայությունը դա մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ համապատասխան ավագանու որոշումներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների ~~խնդիրների եւ գործառույթների~~ իրականացմանը: | | |
| | | 32. հոդված 24, 25. 26 | **Համայնքային ծառայությունը միաժամանակ իրենից ներկայացնում է կառուցվածքային ստորաբաժանումների համակարգ՝ միևնույն կառավարչական հիերարխիայով և կառավարման յուրաքանչյուր մակարդակում համապատասխան համայնքային ծառայության պաշտոններով: ԽՀ**<br><br>**Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը սահմանվում է օրենքով: ԽՀ**<br><br>~~5. Պետական ծառայության առանձին տեսակների,~~ ~~**համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով**~~ | **Հոդված 49**<br><br>**33.չի ընդունվել:** | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 33. հոդված 49 | ~~**սահմանված կարգով ձեւավորված պետական ծառայության**~~ ~~??? ինչպես հասկանալ~~ ~~առանձին տեսակների համար~~ ~~**նախատեսված**~~ ~~??? օրենքո՞վ նախատեսված~~ ~~պաշտոնների անվանացանկով եւ համայնքային ծառայության պաշտոնների~~ ~~**անվանացանկերով նախատեսված պաշտոնը համարվում է հանրային ծառայության պաշտոն**~~ **ԽՀ**<br><br>**Սա պաշտոնի սահմանում չէ: Նման սահմանումից ելնելով որևէ կերպ հնարավոր չէ բանաձևել ″պաշտոնի նկարագիր″ հասկացությունը, իսկ այն՝ առանցքային նորմ է:**<br><br>**Առաջարկում եմ հանել կետը:**<br><br>6. Հանրային ծառայության յուրաքանչյուր պաշտոն ունի **իր հիմնական գործառույթները, որոնք արտացոլվում են տվյալ պաշտոնի նկարագրում՝ պաշտոնի անձնագրում: ԽՀ** ~~անվանում, որը հնարավորինս ճշգրիտ արտացոլում է տվյալ պաշտոնի հիմնական գործառույթները եւ չի կրում ընդհանրական բնույթ:~~<br><br>***Հոդված 4. Հանրային պաշտոնները*** **??? չկա սահմանումը**<br><br>**1.Հանրային պաշտոնները դրանք պետական և համայնքային ծառայությունների բարձրաստիճան պաշտոններն են: ԽՀ**<br><br>~~1. Հանրային պաշտոնը դասակարգվում է~~ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ~~խմբերի՝ պետական եւ համայնքային:~~ **ԽՀ**<br><br>2. Պետական **բարձրաստիճան ԽՀ** պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական, ինքնավար եւ հայեցողական:<br><br>3. Համայնքային **բարձրաստիճան ԽՀ** պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական եւ հայեցողական:<br><br>~~4. Պետական իշխանության մարմիններում հաստիքների առավելագույն թվաքանակը որոշում է վարչապետը:~~ **Ի՞նչ կապ ունի այս դրույթը հոդվածի հետ:**<br><br>***Հոդված 5 Քաղաքական պաշտոնները***<br><br>~~1. Քաղաքական պաշտոնը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով նախատեսված ընտրովի կամ նշանակովի պաշտոն է, որը զբաղեցնող անձը պատասխանատվություն է կրում իր պաշտոնից բխող **քաղաքական որոշումների** ????, նպատակների եւ խնդիրների իրականացման համար:~~<br><br>**Անհրաժեշտ է տալ նաև քաղաքական որոշման սահմանումը՝ հանրային կյանքի որևէ ոլորտում պետական** | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **քաղաքականության ապահովման նպատակով ընդունված որոշում: ԽՀ**<br><br>**1. Պետական քաղաքական պաշտոնը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով նախատեսված ընտրովի կամ նշանակովի պաշտոն է, որը զբաղեցնող անձը օժտված է սեփական պատասխանատվությամբ քաղաքական որոշումներ կայացնելու իրավասությամբ և քաղաքական պատասխանատվություն է կրում այդ որոշումների իրականացման հետևանքների համար:**<br><br>2. Պետական քաղաքական պաշտոններն են՝ Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի պատգամավորների, վարչապետի, փոխվարչապետների, ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի, նախարարների եւ նրանց տեղակալների, **~~մարզպետների եւ նրանց տեղակալների~~** **ԽՀ** պաշտոնները:<br><br>**Մարզպետները քաղաքական որոշումներ կայացնելու իրավասությամբ օժտված չեն: Նրանց պաշտոնը հայեցողական է, իրենք էլ հայեցողական պաշտոնյաներ են:**<br><br>**Առաջարկու եմ 2-րդ կետում ավելացնել նաև Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչներ բառերը:** | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 5. Նախարարի ~~կամ մարզպետի~~ կամ համայնքի ղեկավարի փոփոխության դեպքում համապատասխանաբար նախարարի ~~կամ մարզպետի~~ կամ համայնքի ղեկավարի տեղակալները, **<u>որպես ժամանակավոր պաշտոնակատարներ</u>** ???, շարունակում են պաշտոնավարել մինչեւ իրենց պաշտոնում նոր նշանակում կատարելը: Նախարարի կամ մարզպետի կամ համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում նոր նշանակումը կատարվում է համապատասխանաբար նախարարի կամ մարզպետի նշանակման օրվանից մեկ ամսվա ընթացքում:<br><br>**Այս մասը՝ 5-րդը, որևէ կապ չունի հոդվածի առարկայի հետ և այն պետք է հանել:**<br><br>**Դրա հետ մեկ տեղ, սակայն, հարց է առաջանում՝ ինչու՞ պետք է տեղակալները նախարարի կամ համայնքապետի պաշտոնանկության պարագայում դառնան ժ/պ: Նրանք քաղաքական պաշտոն զբաղոցնող անձինք են և ցանկացած պարագայում , քաղաքական նկատառումներից ելնելով,կարող են պաշտոնանկ արվել անկախ իրենց անմիջական ղեկավարի պաշտոնանկությունից:**<br><br>***Հոդված 6. Վարչական պաշտոններ***<br><br>~~1. Վարչական պաշտոնը նշանակովի պաշտոն է, որն զբաղեցնող պաշտոնատար անձը Հայաստանի Հանրապետության **Սահմանադրությամբ** աբսուրդ է,~~ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ~~Սահմանադրությամբ աշխատակազմի ղեկավարին կամ նրա տեղակալին ի՞նչ լիազորություն է վերապահված եւ օրենքներով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ապահովում է~~ ~~**պետության քաղաքականության իրականացումը տվյալ ոլորտում եւ պատասխանատվություն է կրում իր պաշտոնից բխող նպատակների եւ խնդիրների իրականացման համար:**~~ ???<br><br>**1.Վարչական պաշտոնը պետական իշխանության մարմիններում, նրանց և վարչապետին ենթակա մարմիններում, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններում նշանակովի պաշտոն է, որը զբաղեցնող պաշտոնատար անձը ապահովում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով տվյալ մարմնին վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացումը եւ պատասխանատվություն է կրում իր պաշտոնից բխող խնդիրների իրականացման համար:**<br><br>2. Վարչական պաշտոն զբաղեցնող անձը կարող է փոփոխվել նաեւ քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության արդյունքում: ?????<br><br>**Սա հայեցողական պաշտոնին է բնորոշ:**<br><br>**Եթե առաջնորդվել աշխատակազմի** | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **գործունեության շարունակականությունը ապահովելու սկզբունքով, ինչը առանցքային դրույթ է, ապա աշխատակազմերի ղեկավարները պետք է հայեցողական պաշտոնյաներ չլինեն, իսկ տեղակալները՝ առավել ևս:**<br><br>3. Վարչական պաշտոն զբաղեցնող անձի վերադասի/կամ անմիջական ղեկավարի փոփոխության դեպքում, վարչական պաշտոն զբաղեցնող անձն, որպես **ժամանակավոր պաշտոնակատար** ??? Իմաստը, շարունակում է պաշտոնավարել մինչեւ իր պաշտոնում նոր նշանակում կատարելը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Նոր նշանակումը կատարվում է վարչական պաշտոն զբաղեցնող անձի վերադասի/կամ անմիջական ղեկավարի նշանակման օրվանից մեկ ամսվա ընթացքում, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:<br><br>**Եթե ԱԺ աշխատակազմի ղեկավարի տեղակալը նշանակվում և ազատվում է ԱԺ Նախագահի կողմից, ապա ինչու՞ աշխատակազմի ղեկավարի պաշտոնանկության դեպքում (որին ի դեպ նույնպես նշանակում և ազատում է ԱԺ Նախագահը) նրա տեղակալները պետք է օրենքի ուժով դառնան ժ/պ: Չէ՞ որ նրանց էլ է նշանակել նույն պաշտոնատար անձը:**<br><br>4. Պետական վարչական պաշտոններն են՝ Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի, նրա տեղակալների, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի, նրա | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | տեղակալների, վարչապետի աշխատակազմի ղեկավարի, նրա տեղակալների, **մարզպետների և նրանց տեղակալների ԽՀ**, կառավարությանը, վարչապետին եւ նախարարություններին ենթակա մարմինների ղեկավարների եւ նրանց տեղակալների, **վարչապետի աշխատակազմի գրասենյակի ղեկավարի** ??? **ըստ սույն օրենքի այս պաշտոնը հայեցողական է**, **ԽՀ** դատական դեպարտամենտի ղեկավարի, Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի, գլխավոր ռազմական տեսուչի եւ նրա տեղակալի, Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչների պաշտոնները:<br><br>6. Վարչական պաշտոնները կարող են զբաղեցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն բարձրագույն կրթություն **և տվյալ վարչական պաշտոնին առնվազն երկու աստիճան ենթադասվող պաշտոնում առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:**<br><br>**Վարչական պաշտոն զբաղեցնող անձանց ներկայացվող մասնագիտական պահանջները պետք է համապատասխանեն այդ պաշտոններին վերապահված պատասխանատվություններին, իսկ միայն բարձրագույն կրթության ցենզը բավարար չէ: Հետաքրքիր է, որ նախագծի հեղինակները խորհրդականի հայեցողական պաշտոնի համար սահմանում են ստաժի և տարիքի պահանջ, իսկ ավելի կարևոր դերակատարում ունեցող** | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **պաշտոնյաի համար՝ ոչ:**<br><br>7. Օրենքով նախատեսված դեպքերում վարչական պետական պաշտոններում **նշանակումները կատարվում են ԽՀ** ~~զբաղեցվում են~~ պետական ծառայության տվյալ տեսակը կարգավորող օրենքով սահմանված կարգով:<br><br>*Հոդված 8. Հայեցողական պաշտոնները*<br><br>8. **Հայեցողական պաշտոնների համար նախատեսվում է պաշտոնի անձնագիր, որի համար չափանիշներ սահմանում է այն պաշտոնատար անձը** ????, ում անմիջական ենթակայությամբ աշխատելու է հայեցողական պաշտոն զբաղեցնող անձը: Պաշտոնի անձնագիրը ներկայացված չափանիշներին համապատասխան հաստատում է տվյալ մարմնի գլխավոր քարտուղարը (աշխատակազմի ղեկավարը):<br><br>**Այս իրավասությունը վերապահել քաղաքացիական ծառայության գրասենյակին՝ գոնե բարջրաստի-ան վարչական պաշտոնների համար ԽՀ**<br><br>**Իրականում այդ պաշտոնյաներին ներկայացվող մասնագիտական (և ոչ միայն) պահանջները պետք է բխեն տվյալ պաշտոնի նկարագրից և համապատասխանեն քաղաքացիական ծառայողի որևէ դասային կոչմանը: Ընդ որում չի կարելի միևնույն մասնագիտական չափանիշեր սահմանել, օրինակ, վարչապետի և համայնքապետի** | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **խորհրդականին կամ օգնականին: Առավել եւս, որ այդ պաշտոնյաները կարող են ներգրավվել քաղաքացիական ծառայությունից՝ հետագայում նորից քաղաքացիական ծառայություն վերադառնալու  իրավունքով: Իսկ պաշտոնի անձնագրի  չափանիշերի  մշակումը վերապահել  անմիջական ղեկավարին (վարչապետին կամ նախարարին, նրա տեղակալին, գյուղապետին),  անհեթեթ է հենց միայն այն պատճառով, որ հաջարդ համապատասխան անմիջական ղեկավարը կարող է սահմանել որակապես այլ չափանիշեր այդ նույն պաշտոնի համար: Բացակայում է  սիստեմային մոտեցումը: ԽՀ**<br><br>***Հոդված 9. Հանրային պաշտոններում նշանակելու իրավասությունը***<br><br>**1.Պետական իշխանության մարմինների բարձրաստիճան քաղաքական պաշտոններում  քաղաքական պաշտոնյայի նշանակումը և ազատումը կատարվըում է Սահմանադրությամբ սահմանված կարգով:ԽՀ**<br><br>1.1. Կառավարությանը ենթակա մարմնի ղեկավարին վարչապետի առաջարկությամբ նշանակում եւ ազատում է Կառավարությունը՝ բացառությամբ տեսչական մարմինների:<br><br>2. <u>**Տեսչական մարմինի** </u>Տեսչական մարմնի կառավարման խորհրդի առաջարկությամբ նշանակում եւ ազատում է վարչապետը:<br>**Ընդգծված պաշտոնը վերը շարադրված** | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **որևէ պաշտոնացանկում ընդգրկված չէ: ԽՀ**<br><br>12. Վարչապետի աշխատակազմի ղեկավարին եւ նրա տեղակալներին, վարչապետի աշխատակազմի գրասենյակի ղեկավարին, ~~**բացառությամբ փոխվարչապետի գրասենյակի ղեկավարի**~~, պաշտոնի նշանակում եւ պաշտոնից ազատում է վարչապետը: **??? Նշվածը պետք է հանել և փոխվարչապետի գրասենյակի ղեկավարի նշանակումը կարգավորող նոր մաս ավելացնել: ԽՀ**<br><br>**12.1 Առաջին փոխվարչապետի գրասենյակի ղեկավարին նշանակում և պաշտոնից ազատում է առաջին փոխվարչախետը:ԽՀ**<br><br>13. Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի օգնականին պաշտոնի նշանակում եւ ազատում է Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարը: Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի օգնականին պաշտոնի նշանակում եւ ազատում է Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը: Վարչապետի աշխատակազմի ղեկավարի օգնականին պաշտոնի նշանակում եւ ազատում է վարչապետի աշխատակազմի ղեկավարը: **Առաջին** **<u>փոխվարչապետի</u>** գրասենյակի ղեկավարին, խորհրդականին, օգնականին, **մամուլի քարտուղարին, ռեֆերենտին, արարողակարգի պատասխանատուին** պաշտոնի նշանակում եւ պաշտոնից ազատում է ~~համապատասխան~~ **առաջին** փոխվարչապետը: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **Ստացվում է, որ փոխվարչապետը կարող է ունենալ ատանձին մամուլի խոսնակ, արարողակագի պատասխանատու: Անհրաժեշտ է խմբագրել: ԽՀ**<br><br>14. Համայնքային վարչական եւ համայնքային հայեցողական պաշտոններում նշանակում եւ այդ պաշտոններից ազատում է համայնքի ղեկավարը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:<br><br>**Եթե  այս հոդվածում ներկայացված պաշտոններն են հանրային պաշտոններ, իսկ հաջորդ հոդվածում առանձնացվում են բարձրաստիճան պաշտոնները, ապա հոդված 4-ը պետք է խմբագրել կամ վերանայել 2-րդ հոդվածով հանրային ծառայության բանաձեւումը:ԽՀ**<br><br>***Հոդված 10. Բարձրասփիճան պաշփոնափար անձը, փոխկապակցված անձինք***<br><br>1. Բարձրաստիճան պաշտոնատար անձ են համարվում Հանրապետության Նախագահը, վարչապետը, Ազգային ժողովի պատգամավորները, սահմանադրական դատարանի դատավորները, դատավորները, նախարարները եւ նրանց տեղակալները, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետը եւ նրա տեղակալները, գլխավոր դատախազը եւ նրա տեղակալները, մարզերի, Երեւան քաղաքի եւ կայազորների դատախազները, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահը եւ նրա տեղակալները, | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության պետը եւ նրա տեղակալները, ինքնավար եւ անկախ պետական մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները եւ անդամները, կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալները եւ կենտրոնական բանկի խորհրդի անդամները, քաղաքացիական ավիացիայի կոմիտեի ղեկավարը եւ նրա տեղակալները, պետական գույքի կառավարման կոմիտեի ղեկավարը եւ նրա տեղակալները, կառավարությանն ենթակա մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները, **բացառությամբ տեսչական մարմինների ղեկավարների եւ նրանց տեղակալների????,** Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետը եւ նրա տեղակալները, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության ղեկավարը եւ նրա տեղակալները, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության տնօրենը եւ նրա տեղակալները, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարողը եւ նրա տեղակալները, վարչապետին ենթակա մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի **աշխատակազմի** | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **դեպարտամենտների ղեկավարները** ????, Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարը եւ նրա տեղակալները, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը եւ նրա տեղակալները, վարչապետի աշխատակազմի ղեկավարը եւ նրա տեղակալները, սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարը, Երեւանի քաղաքապետը եւ նրա տեղակալները, մարզպետները եւ նրանց տեղակալները, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարները, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարը, գլխավոր ռազմական տեսուչը եւ նրա տեղակալները, հատուկ հանձնարարություններով դեսպանը, Հանրապետության Նախագահի խորհրդականները, մամուլի քարտուղարը եւ օգնականները, Ազգային ժողովի նախագահի խորհրդականները եւ օգնականները, վարչապետի խորհրդականները եւ օգնականները, նախորդ տարվա հունվարի 1-ի դրությամբ 50000 եւ ավելի բնակիչ ունեցող համայնքների ղեկավարները:<br><br>**Թվարկած պաշտոնները հանդիսանում են արդյո՞ք հանրային պաշտոններ: Նշված պաշտոնները բարձրաստիճան են թե՞ վարչական: ԽՀ**<br><br>2. Բարձրաստիճան պաշտոնատար անձի, **հանրային ծառայողի ????** հետ փոխկապակցված անձինք են՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի, հանրային ծառայողի կամ նրա ամուսնու հետ՝ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ներառյալ մինչեւ 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող անձինք: Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ արյունակցական կապի մինչեւ 2-րդ աստիճանի մեջ են գտնվում արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք, ինչպես նաեւ վերջիններիս հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք: Արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ են գտնվում անձի զավակները, ծնողները, քույրերը եւ եղբայրները:<br><br>3. Բարձրաստիճան պաշտոնատար անձի **վերադաս անձ** **??? (մինչ այս օգտագործվել է անմիջական ղեկավար եզրույթը ԽՀ)** են համարվում Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի, Հանրապետության Նախագահի խորհրդականների, մամուլի քարտուղարի եւ օգնականների համար՝ Հանրապետության Նախագահը, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի, Ազգային ժողովի նախագահի խորհրդականների, օգնականների համար՝ Ազգային ժողովի նախագահը, սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի համար՝ սահմանադրական դատարանի նախագահը, նախարարի, կառավարությանն ենթակա մարմինների ղեկավարների, բացառությամբ տեսչական մարմինների ղեկավարների, վարչապետին ենթակա մարմինների ղեկավարների, Հատուկ քննչական ծառայության պետի, գլխավոր ռազմական տեսուչի Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի, հատուկ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հանձնարարություններով դեսպանի, վարչապետի աշխատակազմի ղեկավարի, վարչապետի խորհրդականների եւ օգնականների համար՝ վարչապետը, նախարարների տեղակալների եւ նախարարությանը ենթակա մարմինների բարձրաստիճան պաշտոնատար անձ համարվող ղեկավարների համար՝ նախարարը, գլխավոր դատախազի տեղակալների, մարզերի, Երեւան քաղաքի եւ կայազորների դատախազների համար՝ գլխավոր դատախազը, կառավարությանն ենթակա մարմինների ղեկավարների տեղակալների համար՝ մարմնի ղեկավարը, վարչապետին ենթակա մարմինների ղեկավարների տեղակալների համար՝ մարմնի ղեկավարը, նախարարություններին ենթակա մարմինների ղեկավարների համար՝ մարմնի ղեկավարը, ինքնավար եւ անկախ պետական մարմինների անդամների համար՝ տվյալ մարմնի ղեկավարը, կենտրոնական բանկի նախագահի տեղակալների եւ կենտրոնական բանկի խորհրդի անդամների համար՝ կենտրոնական բանկի նախագահը, հաշվեքննիչ պալատի անդամների համար՝ հաշվեքննիչ պալատի նախագահը, Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալների համար՝ Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարը, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի տեղակալների համար՝ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը, վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալների համար՝ վարչապետի աշխատակազմի ղեկավարը, Երեւանի քաղաքապետի, մարզպետների | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | տեղակալների համար՝ համապատասխանաբար Երեւանի քաղաքապետը եւ մարզպետները, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարների համար՝ արտաքին գործերի նախարարը, գլխավոր ռազմական տեսուչի տեղակալների համար՝ գլխավոր ռազմական տեսուչը: Սույն մասում չթվարկված բարձրաստիճան պաշտոնատար անձինք սույն օրենքի իմաստով համարվում են վերադաս չունեցող:<br><br>**Արդյո՞ք կա որևէ տարբերություն անմիջական ղեկավար և վերադաս անձ հասկացությունների միջև: Անմիջական ղեկավարը տվյալ  պաշտոնային պաշտոնում նշանակող ու ազատող բարձրաստիճան պաշտոնյա՞ն է: ԽՀ**<br><br>**Հարկավոր է ավելացնել նոր հոդված՝ Հանրային ծառայության պաշտոնները ԽՀ**<br><br>***Հոդված 13. Հանրային ծառայության հիմնական սկզբունքները***<br><br>1. Հանրային ծառայության հիմնական սկզբունքներն են՝<br><br>1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության եւ օրենքների գերակայությունը.<br><br>**2) հանրային ծառայության կայունությունը**. **Սահմանել ԽՀ** | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 3) հանրային ծառայության հրապարակայնությունը, թափանցիկությունը եւ հաշվետվողականությունը՝ **հանրության առջև ԽՀ.**<br><br>4) քաղաքացիների համար հանրային ծառայության հավասար մատչելիությունը՝ իրենց մասնագիտական գիտելիքներին եւ կոմպետենցիաներին համապատասխան.<br><br>5) հանրային ծառայողի պաշտպանվածությունը մասնագիտական գործունեությանը չհամապատասխանող միջամտությունից.<br><br>6) հանրային ծառայողի արհեստավարժությունը.<br><br>**Ավելացնել նոր կետեր՝ Հանրային ծառայության արդյունավետությունը և տալ դրա սահմանումը, կարիերային առաջխաղացման, մասնավոր սեկտորի նկատմամբ մրցունակությունը, հետծառայական սոցիալական երաշխիքների ապահովման սկզբունքը, քաղաքական լոյալության սկզբունքը: Նշված սկզբունքները արտացոլված չեն նաև քաղաքացիական ծառայության մասին օրենքում:ԽՀ**<br><br>***Հոդված 14. Հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքը***<br><br>1. Հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն **օրենսդրությամբ ԽՀ** հանրային | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով (**<u>աշխատատեղի նկարագրով</u>**) ??? ներկայացվող պահանջները բավարարող եւ պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաեւ համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, իսկ համայնքային ծառայության դեպքում նաեւ Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցողները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:<br><br>2. Եթե հանրային ծառայության պաշտոնի անձնագրով սահմանված է բարձրագույն կրթության պահանջ, ապա քաղաքացին պետք է ունենա ինստիտուցիոնալ եւ(կամ) համապատասխան մասնագիտության ծրագրով հավատարմագրված բուհի կողմից շնորհված որակավորում ու դիպլոմ:<br><br>***Հոդված 21. Հանրային ծառայողին հանձնարարականներ տալու սահմանափակումները***<br><br>2. Սույն հոդվածի 1-ին մասի խախտմամբ հանձնարարականներ տալու դեպքերում հանրային ծառայողը պարտավոր է ստացած հանձնարարականի օրինականության վերաբերյալ իր կասկածների մասին անհապաղ գրավոր տեղեկացնել | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հանձնարարականը տվողին: ~~եւ նրա անմիջական ղեկավարին կամ նրանց փոխարինող անձանց:~~ **ԽՀ Եթե հանձնարարություն տվող պաշտոնատար անձը գրավոր վերահաստատում է իր հանձնարարությունը, ապա հանրային ծառայողը, բացառությամբ այն դեպքերի, երբ հանձնարարականի կատարումը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված քրեական կամ վարչական պատասխանատվության պարտավոր է կատարել այդ հանձնարարությունը և այդ մասին գրավոր տեղեկացնել իրեն հանձնարարություն տվող պաշտոնյայի անմիջական ղեկավարին**:**ԽՀ** ~~տեսյակ պահել անմիջական ղեկավարը (նրա բացակայության դեպքում՝ նրան փոխարինող անձը կամ հանձնարարական տվողը) գրավոր հաստատում է տրված հանձնարարականը, ապա հանրային ծառայողը պարտավոր է դա կատարել~~, ~~բացառությամբ այն դեպքերի, երբ հանձնարարականի կատարումը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված քրեական կամ վարչական պատասխանատվության~~: Հանրային ծառայողի կողմից այդ հանձնարարականի կատարման համար պատասխանատվությունը կրում է հանձնարարականը գրավոր հաստատած պաշտոնատար անձը:<br><br>***Հոդված 24. Հանրությանը ծառայելու գիտակցումը***<br><br>1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողների լիազորությունների | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | իրականացումն ուղղված է հանրության բարօրության ապահովմանը՝ պետության քաղաքականության նպատակների արդյունահիրավունքետ իրագործման միջոցով:????<br><br>**Հանրային ծառայողը պետք է  գիտակցի, որ իր մասնագիտական  գործունեությամբ նա պարտավոր է առավելագույնս նպաստել Հայաստանի Հանրապետության քաղաքացու արժանապատիվ ապրելու համար անհրաժեշտ  որակյալ և մատչելի հանրային ծառայությունների  մատուցման կազմակերպմանը, իշխանությունների հանդեպ հանրային վստահության խթանմանը: ԽՀ**<br><br>***Հոդված 25. Հավապարմությունը հանրային շահին***<br><br>2. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք եւ հանրային ծառայողները մշակված հանրային քաղաքականության կենսագործման գործընթացում դրսեւորում են **հավատարմություն եւ հուսալիություն՝**???? **Ու՞մ հանդեպ**  անկախ համոզմունքից եւ դիրքորոշումից:<br><br>**Արդյո՞ք  ի նկատի է ունեցվել մասնագիտական դիրքորոշումը թե՞ քաղաքական համոզմումքները, հարկավոր է հստակեցնել:ԽՀ**<br><br>***Հոդված 26. Բարեկրթությունը եւ հարգալիրությունը*** | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք եւ հանրային ծառայողները դրսեւորում են պաշտոնին վայել վարքագիծ: Նրանք բարեկիրթ վերաբերմունք են դրսեւորում բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ շփվում են լիազորություններն իրականացնելիս: **Իսկ կենցաղու՞մ ԽՀ**<br><br>2. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք եւ հանրային ծառայողները հարգում են **Հայաստանի Հանրապետության քաղաքացիների** ԽՀ, իրենց վերադասների, անմիջական ղեկավարների, գործընկերների, ենթակաների արժանապատվությունը:<br><br>***Հոդված 46. Հանրային պաշպոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողների սոցիալական երաշխիքները***<br><br>4) օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով պարտադիր պետական սոցիալական ապահովագրությունը. **Հետծառայական կենսաթոշակի սահմանում կեմսաթոշակառուի կենսաթոշակի անցնելու պաշտոնի տվյալ պահին գործող աշխատավարձի առնվազն 70% չափով: կարելի է սահմանել որոշակի փուկային լուծումներ:ԽՀ**<br><br>***Հոդված 49. <u>Բարձրագույն դասային ասփիճաններ</u> շնորհելու վերաբերյալ միջնորդությամբ դիմելու իրավասությունը***<br><br>***Որո՞նք են բարձրագույն դասային ասփիճանները ԽՀ*** | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **8.** | **ՀՀ ԱԺ ԵԼՔ խմբակցություն** | «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծի՝<br>1. 4-րդ հոդվածի 4-րդ մաս<br><br>2. 8-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ մասեր | 1.Ըստ Նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ մասի՝ պետական իշխանության մարմիններում հաստիքների առավելագույն թվաքանակը որոշում է վարչապետը: Այսինքն օրինակ Ազգային ժողովում, Սահմանադրական դատարանում և առհասարակ իշխանության բոլոր ճյուղերի պետական մարմիններում վարչապետն է սահմանում հաստիքների առավելագույն թիվը, այնինչ վարչապետը միայն գործադիր թևի ղեկավարն է, հետևաբար նման լիազորություն չի կարող ունենալ: Այսպիսով՝ առաջարկում ենք սույն դրույթը հանել Նախագծից կամ թողնել առնվազն գործադիր իշխանության մասով:<br>2.Նախագծի 8-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ մասերով՝ նույն հոդվածով նախատեսված օգնականի և ռեֆերենտի պաշտոն կարող են զբաղեցնել բարձրագույն կրթություն ունեցող անձը: Հայեցողական պաշտոնների համար նախատեսվում է պաշտոնի անձնագիր, որի համար չափանիշներ սահմանում է այն պաշտոնատար անձը, ում անմիջական ենթակայությամբ աշխատելու է հայեցողական պաշտոն զբաղեցնող անձը: Պաշտոնի անձնագիրը ներկայացված չափանիշներին համապատասխան հաստատում է տվյալ մարմնի գլխավոր քարտուղարը (աշխատակազմի ղեկավարը): Կարծում ենք՝ պատգամավորի օգնականը, խմբակցության փորձագետն ու գործավարը պետք է բացառություն լինեն այս դրույթից, այսինքն նրանց համար բարձրագույն կրթության պահանջ չպետք է սահմանվի, իսկ նրանց | 1. Չի ընդունվել: Հաստիքների թիվը որևէ կերպ չի առնչվում կառուցվածքի հետ, որը իրենց խնդիրներից ելնելով սահմանում են ինքնուրույն, սակայն միջազգային ընդունված նորմով՝ բյուջետային ազդեցության տեսակետից, մշտապես կարգավորում է գործադիրը:<br><br>2. Չի ըն դունվել:Համամիտ չենք օգնականի, խմբակցության փորձագետի կրթության ցենզի իջեցման պահանջին, քանի որ օրենսդրությամբ նրանց առջև դրված խնդիրները ենթադրում են բարձրագույն կրթության առկայություն: Միևնույն ժամանակ համաձայն ենք պաշտոնի անձնագրի չափանիշները հանելուն: | 1. չի ընդունվել<br><br>2. Չի ընդունվել<br><br>3.Չի ընդունվել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 3. 10-րդ հոդվածի 1-ին մաս<br><br>4. 15-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ<br><br>5. 38-րդ հոդվածի 3-րդ մաս | պաշտոնի անձնագրերը չպետք է հաստատման ներկայացվեն որևէ մեկին, քանի որ նրանք ենթարկա չեն համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարին կամ աշխատակազմի ղեկավարին, իսկ օրինակ Ազգային ժողովում տարիներ շարունակ պատգամավորի օգնականն աշխատակազմի անդամ չի համարվել: **Առաջարկության հիմնավորումը կայանում է նրանում, որ պատգամավորի օգնականը, խմբակցության փորձագետն ու գործավարը աշխատում են համապատասխանաբար պատգամավորի և խմբակցության համար ու հետևաբար վերջիններս պետք է ազատ լինեն իրենց հարմար ունակություններով և կրթությամբ օժտված անձանց աշխատանքի ընդունելու հարցում:**<br>3.Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասով առաջարկվում է սահմանել, որ բարձրաստիճան պաշտոնատար անձ են համարվում (...) նախորդ տարվա հունվարի 1-ի դրությամբ 50. 000 և ավելի բնակիչ ունեցող համայնքների ղեկավարները:<br>**Առաջարկում ենք բարձրաստիճան պաշտոնատար անձ համարել բոլոր համայնքների ղեկավարներին՝ դրա բոլոր հետևանքներով, այդ թվում նաև գույքի և եկամուտների հայտարարագրման պահանջով:** | 3.Չի ընդունվել: Օրենքի նախագծով բարձրաստիճան պաշտոնատար անձ հասկացությունը դուրս է եկել, որով էապես ընդլայնվում են հայտարարատու պաշտոնատար անձանց թիվը, ինչպես նաև ձեր կոմից նշված «50. 000» թիվը փոխում ենք «15.000» :<br>Բոլոր համայքների ղեկավարներից նման հաշվետվողականության պահանջները այս փուլում համարում ենք վաղաժամ և առաջարկում ենք հարցին անդրադառնալ համայնքների խոշորացման այս փուլի ավարտից հետո:<br><br>4. Համաձայն չենք , որովհետև կարծում ենք,որ դատվածությունը | 4. Չի ընդունվել<br><br>5.ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 6. 41-րդ հոդվածի 1-ին մաս | 4.Համաձայն Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ հանրային ծառայության ընդունվելու իրավունք չունի այն անձը, ով դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ: Այս սահմանափակման համար առաջարկում ենք թողնել միայն դիտավորությամբ կատարված հանցագործությունները:<br>5.Նախագծի 38-րդ հոդվածի 3-րդ մասով՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի կազմի մեջ մտնող՝ սույն օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մասում նշված այլ անձանց հայտարարագիրը պետք է ներառի նրանց սեփականության իրավունքով պատկանող՝<br>1) անշարժ գույքը, եթե հարկային տարում անշարժ գույքի ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) գերազանցել է 50 միլիոն դրամը: Ընդ որում, ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) 50 միլիոն դրամը գերազանցելու դեպքում հայտարարագրման ենթակա են անշարժ գույքի ձեռքբերման և օտարման բոլոր գործարքները.<br>2) շարժական գույքը, եթե հարկային տարում շարժական գույքի ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) գերազանցել է 8 միլիոն դրամը: Ընդ որում, ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) 8 միլիոն դրամը | մարված չլինելու պարագան էապես կըխոչընդոտի հանրային ծառայողի կողմից իր պարտականությունների իրագործմանը:<br><br>5. ներկայացված առաջարկությունների 1-ից 4-րդ կետերը վերացված են: Անշարժ և շարժական գույքի, փոխառությունների և վերադարձման գործարքների համար նվազագույն շեմ չի սահմանվում: | 6.Չի ընդունվել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 7. 41-չդ հոդվածի 6-րդ մաս<br><br>8. Հոդված 9<br><br>9. 10-րդ հոդված 2-րդ մաս | գերազանցելու դեպքում հայտարարագրման ենթակա են շարժական գույքի ձեռքբերման և օտարման բոլոր գործարքները.<br>3) արժեթուղթը և (կամ) այլ ներդրումը, եթե հարկային տարում արժեթղթերի ձեռքբերման և (կամ) այլ ներդրման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) գերազանցել է 8 միլիոն դրամը: Ընդ որում, ձեռքբերման և (կամ) այլ ներդրման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) 8 միլիոն դրամը գերազանցելու դեպքում հայտարարագրման ենթակա են արժեթղթերի ձեռքբերման և (կամ) այլ ներդրման և օտարման բոլոր գործարքները.<br>4) փոխառությունը, եթե հարկային տարում փոխառության հանձնման գործարքների ընդհանուր գումարը (չափը) կամ վերադարձման գործարքների ընդհանուր գումարը (չափը) գերազանցել է 8 միլիոն դրամը: Ընդ որում, փոխառության հանձնման գործարքների ընդհանուր գումարը (չափը) կամ վերադարձման գործարքների ընդհանուր գումարը (չափը) 8 միլիոն դրամը գերազանցելու դեպքում հայտարարագրման ենթակա են փոխառության հանձնման և վերադարձման բոլոր գործարքները.<br>5) թանկարժեք գույքը, որն օտարվել կամ ձեռք է բերվել հարկային տարում:<br>**Առաջարկում ենք հանել ընդգծված մասերը, այսինքն՝ սահմանել, որ այդ բոլոր գործարքները ենթակա են հայտարարագրման՝ առանց որևէ նվազագույն շեմի սահմանման: Ընդհանուր առմամբ, բոլորովին հասկանալի ու** | 6.Չի ընդունվել: Միջազգային պրակտիկայի տեսանկյունից՝ ամբողջ տեղեկատվությունը՝ անգամ 0.01%, առկա է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում: Սակայն, շահերի բախման ազդեցության տեսանկյունից, պետք է չծանրաբեռնել համակարգը և գործարար շրջանառության կանոններից ելնելով՝ 10% | 7.Չի ընդունվել<br><br>8.Չի ընդունվել<br><br>2. ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **հիմնավորված չէ, թե ինչու են նման բարձր շեմեր (համեմատությամբ Հայաստանի Հանրապետությունում միջին եկամուտներ ունեցող քաղաքացու կենսամակարդակի) նախատեսվել հայտարարագրման ենթակա օբյեկտների համար:**<br>6.Ըստ Նախագծի 41-րդ հոդվածի 1-ին մասի՝ հայտարարագրի՝ «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր կամ առնվազն 10 տոկոսի մասնակից են հանդիսանում բարձրաստիճան պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձինք, հասցեն: Առաջարկում ենք բոլոր տեսակի մասնակցություններն այստեղ նշել, քանի որ մի կազմակերպությունում անգամ 0,5% մասնակցությունը կարող է անհամեմատ ավելի մեծ եկամուտ բերել, քան մեկ այլ կազմակերպությունում մինչև անգամ 100% փայատեր լինելը:<br><br>7.Նույն հոդվածի 6-րդ մասով՝ հայտարարագրի՝ «Բարձրաստիճան պաշտոնատար անձի և նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց կողմից, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված պայմանագրերը» բաժնում նշվում են այն պայմանագրերը, որոնց գինը (արժեքը) գերազանցում է 5.000.000 (հինգ միլիոն)ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, պայմանագրի տեսակը, կողմերը, նրանց | և ավելին է համարվում էական ազդեցություն:<br>7. Չի ընդունվել:Ելնելով միջազգային փորձից, բոլոր պայմանագրերը դարձնել հայտարարագրման ենթակա տվյալը գտնում ենք ոչ արդյունավետ:<br><br>8. չի ընդունվել<br><br>2. հոդվածը խմբագրվել է: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հասցեները, տվյալներ պայմանագրի կնքման գործընթացի մասին, պայմանագրի կնքման օրը, ամիսը, տարին, գործողության ժամկետը, ինչպես նաև գինը (արժեքը): Այստեղ ևս պարզ չէ, թե ինչ նպատակ է հետապնդել հեղինակը՝ պայմանագրի նման բարձր գին սահմանելով: Նույն հիմնավորմամբ՝ առաջարկում ենք այդ բոլոր պայմանագրերը հայտարարագրման ենթակա տվյալ սահմանել<br>8) Նախագիծը լրացնել նոր 9.1 հոդվածով հետևյալ բովանդակությամբ.<br>«Հոդված 9.1 Լիազորագիր ներկայացնելու պարտականությունը<br>ՀՀ պետական պաշտոնի հավակնող և նման պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև նրանց հետ փոխկապակցված անձինք պետք է նոտարական կարգով լիազորեն Կոռուպցիայի կանխարգելման հարցերով հանձնաժողովին՝ աշխարհի ցանկացած բանկում և ֆինանսական կազմակերպությունում, ցանկացած երկրի տարածքում իրենց անունից փնտրել և ստանալ տեղեկություններ իրենց անունով հաշվեհամարների առկայության, ստեղծման օրից դրանց շարժի և մնացորդի, ինչպես նաև իրենց անունով շարժական, անշարժ գույքի և արժեթղթերի առկայության մասին: Նման լիազորագիր տալուց հրաժարվող անձինք չեն կարող լինել բարձրաստիճան պաշտոնյա»:<br>2) Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասը փոփոխել և շարադրել հետևյալ կերպ.<br>«2. Պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձինք են համարվում պաշտոնատար անձի հետ գրանցված կամ փաստացի ամուսնության մեջ գտնվող ամուսինը, իր կամ ամուսնու հետ՝ ներառյալ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծի՝<br>1. 5-րդ հոդվածի 3-րդ մաս | մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող անձինք: Արյունակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ են գտնվում արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք, ինչպես նաև վերջիններիս հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք: Արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ են գտնվում անձի զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները:»<br>3) Նախագծի 30-րդ հոդվածը լրացնել նոր 4.1 մասով հետևյալ բովանդակությամբ.<br>«4.1 Առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում հանրային ծառայողի կամ բարձրաստիճան պաշտոնատար անձի ունեցած մասնակցության (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) հավատարմագրային կառավարիչ չի կարող լինել սույն օրենքի իմաստով բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ հանրային ծառայողի հետ փոխկապակցված անձը:»<br>4) Նախագծի 30-րդ հոդվածի 5-րդ մասում առկա «գույքի» բառից հետո լրացնել «, ծախսերի» բառը, «պարտավոր են» բառերից հետո լրացնել «դրամական միջոցներով ծախսեր կատարելը» բառերը, «կամ տրվող» բառերից հետո լրացնել «կամ ծախսվող» բառերը.<br>5) Նախագծի 32-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում առկա «100.000» բառը փոխարինել «50.000» բառով.<br>6) Նախագծի 32-րդ հոդվածի 5-րդ մասը փոփոխել և շարադրել հետևյալ բովանդակությամբ.<br>«5. Սույն հոդվածով թույլատրելի համարվող | | 1.Չի ընդունվել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 2. 21-րդ հոդվածի 8-րդ մաս<br><br>3. 23-րդ հոդվածի 1-ին մաս | նվերի արժեքը գնահատվում է՝ հիմք ընդունելով նվերի միջին շուկայական գինն՝ անկախ նվեր ստացողի իմացությունից:»<br>7) Նախագծի 29-րդ հոդվածի 9-րդ մասում «կարող է առաջացնել» բառերը փոխարինել «առաջացնում է» բառերով.<br>8) Նախագծի 33-րդ հոդվածի 3-րդ մասում «շրջանակի վրա» բառերից հետո լրացնել «կամ եթե իրավիճակը բխում է հանրային ծառայողի կամ բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնական կարգավիճակից կամ տվյալ պաշտոնը մեկ այլ անձի կողմից զբաղեցված լինելու դեպքում անխուսափելի կլիներ այդ շահը» բառերը.<br>9) Նախագծի 34-րդ հոդվածը լրացնել նոր 1.1 մասով հետևյալ բովանդակությամբ.<br>«1.1. Վերադաս անձը (անմիջական ղեկավարը) պետք է գրավոր համաձայնություն տա կամ տվյալ հարցը քննարկելու և լուծելու իրավասությունը հանձնարարի այլ պաշտոնատար անձի շահերի բախման վերաբերյալ գրավոր հայտարարությունը ստանալու պահից մեկամսյա ժամկետում:»<br>10) Նախագծի 35-րդ հոդվածի 2-րդ մասում «եկամուտների հայտարարագիր» բառերից հետո լրացնել «ծախսերի հայտարարագիր» բառերը:<br>11) Նախագծի 37-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությունը փոփոխել և շարադրել հետևյալ բովանդակությամբ.<br>«1. Հայտարարատու պաշտոնատար անձինք և նրանց ընտանիքի կազմի մեջ մտնող անձինք հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնական պարտականություններն ստանձնելու կամ | 1.Չի ընդունվել, քանի որ տվյալ դեպքում պաշտոնի անձնագրի փոփոխություն կարելի է կատարել վերակազմակերպման դեպքում: «Կառավարական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն վերակազմակերպում կարող է կատարվել միայն պետական մարմնի կանոնադրության փոփոխությամբ պայմանավորված գործառույթների փոփոխության դեպքում, ի տարբերություն ներկա վիճակի, երբ որևէ ընթացակարգ և պահանջ նախատեսված չէ: Հատևաբար տվյալ դեպքում վերակազմակերպում կիրականացվի կառավարության որոշման փոփոխության դեպքերում, ավելին | 2.ընդունվել է:<br><br>3.չի ընդունվել<br><br>5.ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 4. 23-րդ հոդվածի 5-րդ կետ | դադարեցնելու օրվա դրությամբ հայտարարագրերը այդ օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:»<br>12) Նախագիծը լրացնել նոր 39.1 հոդվածով հետրյալ բովանդակությամբ.<br>«Հոդված 39.1. Ծախսերի հայտարարագրման բովանդակությունը<br>1. Հայտարարատու պաշտոնատար անձի ծախսերի հայտարարագրում ընդգրկվում են հարկային տարում դրամով կամ արտարժույթով կատարված 2 միլիոն դրամը գերազանցող ծախսերը:<br>Սույն օրենքի իմաստով հայտարարագրման ենթակա ծախս է համարվում ճամփորդությունը, խնջույքը:»<br>13) Նախագիծի լրացնել նոր 39.2 հոդվածով հետրյալ բովանդակությամբ.<br>«Հոդված 39.2 Պարտադիր քննության ենթակա հարցեր<br>Պետական պաշտոն զբաղեցնելու ընթացքում բարձրաստիճան պաշտոնյայի և նրա հետ փոխկապակցված անձանց այն գույքի, դրամական միջոցների, բաժնեմասերի և բաժնետոմսերի ծագումնաբանությունը, որի գինը ձեռք բերելու պահին գերազանցում է այդ անձանց վերջին հինգ տարվա համատեղ աշխատավարձի 10-ապատիկը, պետք է Կոռուպցիայի կանխարգելման հարցերով հանձնաժողովում ենթարկվի հրապարակային և դռնբաց քննության»:<br>14) Նախագծի 42-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «Անչափահասի հայտարարագիրը հրապարակման ենթակա չէ» բառերը. | ապրիլից հետո ուժի մեջ մտնող մի շարք օրենքների կանոնակարգումների համաձայն գրեթե մեծամասամբ դեպքերում կանոնադրության փոփոխություն կկատարվի, եթե կատարվել է օրենքի փոփոխություն: Այսինքն եթե տեղի է ունեցել օրենքի փոփոխություն, այնուհետև կառավարության որոշման փոփոխություն և դրանով պայմանավորված քաղաքացիական ծառայողին առաջադրվել է այնպիսի պահանջներ, որոնք հնարավոր չէ բարելավել վերապատրաստման արդյունքում հետևաբար տվյալ քաղաքացիական ծառայողը պետք է ազատվի զբաղեցրած պաշտոնից: Բայց սա իմպերատիվ նորմ չէ, քանի որ այդ վերակազմակերպման դեպքում հնարավոր է որ վերջինիս այլ պաշտոն առաջարկվի, ինչը օրենքը թույլ է տալիս: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 1)Նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝<br>Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը կարող է փոփոխվել, եթե դա տվյալ պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար չի առաջացնում այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստման արդյունքում: | 2. ընդունվել և խմբագրվել է:<br><br>3. Չի ընդունվում:<br><br>5.իրացված է և օրենքը տալիս է հստակ հնարավորություն: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 2)Նախագծի 21-րդ հոդվածի 8-րդ մասում «օրենքի» բառը փոխարինել «հոդվածի» բառով:<br><br>3)Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝<br>Համապատասխան մարմնի վերակազմակերպումը և/կամ կառուցվածքային փոփոխությունը քաղաքացիական ծառայողին պաշտոնից ազատելու (լիազորությունները դադարեցնելու) հիմք չէ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ուղեկցվում են համապատասխան մարմնի վերակազմակերպմամբ և/կամ կառուցվածքային փոփոխությամբ պայմանավորված հաստիքների կրճատմամբ :<br>3) Նախագծի 23-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝<br>Վերակազմակերպմամբ և/կամ կառուցվածքային փոփոխությամբ պայմանավորված հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը տրվում է հղի կամ մինչև երեք տարեկան | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | երեխա խնամող կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության դեպքում քաղաքացիական ծառայության ավելի բարձր դասային աստիճան ունեցող քաղաքացիական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության դեպքում՝ քաղաքացիական ծառայության առավել երկար ստաժ ունեցող քաղաքացիական ծառայողին:<br>5) Առաջարկում ենք Նախագծում հստակ ամրագրել միջնակարգ կրթություն ունեցող քաղաքացու իրավունքը զբաղեցնելու քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթախմբերի պաշտոններ: | | |
| 9 | **ՀՀ ԱԺ պատգամավոր՝ Ռ. Մախմուդյան** | «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծի՝<br><br>1) 2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր, 41-րդ հոդվածի 4-րդ մաս | **1)** Նախագիծ 1-ին հոդվածի համաձայն՝ օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ծառայության կազմակերպման, պաշտոնների դասակարգման, պաշտոնների համալրման, քաղաքացիական ծառայողների կատարողականի գնահատման, վերապատրաստման, քաղաքացիական ծառայողի իրավական վիճակի, պաշտոնից ազատման, ծառայության դադարեցման, ինչպես նաև քաղաքացիական ծառայության՝ որպես պետական ծառայության առանձին տեսակի հետ կապված այլ հարաբերություններ, միևնույն ժամանակ, Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքի գործողությունը | 1. ընդունվել և խմբագրվել է: | 1.ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | տարածվում է նաեւ օրենսդիր իշխանության մարմնի վրա, ինչի արդյունքում՝ Ազգային ժողովի աշխատակազմում ծառայությունը հանդիսանալու է քաղաքացիական ծառայություն եւ կարգավորվելու է վերոնշյալ օրենքով, մինչդեռ՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի աշխատակազմում ծառայությունը պետական ծառայության տեսակ է, որի առանձնահատկությունները սահմանվում են Կանոնակարգով եւ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, իսկ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին: Ամփոփելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 88-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովը ժողովրդի ներկայացուցչական մարմինն է, իրականացնում է օրենսդիր իշխանությունը եւ վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, ընդունում է պետական բյուջեն եւ իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված այլ գործառույթներ, գործում է իր կանոնակարգին համապատասխան, իսկ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի համաձայն՝ Կառավարությունն իրականացնում է պետական կառավարման | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | համակարգի մարմինների ընդհանուր ղեկավարումը, որոնք են՝ նախարարությունները, Կառավարությանը, վարչապետին եւ նախարարություններին ենթակա այլ մարմինները, որոնց կազմավորման կարգը եւ լիազորությունները սահմանվում են օրենքով: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասից հանել «օրենսդիր,» բառը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի «չի տարածվում» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի,» բառերով, 41-րդ հոդվածի 4-րդ մասից հանել «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հունիսի 11-ի N ՀՕ-158-Ն օրենքը,» բառերը եւ առաջարկվող միասնական ձեւաչափը որդեգրելով՝ **օրենսդիր մարմնին վերաբերող կարգավորումները սահմանել առանձին փաթեթով: Բացի այդ, առաջարկված փոփոխության հիմք է հանդիսանում նաև Նախագծի 44-րդ հոդվածի 4-րդ մասը, համաձայն որի՝ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո օրենքից բխող այլ օրենքներում փոփոխությունները պետք է կատարվեն վեց ամսվա ընթացքում: Նախ՝ օրենքների փոփոխության համար հստակ վեց ամիս սահմանելը իրատեսական չէ, բացի այդ՝ ՀՀ Ազգային ժողովին առանձնահատկությունները սահմանող օրենքների նախագծերի փաթեթն առաջարկվում է ներկայացնել և ընդունել վերոնշյալ փոփոխությունների** | 2.ընդունվել և խմբագրվել է:<br><br>3) Քանի որ Կենտրոնական բանկը իրավաբանական անձ է և պետական մարմին չէ, այդ իսկ պատճառով նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքի գործողությունը չի տարածվում նրա վրա:Խմբագրվել է նաև ՄԻՊ-ի մասը և օրենքներին համապատասխան ընդգրկվել:<br><br>4)Չի ընդունվել: Դա միայն մեթոդաբանական ցուցումներին է վերաբերում և որևէ գործառնական ազդեցություն չկա: | 2.ընդունվել է:<br><br>3.ընունվել է:<br><br>4. չի ընդունվել: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 2) 2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր, 41-րդ հոդվածի 4-րդ մաս | **համատեքստում :**<br>2) Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքի գործողությունը տարածվում է նաեւ դատական իշխանության մարմնի վրա, այն դեպքում, երբ նույն հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ օրենքի գործողությունը չի տարածվում դատական ծառայողների, դատական կարգադրիչների վրա: Միեւնույն ժամանակ, Նախագծի 41-րդ հոդվածի համաձայն՝ ուժը կորցրած է ճանաչվում «Դատական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի հուլիսի 7-ի N ՀՕ-159-Ն օրենքը, հետեւաբար՝ անհրաժեշտ է հստակեցնել օրենքի գործողության շրջանակը՝ նշելով, թե «դատական իշխանության մարմին» եզրույթի ներքո, որ խմբի պաշտոններն են ի նկատի ունեցվել, և որն է նման կարգավորման տրամաբանությունը: | | |
| | | 3) 2-րդ հոդվածի 2-րդ մաս | 3)2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքի գործողությունը չի տարածվում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների, Կենտրոնական բանկի աշխատակիցների վրա, սակայն հիմնավորված չէ, թե ինչու է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված անկախ մարմիններից միայն այս երկուսի համար սահմանված բացառությունը: | 5) Երկքաղաքացին ևս համարվում է ՀՀ քաղաքացի: | 5) ընդունվել է: |
| | | 4) 3-րդ հոդվածի 1-ին մաս | 4)Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ քաղաքացիական ծառայության հետ կապված | 6) Հաշվի է առնվել և խմբագրվել է: | 6)ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, կառավարության, վարչապետի եւ քաղաքացիական ծառայութունը համակարգող փոխվարչապետի որոշումներով, ինչպես նաեւ այլ իրավական ակտերով, իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ համակարգող փոխվարչապետն ընդունում է իրավական ակտեր, որոնք աջակցում են քաղաքացիական ծառայության իրավահարաբերությունների մասնակիցներին պատշաճ կատարելու եւ պահպանելու սույն օրենքով եւ հանրային ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորումներից եւ կարգերից բխող պահանջները: Այսինքն՝ Նախագծի համատեքստում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմը եւս ղեկավարվելու է վարչապետի, կառավարության եւ համակարգող փոխվարչապետի կողմից՝ վերոհիշյալ մարմինների կողմից ընդունված որոշումների հիման վրա, ինչը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, քանի որ Սահմանադրության որեւէ դրույթից չի բխում, որ օրենսդրին առնչվող իրավահարաբերությունները կարող են որեւէ կերպ կարգավորվել կառավարության, | 7)Չի ընդունվել: Քաղաքացիական ծառայության հարաբերություններում կան ընդունված միջազգային եզրույթներ, որոնք համընդհանուր են այս հարաբերությունների համար: Այն նոր չէ մեր իրավակիրառ պրակտիկայում: Նախագծով սահմանված է, թե քաղաքացիական ծառայության հարաբերություններում ինչ ենք հասկանում կոմպետենցիա ասելով:<br>8) Չի ընդունվել:Ծրագիրը իր նպատակների համար աշխատացնում է ցանկացած մարմին, իսկ կենտրոնացված ձևով ապահովում է քաղաքացիական ծառայության գրասենյակը: | 7)չի ընդունվել<br>8)չի ընդունվել<br>9)ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | վարչապետի եւ քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետի որոշումներով, այլ ընդհակառակը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 88-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ: Բացի այդ՝ Նախագծի 3-րդ հոդվածում անհրաժեշտ է նաեւ ամրագրել, որ քաղաքացիական ծառայության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սահմանադրական օրենքներով՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածը: | 9) Ներկայացված նախագծով ևս Ազգային ժողովի նախագահը հաստատում է Աշխատակազմում պետական ծառայության պաշտոնների անվանացանկը, անձնագրերը, ինչպես նաեւ աշխատակազմի հաստիքացուցակը եւ աշխատողների պաշտոնային դրույքաչափերը: | |
| | | 5) 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ | 5) Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական ծառայող է հանդիսանում Հայաստանի Հանրապետության քաղաքացին: Առաջարկվում է հստակեցնել, թե արդյոք խոսքը միայն ՀՀ քաղաքացիների մասին է, թե երկքաղաքացին ևս կարող է հանդիսանալ քաղաքացիական ծառայող : | | 10)ընդունվել է: |
| | | 6) 4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ | 6) Առաջարկվում է հնարավորինս հստակեցնել և որոշակիացնել Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի (աշխատատեղի նկարագիր) հասկացությունը, համաձայն որի, այն է՝ համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող իրավական ակտերից եւ խնդիրներից բխող քաղաքացիական ծառայողի գործառույթներն, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրող եւ այդ գործառույթները արդյունավետ | | 11)չի ընդունվել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ ու կոմպետենցիաներ նախատեսող, սույն օրենքով սահմանված կարգով հաստատված փաստաթուղթ : | | |
| | | 7) 4-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետ | 7) Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը սահմանում է կոմպետենցիայի հասկացությունը, առաջարկվում է «կոմպետենցիա» բառը փոխարինել «իրավասություն» /Հրաչյա Աճառյանի բացատրական բառարանի համաձայն՝ կոմպետենցիան իրավասությունն է/ կամ այլ ալտերնատիվ գրական հայերեն եզրույթով: | 10) ընդունվել է: | |
| | | | | 11) Չի ընդունվել:Ըստ նախագծի համապատասխան մարմինը ձևավորում է քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի հարցերի շտեմարանը, որտեղից քաղաքացիական ծառայության գրասենյակը ընտրում է թեստի հարցերը: | 12) ընդունվել է: |
| | | 8) 4-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետ | 8) Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակը վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի (այսուհետ՝ քաղաքացիական ծառայության գրասենյակ) կողմից կառավարվող էլեկտրոնային ծրագիր է, ինչից բխում է, որ օրենսդիր եւ դատական իշխանության մարմինների վերաբերյալ տեղեկություններ պարունակող ծրագիրը կառավարվելու է գործադիր իշխանության կողմից, հետեւաբար՝ որոշակի վերահսկողություն իրականացնելով վերջիններիս նկատմամբ: | | 13)ընդունվել է:<br>14)ընդունվել է:<br>15)չի ընդունվել |
| | | 9) 5-րդ հոդվածի | 9) Նախագծի 5-րդ հոդվածի 5-րդ մասիհամաձայն՝ քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու | | 16) ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 5-րդ և 7-րդ մասեր | իրավական հիմքի առաջացման պահից մեկ ամսվա ընթացքում համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը, հաստատված մեթոդաբանությանը համապատասխան կազմված եւ փաստաթղթերով հիմնավորված առաջարկությունը, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի նախագծերի հետ միասին ներկայացնում է քաղաքացիական ծառայության գրասենյակ եւ քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությունն ստանալուց հետո պաշտոնը ներառվում (հանվում) է քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակ, եւ հաստատվում է պաշտոնի անձնագիրը, նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական ծառայության պաշտոնի գնահատման, դասակարգման, անվանումների, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի կազմման, պաշտոնների ընդհանուր համակարգում տեղակայման, իրավունքների ու պարտականությունների, անվանացանկի վարման, ինչպես նաեւ տվյալ քաղաքացիական ծառայության պաշտոնը զբաղեցնելու համար քաղաքացիական ծառայողին մասնագիտական գիտելիքների ու կոմպետենցիաների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներ սահմանելու մեթոդաբանությունը հաստատում է համակարգող փոխվարչապետը: Այսինքն՝ այս դեպքում եւս օրենսդիրը պարտավորվում է առաջնորդվել գործադրի կողմից հաստատված որոշմամբ՝ մեթոդաբանությամբ, այսինքն՝ օրենսդիր մարմինն իր աշխատանքների կազմակերպման գործընթացում պետք է | 12) ՀՀ ԱԺ պատգամավորի կողմից ներկայացված առաջարկության համաձայն՝ նախագծի 10-րդ հոդվածի 11-րդ մասը խմբագրվել է և հարցը կարգավորվելու է ենթաօրենսդրական ակտով:<br><br>13) չի ընդունվել:<br><br>14) ընդունվել է:<br><br>15) Քաղաքացիական ծառայության բազմազանության պայմաններում օրենսդրությամբ ամրագրելը համարում ենք ոչ նպատակահարմար:<br><br>16) ընդունվել է:<br><br>17) ընդունվել և խմբագրվել է: | 17) ընդունվել է:<br><br>18) ընդունվել է:<br><br>19) ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | առաջնորդվի փոխվարչապետի որոշմամբ, բացի այդ՝ ներկայումս «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետի համաձայն՝ Ազգային ժողովի նախագահը հաստատում է Աշխատակազմում պետական ծառայության պաշտոնների անվանացանկը, անձնագրերը, ինչպես նաեւ Աշխատակազմի հաստիքացուցակը եւ աշխատողների պաշտոնային դրույքաչափերը: Հետեւաբար՝ Նախագծով կարգավորվող վերոնշյալ իրավահարաբերությունները հակասում են «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքին, իսկ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին: | | 20) ընդունվել է:<br><br>21) չի ընդունվել |
| | | 10) 7-րդ հոդված | **10)** Նախագծի 7-րդ հոդվածի «անհրաժեշտ է» բառերն առաջարկում ենք փոխարինել «անհրաժեշտ են» բառերով՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 6-րդ մասի կանոնները: | 18) ընդունվել է: | |
| | | 11) 10-րդ հոդվածի 9-րդ, 22-րդ և 23-րդ մասեր հոդվածի | 11)Նախագծի 10-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ թեստերում կոմպետենցիաների վերաբերյալ առաջադրանքները կազմում եւ քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում տեղադրում է քաղաքացիական ծառայության գրասենյակը, 22-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթ անցկացնելու կարգը սահմանում է կառավարությունը, իսկ 23-րդ մասի համաձայն՝ թեստերի կազմման, թեստային | 19) խմբագրվել է: | 1.ընդունվել է:<br><br>2. չի ընդունվել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 12) 10-րդ հոդվածի 11-րդ մաս | առաջադրանքների ձեւավորման, թեստային առաջադրանքների բովանդակային առանձնահատկությունները, թեստային առաջադրանքների քանակը, հարցազրույցի անցկացման մեթոդաբանությունը եւ ձեւաչափը սահմանում է համակարգող փոխվարչապետը, ինչից բխում է, որ հերթական անգամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմը պարտավորվում է առաջնորդվել Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշմամբ, եւ Կառավարությունը միջամտում է Ազգային ժողովի աշխատանքների կազմակերպման ընթացակարգին՝ հերթական անգամ հակասելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքին: Նույնաբնույթ կարգավորումներ են պարունակում Նախագծի 11-րդ հոդվածի 11-րդ եւ 12-րդ մասերը, 12-րդ հոդվածի 10-րդ եւ 11-րդ մասերը, 13-րդ հոդվածի 4-րդ մասը, 17-րդ հոդվածի 3-րդ մասը, 18-րդ հոդվածի 5-րդ մասը, 19-րդ հոդվածի 10-րդ մասը, 22-րդ հոդվածի 9-րդ մասը, 24-րդ հոդվածի 11-րդ մասը, 25-րդ հոդվածի 3-րդ մասը, 30-րդ հոդվածի 5-րդ մասը, 33-րդ հոդվածի 1-ին մասը:<br>12) Նախագծի 10-րդ հոդվածի 11-րդ մասում առաջարկում ենք նշել, թե ինչ ժամկետում կարող է մրցույթի մասնակիցը մրցույթի արդյունքների վերաբերյալ բողոք ներկայացնել Գլխավոր քարտուղարին եւ համակարգող փոխվարչապետին: | 20) ընդունվել և խմբագրվել է:<br><br>21) Եվրոպական փորձին համահունչ՝ Քաղաքացիական ծառայության պաշտոնների դասային աստիճաններ նախատեսվում են միայն բարձրագույն խմբի համար:<br><br>1. ընդունվել է:<br><br>2. չի ընդունվել: | 3.չի ընդունվել<br><br>4. ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 13) 17-րդ հոդված<br><br>14) 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետ<br>15) 28-րդ հոդվածի 1-ին մաս<br><br>16) 31-րդ հոդված 1-ին մաս<br><br>17) 38-րդ հոդված | 13) Առաջարկվում է Նախագծի 17-րդ հոդվածով սահմանված քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու փորձաշրջանի 12, 9 և 6 ամիսները նվազեցնել փորձաշրջանի համար համապատասխանաբար սահմանելով՝ 6,6 և 3 ամիս:<br>14) Նախագծի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետն ունի երկու «բ» կետ: Առաջարկում ենք երկրորդ «բ» կետը դարձնել «գ» կետ<br>15) Առաջարկվում է վերախմբագրել եւ հստակեցնել Նախագծի 28-րդ հոդվածի 1-ին մասը, որը թերի է սահմանում, թե որն է քաղաքացիական ծառայողի աշխատանքային ժամը, ինչպես նաև այն նախատեսել Նախագծի 4-րդ հոդվածում՝ որպես հիմնական հասկացություն:<br><br>16) 31-րդ հոդված 1-ին մասում տրվում է քաղաքացիական ծառայության ստաժի հասկացությունը, առաջարկում ենք այն սահմանել Նախագծի 4-րդ հոդվածում՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը:<br>17) Նախագծի 38-րդ հոդվածը սահմանում է, որ քաղաքացիական ծառայության ղեկավարումը, միասնականությունը ապահովվում է վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը, որը հաշվետու է վարչապետին, կառավարությանը եւ համակարգող փոխվարչապետին: Բացի այդ՝ | 3. չի ընդունվել:Քանի որ հաստիքների թիվը անմիջական կապ ունի պետական բյուջեի հետ, այդ իսկ պատճառով պետական իշխանության մարմիններում հաստիքների առավելագույն թվաքանակը որոշում է վարչապետը:<br><br>4. ընդունվել է: | 5.ընդունվել է:<br><br>6.ընդունվել է:<br><br>6.ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 18) 10-րդ գլուխ | քաղաքացիական ծառայության գրասենյակն իրականացնում է համապատասխան մարմինների մարդկային ռեսուրսների կառավարման մեթոդական ղեկավարում, վերահսկողություն եւ մի շարք այլ անկյունաքարային գործառույթեր: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի եւ նրա մարմինների լիազորությունների ու գործառույթների իրականացմանն ուղղված մասնագիտական սպասարկումը, այդ թվում՝ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվող նախագծերի կամ այլ փաստաթղթերի ձեւակերպմանն ուղղված մասնագիտական աջակցությունը, ինչպես նաեւ նյութատեխնիկական ապահովումն իրականացնում է Աշխատակազմը: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում ծառայությունը պետական ծառայության տեսակ է, որի առանձնահատկությունները սահմանվում են Կանոնակարգով եւ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Ազգային ժողովի աշխատակազմի միջոցով եւ օգնությամբ են Ազգային ժողովը, նրա մարմինները եւ պատգամավորներն իրականացնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանբ նախատեսված իրենց լիազորությունները:<br>18)Նախագիծն ունի երկու 10-րդ գլուխ, որոնցից երկրորդն առաջարկում ենք դարձնել | 5. խմբագրվել է:<br><br>6. Խմբագրվել է: | 8. ընդունվել է:<br><br>9.ընդունվել է:<br><br>1. չի ընդունվել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 11-րդ գլուխ: | | |
| | | 19) 44-րդ հոդված | 19) Նախագծի 44-րդ հոդվածը սահմանում է, որ քաղաքացիական ծառայության գրասենյակի կազմավորումից հետո մեկամսյա ժամկետում վարչապետի հաստատմանն է ներկայացվում ժամանակացույց եւ միջոցառումների ծրագիր օրենքի գործողության ոլորտը սահմանված մարմինների վրա տարածելու համար՝ վերջնաժամկետ ունենալով 2019 թվականի դեկտեմբերի վերջին տասնօրյակը: Այսինքն՝ այս դեպքում ևս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը պարտավորվում է առաջնորդվել վարչապետի որոշմամբ: | 7. խմբագրվել է:<br>8. ընդունվել է: | 2.ընդունվել է:<br>3.ընդունվել է: |
| | | 20) 49-րդ, 50-րդ հոդվածներ | 20) Նախագծի 49-րդ հոդվածն առաջարկում ենք դարձնել 48-րդ, իսկ 50-րդ հոդվածը՝ 49-րդ հոդված: | 9.ընդունվել է: | |
| | | 21) օրենքի նախագիծ | 21) Ներկայացված Նախագծի համատեքստում այլևս չեն նախատեսվում Քաղաքացիական ծառայության պաշտոնների դասային աստիճանները: Առաջարկվում է պահպանել ներկայումս գործող դասային աստիճանների համակարգը, հաշվի առնելով, որ դրանց հիման վրա մի շարք առանձնահատկություններ են սահմանվում /օրինակ՝ աշխատավարձի հավելավճար, կրճատումների ժամանակ նախապատվություն է տրվում առավել բարձր դասային աստիճան ունեցողին և այլն/, ինչպես նաև անհավասար պայմաններ կսահմանվեն նախկին և նոր համակարգով աշխատանքի ընդունված քաղաքացիական ծառայողների միջև: Բացի այդ, Նախագծով հստակ սահմանված չէ, թե ինչպես են | 1.Չի ընդունվել: | 4. ընդունվել է:<br>5.ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | «Հանրային ծառաության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝<br><br>1. օրենքի նախագիծ<br><br>2. 3-րդ հոդվածի 3-րդ մաս | Նախագծով սահմանված պաշտոնների խմբերը համապատասխանեցվելու քաղաքացիական ծառայության համակարգով սահմանված պաշտոնների դասակարգմանը և դասային աստիճաններին:<br><br>1.Նախագծում կիրառվում են մի շարք եզույթներ ու հասկացություններ, որոնց իմաստային նշանակությունը բացահայտվում է հոդվածների համատեքստում, հետեւաբար առաջարկում ենք նախագիծը լրացնել նոր՝ հասկացություններ սահմանող հոդվածով՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասը:<br>2. Առաջարկվում է Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մասում պետք է ընդգրկվել նաեւ Ազգային ժողովի աշխատակազմում ծառայությունը, մինչեւ՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրակա ն օրենքում և կից օրենքներում համապատասխան փոփոխություններ կատարելը ինչպես նմանաբնույթ կարգավորում սահմանվել է նախագծի 59-րդ հոդվածով արվել է 35-րդ | 2. ընդունվել է:<br><br>3. ընդունվել և խմբագրվել է:<br><br>4.ընդունվել և խմբագրվել է: | 1. չի ընդունվել<br><br>2.ընդունվել է:<br><br>3. Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 3. 4-րդ հոդվածի 4-րդ մաս | հոդվածի 1-ին մասի համար: 3. Նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ պետական իշխանության մարմիններում հաստիքների առավելագույն թվաքանակը որոշում է վարչապետը: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետության վարչապետը, ի թիվս այլ մարմինների, սահմանում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի առավելագույն թվաքանակը, մինչդեռ՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետի համաձայն՝ Ազգային ժողովի նախագահն է հաստատում Ազգային ժողովի աշխատակազմի հաստիքացուցակը: Հետեւաբար, վերոնշյալ դրույթը հակասում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքին, իսկ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, իսկ օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին: | 5. խմբագրվել է:<br><br>1. չի ընդունվել:<br><br>2. ընդունվել է ի գիտություն:<br><br>3. Ընդունվել է: | 1. ընդունվել է:<br><br>2. չի ընդունվել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 4. 5-րդ հոդվածի 5-րդ մաս | 4. Նախագծի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Նախարարի կամ մարզպետի կամ համայնքի ղեկավարի փոփոխության դեպքում համապատասխանաբար նախարարի կամ մարզպետի կամ համայնքի ղեկավարի տեղակալները, որպես ժամանակավոր պաշտոնակատարներ, շարունակում են պաշտոնավարել մինչեւ իրենց պաշտոնում նոր նշանակում կատարելը: Նախարարի կամ մարզպետի կամ համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում նոր նշանակումը կատարվում է համապատասխանաբար նախարարի կամ մարզպետի նշանակման օրվանից մեկ ամսվա ընթացքում: Առաջարկվում է վերանայել վերոնշյալ կարգավորում, քանի որ դրա համատեքստում նախարարի կամ մարզպետի կամ համայնքի ղեկավարի տեղակալների պաշտոնները կորցնում են իրենց քաղաքական բնույթը և կարգավորմամբ չեն տարբերակվում հայեցողականն պաշտոններից, ինչպես սահմանված է Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ հայեցողական պաշտոն զբաղեցնող անձն իր անմիջական | 1. Օրենքի այլ հոդվածներում բացված է:<br><br>2. Չի ընդունվել: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 5. 8-րդ հոդվածի 5-րդ մաս<br><br>6. 10-րդ հոդվածի 1-ին մաս | ղեկավարի փոփոխության դեպքում շարունակում է պաշտոնավարել մինչեւ իր պաշտոնում նոր նշանակում կատարելը: Հայեցողական պաշտոնում նոր նշանակումը կատարվում է հայեցողական պաշտոն զբաղեցնող անձի անմիջական ղեկավարի նշանակման օրվանից մեկ ամսվա ընթացքում:<br>5. Նախագծի 8-րդ հոդվածի 5-րդ մասում «հինգը» բառը փոխարինել «հինգ» բառով, Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի «չորսը» բառը երկու տեղերում փոխարինել «չորս» բառով, 10-րդ հոդվածի 3-րդ մասի «հրապարակվում է» բառերը փոխարինել «հրապարակվում են» բառերով, 10-րդ հոդվածի 9-րդ մասի «վերաբերվում են» բառերը փոխարինել «վերաբերում են» բառերով, 10-րդ հոդվածի 12-րդ մասի «մասնակիցին» բառը փոխարինել «մասնակցին» բառով, 21-րդ հոդվածի 6-րդ մասի «որի» բառը փոխարինել «որոնց» բառով եւ 37-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետի «հաստատված» բառը փոխարինել «հաստատած» բառով՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 6- | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 7. 25-րդ հոդվածի 1-ին մաս<br><br>8. 30-րդ հոդվածի 1-ին մաս<br><br>9. 39-րդ հոդվածի 2-րդ մասի | րդ մասի կանոնները: 6. Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության» (օգտագործվում է երեք անգամ) եւ «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության» բառերն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ նախարարությանը ենթակա մարմնի ենթակայությունը համապատասխան նախարարությանը սահմանում է Կառավարությունը:<br>**7.** «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 25-րդ հոդվածի 1-ին մասի «գործադրում են» բառերն առաջարկում ենք փոխարինել «պարտավոր են գործադրել» բառերով՝ նման փոփոխություններ կատարելով նաեւ նույն նախագծի 25-րդ հոդվածի 2-րդ մասում, 26-րդ հոդվածի 1-2-րդ մասերում, 27-րդ հոդվածի 1-2-րդ մասերում, 28-րդ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի նախագծի՝<br><br>1) 10-րդ հոդվածի 7-րդ մաս | հոդվածի 1-ին մասում, իսկ 28-րդ հոդվածի 2-րդ մասի «քաղաքականապես չեզոք են» բառերն առաջարկում ենք փոխարինել «պարտավոր են դրսեւորել քաղաքական չեզոքություն» բառերով:<br>8. Նախագծի 30-րդ հոդվածի 1-ին մասի եւ 45-րդ հոդվածի 2-րդ մասի կետերն առաջարկում ենք ճիշտ համարակալել:<br>9. Նախագծի 39-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության երկրորդ նախադասության բովանդակությունն առաջարկում ենք համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքին:<br><br>1) Նախագծի 10-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ պետական մարմնի ղեկավարի հրամանով գլխավոր քարտուղարին է վերապահվում օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործառույթների եւ աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգումը, մինչդեռ 12-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գլխավոր քարտուղարն | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 2. 10-րդ հոդվածի 12-րդ մասի 13-րդ կետ<br><br>3) Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մաս<br><br>4) 14-րդ հոդվածի 1-ի մաս | օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատու է պետական մարմնի լիազորությունների իրականացման կազմակերպական, անձնակազմի կառավարման, ֆինանսատնտեսական գործառույթների իրականացման եւ քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակցության համար, այսինքն՝ վերոնշյալ մարմինների գործունեության համակարգումը գլխավոր քարտուղարին արդեն իսկ վերապահվում է օրենքով, ուստի՝ առաջարկում ենք այս նախագծից հանել 10-րդ հոդվածի 7-րդ մասը՝ գլխավոր քարտուղարի կողմից համակարգման իրավասությունն ուղղակիորեն ամագրելով Նախագծի 12-րդ հոդվածի 2-րդ մասում:<br>2) Նախագծի 10-րդ հոդվածի 12-րդ մասի 13-րդ կետից բխում է, որ օրենքից բացի՝ իրավական այլ ակտերով եւս պետական մարմնի ղեկավարին կարող են վերապահվել լիազորություններ, ինչը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասին, համաձայն որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:<br>Նման խնդիրներ են առկա նաեւ նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում, 15-րդ հոդվածի 9-րդ մասի 15-րդ կետում եւ 16-րդ հոդվածի 11-րդ մասի 12-րդ կետում:<br>3) Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրությամբ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 5) 16-րդ հոդվածի 8-րդ մաս<br><br>«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հարապետության օրենքի նախագծի՝<br><br>1. 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ | նախատեսված պաշտոնատար անձինք՝ Հանրապետության նախագահը, վարչապետը, իրենց սահմանադրական կարգավիճակով պայմանավորված պետական մարմին են, մինչդեռ՝ ՀՀ Սահմանադրության համաձայն՝ որպես պետական մարմին նախատեսված են միայն անկախ մարմինները, հետևաբար՝ առաջարկվում է վերախմբագրել վերոնշյալ դրույթը:<br><br>4) Նախագծի 14-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ պաշտոնատար անձն օրենքով, իրավական այլ ակտերով եւ իր աշխատակազմի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին եւ խնդիրներին համապատասխան՝ իրականացնում է իր աշխատակազմի կառավարումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «պաշտոնատար անձ» հասկացությունը կիրառվում է մի շարք օրենքներում առաջարկվում է վերոնշյալ դրույթում լրացնել «սույն օրենքի իմաստով» բառերը:<br>5) Նախագծի 16-րդ հոդվածի 8-րդ մասի «9-րդ մասով» բառերն առաջարկում ենք փոխարինել «9-րդ եւ 10-րդ մասերով» բառերով՝ համապատասխան հղում ճշգրտելու պատակով: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 2. 22-րդ հոդվածի 2-րդ մաս<br><br>3. հավելված 1<br><br>«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման | 1. Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ե» ենթակետն «այդ թվում՝» բառերից հետո առաջարկում ենք լրացնել «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում» բառերը՝ հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 160-րդ հոդվածը:<br>2. Նախագծի 22-րդ հոդվածի 2-րդ մասում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասում «քաղաքացիական» բառն օգտագործվում է երեք անգամ, իսկ Նախագծում հստակեցված չէ, թե խոսքը որ «քաղաքացիական» բառի մասին է:<br>3. Նախագծի հավելված 1-ում սահմանված չեն սահմանադրական դատարանի նախագահի խորհրդականի, մամուլի քարտուղարի, օգնականի եւ ռեֆերենտի պաշտոնների աշխատավարձերի դրույքաչափերը: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝<br><br>1. 2-րդ հոդվածում<br><br>2. 4-րդ հոդված | 1. Նախագծի 2-րդ հոդվածում նախատեսված հապավումները՝ ԶԿԴ, ՀՎՀՀ, առաջարկում ենք բացել՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 11-րդ մասը:<br>2. Նախագծի 4-րդ հոդվածի համաձայն՝ պետական մարմնի պետական հաշվառման համար պետական մարմնի գլխավոր քարտուղարը (աշխատակազմի ղեկավարը) կամ սույն օրենքով նախատեսված դեպքում պետական մարմնի ղեկավարը ներկայացնում է դիմում, սակայն սահմանված չէ, թե ինչ ժամկետներում այդ դիմումը պետք է ներկայացվի: | | |
| 10 | ՀՀ կառավարություն | «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծի՝<br>1) Հոդված1-ին | 1)Հոդված 1-ի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝<br>1. Սույն օրենքով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության սկզբունքները, հանրային ծառայության անցնելու պահանջները, հանրային պաշտոնների դասակարգումը, հանրային ծառայողի հիմնական իրավունքները և պարտականությունները, սոցիալական երաշխիքները, պաշտոնների առանձնահատկությունները, բարեվարքության համակարգը, կարգավորվում գույքի, եկամուտների և | 1) Առաջարկությունն ընդունվել է. Նախագծի նշված կետը շարադրվել է առաջարկվող խմբագրությամբ: | 1)Ընդունվել է:<br><br>2)Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 2) Հոդված 2-րդ<br><br>3) Հոդված 3-րդ կետ 3 | շահերի հայտարարագրման հետ կապված հարաբերությունները:<br><br>2)հոդված 2-ի 3-րդ կետը խմբագրվել:<br><br>3)հոդված 3-ի 3-րդ կետը խմբագրել հետևյալ կերպ՝<br>3. Պետական ծառայությունն ընդգրկում է դատական ծառայությունը, քաղաքացիական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, մաքսային ծառայությունը, հարկային ծառայությունը, փրկարար ծառայությունը, զինվորական ծառայությունը (բացառությամբ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչի միջոցով իրականացվող շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունը), ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը, ոստիկանությունում ծառայությունը, քրեակատարողական ծառայությունը, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, դատական կարգադրիչների ծառայությունը:<br><br>4) Հոդված 3-ի 6-րդ կետը շարադրել հետևյալ կերպ՝<br>6. Հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող կամ օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական կամ համայնքային ծառայության կադրերի համապատասխան ռեզերվում գտնվող անձը համարվում է հանրային ծառայող:<br><br>5) Հոդված 3-ի 7-րդ կետը շարադրել հետևյալ | 2)Ընդունվել է:<br><br>3)Ընդունվել է:<br><br>4)Ընդունվել է:<br><br>5)Ընդունվել է:<br><br>6)Ընդունվել է:<br><br>7)Ընդունվել է: | 3)Ընդունվել է:<br><br>4)Ընդունվել է:<br><br>5)Ընդունվել է:<br><br>6)Ընդունվել է:<br><br>7)Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 4) Հոդված 3-րդ կետ 6<br><br>5) Հոդված 3-րդ կետ 7<br><br>6) Հոդված 6-րդ կետ 8<br><br>7) Հոդված 7-րդ կետ 3 | կերպ՝<br>7. Հանրային ծառայության յուրաքանչյուր պաշտոն ունի անվանում, որը հնարավորինս ճշգրիտ արտացոլում է տվյալ պաշտոնի հիմնական գործառույթները և չի կրում ընդհանրական բնույթ:<br><br>6) 6-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ մասով.<br>« 8. Վարչական պաշտոն զբաղեցնող աշխատակազմի ղեկավարները պաշտոնավարում են մինչև 65 տարին լրանալը»:<br><br>7) Հոդված 7-ի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.<br>«3. Ինքնավար պաշտոններն են՝ Մարդու իրավունքների պաշտպանի, Սահմանադրական դատարանի դատավորների, անկախ պետական մարմինների անդամների, ինքնավար մարմինների անդամների, Վիճակագրական պետական խորհրդի անդամների, վճռաբեկ, վերաքննիչ և առաջին ատյանի դատարանների դատավորների, գլխավոր դատախազի և դատախազների, քննչական մարմինների ղեկավարների և ղեկավարների տեղակալների, քննիչների, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավարի պաշտոնները»:<br><br>8) Հոդված 8-ի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.<br>« 1. Հայեցողական պաշտոնը նշանակովի պաշտոն է, որն զբաղեցնող անձն իրեն | 8)Ընդունվել է:<br><br>9)Ընդունվել է: | 8)Ընդունվել է:<br><br>9)Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 8) Հոդված 8-րդ կետ1<br><br>9) Հոդված 8-րդ կետ 3 | վերապահված լիազորությունների շրջանակներում կատարում է իր անմիջական ղեկավարի հանձնարարականները և պատասխանատվություն է կրում այդ հանձնարարականների կատարման համար»:<br><br>9) Հոդված 8-ի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.<br>« 3. Պետական հայեցողական պաշտոններ են Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, փոխվարչապետների խորհրդականի, մամուլի քարտուղարի, օգնականի և ռեֆերենտի պաշտոնները, Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչների պաշտոնները, Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդականի և օգնականի պաշտոնները, Սահմանադրական դատարանի մամուլի քարտուղարի, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդականի, մամուլի քարտուղարի, օգնականի պաշտոնները, վարչապետի գլխավոր խորհրդականի պաշտոնը, հատուկ հանձնարարություններով դեսպանի պաշտոնը, նախարարների, Ազգային ժողովի նախագահի տեղակալների, գլխավոր դատախազի, կառավարությանը, վարչապետին ենթակա պետական մարմինների ղեկավարների, անկախ պետական մարմնի, ինքնավար պետական մարմնի նախագահների, մարզպետի խորհրդականի, օգնականի պաշտոնները, գլխավոր դատախազի, նախարարների մամուլի քարտուղարի պաշտոնները, նախարարությանն ենթակա պետական | 10)Ընդունվել է:<br><br>11)Ընդունվել է: | 10)Ընդունվել է:<br><br>11)Ընդունվել է:<br><br>12)Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մարմնի, տեսչական մարմնի ղեկավարի օգնականի պաշտոնները, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի մամուլի քարտուղարի, Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի, վարչապետի աշխատակազմի ղեկավարի, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի օգնականի, Ազգային ժողովի խմբակցության փորձագետի, Ազգային ժողովի պատգամավորի վճարովի հիմունքներով օգնականի պաշտոնները, վարչապետի ռեֆերենտների խմբի ղեկավարի պաշտոնը, վարչապետի արարողակարգի պատասխանատուի, փոխվարչապետի արարողակարգի պատասխանատուի պաշտոնները, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի դեպարտամենտի, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացման համակարգողի, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մարզային ստորաբաժանման ղեկավարի, Մարդու իրավունքների պաշտպանի խորհրդականի, օգնականի և մամուլի քարտուղարի պաշտոնները, գլխավոր դատախազի տեղակալի, նախարարի տեղակալի, կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա պետական մարմինների ղեկավարների տեղակալների, անկախ պետական մարմնի նախագահի տեղակալի, ինքնավար մարմնի նախագահի տեղակալի, մարզպետի տեղակալի օգնականի պաշտոնները և  անկախ պետական մարմնի, ինքնավար մարմնի անդամների օգնականի պաշտոնները»: | 12)Ընդունվել է:<br><br>13)Ընդունվել է<br><br>14)Ընդունվել է<br><br>15)Առաջարկությունն ամբողջությամբ | 13)Ընդունվել է<br><br>14)Ընդունվել է:<br><br>15)Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 10) Հոդված 8-ի 6-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.<br>« 6. Սույն հոդվածով նախատեսված օգնականի, ռեֆերենտի, վարչապետի ռեֆերենտների խմբի ղեկավարի, վարչապետի արարողակարգի պատասխանատուի, փոխվարչապետի արարողակարգի պատասխանատուի պաշտոն կարող է զբաղեցնել բարձրագույն կրթություն ունեցող անձը»:<br><br>11) Հոդված 8-ի 8-րդ կետը խմբագրել հետևյալ կերպ՝<br>« Խորհրդականի պաշտոնի համար նախատեսվում է պաշտոնի անձնագիր, որի համար չափանիշներ սահմանում է այն պաշտոնատար անձը, ում անմիջական ենթակայությամբ աշխատելու է խորհրդականը: Պաշտոնի անձնագիրը ներկայացված չափանիշներին համապատասխան հաստատում է տվյալ մարմնի գլխավոր քարտուղարը (աշխատակազմի ղեկավարը)»:<br><br>12) Հոդված 8-ի 9-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.<br>« 9. Խորհրդականի պաշտոն զբաղեցնող անձը պաշտոնի է նշանակվում առանց մրցույթի՝ բավարարելով տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պահանջները»:<br>13) Հոդված 8-ի 10-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.<br>«10. Նախագահը և վարչապետը կարող են ունենալ նաեւ հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականներ: Նախագահի՝ | ընդունվել է. | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 10) Հոդված 8-րդ կետ 6<br><br>11) Հոդված 8-րդ կետ 8<br><br>12) Հոդված 8-րդ | հասարակական հիմունքներով խորհրդականների թիվը չի կարող գերազանցել 2-ը: Վարչապետի համաձայնությամբ փոխվարչապետները և նախարարները կարող են ունենալ հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականներ: Հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականները պաշտոնատար անձինք չեն: Հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականները չեն վարձատրվում, չունեն նորմավորված աշխատանքի և աշխատաժամանակի ռեժիմ: Հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականները մասնագիտական խորհրդատվություն են տրամադրում հասարակական հարաբերությունների որոշակի բնագավառի վերաբերյալ: Վարչապետի՝ հասարակական հիմքունքներով խորհրդականները կարող են ընդգրկվել վարչապետի կողմից ստեղծվող հանձնաժողովներում: Հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականները չեն կարող կատարել «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված աշխատանքները»:<br><br>14) Հոդված 8-ի 11-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.<br>«11. Այն մարմիններում, որտեղ սահմանված չէ մամուլի քարտուղարի պաշտոն և առկա չէ հասարակայնության հետ կապերի ստորաբաժանում, այդ մարմիններում մամուլի քարտուղարի պարտականությունների կատարումը մարմնի | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | կետ 9<br><br><br><br><br>13) Հոդված 8-րդ կետ 10 | ղեկավարի հրամանով կարող է վերապահվել մարմնի ղեկավարի օգնականին: Այս դեպքում սույն հոդվածով սահմանված չափանիշները պարտադիր չեն»:<br><br>15) 9-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.<br><br>1. Նախարարի տեղակալին նախարարի առաջարկությամբ պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետը:<br>2. Կառավարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարին վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է Կառավարությունը՝ բացառությամբ տեսչական մարմինների:<br>3. Տեսչական մարմինի ղեկավարին Տեսչական մարմնի կառավարման խորհրդի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը:<br>4. Կառավարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալին Կառավարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:<br>5. Վարչապետին ենթակա պետական մարմնի ղեկավարին նշանակում և ազատում է վարչապետը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:<br>6. Վարչապետին ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալին վարչապետին ենթակա պետական մարմնի ղեկավարի առաջարկությամբ նշանակում և | 16)Ընդունվել է<br><br>17)Ընդունվել է | 16)Ընդունվել է:<br><br>17)Ընդունվել է:<br><br>18)Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 14) Հոդված 8-րդ կետ 11<br><br>15) Հոդված 9 | ազատում է վարչապետը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:<br>7. Նախարարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարին համապատասխան նախարարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:<br>8. Նախարարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալին նախարարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարի առաջարկությամբ նշանակում և ազատում է համապատասխան նախարարը:<br>9. Մարզպետների տեղակալներին մարզպետի առաջարկությամբ պաշտոնի նշանակում և ազատում է վարչապետը:<br>10. Պետական հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց նշանակում և ազատում է այն պետական մարմնի ղեկավարը կամ ենթակա պետական մարմնի ղեկավարը, որտեղ վերջիններս գտնվելու են աշխատանքային հարաբերությունների մեջ, բացառությամբ սույն հոդվածի 14-րդ մասով նախատեսված դեպքերի:<br>11. Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարին և նրա տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հանրապետության նախագահը:<br>12. Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարին և նրա տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Ազգային ժողովի նախագահը:<br>13. Վարչապետի | 18)Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | աշխատակազմի ղեկավարին և նրա տեղակալներին, վարչապետի աշխատակազմի գրասենյակի ղեկավարին, բացառությամբ փոխվարչապետի գրասենյակի ղեկավարի, պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետը:<br>14. Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի օգնականին պաշտոնի նշանակում և ազատում է Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարը: Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի օգնականին պաշտոնի նշանակում և ազատում է Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը: Վարչապետի աշխատակազմի ղեկավարի օգնականին պաշտոնի նշանակում և ազատում է վարչապետի աշխատակազմի ղեկավարը: Փոխվարչապետի գրասենյակի ղեկավարին, խորհրդականին, օգնականին, մամուլի քարտուղարին, ռեֆերենտին, արարողակարգի պատասխանատուին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համապատասխան փոխվարչապետը: Անվտանգության խորհրդի քարտուղարի օգնականին, խորհրդականին և մամուլի քարտուղարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Անվտանգության խորհրդի քարտուղարը:<br>15. Համայնքային վարչական և համայնքային հայեցողական պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է համայնքի ղեկավարը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:<br>16. Նախարարին, Անվտանգության խորհրդի քարտուղարին, | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Կառավարությանն ենթակա պետական մարմնի ղեկավարին, Վարչապետի աշխատակազմի ղեկավարին, Տեսչական մարմինի ղեկավարին, Վարչապետին ենթակա պետական մարմնի ղեկավարին, մարզպետին, վարչապետի աշխատակազմի գրասենյակի ղեկավարին, բացառությամբ փոխվարչապետի գրասենյակի ղեկավարի, արձակուրդ տրամադրում է վարչապետը:<br>17. Նախարարի տեղակալին կառավարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալին, Տեսչական մարմինի ղեկավարի տեղակալին, Վարչապետին ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալին, մարզպետի տեղակալին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է անմիջական ղեկավարը:<br>18. Նախարարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է համապատասխան նախարարը, իսկ Նախարարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է անմիջական ղեկավարը:<br>19. Պետական հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է անմիջական ղեկավարն, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:<br>20. Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է Հանրապետության Նախագահը, | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | իսկ աշխատակազմի ղեկավարի տեղակալներին, աշխատակազմի ղեկավարի օգնականին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարը:<br>21. Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է Ազգային ժողովի նախագահը, իսկ աշխատակազմի ղեկավարի տեղակալներին, աշխատակազմի ղեկավարի օգնականին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը:<br>22. Վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալներին, աշխատակազմի ղեկավարի օգնականին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է վարչապետի աշխատակազմի ղեկավարը:<br>23. Փոխվարչապետի գրասենյակի ղեկավարին, խորհրդականին, օգնականին, մամուլի քարտուղարին, ռեֆերենտին, արարողակարգի պատասխանատուին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է համապատասխան փոխվարչապետը:<br>24. Անվտանգության խորհրդի քարտուղարի օգնականին, խորհրդականին և մամուլի քարտուղարին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է Անվտանգության խորհրդի քարտուղարը:<br><br>16) Հոդված 10-ը շարադրել նոր | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | խմբագրությամբ.<br><br>**Հոդված 10. Քաղաքացիական աշխատանքը հանրային իշխանության մարմիններում**<br><br>1. Քաղաքացիական աշխատանքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված առանձին խնդիրների ու գործառույթների իրականացումն է պայմանագրային հիմունքներով:<br>2. Կառավարության սահմանած կարգով և դեպքերում պետական մարմինները, առանձին խնդիրների իրականացման համար կարող են ներգրավել փորձագետ:<br><br><br>17) Հոդված 11-ի 1-ին կետը խմբագրել հետևյալ կերպ՝<br>« 1. Տեխնիկական սպասարկում իրականացնելը ներառում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված առանձին խնդիրների ու գործառույթների իրականացմանն, ինչպես նաև քաղաքական, վարչական և ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների լիազորությունների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական աջակցությունը»:<br><br>18) Գլուխ 5-ը ամբողջությամբ շարադրել նոր խմբագրությամբ.<br><br>ԳԼՈՒԽ 5 | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 16) Հոդված 10 | ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ<br><br>Հոդված 21. Բարեվարքության համակարգի տարրերը<br>1. Բարեվարքության համակարգը ներառում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողների վարքագծի սկզբունքները եւ դրանցից բխող վարքագծի կանոնները (այդ թվում՝ պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ), անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումները եւ շահերի բախումը:<br>Հոդված 22. Վարքագծի սկզբունքները<br>1. Վարքագծի սկզբունքներն են՝ հանրությանը ծառայելու գիտակցումը, հավատարմությունը հանրային շահին, բարեկրթությունը և հարգալիրությունը, բարեխղճությունը, օբյեկտիվությունը:<br>Հոդված 23. Հանրությանը ծառայելու գիտակցումը<br>1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների լիազորությունների իրականացումն ուղղված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և հանրության բարօրության ապահովմանը՝ պետության քաղաքականության նպատակների արդյունավետ իրագործման միջոցով:<br>Հոդված 24. Հավատարմությունը հանրային շահին<br>1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողներն իրենց լիազորությունները գործադրում են ի շահ Հայաստանի Հանրապետության | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 17) Հոդված 11<br>18) Գլուխ 5 | քաղաքացիների և հանրության:<br>2. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները մշակված հանրային քաղաքականության կենսագործման գործընթացում դրսեւորում են հավատարմություն եւ հուսալիություն՝ անկախ համոզմունքից եւ դիրքորոշումից:<br>Հոդված 25. Բարեկրթությունը եւ հարգալիրությունը<br>1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները դրսեւորում են պաշտոնին վայել վարքագիծ: Նրանք բարեկիրթ վերաբերմունք են դրսեւորում բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ շփվում են իրենց լիազորություններն իրականացնելիս:<br>2. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները հարգում են իրենց վերադասների, անմիջական ղեկավարների, գործընկերների, ենթակաների արժանապատվությունը:<br>Հոդված 26. Բարեխղճությունը<br>1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողներն իրենց լիազորություններն իրականացնելիս գործում են ազնիվ եւ բարեխիղճ:<br>2. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները հանրային ռեսուրսներն օգտագործում են արդյունավետ եւ խնայողաբար:<br>Հոդված 27. Օբյեկտիվությունը<br>1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները իրենց լիազորություններն իրականացնելիս դրսեւորում են անկողմնակալություն՝ բացառելով որեւէ խտրականություն: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 2. Հանրային ծառայողը ծառայության առանձնահատկություններին համապատասխան ծառայողական պարտականությունները կատարելիս քաղաքականապես չեզոք է:<br>Հոդված 28. Վարքագծի կանոնները<br>1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), 15000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց ՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ընդունված վարքագծի կանոնագրքով:<br>2. Պատգամավորի, դատավորի, դատախազի, քննիչի վարքագծի կանոնները սահմանվում են այլ իրավական ակտերով:<br>3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պահպանել սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները:<br>4. Հանրային ծառայողների՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի տիպային կանոնները սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:<br>5. Քաղաքացիական ծառայողների՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | սահմանում է քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետը:<br>6. Այլ հանրային ծառայողների՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները կարող են սահմանվել հանրային ծառայության տվյալ տեսակը ղեկավարող մարմնի կողմից՝ ոլորտային առանձնահատկությունների առկայության դեպքում: Դրանց չսահմանման դեպքում գործում են քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները:<br>7. Հանրային ծառայողի վարքագծի կանոնները սահմանվում են վարքագծի տիպային կանոնների հիման վրա՝ կանոնագրքերով:<br>8. Հանրային ծառայողի վարքագծի կանոնների պահպանման կառուցակարգեր կարող են սահմանվել տվյալ ծառայության առանձնահատկությունները կարգավորող իրավական ակտերով:<br>9. Վարքագծի կանոնների խախտումը կարող է առաջացնել կարգապահական պատասխանատվություն: Կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթները կիրառելի չեն քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ: Ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթները կարող են կիրառվել օրենքով նախատեսված դեպքերում:<br>Հոդված 29. Պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու արգելքը<br><br>1. Հանրային պաշտոն զբաղեցնող | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | անձինք և հանրային ծառայողները չպետք է ընդունեն նվեր կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն տան, եթե ողջամտորեն կարող է ընկալվել, որ այն կապված է պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ:<br>2. Սույն հոդվածի իմաստով «նվեր» հասկացությունը ենթադրում է ցանկացած գույքային առավելություն, որը ողջամտորեն չէր տրամադրվի պաշտոն չզբաղեցնող անձի: Այն ընդգրկում է նաև ներված պահանջը, անհատույց կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով պահանջի զիջումը, անհատույց հանձնված գույքը կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով վաճառված գույքը, անհատույց կամ անհամարժեք ցածր գնով մատուցված ծառայությունը կամ կատարված աշխատանքը, ինչպես նաև արտոնյալ փոխառությունը, ուրիշի գույքի անհատույց օգտագործումը կամ այլ գործողություններ, որոնց արդյունքում անձը ստանում է օգուտ կամ առավելություն:<br>3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների համար պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված թույլատրելի նվերներ են՝<br>1) պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաև աշխատանքային այցերի ժամանակ տրվող նվերները կամ կազմակերպվող հյուրասիրությունը.<br>2) հրապարակային միջոցառումների ժամանակ սովորաբար տրվող նվերները.<br>3) սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունը. | | 19)ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 4) ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը.<br>5) կրթաթոշակը, դրամաշնորհը կամ նպաստը՝ տրված հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով և նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի արդյունքում.<br>6) օտարերկրյա պետությունների կամ միջազգային կազմակերպությունների կողմից տրվող արարողակարգային նվերները:<br>4. Եթե հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից ստացված և սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ, 6-րդ կետով նախատեսված նվերն իր արժեքով գերազանցում է 75000 ՀՀ դրամը, այն համարվում է պետական կամ համայնքային սեփականություն և հաշվառվում է որպես այդպիսին: Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները Կառավարության սահմանած կարգով պարտավոր են այն հանձնել պետությանը կամ համայնքին:<br>5. Սույն հոդվածով թույլատրելի համարվող նվերի արժեքը գնահատվում է՝ հիմք ընդունելով այն ողջամիտ շուկայական գինը, որը նվեր ստացողը գիտեր կամ կարող էր իմանալ նվերի ընդունման պահին կամ դրա ընդունումից հետո:<br>6. Հանրային ծառայության առանձնահատկություններից ելնելով՝ ոլորտային օրենքներով կարող են սահմանվել այլ կարգավորումներ:<br><br>Հոդված 30. Պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ | 19)Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կապված նվերների հաշվառումը<br><br>1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են Կառավարության սահմանած կարգով հայտնել սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված թույլատրելի նվերների ստացման մասին:<br>2. Նվերների հաշվառման և հանձնման կարգը սահմանում է Կառավարությունը:<br><br>Հոդված 31. Անհամատեղելիության պահանջները<br><br>1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:<br>2. Հայաստանի Հանրապետության նախագահը չի կարող զբաղեցնել որևէ այլ պաշտոն, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք:<br>3. Կենտրոնական բանկի նախագահը և խորհրդի մյուս անդամներն իրավունք ունեն առևտրային կազմակերպություններում և հիմնադրամներում զբաղեցնելու իրենց կարգավիճակով պայմանավորված պաշտոններ: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 4. Հանրային ծառայողը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքով նախատեսված դեպքերում կարող է կատարել ընտրական հանձնաժողովի անդամի, բացառությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի, կամ ընտրական հանձնաժողովում տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետի կարգավիճակից բխող աշխատանք:<br>5. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պարտավոր են ապահովել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների կատարումը:<br>6. Սույն օրենքի իմաստով առևտրային կազմակերպությունում (բացառությամբ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերի հիման վրա ստեղծված կազմակերպությունների) պաշտոն զբաղեցնելու ներքո հասկացվում է՝<br>1) առևտրային կազմակերպության կառավարման մարմնում ընդգրկված լինելը.<br>2) առևտրային կազմակերպությունում ցանկացած այլ պաշտոն զբաղեցնելը,<br>3) առևտրային կազմակերպության գույքի հավատարմագրային կառավարիչ լինելը.<br>4) սույն մասի 1-3-րդ կետերում նշված դեպքերից բացի, որևէ այլ ձևով առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Հանրային պաշտոն զբաղեցնող անձը, բացառությամբ Նախագահի, պատգամավորի, կառավարության անդամի, ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի, կամ հանրային ծառայողը կարող է ընդգրկվել 50 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ առևտրային կազմակերպության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհուրդ) կազմում, եթե դա ուղղակիորեն առնչվում է իր պաշտոնավարման ոլորտի քաղաքականության իրականացման հետ՝ առանց վարձատրության կամ որևէ այլ ձևով փոխհատուցում ստանալու կամ հանրային պաշտոն չզբաղեցնող անձանց կամ ոչ հանրային ծառայողների համար նախատեսված սոցիալական երաշխիքներից կամ այլ ծառայություններից կամ արտոնություններից օգտվելու իրավունքի:<br>7. Սույն օրենքի իմաստով ձեռնարկատիրական գործունեություն է համարվում՝<br>1) անհատ ձեռնարկատեր լինելը.<br>2) առանց պետական գրանցման կամ հաշվառման ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում.<br>3) առևտրային կազմակերպության մասնակից լինելը, բացառությամբ այն դեպքի, երբ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման:<br>8. Սույն օրենքի իմաստով ձեռնարկատիրական գործունեություն չի | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | համարվում՝<br>1) վստահության վրա հիմնված ընկերակցության մասնակից ավանդատու (կոմանդիտիստ) լինելը.<br>2) վարկային կամ խնայողական միության ավանդատու կամ անդամ լինելը.<br>3) առևտրային կազմակերպությունից դուրս գալու կամ դրա լուծարվելու դեպքում հասանելիք գույքի մասը կամ դրա արժեքը ստանալը.<br>4) բանկում ավանդ, ապահովագրական կազմակերպությունում ապահովագրական պոլիս ունենալը.<br>5) Հայաստանի Հանրապետության, համայնքի կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթեր ունենալը.<br>6) սեփականության իրավունքով պատկանող գույքը վաճառելը կամ որոշակի վճարի կամ հատուցման դիմաց վարձակալության հանձնելը.<br>7) փոխառության դիմաց տոկոսներ և այլ հատուցում ստանալը.<br>8) գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից, ցանկացած արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձևից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեքենաների և տվյալների բազայի համար ծրագրերի կամ արդյունաբերական, առևտրային, գիտական սարքավորումներն օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի կամ արդյունաբերական, տեխնիկական, կազմակերպական, | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | առևտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար հատուցում (ռոյալթի) ստանալը.<br>9) պատճառված վնասի (կրած կորստի) դիմաց հատուցում ստանալը:<br>9. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները համարվում են ձեռնարկատիրական գործունեությամբ չզբաղվելու պահանջը խախտած, եթե նրանք այդ առնչությամբ Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ենթարկվել են վարչական կամ քրեական պատասխանատվության:<br>10. Առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում այն օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման:<br>11. Առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարիչ կարող է լինել նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող քաղաքացին կամ ոչ առևտրային կազմակերպությունը:<br>12. Սույն օրենքի իմաստով գիտական աշխատանք է համարվում գիտական կազմակերպությունում, հիմնարկում, բարձրագույն ուսումնական հաստատությունում կամ այլ կերպ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական, գիտամանկավարժական, փորձատեխնոլոգիական, նախագծակոնստրուկտորական, նախագծատեխնոլոգիական աշխատանքներ կատարելը:<br>13. Սույն օրենքի իմաստով կրթական աշխատանք է համարվում ուսուցիչ, դասախոս (ասիստենտ) աշխատելը կամ հանրակրթական (հիմնական, լրացուցիչ) ծրագրերի յուրացման և առարկայական չափորոշիչների պահանջների ապահովման գործընթացին, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը նպաստող և (կամ) դրանք ապահովող այլ աշխատանք կատարելը:<br>14. Սույն օրենքի իմաստով ստեղծագործական աշխատանք է համարվում մշակույթի և արվեստի երկեր, գեղարվեստական, գեղարվեստական ժողովրդական ստեղծագործություններ և արհեստներ, բանահյուսություն, բարոյագիտական և գեղագիտական գաղափարատիպեր (իդեալներ), վարվեցողության կանոններ և ձևեր, լեզուներ, բարբառներ և խոսվածքներ, ազգային ավանդույթներ և սովորույթներ, պատմաաշխարհագրական տեղանուններ, մշակութային գործունեության մասին գիտական հետազոտությունների արդյունքներ և մեթոդներ, մշակութային ժառանգության առարկաներ (օբյեկտներ) ստեղծելը կամ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մեկնաբանելը:<br>15. Հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի լիազորությունների իրականացման հետ կապված պարտականությունները գերակա են նրա կողմից իրականացվող գիտական, կրթական, ստեղծագործական աշխատանքի հանդեպ:<br>16. Հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքի համար վճարումը չի կարող գերազանցել այն չափը, որին նույնպիսի գործունեության համար համանման որակներ ունեցող, պաշտոնատար անձ չհանդիսացող անձը կարող էր հավակնել:<br>17. Հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի կողմից սույն հոդվածով նախատեսված անհամատեղելիության պահանջները խախտելը նրա լիազորությունների դադարեցման կամ նրան զբաղեցրած պաշտոնից ազատելու հիմք է:<br><br>Հոդված 32. Այլ սահմանափակումները<br><br>1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելվում է՝<br>1) լինել երրորդ անձանց ներկայացուցիչն այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը գտնվում է ծառայության մեջ, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկվում է իր կողմից.<br>2) որպես պետության ներկայացուցիչ՝ գույքային գործարքներ կնքել իր հետ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց հետ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.<br>3) իր պաշտոնեական (ծառայողական) դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների համար փաստացի առավելություններ կամ արտոնություններ ապահովելու համար.<br>4) հոնորար ստանալ պաշտոնեական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար.<br>5) ոչ ծառայողական նպատակներով օգտագործել նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական և (կամ) համայնքային այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը.<br>6) համատեղ աշխատել իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ.<br>7) պաշտոնից ազատվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ընդունվել աշխատանքի այն գործատուի մոտ կամ դառնալ այն կազմակերպության աշխատողը, որի նկատմամբ նա անմիջական հսկողություն է իրականացրել իր պաշտոնավարման վերջին մեկ տարվա ընթացքում:<br>2. Հանրային ծառայության առանձին տեսակների առանձնահատկություններից ելնելով՝ այդ ծառայությունները կարգավորող օրենքներով կարող են սահմանվել լրացուցիչ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | սահմանափակումներ:<br>3. Սույն հոդվածով նախատեսված սահմանափակումները չպահպանելը առաջացնում է կարգապահական պատասխանատվություն: Կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթները կիրառելի չեն քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ: Ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթները կարող են կիրառվել օրենքով նախատեսված դեպքերում:<br>4. Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող պաշտոն զբաղեցնող անձի կողմից սույն հոդվածով նախատեսված սահմանափակումը խախտելու մասին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությունը եռօրյա ժամկետում հրապարակվում է Հանձնաժողովի կայքէջում: Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությամբ արձանագրված խախտման վերաբերյալ ներկայացնել հրապարակային պարզաբանում, որը ստացվելու պահից եռօրյա ժամկետում հրապարակվում է այն մարմնի կայքէջում, որտեղ նա պաշտոն է զբաղեցնում:<br>5. Սույն հոդվածի 4-րդ մասը կիրառելի է վերադաս կամ անմիջական ղեկավար ունեցող քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ:<br>Հոդված 33. Շահերի բախումը | 20)Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. | 20)Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 1. Շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձն իր լիազորություններն իրականացնելիս կատարում է գործողություն կամ ընդունում որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել:<br>2. Պաշտոն զբաղեցնող անձի՝ իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելը նշանակում է անձի լիազորությունների շրջանակում այնպիսի գործողություն կատարելը կամ որոշում ընդունելը (այդ թվում՝ կոլեգիալ մարմնի կազմում որոշում ընդունելուն մասնակցելը), որը թեև ինքնին օրինական է, սակայն հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել նաև՝<br>1) իր կամ իր հետ փոխկապակցված անձի գույքային կամ իրավական դրության բարելավմանը.<br>2) իր կամ իր հետ փոխկապակցված անձի անդամակցած ոչ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.<br>3) իր կամ իր հետ փոխկապակցված անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.<br>4) իր հետ փոխկապակցված անձին պաշտոնում նշանակմանը:<br>3. Պաշտոն զբաղեցնող անձը չի առաջնորդվում իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով, եթե տվյալ գործողությունը կամ որոշումն ունի | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | համընդհանուր կիրառելիություն կամ անդրադառնում է անձանց լայն շրջանակի վրա:<br>4. Շահերի բախում առկա չէ, եթե անձնական շահը պաշտոն զբաղեցնող անձի լիազորությունների պատշաճ իրականացման վրա ունի թվացյալ ազդեցություն, որը փաստացի բացակայում է:<br>5. Պաշտոն զբաղեցնող անձը պետք է խուսափի շահերի բախման հանգեցնող գործողություններից, ձեռնպահ մնա շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելուց կամ որոշում ընդունելուց:<br>Եթե պաշտոն զբաղեցնող անձի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը կամ որոշման ընդունումը կարող է հանգեցնել շահերի բախման, պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին (եթե վերադաս կամ անմիջական ղեկավար ունի) ներկայացնել գրավոր հայտարարություն շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին, որը ենթակա է քննարկման անհապաղ: Նախքան վերադասի կամ անմիջական ղեկավարի գրավոր համաձայնությունը ստանալը անձը պետք է ձեռնպահ մնա հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց կամ որոշում կայացնելուց:<br>Վերադաս անձը կամ անմիջական ղեկավարը ձեռնարկում է կամ առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր:<br>Վերադաս անձը կամ անմիջական ղեկավարն իրավունք ունի տվյալ հարցը քննարկելու և լուծելու իրավասությունը հանձնարարելու պաշտոն զբաղեցնող այլ անձի, եթե դա | 21)Ընդունվել է<br><br>22)Ընդունվել է<br><br>23)Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. | 21)Ընդունվել է:<br><br>22)Ընդունվել է:<br><br>23)Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | օրենքով արգելված չէ:<br>6. Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող պաշտոն զբաղեցնող անձը կարող է այդ մասին գրավոր հայտարարություն ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, որն առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր, այդ թվում՝ հանդես գալ կոնկրետ իրավիճակում շահերի առկայության մասին հայտարարությամբ:<br>7. Սույն հոդվածի դրույթները տարածվում են պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), 15000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև հանրային ծառայողների վրա:<br>8. Սույն օրենքի իմաստով փոխկապակցված անձինք են պաշտոն զբաղեցնող անձի ամուսինը, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը, պապը, տատը, թոռը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, մորեղբայրը, քրոջ, եղբոր զավակները, պաշտոն զբաղեցնող անձի մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր, մորեղբոր զավակները, քրոջ, եղբոր, զավակի ամուսինները:<br>9. Շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելը կամ որոշում ընդունելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթները կիրառելի չեն քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ:<br>Ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթները կարող են կիրառվել օրենքով նախատեսված դեպքերում:<br>10. Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող պաշտոն զբաղեցնող անձի առնչությամբ շահերի բախման իրավիճակի առկայության մասին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությունը եռօրյա ժամկետում հրապարակվում է Հանձնաժողովի կայքէջում: Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է այդ կապակցությամբ ներկայացնել հրապարակային պարզաբանում, որը ստացվելու պահից եռօրյա ժամկետում հրապարակվում է այն մարմնի կայքէջում, որտեղ նա պաշտոն է զբաղեցնում:<br>11. Սույն հոդվածի 10-րդ մասը կիրառելի է վերադաս կամ անմիջական ղեկավար ունեցող քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ:<br><br>19) Գլուխ 6-ը շարադրել նոր խմբագրությամբ.<br><br>ԳԼՈՒԽ 6<br>**ԳՈՒՅՔԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՇԱՀԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄԸ** | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Հոդված 34. Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականությունը<br>1. Սույն օրենքի իմաստով՝ հայտարարատու պաշտոնատար անձինք են պետական պաշտոն զբաղեցնող անձինք, 15000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձինք, քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին և 2-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող անձինք, արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարը, զինվորական ծառայության բարձրագույն պաշտոն զբաղեցնող անձինք, ոստիկանության, հարկային, մաքսային, քրեակատարողական և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների գլխավոր պաշտոն զբաղեցնող անձինք:<br>2. Պետական պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ պետական հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց), 15000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձինք սույն օրենքով նախատեսված կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիր:<br>3. Պետական հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք, քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին և | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 19) Գլուխ 6 | 2-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող անձինք, արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարը, զինվորական ծառայության բարձրագույն պաշտոն զբաղեցնող անձինք, ոստիկանության, հարկային, մաքսային, քրեակատարողական և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների գլխավոր պաշտոն զբաղեցնող անձինք սույն օրենքով նախատեսված կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում գույքի և եկամուտների հայտարարագիր:<br>4. Հայտարարատու պաշտոնատար անձինք ներկայացնում են պաշտոնեական պարտականությունները ստանձնելու, դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրեր:<br>5. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամները հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու, դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրերում ներկայացնում են իրենց գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալներ: Եթե սույն օրենքով սահմանված ժամկետում ընտանիքի անդամները չեն ներկայացնում իրենց գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալներ, վերջիններս համարվում են հայտարարագիր չներկայացրած կամ ժամկետի խախտմամբ ներկայացրած:<br>6. Հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու, | 1)Ընդունվել է<br><br>2)Ընդունվել է<br><br>3)Ընդունվել է<br><br>4)Ընդունվել է | 1)Ընդունվել է:<br><br>2)Ընդունվել է<br><br>3)Ընդունվել է<br><br>4)Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | դադարեցնելու հայտարարագրերը ներկայացվում են պաշտոնեական պարտականությունները ստանձնելու, դադարեցնելու օրվա դրությամբ: Տարեկան հայտարարագիրը ներկայացվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար:<br>7. Հայտարարատու պաշտոնատար անձն իր հայտարարագրում լրացնում է նաև իր ընտանիքի անչափահաս անդամների, ինչպես նաև իր խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի գույքի և եկամուտների վերաբերյալ իրեն հայտնի տվյալները և պատասխանատու է դրանց իսկության համար:<br><br>8. Հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող նրա ընտանիքի չափահաս անդամները հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալները և պատասխանատու են դրանց իսկության համար:<br>9. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներն (ընտանիքի կազմի մեջ մտնող անձինք) են նրա ամուսինը, անչափահաս զավակը (այդ թվում՝ որդեգրված), հայտարարատու պաշտոնատար անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ:<br>10. Սույն օրենքի իմաստով՝ համատեղ | 5)Ընդունվել է<br><br>6)Ընդունվել է<br><br>7)Ընդունվել է<br><br>8)Ընդունվել է | 5)Ընդունվել է<br><br>6)Ընդունվել է<br><br>7)Ընդունվել է<br><br>8)Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | բնակվող է համարվում պաշտոնն ստանձնելու կամ դադարեցնելու օրվան նախորդող կամ հայտարարագրման տարվա ընթացքում 183 եւ ավելի օր հայտարարատուի հետ բնակվող անձը:<br>11. Հայտարարատու պաշտոնատար անձի, ինչպես նաև նրա ընտանիքի անդամի կողմից հայտարարագրերը սույն օրենքով և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից սահմանված պահանջների, կարգի և ժամկետների պահպանմամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով չներկայացնելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:<br>12. Հայտարարագրի ներկայացման փաստի ուժով հայտարարատու պաշտոնատար անձը և նրա ընտանիքի անդամը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին տալիս են հաշվետու ժամանակահատվածի համար իրենց վարկային պատմությանը և արժեթղթերի, այդ թվում՝ դրանցով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկություններին ծանոթանալու համաձայնություն:<br>13. Հայտարարագրի ձևանմուշը սահմանում է Կառավարությունը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկությամբ:<br>Հոդված 35. Հայտարարատու պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու մասին ծանուցելը<br>1. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմի ղեկավարը կամ աշխատակազմի ղեկավարի գործառույթներ | 9)Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է.<br><br>10)Ընդունվել է<br><br>11)Ընդունվել է<br><br>12)Ընդունվել է | 9)Ընդունվել է<br><br>10)Ընդունվել է<br><br>11)Ընդունվել է<br><br>12)Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | իրականացնող անձը տվյալ մարմնում հայտարարատու պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու մասին եռօրյա ժամկետում ծանուցում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ տրամադրելով համապատասխան ակտի պատճենը: Ծանուցման ձևը և կարգը սահմանում է Հանձնաժողովը:<br>Հոդված 36. Հայտարարագրման ժամկետները և հայտարարագրում փոփոխություն կատարելը<br>1. Հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականությունները ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականությունները ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Նշված անձինք պաշտոնավարման ընթացքում տարեկան հայտարարագրերը ներկայացնում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մարտի 31-ը:<br>2. Եթե հայտարարատու պաշտոնատար անձն իր լիազորությունների դադարումից (դադարեցումից) հետո՝ 30 օրվա ընթացքում, նշանակվում (ընտրվում) է սույն օրենքին համապատասխան հայտարարագրման պարտականություն նախատեսող պաշտոնում, ապա նա պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու և ստանձնելու հայտարարագիր չի ներկայացնում: Սույն դրույթը կիրառելի չէ, եթե հայտարարատու պաշտոնատար անձը | 13)Ընդունվել է<br>14)Ընդունվել է<br>15)Ընդունվել է<br>16)Ընդունվել է | 13)Ընդունվել է<br>14)Ընդունվել է<br>15)Ընդունվել է<br>16)Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | սույն օրենքին համապատասխան պաշտոնեական պարտականություններն ստանձնելու հայտարարագիր երբևէ չի ներկայացրել: Այդ դեպքում հայտարարատու պաշտոնատար անձը ներկայացնում է պաշտոնեական պարտականություններն ստանձնելու հայտարարագիր:<br>3. Եթե հայտարարատու պաշտոնատար անձը պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու հայտարարագիրը ներկայացնելուց հետո մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը նշանակվում (ընտրվում) է սույն օրենքին համապատասխան հայտարարագրման պարտականություն նախատեսող պաշտոնում, ապա նա պաշտոնեական պարտականությունները ստանձնելու հայտարարագիր չի ներկայացնում:<br><br>Հոդված 37. Հայտարարագրում փոփոխություն կատարելը<br><br>1. Հայտարարատու պաշտոնատար անձը, նրա ընտանիքի անդամը հանձնված և հրապարակված հայտարարագրում իրենց կողմից հայտնաբերված անհամապատասխանությունը վերացնելու նպատակով կարող են դիմել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Հանձնաժողովը մերժում է դիմումը, եթե դրանում նշված տվյալի անհամապատասխանությունն այլ կերպ բացահայտված է: Դիմումը բավարարվելու դեպքում հայտարարագրում անհամապատասխանությունը վերացնելու ժամկետը չի կարող գերազանցել 7 | 17)Ընդունվել է<br><br>18)Ընդունվել է<br><br>19)Ընդունվել է | 17)Ընդունվել է<br><br>18)Ընդունվել է<br><br>19)Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | աշխատանքային օրը: Փոփոխված տվյալով հայտարարագիրը նշված ժամկետում չներկայացվելու դեպքում Հանձնաժողովը հիմք է ընդունում սկզբնապես ներկայացված հայտարարագիրը:<br>2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դիմումի հիման վրա անհամապատասխանությունը սահմանված ժամկետում վերացնելու դեպքում Հանձնաժողովը վարույթ չի հարուցում:<br>3. Հայտարարագրում փոփոխություն է կատարվում նաև այն դեպքում, երբ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի արդյունքում Հանձնաժողովը հայտարարագրում արձանագրում է տվյալների անհամապատասխանություն, որը վերացնելու համար տրամադրվում է 3-օրյա ժամկետ:<br><br>Հոդված 38. Հայտարարագրի լրացման և ներկայացման եղանակը<br><br>1. Հայտարարագիրը լրացվում և ներկայացվում է էլեկտրոնային եղանակով:<br>2. Հայտարարագիրը ոչ էլեկտրոնային եղանակով (թղթային) կարող է ներկայացվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի սահմանած բացառիկ դեպքերում:<br><br>Հոդված 39. Հայտարարագրում ներառվող ընդհանուր տվյալները<br><br>1. Հայտարարագրում նշվում են.<br>1) հայտարարատու պաշտոնատար անձի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան | 20)Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. | 20)Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | օրը, ամիսը, տարին, հանրային ծառայությունների համարանիշը, հասցեն, զբաղեցրած պաշտոնը, պաշտոնը ստանձնելու կամ դադարեցնելու օրը, ամիսը, տարին, այն մարմնի անվանումը, որտեղ պաշտոն է զբաղեցնում, էլեկտրոնային հասցեն, հեռախոսահամարները.<br>2) հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի անունը, ազգանունը, հայրանունը, կապը հայտարարատու պաշտոնատար անձի հետ, ծննդյան օրը, ամիսը, տարին, անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը (առկայության դեպքում), քաղաքացիությունը, հասցեն, պաշտոնը (աշխատանքային գործունեությունը).<br>3) հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց տվյալները՝ անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, կապը հայտարարատու պաշտոնատար անձի հետ:<br>3. Սույն օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձինք են հայտարարատու պաշտոնատար անձի ամուսինը, ծնողը, զավակը, եղբայրը, քույրը, ամուսնու ծնողը, զավակը, եղբայրը և քույրը:<br><br>Հոդված 40. Գույքի հայտարարագրի բովանդակությունը<br><br>1. Հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող՝ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 1) անշարժ գույքը՝ հողամասը, ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտը, անտառը, բազմամյա տնկին, շենքը, շինությունը, հողին ամրակայված այլ գույքը.<br>2) տրանսպորտի միջոցը՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը, անիվավոր, թրթուրավոր, ինքնագնաց մեքենան կամ մեխանիզմը, օդային, ջրային փոխադրամիջոցը: Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների շարքին են դասվում այն տրանսպորտային միջոցները, որոնց շարժիչների աշխատանքային ծավալը գերազանցում է 50 խոր. սմ-ը, իսկ առավելագույն արագությունը գերազանցում է 50 կմ/ժ-ը, ինչպես նաև տարբեր բեռնատարողությամբ կցորդները կամ կիսակցորդները.<br>3) արժեթուղթը (պարտատոմսը, չեկը, մուրհակը, բաժնետոմսը և Հայաստանի Հանրապետության օրենքներով արժեթղթերի թվին դասվող այլ փաստաթուղթը, բացառությամբ բանկային վկայագրի) և (կամ) այլ ներդրումը հավաստող փաստաթուղթը (բաժնեմասը, փայաբաժինը).<br>4) հանձնված, վերադարձված փոխառությունը (այդ թվում՝ բանկային ավանդը).<br>5) սույն մասի 1-4-րդ կետերում չնշված՝ 8 միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած գույք (այսուհետ՝ թանկարժեք գույք).<br>6) դրամական միջոցները (այդ թվում՝ բանկում ունեցած):<br>2. Սույն հոդվածում նշված հայտարարագրման ենթակա գույքի գինը | 1)Ընդունվել է | 1)Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | (արժեքը) կամ արտարժույթով եկամուտը որոշելիս արտարժույթի համարժեքը հաշվարկվում է՝ ելնելով գործարքի օրվա համար Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից, իսկ բնամթերքով իրականացրած գործարքի գինը (արժեքը)՝ ելնելով բնամթերային (ոչ դրամական) եկամուտը կամ գույքը հայտարարագրում արտացոլելու կարգով որոշվող գնից (արժեքից):<br>3. Գույքը հայտարարագրելիս պետք է նշվեն՝<br>1) անշարժ գույքի դեպքում՝ անշարժ գույքի տեսակը, գտնվելու վայրի հասցեն, գույքի հաշվառման համարը, սեփականության տեսակը (անձնական կամ ընդհանուր), ընդհանուր բաժնային սեփականության դեպքում՝ հայտարարատու համասեփականատիրոջ բաժինը, գույքի ձեռքբերման տարին և եղանակը.<br>2) տրանսպորտի միջոցի դեպքում՝ տրանսպորտի տեսակը, մակնիշը, սերիան, թողարկման տարին, նույնականացման համարը, ձեռքբերման տարին և եղանակը.<br>3) արժեթղթի և (կամ) այլ ներդրման դեպքում՝ արժեթղթի և (կամ) այլ ներդրման տեսակը, գինը (արժեքը), ձեռքբերման տարին.<br>4) հանձնված, վերադարձված փոխառության (այդ թվում՝ բանկային ավանդի) դեպքում՝ պարտապանի անվանումը կամ ազգանունը, անունը, հայրանունը, հասցեն, փոխառության գումարը (չափը), փոխառության արժույթը.<br>5) թանկարժեք գույքի դեպքում՝ գույքի | 2)Ընդունվել է<br>3)Ընդունվել է<br>4)Ընդունվել է<br>5)Ընդունվել է | 2)Ընդունվել է<br>3)Ընդունվել է<br>4)Ընդունվել է<br>5)Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | անվանումը, նկարագրությունը, գույքի ձեռքբերման տարին և եղանակը.<br>6) դրամական միջոցի դեպքում՝ դրամական միջոցի չափը, արժույթը:<br>4. Տարեկան հայտարարագրում ներառվում են նաև տվյալ տարվա (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը՝ ներառյալ) ընթացքում հայտարարագրման ենթակա անշարժ գույքի, տրանսպորտի միջոցի, թանկարժեք գույքի ձեռքբերման կամ օտարման գործարքները՝ նշելով գույքի տեսակը, ձեռքբերման կամ օտարման օրը, ամիսը, տարին, եղանակը, արժեքը (գինը), արժույթը, գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն:<br>5. Արժեթղթի և (կամ) այլ ներդրման դեպքում՝ տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեթուղթը և (կամ) այլ ներդրումը՝ նշելով արժեթղթի տեսակը, ձեռքբերման օրը, ամիսը, տարին, եղանակը, արժեքը (գինը), արժույթը, գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն:<br>6. Փոխառության դեպքում՝ տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ հանձնված կամ վերադարձված փոխառության գումարը (չափը) և արժույթը, պարտապանի անվանումը կամ ազգանունը, անունը, հայրանունը, հասցեն:<br>7. Դրամական միջոցի դեպքում՝ տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցի չափը և | 6)Ընդունվել է<br>7)Ընդունվել է<br>8)Ընդունվել է<br>9)Ընդունվել է | 6)Ընդունվել է<br>7)Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | արժույթը:<br>Հոդված 41. Եկամուտների հայտարարագրի բովանդակությունը<br>1. Հայտարարագիրը ներառում է սույն հոդվածով սահմանված եկամուտները և դրանց ստացման աղբյուրները:<br>2. Հայտարարատուի եկամուտների ստացման աղբյուր է այն անձը, որը հայտարարատուին վճարել է սույն հոդվածով սահմանված եկամուտ:<br>3. Եկամուտները հայտարարագրվում են առանց հարկերի և/կամ պարտադիր այլ վճարների:<br>4. Սույն օրենքի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված հետևյալ եկամուտները.<br>1) աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումները.<br>2) գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից, ցանկացած արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձեւից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեքենաների եւ տվյալների բազայի համար ծրագրերի կամ արդյունաբերական, առեւտրային, գիտական սարքավորումներ օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի կամ արդյունաբերական, տեխնիկական, կազմակերպական, առեւտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար ստացվող հատուցումը (ռոյալթի) եւ հեղինակային | 10)Ընդունվել է<br><br>11)Ընդունվել է | 8)Ընդունվել է<br><br>9)Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | վարձատրությունը.<br>3) ստացված փոխառությունները (վարկերը).<br>4) տրված փոխառությունների դիմաց ստացված տոկոսը և այլ հատուցումը.<br>5) շահաբաժինները.<br>6) խաղատներում կամ շահումներով խաղերում ստացված եկամուտները (շահումները).<br>7) մրցույթների կամ մրցությունների, ինչպես նաև վիճակախաղերի իրային կամ դրամական շահումները (մրցանակները).<br>8) նվիրատվության կամ օգնության կարգով ստացված գույքը, դրամական միջոցները (բացառությամբ աշխատանքի, ծառայության տեսքով ստացված).<br>9) ժառանգության կարգով ստացված գույքը (այդ թվում՝ դրամական միջոցները).<br>10) ապահովագրական հատուցումները.<br>11) ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը.<br>12) գույքը (այդ թվում՝ հայտարարագրման ոչ ենթակա) օտարելուց ստացված եկամուտը.<br>13) վարձակալության դիմաց ստացված վճարը կամ այլ հատուցում.<br>14) միանվագ վճարները.<br>15) գույքային իրավունքներից ստացված եկամուտը.<br>16) քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտը.<br>17) կենսաթոշակը.<br>18) գյուղատնտեսական գործունեությունից ստացված եկամուտը:<br>5. Հայտարարագրման ենթակա են նաև սույն հոդվածի 4-րդ մասով չսահմանված այլ եկամուտները՝ նշելով դրանց տեսակները և ստացման աղբյուրները: | 1)Ընդունվել է<br>2)Ընդունվել է<br>3)Ընդունվել է<br>4)Ընդունվել է | 10)Ընդունվել է<br>11)Ընդունվել է<br>1)Ընդունվել է<br>2)Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 6. Եկամուտը հայտարարագրելիս պետք է նշվեն՝<br>1) եկամտի տեսակը.<br>2) եկամտի ստացման աղբյուրը՝ եկամուտ վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը, հասցեն.<br>3) եկամտի չափը (գումարը).<br>4) եկամտի արժույթը:<br>7. Հայտարարագրման ենթակա չէ հաշվետու ժամանակահատվածում ստացված այն եկամուտը կամ դրանց հանրագումարը, որը չի գերազանցում 200.000 Հայաստանի Հանրապետության դրամը:<br>8. Պաշտոնեական պարտականությունները ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու, դադարեցնելու օրը ստացված եկամուտները:<br>9. Ստացված եկամուտը սույն օրենքի իմաստով չի համարվում օրինական, եթե միանվագ ստացվող կամ տրվող գումարը գերազանցում է 2.000.000 Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, սակայն հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձը դրամական միջոցներով փոխառություն հանձնելը կամ ստանալը, հանձնած կամ ստացած դրամական միջոցներով փոխառության դիմաց վճարներ (տոկոսներ կամ այլ հատուցում) հանձնելը կամ ստանալը, դրամական միջոցներ նվիրատվություն ստանալը, դրամական միջոցներով արտահայտված շահաբաժիններ ստանալը, ձեռնարկատիրական գործունեությունից | 5)Ընդունվել է<br><br>6)Ընդունվել է | 3)Ընդունվել է<br><br>4)Ընդունվել է<br><br>5)Ընդունվել է<br><br>6)Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | եկամուտ ստանալը, գույքը օտարելուց եկամուտ ստանալը, վարձակալության դիմաց վճար կամ այլ հատուցում ստանալը, քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից եկամուտ ստանալը, վճարներ ստանալը, գույքային իրավունքներից եկամուտ ստանալը կատարել է կանխիկ ձևով:<br>Հոդված 42. Շահերի հայտարարագրի բովանդակությունը<br>1. Հայտարարագրի՝ «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են հանդիսանում կամ որի կանոնադրական կապիտալում առնվազն 10 տոկոս մասնակցություն ունեն հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, բաժնեմասը, հասցեն:<br>2. Հայտարարագրի՝ «Ներկայացվածությունը առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում նշվում են այն կազմակերպության անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն, որի կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում ներկայացված է հայտարարատու պաշտոնատար անձը, ինչպես նաև այդ կազմակերպությունում անձի կարգավիճակը:<br>3. Հայտարարագրի՝ «Պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելը» բաժնում նշվում են | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | այն կազմակերպության անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն, որում հայտարարատու պաշտոնատար անձի ունեցած բաժնեմասը հանձնված է հավատարմագրային կառավարման, կամ հավատարմագրային կառավարչի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը, ինչպես նաև հավատարմագրային կառավարման պայմանագրի կնքման օրը, ամիսը, տարին, պայմանագրի գործողության ժամկետը:<br>4. Հայտարարագրի՝ «Անդամակցությունը ոչ առևտրային կազմակերպություններին և ներկայացվածությունը դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում նշվում են ոչ առևտրային կազմակերպության անվանումը, որին հայտարարատու պաշտոնատար անձն անդամակցում է կամ ներկայացված է դրա կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն, կազմակերպությունում անձի կարգավիճակը:<br>5. Հայտարարագրի՝ «Անդամակցությունը կուսակցություններին և ներկայացվածությունը դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում նշվում են կուսակցության անվանումը, որին հայտարարատու պաշտոնատար անձն անդամակցում է կամ ներկայացված է դրա կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում, կուսակցությունում անձի կարգավիճակը:<br>6. Հայտարարագրի՝ «Պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | անդամների կողմից, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված պայմանագրերը» բաժնում նշվում են այն պայմանագրերը, որոնց գինը (արժեքը) գերազանցում է հինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, պայմանագրի տեսակը, կողմերը, նրանց հասցեները, տվյալներ պայմանագրի կնքման գործընթացի մասին, պայմանագրի կնքման օրը, ամիսը, տարին, գործողության ժամկետը, ինչպես նաև գինը (արժեքը):<br>7. Սույն հոդվածի 3-րդ և 6-րդ մասերում նշված պայմանագրերի առնչությամբ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերում ներառվում են պաշտոնեական պարտականությունները ստանձնելու, դադարեցնելու օրվա դրությամբ գործող պայմանագրերը, իսկ տարեկան հայտարարագրերում՝ տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կնքված պայմանագրերը:<br><br>Հոդված 43. Հայտարարագրի տվյալների հրապարակումը և հայտարարագրի արխիվացումը<br>1. Հայտարարագիրը դրա հանձնումից հետո անմիջապես հրապարակվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կայքէջում:<br>2. Հայտարարագրում ներառված հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը սահմանում է Կառավարությունը: Անշարժ գույքի գտնվելու վայրը կարող է հրապարակվել՝ առանց դրա | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հասցեն և այն նույնականացնող տվյալները հրապարակելու:<br>3. Անչափահասի հայտարարագրի տվյալները, բացառությամբ նրա անվան, հայրանվան և ազգանվան, հրապարակման ենթակա չեն:<br>4. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ապահովում է հրապարակման ոչ ենթակա տվյալների պաշտպանությունը:<br>5. Հայտարարատու պաշտոնատար անձի լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքերում հայտարարագիրը մնում է հրապարակված լիազորությունների դադարման կամ դադարեցման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում: Մեկ տարվա ընթացքում հայտարարագրման պարտականություն նախատեսող պաշտոն կրկին չստանձնելու դեպքում հայտարարագիրն արխիվացվում է: Այդ ժամկետից հետո տվյալ անձի կողմից հայտարարագրման պարտականություն նախատեսող պաշտոն ստանձնելու դեպքում նրա արխիվացված հայտարարագիրը վերականգնվում և հրապարակվում է:<br>6. Հայտարարագրի արխիվացման կարգն ու պայմանները սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:<br><br><br><br>20) Գլուխ 7-ը շարադրել նոր խմբագրությամբ.<br>**ԳԼՈՒԽ 7**<br>**ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ**<br>Հոդված 44. Հանրային ծառայողների էթիկայի | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հանձնաժողովները<br>1. Պետական ծառայության առանձին տեսակների և համայնքային ծառայության համար ստեղծվում են էթիկայի առանձին հանձնաժողովներ:<br>2. Հանրային ծառայողների բարեվարքության պահանջների պահպանմանը հետևում են պետական ծառայության առանձին տեսակների և համայնքային ծառայության մասին օրենքներով ստեղծված էթիկայի հանձնաժողովները, որոնց գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են պետական ծառայության առանձին տեսակների և համայնքային ծառայության մասին օրենքներով:<br>Հոդված 45. Հանրային ծառայողների էթիկայի հանձնաժողովների լիազորությունները<br>1. Հանրային ծառայողների էթիկայի հանձնաժողովները՝<br>1) քննում և լուծում են հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումները.<br>2) հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված առաջարկություններ են ներկայացնում իրավասու մարմնին կամ պաշտոնատար անձին:<br><br>Հոդված 46. Բարեվարքության հարցերով | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 20) Գլուխ 7 | կազմակերպիչը<br>1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անձնակազմի կառավարման ստորաբաժանումներում նախատեսվում է բարեվարքության հարցերով կազմակերպչի հանրային ծառայության պաշտոն:<br>2. Բարեվարքության հարցերով կազմակերպիչը՝<br>1) հանրային ծառայողներին տրամադրում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն, ներկայացնում շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություն.<br>2) իրականացնում է բարեվարքության հարցերով վերապատրաստման կարիքների բացահայտում և վերապատրաստման ծրագրերի, ինչպես նաև բարեվարքության պահանջների պահպանմանն ուղղված այլ ծրագրերի մշակում.<br>3) համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարի, էթիկայի հանձնաժողովի պահանջով կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկով կատարում է բարեվարքության համակարգին առնչվող ուսումնասիրություններ.<br>4) մշակում է հանրային ծառայողների բարեվարքության պլանների նախագծերը, դրանք ներկայացնում տվյալ մարմնում հաստատման.<br>5) վարում է հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վիճակագրություն: <br>3. Պետական ծառայության առանձին տեսակները և համայնքային ծառայությունը կարգավորող օրենքների համաձայն ձևավորված էթիկայի հանձնաժողովները, որոնք գործում են մշտական հիմունքներով, իրականացնում են սույն հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված գործառույթը: <br><br>21) Հոդված 50-ի 4-րդ կետից հանել « Բարձրագույն դատական խորհրդի և» բառերը: <br><br>22) Հոդված 51-ի 3-րդ կետում <br><br>« Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմի» բառերը փոխարինել « և դատական դեպարտամենտի» բառերով: <br><br>23) Գլուխ 10-ը շարադրել նոր խմբագրությամբ. <br><br>Հոդված 54. Օրենքի ուժի մեջ մտնելը <br>Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը, բացառությամբ 31-33-րդ հոդվածների, 34-րդ հոդվածի 1-12-րդ մասերի, 35-40-րդ հոդվածների, 41-րդ հոդվածի 1-8-րդ մասերի, 43-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի երկրորդ նախադասության, 3-5-րդ մասերի: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի N ՀՕ-172-Ն օրենքը, բացառությամբ վերջինիս 23-24-րդ, 28-րդ, 30-36-րդ հոդվածների, 37-րդ հոդվածի, 38-րդ հոդվածի 3-րդ մասի, 4-րդ մասի առաջին նախադասության, 38.1-40-րդ, 41-րդ հոդվածի 1-ին մասի, 41.1-44-րդ հոդվածների, 52-րդ հոդվածի 5-րդ մասի:<br>Սույն օրենքի 31-33-րդ հոդվածները, 34-րդ հոդվածի 1-ին մասն ուժի մեջ են մտնում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կազմավորման պահից: Մինչ այդ շարունակում են գործել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի N ՀՕ-172-Ն օրենքի 23-24-րդ, 30-31-րդ հոդվածների, 32-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները:<br>Սույն օրենքի 34-րդ հոդվածի 2-12-րդ մասերը, 35-40-րդ հոդվածները, 41-րդ հոդվածի 1-8-րդ մասերը, 43-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի երկրորդ նախադասությունը, 3-5-րդ մասերն ուժի մեջ են մտնում 2019 թվականի հունվարի 1-ից: Մինչ այդ շարունակում են գործել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի N ՀՕ-172-Ն օրենքի 32-րդ հոդվածի 2-7-րդ մասերի, 32.1-36-րդ, 37-րդ հոդվածների դրույթները:<br>Սույն օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասում հիշատակված վարքագծի կանոնագիրքը, ինչպես նաև հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոններն ընդունվում (սահմանվում) են մինչև 2018 թվականի | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 21) Հոդված 50<br>4-րդ կետ<br><br>22) Հոդված 51-ի 3-րդ կետ<br><br>23) Գլուխ 10 | հոկտեմբերի 1-ը: Քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները սահմանվում են մինչև 2018 թվականի նոյեմբերի 1-ը: Մինչ այդ շարունակում են գործել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի N ՀՕ-172-Ն օրենքի 28-րդ հոդվածի դրույթները:<br>«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի N ՀՕ-172-Ն օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասը, 4-րդ մասի առաջին նախադասությունը, 39-40-րդ հոդվածները, 41-րդ հոդվածի 1-ին մասը, 41.1-44-րդ հոդվածները, 52-րդ հոդվածի 5-րդ մասը շարունակում են գործել մինչև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կազմավորումը:<br>«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի N ՀՕ-172-Ն օրենքի 38.1-ին, 38.2-րդ հոդվածները շարունակում են գործել մինչև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի աշխատակազմի ձևավորումը:<br>Հոդված 55. Անձնական գործերի վարման էլեկտրոնային համակարգի անցումը<br>1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը, եռամսյա ժամկետում, սահմանում է անձնական գործերի վարման էլեկտրոնային համակարգի անցման ժամանակացույց եւ կարգ:<br>Հոդված 56. Հայեցողական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձանց պաշտոնի անձնագրերի հաստատումը<br>1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | եռամսյա ժամկետում հաստատվում են հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց պաշտոնների անձնագրերը եւ կատարվում են համապատասխան նշանակումներ:<br>Հոդված 57. Սույն օրենքից բխող իրավական ակտերն ընդունելը<br>1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո սույն օրենքից բխող այլ օրենքներում փոփոխությունները կատարել վեց ամսվա ընթացքում:<br>2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում ընդունել սույն օրենքի կիրառումն ապահովող կառավարության որոշումները:<br>Հոդված 58. Պաշտոնավարման առանձնահատկությունները<br>1. Այն նախարարություններում, որտեղ համալրված են եւ հասարակայնության հետ կապերի ստորաբաժանման ղեկավարի պաշտոնը եւ մամուլի քարտուղարի պաշտոնը, հասարակայնության հետ կապերի ստորաբաժանման ղեկավարը շարունակում է պաշտոնավարել մինչեւ «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով թափուր դառնալը: Թափուր դառնալուց հետո մեկ ամսվա ընթացքում այդ պաշտոնը հանվում է քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկից՝ դառնալով հայեցողական պաշտոն:<br>2. Այն նախարարություններում, որտեղ չկա մամուլի քարտուղարի պաշտոն հասարակայնության հետ կապերի ստորաբաժանման ղեկավարի պաշտոնը եռամսյա ժամկետում այդ պաշտոնը հանվում | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | է քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկից՝ դառնալով հայեցողական պաշտոն եւ զբաղեցվում է հասարակայնության հետ կապերի ստորաբաժանման ղեկավարի կողմից նույն օրը:<br>3. Սույն օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասով սահմնված պահանջները տարածվում են նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վրա՝ կառուցվածքային ստորաբաժանում ստեղծելու դեպքում:<br>4. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված պահանջները տարածվում են մինչ սույն օրենքն ուժի մեջ մտնելը պաշտոնավարող աշխատակազմի ղեկավարների վրա:<br>5. Սույն օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պահանջները տարածվում են մինչ սույն օրենքն ուժի մեջ մտնելը պետական կառավարման համակարգի մարմիններում և մարզպետարաններում խորհրդականի պաշտոն զբաղեցնող անձնաց վրա: Վերջիններս տաս աշխատանքային օրվա ընթացքում ազատվում են զբաղեցրած պաշտոններից: Մյուս պետական մարմիններում, որտեղ խորհրդականի պաշտոն զբաղեցնող անձինք չեն բավարարում սույն օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պահանջները և չկա օրենքով նախատեսված պաշտոնից ազատման այլ հիմք շարունակում են զբաղեցնել պաշտոնը: Այն պետական մարմիններում, որտեղ սահմանված են խորհրդականի պաշտոններ և այդ պաշտոնները սահմանված չեն սույն օրենքով, այն զբաղեցնող անձինք տաս | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | աշխատանքային օրվա ընթացքում ազատվում են զբաղեցրած պաշտոններից:<br>Հոդված 59. Հայտարարագրման ժամկետներ<br>Սույն օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք (բացառությամբ պաշտոնավարող հայտարարատու պաշտոնատար անձանց) մինչև 2018 թվականի սեպտեմբերի 1-ը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա (2018 թվականի հունիսի 1-ի) դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագիր:<br>Պաշտոնավարող հայտարարատու պաշտոնատար անձինք 2018 թվականի տարեկան հայտարարագիր ներկայացնում են մինչև 2019 թվականի մարտի 31-ը:<br>Պաշտոնավարող հայտարարատու պաշտոնատար անձինք առաջին անգամ շահերի վերաբերյալ տվյալներ են ներկայացնում 2018 թվականի տարեկան հայտարարագրում՝ 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ:<br>Հոդված 60. Այլ դրույթներ<br>1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կազմավորման պահից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի N ՀՕ-172-Ն օրենքի 7-րդ գլխում «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով» բառերը կարդալ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:<br>2. Մինչև Կոռուպցիայի կանխարգելման | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հանձնաժողովի կազմավորումը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի N ՀՕ-172-Ն օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասում նշված «բարձրաստիճան պաշտոնատար անձ» բառերի ներքո (սուբյեկտային կազմի առումով) կարդալ. «Հանրապետության Նախագահը, վարչապետը, Ազգային ժողովի պատգամավորները, սահմանադրական դատարանի դատավորները, դատավորները, նախարարները եւ նրանց տեղակալները, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետը եւ նրա տեղակալները, գլխավոր դատախազը եւ նրա տեղակալները, մարզերի, Երեւան քաղաքի եւ կայազորների դատախազները, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահը եւ նրա տեղակալներ հասկը, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության պետը եւ նրա տեղակալները, ինքնավար եւ անկախ պետական մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները եւ անդամները, կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալները եւ կենտրոնական բանկի խորհրդի անդամները, քաղաքացիական ավիացիայի կոմիտեի ղեկավարը եւ նրա տեղակալները, պետական գույքի կառավարման կոմիտեի ղեկավարը եւ նրա տեղակալները, կառավարությանն ենթակա մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները, բացառությամբ տեսչական մարմինների ղեկավարների եւ նրանց | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | տեղակալների, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության, պետը եւ նրա տեղակալները, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության ղեկավարը եւ նրա տեղակալները, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության տնօրենը եւ նրա տեղակալները, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարողը եւ նրա տեղակալները, վարչապետին ենթակա մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի դեպարտամենտների ղեկավարները, Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարը եւ նրա տեղակալները, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը եւ նրա տեղակալները, վարչապետի աշխատակազմի ղեկավարը եւ նրա տեղակալները, սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարը, Երեւանի քաղաքապետը եւ նրա տեղակալները, մարզպետները եւ նրանց տեղակալները, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարները, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարը, գլխավոր ռազմական | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | տեսուչը եւ նրա տեղակալները, հատուկ հանձնարարություններով դեսպանը, Հանրապետության Նախագահի խորհրդականները, մամուլի քարտուղարը եւ օգնականները, Ազգային ժողովի նախագահի խորհրդականները եւ օգնականները, վարչապետի խորհրդականները եւ օգնականները, նախորդ տարվա հունվարի 1-ի դրությամբ 50000 եւ ավելի բնակիչ ունեցող համայնքների ղեկավարները»:<br><br>1) հոդված 2-ի կետ 2-րդ և 3-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ.<br><br>2. Սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված մարմիններում պետական ծառայության հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, եթե այլ օրենքներով առանձնահատկություններ սահմանված չեն:<br>3. Պետական ծառայության այլ օրենքներով առանձնահատկություններ նախատեսող ծառայություններում (մարմիններում) աջակցող մասնագիտական գործառույթներ իրականացնող ծառայողները քաղաքացիական ծառայողներ են:<br><br>2)հոդված 4-ի 1-ին կետի լրացվել է հետևյալ բովանդակությամբ 16-րդ ենթակետով.<br>«16) ժամանակավոր թափուր պաշտոն՝ սույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերով որոշակի ժամկետով թափուր պաշտոն»: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 3)հոդված 5-ի 2-րդ մասում «գլխավոր քարտուղարը» բառերից հետո ավելացնել «, իսկ Հաշվեքննիչ պալատում՝ Հաշվեքննիչ պալատը» բառերը:<br><br>4)հոդված 7-ի վերնագիրը խմբագրել հետևյալ կերպ՝<br>«Հոդված 7. Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի կրթության և աշխատանքային ստաժի չափանիշները»<br><br>5)հոդված 9-ի 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.<br>«5. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի գլխավոր քարտուղարի մրցույթը կազմակերպում և անցկացնում է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը:»<br><br>6)հոդված 10-ի 11-րդ կետը խմբագրել հետևյալ կերպ՝<br>11. Մրցույթի մասնակիցը պատասխանելով թեստում ընդգրկված առաջադրանքներին՝ անմիջապես տեղեկանում է իր ստացած արդյունքների մասին: Թեստավորման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում մրցույթի մասնակիցն, իր արդյունքների մասով, կարող է բողոք ներկայացնել գլխավոր | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի նախագծի՝<br><br>1) հոդված 2-ի կետ 2-րդ և 3-րդ | քարտուղարին: Գլխավոր քարտուղարն քննում է դիմումը և ընդունում է արդյունքները փոփոխելու կամ նույնը թողնելու մասին որոշում: Գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնի համար անցկացվող մրցույթի թեստավորման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում մրցույթի մասնակիցն, իր արդյունքների մասով, կարող է բողոք ներկայացնել քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարին: Քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարը քննում է դիմումը և ընդունում է արդյունքները փոփոխելու կամ նույնը թողնելու մասին որոշում:<br><br>7)հոդված 12-ի 10-րդ և 11-րդ կետերխմբագրել հետևյալ կերպ՝<br><br>10. Տեղափախության, փոխադրման և գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու կարգը և պայմանները սահմանում է կառավարությունը՝ հաշվի առնելով համապատասխան մարմինների առանձնահատկությունները:<br><br>11.Տեղափախության, փոխադրման և գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու ժամանակ անձնակազմի կառավարման ընթացակարգային առանձնահատկությունները սահմանում է համակարգող փոխվարչապետը:<br><br>8)հոդված 14-ի 1-ին կետը շարադրել հետևյալ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 2)հոդված 4-ի 1-ին կետի 16-րդ ենթակետ<br><br>3)հոդված 5-ի 2-րդ մաս<br><br>4)հոդված 7-ի վերնագիր<br><br>5)հոդված 9-ի 5-րդ կետ | կերպ՝<br>1. Համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում, մինչև մրցույթ հայտարարելը, պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է այդ պաշտոնում նշանակել քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվից սույն օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով ժամկետային աշխատանքային պայմանագրով պաշտոն զբաղեցնող այն քաղաքացիական ծառայողին, ով ռեզերվում գրանցվել է՝ ազատվելով տվյալ մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնից:<br><br>9)հոդված 16-ի 1-ին, 4-րդ և 5-րդ կետերը շարադրել հետևյալ կերպ՝<br><br>«1)Գլխավոր քարտուղարներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասում նախատեսված մարմինների գլխավոր քարտուղարների»:<br>«4) Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում՝ Մարդու իրավունքների պաշտպանը»:<br>«5) Հայաստանի Հանրապետության դատախազությունում՝ գլխավոր դատախազը.»<br><br>10)հոդված 19-ի 8-րդ և 9-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ. | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 6)հոդված 10-ի 11-րդ կետ | «8. Քաղաքացիական ծառայության գրասենյակն ուսումնասիրում է ծրագիրը և տալիս է համաձայնություն վերապատրաստման ծրագիրը հաստատելու համար: Համաձայնությունը ստանալուց հետո գլխավոր քարտուղարը հաստատում է վերապատրաստամաn ծրագիրը և քաղաքացիական ծառայողներին տեղեկացնում է այդ ծրագրից բխող քաղաքացիական ծառայողի վերապատրաստաման անհատական ծրագիրը: Հաշվեքննիչ պալատում վերապատրաստման ծրագիրը հաստատում է Հաշվեքննիչ պալատը:<br>9. Գլխավոր քարտուղարն անհրաժեշտության դեպքում սույն հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով սահմանված կարգով կարող է վերանայել վերապատրաստման ծրագիրը»:<br><br>11)հոդված 24-ի 2-րդ կետում«վարում,» բառից հետո ավելացնել «վարձատրությունը տրամադրում» բառերը:<br><br>12)հոդված 37-ի 5-րդ, 6-րդ կետերը խմբագրել հետևյալ կերպ՝ | | |
| | | 7)հոդված 12-ի 10-րդ և 11-րդ կետեր | «5. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և սույն հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետով նախատեսված հիմքերով քաղաքացիական ծառայողը ազատվում է զբաղեցրած պաշտոնից կամ դադարեցվում է ծառայությունը, դիմում ներկայացնելուց հետո՝ երրորդ աշխատանքային օրը, եթե այդ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 8) հոդված 14<br><br>9)հոդված 16-ի 1-ին, 4-րդ և 5-րդ կետեր | դիմումում ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ: Մինչև համապատասխան իրավական ակտի ընդունումը քաղաքացիական ծառայողը կարող է հետ վերցնել ներկայացրած դիմումը»:<br><br>«6. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերի, բացառությամբ 17-րդ կետով նախատեսված հիմքի, ի հայտ գալու դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, երկու աշխատանքային օրվա ընթացքում, ընդունում է քաղաքացիական ծառայողի լիազորությունները դադարելու մասին համապատասխան իրավական ակտ»:<br><br>13)հոդված 38-ի 4-րդ կետը շարադրել հետևյալ կերպ՝<br>«4) մշակում է պետական մարմիններում աշխատանքի վարձատրության քաղաքականությունը».<br><br>14)հոդված 39-ի 6-րդ կետը խմբագրել հետևյալ կերպ՝<br><br>«6. Այն տեսչական մարմնում, որի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված չէ գլխավոր քարտուղարի պաշտոն, սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով, 10-րդ հոդվածի 5-րդ և 11-րդ մասերով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 19-րդ հոդվածի 3-րդ և 7-9-րդ մասերով, 22-րդ հոդվածի 3-րդ մասով, 30-րդ հոդվածի 6-րդ մասով, 33-րդ հոդվածի | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 10)հոդված 19-ի 8-րդ և 9-րդ կետեր<br><br>11)հոդված 24-ի 2-րդ կետ<br><br>12)հոդված 37-ի 5-րդ, 6-րդ կետեր | 1-ին մասով և 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված լիազորություններն իրականացնում է տեսչական մարմնի ղեկավարը: Տեսչական մարմնի օրենքով նախատեսված ստորաբաժանման ղեկավարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետի աշխատակազմի ղեկավարը:»<br><br>15)հոդված 40-ի<br>1-ին, 2-րդ և 3-րդ կետերում «փորձարարական աշխատանքների» բառերը փոխարինել «Աշխատանքների փորձարարական կազմակերպման» բառերով:<br><br>16)հոդված 41-ի<br>1-ին կետում «մայիսի» բառը փոխարինել «հունվարի» բառով, իսկ «50»-ը «49»-ով<br><br>4-րդ կետը շարադրել հետևյալ կերպ՝<br><br>«4.2019 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի մայիսի 19-ի N ՀՕ-26-Ն օրենքը, «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 նոյեմբերի 28-ի N ՀՕ-286-Ն օրենքը»:<br><br>17)հոդված 44-ի<br>4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.<br><br>«4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 13)հոդված 38-ի 4-րդ կետ<br><br>14)հոդված 39-ի 6-րդ կետ<br><br>15)հոդված 40-ի 1-ին, 2-րդ և 3-րդ կետեր | սույն մինչև սույն թվականի դեկտեմբերի 31-ը սույն օրենքից օրենքին համապատասխանեցնել պետական ծառայության մյուս օրենքները՝ հիմք ընդունելով սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը, մասնավորապես՝ առանձնահատկություններ սահմանվում են զինվորական ծառայություն անցնող պետական ծառայողների, ոստիկանության գործառույթներ իրականացնող ոստիկանության ծառայողների, փրկարարական ծառայության ծառայողների, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում ծառայություն անցնող պետական ծառայողների, քրեակատարողական ծառայության բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող պետական ծառայողների և քրեակատարողական ծառայության հատուկ նշանակության ստորաբաժանման ծառայողների, հարկադիր կատարողների, դիվանագետների, հարկային մարմնում հետաքննչական, օպերատիվ հետախուզական, գործառույթներ իրականացնող անձանց, մաքսային մարմիններում իրավապահ գործառույթներ իրականացնող անձանց, նախաբացթողումային հսկողություն, ներքին անվտանգության ապահովման գործառույթներ իրականացնող անձանց, ինչպես նաև մաքսատանը և մաքսակետում ծառայություն իրականացնող անձանց, դատական ծառայողների՝ դատավորի օգնականի, դատավորի գործավարի և դատական նիստերի քարտուղարի, | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 16)հոդված 41-ի<br>1-ին և 4-րդ կետեր<br><br>17)հոդված 44-ի<br>4-րդ կետ | դատական կարգադրիչների համար»:<br><br>18)հոդված 46-ի<br>2-րդ կետի «ապրիլի առաջին» բառերը փոխարինել «հունվարի երրորդ» բառերով:<br><br>19)հոդված 47-ի<br>9-րդ և 21-րդ կետերը խմբագրել հետևյալ կերպ՝<br>«9. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան վեց ամիս աշխատանքի չներկայանալու՝ չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամկետները հաշվարկվում են նաև սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո: և իրավական հետևանքներն առաջանում են սույն օրենքով սահմանված ժամկետները լրանալու դեպքերում»:<br><br>«21. Քաղաքացիական ծառայության ստաժում չի ներառվում համապատասխան մարմիններում քաղաքացիական աշխատանքը և տեխնիկական սպասարկում իրականացնելու ժամանակահատվածները:<br>21.22. Քաղաքացիական ծառայության խորհրդի մասնակցությամբ»<br><br>20)հոդված 49-ը շարադրել հետևյալ կերպ՝<br><br>Հոդված 49. Կառավարության և Հանրապետության նախագահի աշխատակազմերի քաղաքացիական ծառայողների իրավական վիճակի որոշ առանձնահատկություններ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 18)հոդված 46-ի<br>2-րդ կետ<br><br>19)հոդված 47-ի<br>9-րդ և 21-րդ<br>կետեր<br><br>20)հոդված 49 | 1. Վարչապետի աշխատակազմի ստեղծման մասին վարչապետի որոշումն ուժի մեջ մտնելու պահից Կառավարության աշխատակազմը լուծարվում է: Կառավարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողները շարունակում են պաշտոնավարել՝ ստանալով մինչև լուծարումը գործող աշխատավարձը և ենթակա չեն գրանցման քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում: Կառավարության աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը շարունակում է ուժի մեջ մնալ մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը:<br>2. Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անցավանացանկը հաստատվում է «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի N ՀՕ-272 օրենքին համապատասխան: Պաշտոնների անվանացանկի հաստատումից հետո մինչև 2018 թվականի հուլիսի մեկը Կառավարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողները պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձնաց կողմից նշանակվում են վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոններում՝ առանց մրցույթի և վերջնահաշվարկի՝ նույն խմբի պաշտոններում: Չնշանակված քաղաքացիական ծառայողները մինչև հուլիսի մեկը ստանում են աշխատավարձ և այդ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ժամանակահատվածը համարվում է քաղաքացիական ծառայության ստաժ: Չնշանակված քաղաքացիական ծառայողների հետ հուլիսի 1-ին կատարվում է վերջնահաշվարկ և վերջիններս վեց ամիս ժամանակահատվածով, իրավունքի ուժով, համարվում են քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված և վեց ամիս օրենքով սահմանված չափով և կարգով քաղաքացիական ծառայության գրասենյակից ստանում են վարձատրություն:<br>3. Հանրապետության նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատվում է «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի N ՀՕ-272 օրենքին համապատասխան: Նոր անվանացանկի հաստատումից հետո Նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայողները պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձնաց կողմից նշանակվում են Նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոններում՝ առանց մրցույթի և վերջնահաշվարկի՝ նույն ենթախմբի պաշտոններում: Մինչև 2018 թվականի ապրիլի 9-ը հաստատված անվանացանկը շարունակում է ուժի մեջ մնալ մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը: Չնշանակված քաղաքացիական ծառայողները մինչև հուլիսի մեկը ստանում են աշխատավարձ և այդ ժամանակահատվածը համարվում է քաղաքացիական ծառայության ստաժ: Չնշանակված քաղաքացիական | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ծառայողների հետ հուլիսի 1-ին կատարվում է վերջնահաշվարկ և վերջիններս վեց ամիս ժամանակահատվածով, իրավունքի ուժով, համարվում են քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված և վեց ամիս օրենքով սահմանված չափով և կարգով քաղաքացիական ծառայության գրասենյակից ստանում են վարձրատրություն:<br>4. Մինչև հուլիսի մեկը կառավարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողները կարող են առանց մրցույթի նշանակվել Հանրապետության նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայության նույն խմբի պաշտոններում:<br>5. Մինչև հուլիսի մեկը Հանրապետության նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայողները կարող են առանց մրցույթի նշանակվել Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության նույն խմբի պաշտոններում:<br>6. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված դեպքերում վերջնահաշվարկ չի կատարվում և ստաժը չի ընդհատվում: Աշխատակազմերի փոփոխությունը աշխատավարձի և գործակցի հաշվարկի վրա չի ազդում, եթե վերջիններս զբաղեցնելու են նույն ենթախմբի պաշտոն, ինչպես նաև պահպանվում և հաշվի են առնվում նախկինում կիրառված կարգապահական տույժերը, խրախուսանքի միջոցները, կատարողականի գնահատման արդյունքները:<br>7. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված դեպքերում պաշտոն զբաղեցնելու ժամանակ քաղաքացիական | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի նախագծի՝<br><br>1)հոդված 8-ի 2-րդ, 3-րդ և 6-րդ կետեր | ծառայողը զբաղեցրած պաշտոնից ազատվում է Նախագահի աշխատակազմում կամ Վարչապետի աշխատակազմում պաշտոն զբաղեցնելու հիմքով՝ իր դիմումի համաձայն:<br>8. Սույն հոդվածով նախատեսված նույն խմբի պաշտոններում նշանակման պահանջը չի տարածվում կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի պաշտոնի նշանակման դեպքերի վրա:<br>9. Սույն հոդվածով նախատեսված նշանակումների դեպքում քաղաքացիական ծառայողն իր համաձայնությամբ կարող է նշանակվել ավելի ցածր պաշտոնի:<br>10. Սույն հոդվածով սահմանված կարգով պաշտոնի նշանակումների դեպքում քաղաքացիական ծառայողը կիսամյակային հաշվետվությունների կամ կիսամյակային կատարողականների արդյունքում ստանում է պարգևատրումն, եթե կիսամյակային հաշվետվությունները կամ կիսամյակային կատարողականները գնահատվել են դրական: Գնահատումն իրականացվում է մինչև նոր մարմնում պաշտոն զբաղեցնելը: Նախկին և նոր մարմնում կատարված գնահատումների արդյունքով քաղաքացիական ծառայողը ստանում է պարգևատրում այն մարմնից, որտեղ զբբաղեցնում է քաղաքացիական ծառայության պաշտոն: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 2)հոդված 10-ի 1-ին, 2-րդ, 6-րդ և 11-րդ կետեր<br><br>3)հոդված 11-ի 1-ինկետի 5-րդ ենթակետ<br><br>4)հոդված 13-ի 1-ին և 4-րդ կետեր | 1)հոդված 8-ի 2-րդ, 3-րդ և 6-րդ կետերը խմբագրել հետևյալ կերպ՝<br><br>«2.Գրասենյակի գործառույթների իրականացման արդյունքում ստեղծված փաստաթղթերը ստորագրում եւ սահմանված դեպքերում կնքում է գրասենյակի ղեկավարը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Գրասենյակի ղեկավարն աշխատանքների կազմակերպման մասով կանոնադրությամբ սահմանված դեպքերում ընդունում է որոշումներ, ցուցումներ և տալիս է հանձնարարականներ»:<br><br>«3.Գրասենյակի ղեկավարը կարող է ունենալ տեղակալ: Գրասենյակի ղեկավարի տեղակալը համակարգում է աշխատանքներն իրեն հանձնարաված բնագավառներում եւ կատարում գրասենյակի ղեկավարի հանձնարարականները: Գրասենյակի ղեկավարը տեղակալի անմիջական ենթակա եւ հաշվետու է գրասենյակի ղեկավարին: Օրենքով կարող են սահմանվել գրասենյակի ղեկավարի ենթակա և հաշվետու լինելու այլ պահանջներ»<br><br>«6. Գրասենյակն ունի միայն հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Գրասենյակի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասության շրջանակները գրասենյակի | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 5)հոդված 14-ի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ , 6-րդ կետի 5-րդ ենփակետ և 7-րդ կետեր | ղեկավարի ներկայացմամբ սահմանում է պետական մարմնի ղեկավարը՝ հաստատելով դրանց կանոնադրությունները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Գրասենյակի կառուցվածքային ստորաբաժանումների վրա տարածվում են սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-3-րդ մասով սահմանված պահանջները»: | | |
| | | 6)հոդված 15-ի 9-րդ և 10-րդ կետեր | 2)հոդված 10-ի 1-ին, 2-րդ, 6-րդ և 11-րդ կետեը խմբագրել:<br><br>1-ին կետից հանել «եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:»<br><br>2-րդ կետում «( կոլեգիալ մարմինների դեպքում՝ կոլեգիալ մարմինների անդամները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ» բառերը փոխարինել «օրենքով նախատեսված դեպքերում կոլեգիալ մարմնի անդամները),» բառերով:<br><br>3)հոդված 11-ի 1-ինկետի 5-րդ ենթակետից հանել «ինչպես նաեւ օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ» բառերը: | | |
| | | 7)հոդված 16-ի 9-րդ ,10-րդ և 12-րդ կետեր | 4)հոդված 13-ի 1-ինև 4-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ.<br><br>1. Հանրապետության նախագահը, վարչապետը սույն օրենքի իմաստով պետական մարմիններ են: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 8)հոդված 20-ի կետեր<br><br>9)հոդված 21 | 4. Սույն հոդվածի 1-ին մասում նշված պետական մարմնի կառուցվածքում ընդգրկվում են համապատասխան պաշտոնատար անձի, համապատասխան պաշտոնատար անձի խորհրդականի, օգնականի, մամուլի քարտուղարի, ռեֆերենտի, այլ հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի ղեկավարի, նրա տեղակալների, աշխատակազմի ղեկավարի օգնականիպաշտոնները, կառուցվածքային ստորաբաժանումները, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ գրասենյակ(ներ)ը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:<br><br>5)հոդված 14-ի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ , 6-րդ կետի 5-րդ ենթակետ և 7-րդ կետերը<br>1-ին կետում ավելացնել«Սույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված» բառերը:<br>2-րդ կետում ավելացնել«այլ հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձինք» բառերը:<br>4-րդ կետից հանել «անմիջական» բառը:<br><br>5-րդ կետում ավելացնել<br>«, խորհրդականի, օգնականի, ռեֆերենտի, մամուլի քարտուղարի, արարողակարգի պատասխանատուի» բառերը:<br><br>6-րդ կետի5-րդ ենթակետ<br>5)կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված պաշտոնատար անձանց Հայաստանի Հանրապետության օրենսդրության | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 10)հոդված 23-ի 4-րդ կետ<br><br>11)հոդված 23-ի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետ<br><br>«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի | պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները, ցուցումները, հանձնարարականները.<br><br>7)տալիս է հանձնարարականներ, ցուցումներ, կարգադրություններ.<br><br>6)հոդված 15-ավելացնել 9-րդ և 10-րդ կետեր և շարադրել հետևյալ կերպ՝<br><br>9..Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պետական մարմնի աշխատակազմին  կարող է վերապահել նաև պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:<br>10. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պետական մարմնի աշխատակազմի ենթակայությանը կարող են հանձնվել պետական ոչ առևտրային կազմակերպություններ, պետական հիմնարկներ:<br><br>7)հոդված 16-ի  9-րդ ,10-րդ և 12-րդ կետեր<br>9-րդ կետում ավելացնել  «(եթե օրենքով նման պաշտոն նախատեսված է)» բառերը:<br>10-րդ կետում ավելացնել  «ենթակա պետական մարմնի ղեկավարի» բառերը:<br>12-րդ կետը շարադրել հետևյալ կերպ՝<br>12.Ենթակա պետական մարմնի ղեկավարի | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | նախագիծ<br><br><br><br><br><br><br><br><br><br><br><br><br>2.հոդված 5<br><br><br><br><br><br><br><br><br><br>3. հոդված 10<br><br><br><br><br><br><br><br><br>4. Հոդված 12 | բացակայության դեպքում նրան փոխարինում է առաջին տեղակալը: Առաջին տեղակալի պաշտոն նախատեսված չլինելու կամ առաջին տեղակալի բացակայության դեպքում տվյալ մարմնում մարմնի ղեկավարի տեղակալի առավել երկար ստաժ ունեցող տեղակալը, եթե օրենքներով այլ բան նախատեսված չէ:<br><br>8)հոդված 20-ի  բոլոր կետերում «Փորձարարական կարգով աշխատանքները» բառերը փոխել «աԱշխատանքների փորձարարական կազմակերպման» բառերով:<br><br>9)հոդված 21 –ը շարադրել նոր խմբագրությամբ.<br>1. Պետական մարմնի կառուցվածքային փոփոխությունն իրականացվում է կառուցվածքային ստորաբաժանումների միաձուլման, միացման, առանձնացման, բաժանման, վերակազմավորման կամ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության դադարեցման եղանակներով:<br>2. Կառուցվածքային փոփոխություն իրականացվում է համապատասխանաբար պետական մարմնի կանոնադրության փոփոխությամբ պայմանավորված գործառույթների փոփոխության դեպքում:<br>3. Կառուցվածքային փոփոխություն կարող է իրականացվել նաև աշխատանքների փորձարարական կազմակերպման համար: Աշխատանքների փորձարարական կազմակերպման համար կառուցվածքային ստորաբաժանման կարգավիճակի համար աշխատանքների փորձարարական կազմակերպման ծրագրով կարող են | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 5. Հոդված 32<br><br>6. Հավելված 1 | նախատեսվել կառուցվածքի՝ սույն օրենքով սահմանված չափանիշներից տարբերվող այլ չափանիշներ:<br>4. Պետական մարմնի, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանման կամ գրասենյակի անվանումներն առանց կառուցվածքային փոփոխություն իրականացնելու կարող են փոփոխվել, որը աշխատանքային հարաբերությունների դադարման հիմք չէ:<br>5. Ենթակա պետական մարմնի, մարզպետարանի կառուցվածքային փոփոխությունն իրականացվում է սույն հոդվածի 1-4-րդ մասերով սահմանված կարգով:<br>6. Վերադաս մարմնի փոփոխության դեպքում աշխատանքային հարաբերությունները չեն դադարում, բացառությամբ հանրային պաշտոններ զբաղեցնող պաշտոնատար անձնաց:<br>7. Գրասենյակի կառուցվածքային փոփոխությունն և անվանափոխությունն իրականացվում է սույն հոդվածի 1-4-րդ մասերով սահմանված կարգով:<br><br><br>10)հոդված 23-ի 4-րդ կետ ը շարադրել հետևյալ կերպ՝<br>4.Սույն հոդվածով սահմանված կանոնակարգումները տարածվում են նաև ենթակա պետական մարմինների և մարզպետարանների վրա:<br><br>11)հոդված 23-ի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.<br>1. Պետական մարմինը | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | համապատասխանաբար համարվում է պետական կառավարչական հիմնարկի գույքային և անձնական ոչ գույքային և իրավունքների և պարատավորությունների մասով իրավահաջորդ է:<br>2. Հայաստանի Հանրապետության օրենքներով կառավարչական հիմնարկներին վերապահված գործառույթները՝ այդ թվում գանձապետական համակարգի, գնումների և ֆինանսատնտեսական և այլ գույքային իրավահարաբերություններում իրականացնում են համապատասխան պետական մարմինը, ենթակա պետական մարմինը, մարզպետարանը, եթե օրենքով այն վերապահված չէ այլ մարմնի:<br><br><br>1. «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծից հանել «Պետական պահպանության ծառայություն բառերը»:<br><br>2. Հոդված 5-ը շարադրել հետևյալ կերպ՝<br>Հոդված 5. Օրենքի 6-րդ հոդվածի՝<br>1. 5-րդ մասից հանել «հանրապետական գործադիր մարմինների» բառերը:<br>2. 6-րդ մասը «ինչպես նաև» բառերից առաջ լրացնել « աշխատանքների փորձարարական կազմակերպման համար օպտիմալացված միջոցներից» բառերով: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 3. hոդված 10-ը լրացնել նոր 2-րդ կետով.<br><br>«2. Բարձրագույն դատական խորհրդի նախագահը և անդամները վարձատրվում են սույն օրենքի հավելված 1-ով սահմանված պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցներով, եթե «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով այլ բան նախատեսված չէ:»<br>4. Հոդված 12-ը շարադրել հետևյալ կերպ՝<br><br>Հոդված 12. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1-րդ հոդվածով.<br>«Հոդված 12.1. Բարձրագույն դատական խորհրդի անդամների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանվող հավելավճարները<br>1. Բարձրագույն դատական խորհրդի նախագահի և անդամի պաշտոնում աշխատանքային ստաժի համար Բարձրագույն դատական խորհրդի նախագահին և անդամին վճարվում է հավելավճար՝ տվյալ պաշտոնում յուրաքանչյուր տարվա համար 2 տոկոսի չափով: Բարձրագույն դատական խորհրդի նախագահի կամ անդամի պաշտոնը դատավորի կողմից ստանձնելու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի նախագահի կամ անդամի պաշտոնավարման ժամանակահատվածի համար սույն մասով և սույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով հաշվարկող հավելավճարից վճարվում է | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | միայն առավել բարձրը:<br>2. Բարձրագույն դատական խորհրդի նախագահին և անդամին վճարվող հավելավճարի ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը:»:<br><br><br>5. Հոդված 32-ում ավելացնել<br>« բացառությամբ 7-րդ հոդվածի, որը ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից» բառերը:<br>6. Հավելված 1-ից հանել<br>1. «Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավար-12, Պետական պահպանության ծառայության պետ -12, պետական պահպանության ծառայության պետի առաջին տեղակալ-10, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի տեղակալ-8.00, նախարարությանն ենթակա մարմնի, ինչպես նաև՝ տեսչական մարմնի ղեկավարի խորհրդական-4.75» բառերը:<br><br>2.Ավելացնել<br><br>«Պետական պահպանության ծառայության պետ- 10.00,<br>Պետական պահպանության ծառայության պետի առաջին տեղակալ- 8.50,<br>Վիճակագրության պետական խորհրդի անդամ-վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ - 8.00,<br>Վիճակագրության պետական խորհրդի անդամ - 7.50,<br>Վարչապետի արարողակարգի | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | պատասխանատու- 9.00,<br>Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի քարտուղար – 6.00<br><br>Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավար- 11.00,<br>Սահմանադրական դատարանի աշխատակազմ<br>Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավար- 10.00<br>Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական- 9.00<br>Սահմանադրական դատարանի նախագահի օգնական- 7.50<br>Սահմանադրական դատարանի մամուլի քարտուղար- 7.50<br>Գլխավոր դատախազի օգնական - 4.50<br>Գլխավոր դատախազի մամուլի քարտուղար - 4.50<br>Գլխավոր դատախազի տեղակալի օգնական - 4.00» բառերը: | | |